ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նկարագրվող բարձրավանդակը, որը համընկնում է պատմական Հայաստանի Բարձր Հայքի նահանգի Մանանաղի գավառին (ըստ օտար աղբյուրների՝ Քարիա լեռնագավառ), Դերսիմ անվամբ հայտնի է XVI դարից։

Օսմանյան կառավարությունը 1856 թ. առաջին անգամ փորձեց իր իշխանության տակ առնել ամբոստ Դերսիմը և հինգ տարվա մարտերից հետո միայն կարողացավ գրավել դաշտային շրջաններն ու 1861 թ. այդտեղ հաստատեց վարչական բաժանումներ։ Իսկ լեռնային Դերսիմը ինքնանկախ էր մինչև 1938 թ., երբ արդեն վերջնականապես նվաճվեց։

Չնայած այդ բաժանմանը, Դերսիմը փաստորեն մնում էր պատմական Բարձր Հայքի աշխարհագրորեն և ազգագրորեն անբաժանելի մի ամբողջական մասը, որն ընդգրկում էր Բյուրակնյա (Բինգյոլ) լեռների ստորոտից սկսած Եփրատ և Արածանի գետերի միջև ընկած տարածությունը, մինչև Կապան-Մատեն։ Լրիվ պատկերացնելու համար պատմական Դերսիմի իրական սահմանները վերը նշվածին պետք է ավելացնել Եփրատի ձախափնյա Դերջանի, Երզնկայի, Կամախի և Ակնա շրջանների այն գյուղերը, որոնք գտնվելով Դերսիմի լեռների ստորոտում և թեև նվաճված, բայց դարձյալ աշխարհագրորեն ու ազգագրորեն պատկանում էին Դերսիմին, քանի որ այդ վայրերում ապրողները բացառապես հայեր ու քրդեր էին և կրոնական ու քաղաքական առումներով ենթակա Դերսիմի օջախների ու աշիրեթների ազդեցությանը։

Սույն մարզը քաղաքական առումով կարելի էր բաժանել երեք մասի՝ ինքնանկախ (լեռնային) շրջաններ, կիսանկախ (նախալեռնային) շրջաններ, նվաճված (հովտային) շրջաններ։ Սրանք միասին աշխարհագրորեն բաժանելի էին երկու հատվածի՝ արևելյան և արևմտյան՝ հյուսիսից հարավ (Եփրատից Արածանի) կենտրոնական գծով, հանգույց ունենալով Ղըզըլբիլիսեն։

Ինքնանկախ էր նկատվում վարչական ստորաբաժանումների կենտրոնում գտնվող լեռնաշխարհն իր Տուժիկ-պապա, Սիմ (կամ Սեմ), Սալ (Մնձուրպազը) ու Ավզերտ լեռներով։ Կիսանկախ էին նկատվում անմիջականորեն վարչական շրջաններին սահմանակից և նրանց ազդեցության տակ գտնվող գյուղերը։ Նվաճված էին նկատվում Տիգրանակերտի, Խարբերդի, Մալաթիո, Սեբաստիո, Արաբկիրի, Կամախի, Երզնկայի, Դերջանի, Քղիի հյուսիս-արևելյան մասի և Խոզաթի ու Բալուի դաշտային շրջանները։

Դերսիմն ընդգրկում էր տասը գյուղաքաղաք և չորս հարյուր յոթանասուն գյուղ, որից երեք հարյուր ութսունչորսը ներկայացվում է այստեղ։

Թուրքական իշխանությունները, բացի գրավված շրջաններից ու մի քանի շրջկենտրոններից, հնարավորություն չէին ունեցել թափանցելու լեռնաշխարհի մյուս մասերը և կազմելու շատ թե քիչ ստույգ թվահամար, իսկ ժողովուրդը քաղաքական ու ռազմական նկատառումներով թաքցնում էր ինչպես իր անասունների գլխաքանակը, նույնպես և տան անդամների թիվը։

Դերսիմում բնիկ թուրքեր չեն եղել և չկային։ Պարտադիր կերպով ուղարկված պաշտոնյաները փաստորեն ենթակա էին ոչ թե կառավարության կարգադրություններին, այլ աշիրեթների իշխանությանը։ Վարչական կենտրոններում, մասնավորապես Չարսանջակում, Բալուում և Քղիում, որպես պաշտոնյա բնակություն հաստատած թուրք բնակչությունը չնչին փոքրամասնություն էր կազմում, ուստի նրանք այստեղ չեն ներկայացվում։

Դերսիմում առհասարակ պաշտոնական մարդահամար չէր եղել։ Սույն վիճակագրությունը կազմված է տեղում։ Շրջել եմ գյուղից-գյուղ, գոմահանդից-գոմահանդ, սարից-սար և 1909-ից մինչև 1914-ի գարունը մեծ դժվարություններով ձեռք բերածս նյութերը ներկայացնում եմ ընթերցողին։ Այդ գործում ինձ օգնել են հատկապես

հայասեր քուրդ-առաջնորդները, առանց որի հնարավոր չէր որևէ արդյունքի հասնել։ Տեղ-տեղ թիկնապահներով ու ուղեկիցներով, տեղ-տեղ էլ ծպտված ու այլանվան տակ կազմել եմ լեռնաշխարհի ընդհանուր վիճակագրությունը։ Հավակնություն չունեմ կարծելու, թե արածս անթերի է, ուստի արտասահմանում և Խորհրդային Հայաստանում վերապրող դերսիմցիներից խնդրում եմ հնարավորին չափ լրացնել բացերն ու ճշտել սխալները։

Դերսիմով անցած որոշ հելլենակներ (Անդրանիկ[1], Երևանյան, Հար. քհ. Սարգիսյան (Ալևոր)[2] և այլք) իրենց վիճակագրությունները կազմել են տան վրա, հայերի թիվը հաշվելով տուն-գլուխ ութ անձ, քրդերինը՝ հինգ անձ։ Ես, ելնելով նրանից, որ մի շարք շրջանների հայ նահապետական շատ գերդաստաններ նույն հարկի տակ ունեին 40—120 անձ, իսկ քրդերի ընտանիքները մեծ մասամբ կազմված էին 10—20, երբեմն 30 հոգուց, հայերի մի տան բնակիչը հաշվել եմ միջին հաշվով 10, իսկ քրդերինը՝ 6 հոգի, բարձրադիր լեռնային շրջաններում (Խոզաթի, Օվաճդի, Ակնա, Բոլոմորիի, Ղըզըլքիլիսեի), համապատասխանաբար 8 և 5 հոգի՝ նախալեռնային ու դաշտային շրջաններում (Բալուի, Մեծկերտի, Ջարսանջակի)։

Այս ամենից բացի, աշխատել եմ ներկայացնել Դերսիմի բոլոր շրջանների մեջ մտնող թե՛ հայկական, թե՛ քրդական բնակավայրերը, քանի որ քրդականները ևս սերտորեն առնչվում են հայ ժողովրդի պատմության հետ։ Ուժերս ներածին չափ աշխատել եմ տալ նորի հետ նաև հինը, պատմական-ավանդականը։ Առավելապես կանգ եմ առել այն գյուղերի վրա, որոնք նախկինում ունեցել են բերդեր, ամրոցներ, ապարանքներ, գետնուղիներ, ինքնապաշտպանության կետեր, վանքեր, եկեղեցիներ և կամ կռապաշտության շրջանից Անահիտի անվան հետ կապված վայրեր, թիլ-եր (հողաբլուրներ), որոնց տակ թաղված են մեհյաններ, ատրուշաններ և կամ ձեռագրեր ու այլ արձանագրություններ։ Սրանով սույնը դառնում է նաև պատմական հուշարձանների տեղադրություն։

Պատմական Հայաստանի ոչ մի շրջանում երևի չկային այնքան վանքեր ու եկեղեցիներ, որքան Դերսիմի լեռնաշխարհում՝ 60-ից ավելի կանգուն կամ կործանված եկեղեցիները, տաճարները, քարափոր մատուռները, նույնիսկ Տուժիկ-պապա լեռան վրա քառասուն խորան ունեցող ժայռափոր ս. Սարգիս եկեղեցու հոյակապ կոթողը անհերքելի այնպիսի պատմական իրողություններ են, որոնք բացարձակապես կարող են վկայել և հաստատել այս շրջանի հայկական դիմագիծը և պատկանելությունը։

Բնակավայրերի տեղագրությունը տրվում է ըստ վարչա-տնտեսական շրջանների, սկսելով Դերսիմի կուսակալանիստ քաղաք Խոզաթից[1]։

I. ԽՈԶԱԹԻ ՇՐՋԱՆ

1. Խոզաթ։ Դերսիմի լեռնաշխարհի կուսակալանիստ գլխավոր քաղաքն էր, ուր գտնվում էին նաև զինվորական կենտրոնը և զրսերտարների (լեռնային ձիավոր ժանդարմերիա) համակենտրոնացման զորանոցները։ Սակայն այդ ամենը գրեթե անվանական բնույթ էր կրում, որովհետև ամեն անդամ, երբ Դերսիմը ապստամբում էր թուրք իշխանության դեմ, աշիրեթները առաջին հերթին պաշարում և գրավում էին Խոզաթը, զինաթափում զինվորներին և ժանդարմներին, թալանում զենքերն ու ռազմամթերքը։

Խոզաթը գտնվում էր Սիմ լեռան դեպի արևմուտք երկարող լեռնապարի՝ Պայալիտից հյուսիս-արևելք, Պուլանխ գյուղի (շշփոթել Մշո դաշ-

[1] Անդրանիկ, Տերսիմ, Թիֆլիս, 1900։

[2] Ալևոր (Հար. քհ. Սարգիսեան), Բալու, Գահիրէ, 1932։

[1] Վերջին տասնամյակներում թուրք կառավարությունը, Դերսիմի պատմական դիմագիծը փոխելու և այն թրքացնելու նպատակով, փոխել է շրջանի՝ դարերի ընթացքում, ընդհուպ մինչև 1915-ի Մեծ եղեռնը և 1938-ի քրդերի ջարդն ու տեղահանությունը, պահպանված գյուղերի հայերեն անունները։ Այսպես, հանրածանոթ Դերսիմ աշխարհագրական անունը դարձվել է Թունճելի, Ղզըլքիլիսեն՝ Նազմիե, Պարտին՝ Ղափխլի, Սագաձորը՝ Ղաղտերեսի, Խնձորեկը՝ Էլմալի, Տանձիկը՝ Արմուտլի, Ջաղչին-ձորը, որ քրդերը արդեն դարձրել էին Տերե-Արիանի, թուրքերը վերանվանել են Տեկիրման-Տերեսի և ա.լլն։ Ելնելով դրանից, ստիպված եմ եղել սույն աշխատության մեջ գյուղերը տեղագրել ոչ միայն հարևան տեղանունների հիշատակումով, այլև տալ աշխարհագրորեն այնպիսի բնութագրություններ, որ ապագա ուսումնասիրողը կարողանա առանց դժվարության կողմնորոշվել նոր անվան տակ թաքնված հին գյուղը ստուգությամբ գտնելու համար։ Պահելով գյուղերի հին անունները, միաժամանակ ջանացել եմ օգտվել լեռնագրության, շրագրության և այլ այնպիսի տվյալներից, որոնք փոփոխման ենթակա չեն՝ անվանումները կարելի է փոխել, բայց բոլոր գետերի ընթացքը հնարավոր չէ փոխել, առավել ևս անհնար է տեղաշարժել լեռները։ Այդ իսկ նկատառումով, կողմնորոշող հիմնական նշանակ եմ ընտրել Արածանիի, Եփրատի ու մյուս գետերի հոսանքները և մեծ ու փոքր լեռների շղթաները։

տի Պուլանխի հետ) հյուսիսային կողմը, Ջաղջին-ձորի լեռներից ծագում առնող երկու գետերի միջև։ Բաղկացած էր 1648 տնից, որի մի մասը պաշտոնյա նկվոր թուրքեր և զինվորների ընտանիքներ էին, որոնց չեմ արձանագրում այստեղ։ Հայերը 864 տուն (8640 հոգի), քրդերը 324 տուն (1944 հոգի) էին։

Խոզաթի հայերն ունեին սեփական դպրոց (ուր հաճախում էին նաև փոքրաթիվ քուրդ երեխաներ, որը լավ աչքով չէր դիտվում թուրք իշխանության կողմից) և մի քարակերտ եկեղեցի ս. Գևորգ անունով։ Խոզաթի շրջակայքում կային վեց եկեղեցու փլատակներ, որոնց սրբատաշ քարերի մեծ մասը օգտագործված էր զորանոցների շինության ժամանակ։

2. Արսենիկ։ Գտնվում էր Խոզաթի հարավային կողմը, ձորափին, Խոզաթից երեք ժամ հեռու։ Գյուղի արևելյան կողմը, Հալվորիի ս. Կարապետ վանքից եկող ջրի եզերքին գտնվում էին երեք եկեղեցու փլատակներ։ Դրանցից մեկը կոչվելիս է եղել ս. Մեսրոպ։ Այդ էր վկայում սրբատաշ քարերից մեկի արձանագրությունը, որ դեռ պահպանվում էր ուրիշ խաչքարերի արանքում։

Քրդերը թույլ չէին տալիս, որ այդ եկեղեցիների սրբատաշ քարերը փոխադրվեն Խոզաթ, պատճառաբանելով, թե քրդերի սրբատեղի ս. Մարսուպն է (Մեսրոպ)։ Բնակիչները՝ հայեր 23 տուն (230 հոգի), քրդեր 50 տուն (300 հոգի)։

3. Պուլանխ։ Գտնվում էր Արսենիկից չորս ժամ հեռու, Խոզաթից հարավ արևմուտք, ջրի ափին։ Դիրքը՝ լեռնային։ Ավանդաբար պատմում էին, թե այս գյուղի հին բնակչությունը 1604—1606 թթ. Ջալալիների արշավանքի ժամանակ փոխանակ քրդանալու, գաղթել է Մուշ և այնտեղ հիմնել համանուն գյուղ, մի մասն էլ հաստատվել է Խութաց-ձորում։ Չորս եկեղեցու փլատակները, որոնք գտնվում էին գյուղի արևմտյան կողմում, Սև-քարեր կոչված ապառաժների ստորոտում, վկայում էին, թե այն ժամանակին բազմամարդ ավան է եղել։ Ուներ 15 տուն (150 հոգի) հայ, 38 տուն (228 հոգի) քուրդ բնակիչ։

4. Իպիգալե (Մելիքաբերդ)։ Պատոան գյուղից դեպի հյուսիս արահետը բարձրանում էր ձորի միջով և մոտ մեկուկես ժամից հասնում այս գյուղը, հնում՝ Մելիքաբերդ անվամբ։ Ընկած էր Արսենիկից ձգվող լեռնակա բարձունքին, Պուլանխից հեռու էր չորս ժամով։ Ասվում էր, թե գյուղի տակը դատարկ է (այստեղից Տիպի-Քալե՝ տակը բերդ անվանումը), որովհետև տեղ-տեղ գետինը ձայն էր հանում և կարծես դողում էր, երբ հարվածում էին։

Գյուղի վարելահողերը գտնվում էին լեռնակա սարի արևելյան կողմում, իսկ ջրարբի արտերը՝ գյուղի ստորոտում։ Բնակչությունը պարապում էր երկրագործությամբ, առավելապես խաշնարածությամբ, ունեին նաև փեթակներ։

Գյուղի 140 տուն (840 հոգի) քուրդ բնակիչների մեծամասնությունը նախկին հայեր էին։ Այսպես, Գարապաշան աշիրեթի պետը, որ կոչվում էր Թոռնե Գարապաշի Սուլեյման աղա, նախկին քահանայի շառավիղներից էր։ Մինչև վերջերը քրդական ընտանիքներից ոմանք պահում էին իրենց նախկին տոհմանունները՝ Թոռնե Անթառե Սեգի, Լաճե Օհանե Խաչի և այլն։

Լեռնակի գագաթը անտառներին միացնող բարձրավանդակի ստորոտում էին գտնվում կիսակործան ս. Աստվածածին եկեղեցու փլատակները։ Եկեղեցին քրդական ուխտատեղի էր և կոչվում էր Զիարե-Անաե-փիլի (մեծ մոր սրբատեղի)։

5. Պայազիտ։ Իպիգալեից մեկուկես ժամ հեռու, Ասիլար լեռան ստորոտում անառիկ դիրք ունեցող քրդաբնակ մի գյուղ էր սա, որն ուներ 170 տուն (1020 հոգի) քուրդ բնակչություն։ Այս գյուղը ևս հսկում էր Խոզաթի վրա։ Ամեն անգամ, երբ թուրք իշխանությունը կամենում էր նեղել որևէ քրդական շրջանի, պայազիտցիներին հրահանգվում էր մոտակա գյուղերի աջակցությամբ պաշարել Խոզաթը և հսկողության տակ պահել կուսակալին։ Գյուղի բնակիչները միշտ զինված էին։ Խարբերդից եկող որևէ օտարական, նույնիսկ եթե չարիգանցիների կողմից արտոնված լիներ մտնելու քրդական շրջանը, այստեղ պետք է ենթարկվեր Ֆախրի աղայի քննությանը, և այս բոլորը՝ կուսակալանիստ քաղաքը գնալու համար։ Պայազիտը արդեն ինքնանկախ շրջանի գլխավոր դուռն էր։

Սանասորի արտերի կենտրոնում, արտուճի ծառերի ստորոտում գտնվում էին մեծ եկեղեցու ավերակները, իսկ արտերի վերջում, բլուրի վրա՝ մի հին գերեզմանատուն, մեծ ու փոքր զանազան տապանաքարերով։ Բլրի արևելյան կողմը, մի ժայռի մեջ փորված ս. Կույս անունով մատուռ կար։ Մատուռը դեռ պահում էր իր գոյությունը, որպես բարության սուրբ։ Ամեն անգամ արշավանքի գնալիս, քրդերը նախ դիմում էին սրան (Յա զիարե կույս, յա Հազրեթի-Խըդր, յա մըն սեիդ Ճաֆեր, գուք հասեք մեզ օգնության)։

3—61

Գյուղն ուներ լավ վարելահողեր, արոտավայրեր և սառը ջրի հարյուրավոր ակունքներ, որոնցից ամենահարգին ս. Կույսի ստորոտից բխող Լիս-աղբյուրն էր։ Բնակչությունը թեև զինվորագրյալ ու պատերազմասեր, զբաղվում էր նաև վարուցանքով և անասնապահությամբ։

6. Զմշկածագ (Զմշկեծեգ)։ Գտնվում էր Պայազիտից հյուսիս-արևմուտք, Խոզաթից այն կողմ տարածվող անտառածածկ լեռնագագաթների միջև։ Թիկն տված Տուժիկ-պապայի շերտավորմանը և հանդիպակաց գագաթներին, բնական շատ գեղեցիկ և ինքնապաշտպանության հարմար դիրք էր ներկայացնում։

Պայազիտից Զմշկածագ արահետն անցնում էր լեռնաշավղից, բարձրանում լեռն ի վեր ու հասնելով մի կածանի, բաժանվում երեք ճյուղի՝ ձախը դեպի արևմուտք, աջը՝ հյուսիս-արևելք (Խոզաթ), իսկ միջինը՝ Պայազիտ էր գնում։ Ճամփու տևողությունը մեկուկես ժամ էր։ Այս գյուղաքաղաքը, որ հայկական հնագույն ավան էր եղել և իր ազգային դիմագիծը պահել էր մինչև մեր օրերը, ջրշանի ամենամեծ բնակավայրն էր։ Ուներ ավելի քան 450 տուն (4500 հոգի) հայ, 150 տուն (900 հոգի) քուրդ բնակչություն։

Զմշկածագի բնական դիրքը, բնակչության քաջ կռվողներ լինելու հանգամանքը նրան տվել էին «Քաջերի բույն» անունը։ Բնակիչները, հայ թե քուրդ, առանց սեռի, կրոնի ու դավանանքի խտրության, մասնակցում էին Դերսիմի ինքնապաշտպանական բոլոր կռիվներին։

Ավանի մերձակա լեռների անմատչելի ծերպերի վրա գտնվում էին հնադարյան գերեզմաններ։ Դրանց տապանաքարերը երկար, հաստ և լայն էին ու անվթար մնացած։ Ուշագրավ էր տապանաքարերի դիրքը՝ դրանք բոլորը դարձած էին դեպի արևելք։ Առավել հետաքրքիրը գերեզմաններից վեր, դեպի արևելք նայող հսկա մի ժայռի ճակատին քանդակված արևի լուսեղեն ճառագայթների կերպարով և մարդկային կիսադիմանկարի նմանող գունդն էր, իսկ արևի նշանակին հակառակ ուղղությամբ, համանման մի ժայռի մեջ փորված մնում էր կամարաձև մի եկեղեցի իր մեծ ու փոքր քարե խաչերով։

Բացի Հալվորիի ս. Կարապետ և Բոզ վանքերից, ուներ կանգուն երկու եկեղեցի և քարաշեն մի վարժարանի ավերակներ։

Հայերի մեծամասնությունը վարպետ արհեստավորներ էին, գորգագործությունը և կապերտագործությունը շատ առաջադիմած էր։ Հայերը գործում և քրդերի հետ փոխանակում էին գորգ, կապերտ, շինում էին պղնձե ամաններ, երկրագործական գործիքներ (մանգաղ, խոփ, հատոց, կացին և այլն), նույնպես և բրուտագործությանը վերաբերող ամաններ։ Հայերի մի մասն էլ զբաղվում էր պտղամշակությամբ, երկրագործությամբ ու մեղվաբուծությամբ, իսկ քրդերը՝ առավելապես խաշնարածությամբ։

Վերը հիշված ապառաժների միջանկյալ մի բարձունքում գտնվում էին տաք ջրի ակեր։ Հատկանշական էր նման աղբյուրների հակամետ բնույթը՝ մի տեղ այրելու աստիճան տաք, մի ուրիշ տեղ՝ սառեցնելու աստիճան պաղ, սակայն երկուսն էլ ծծմբահամ և ծծմբահոտ։ Տաք ջրի ակը կանանց սրբատեղին էր, նրանց, ովքեր զավակ չէին ունենում։ Ասվում էր, թե ջուրը բուժիչ հատկություն ունի և այնտեղ լվացվող ու ջրից խմող անզավակ կանայք զավակ են ունենում։ Աղբյուրի անունը Պարգևատուր էր (քրդերեն՝ Գանիե-Ճենիան՝ կանանց աղբյուր)։

7. Մանսուր։ Զմշկածագից արևմուտք, հազիվ 40 րոպե հեռու էր ընկած 25 տնից (150 հոգի) բաղկացած քրդական այս գյուղը՝ դժվարանցանելի բարձունքում, թաղված անտառների խորքում։ Բնակիչները պատկանում էին համանուն աշիրեթին (Մանսուրանցիք), սակայն անջատված իրենց համայնքից, հաստատվել էին այս անմատչելի լեռան վրա։ Բնակվում էին իրարից անջատ ու հեռու ժայռերի մեջ փորված քարանձավներում՝ երկու տուն մի տեղ, մի ուրիշ ժայռի տակ երեք կամ չորս ընտանիք։ Բնակչության գլխավոր զբաղմունքը որսորդությունը և խաշնարածությունն էր։

8. Հազարի (Հազարf)։ Քրդաբնակ այս գյուղն ընկած էր Մանսուրի հյուսիս-արևելյան, Զմշկածագի հյուսիսային կողմում։ Արահետն անցնում էր լեռնային կածաններից և կես ճամփին բաժանվում երկու ճյուղի. մեկը դեպի արևելք թեքվելով, մեկուկես ժամից հասնում էր Զմշկածագ, իսկ մյուսն առանց Զմշկածագ հանդիպելու, ուղղվում էր դեպի Հազարի (ըստ Լինչի՝ Նյուզարդ) 90 տնանոց (540 հոգի) քրդաբնակ գյուղը։

Գյուղի վարելահողերը գտնվում էին արևմտյան և հյուսիսային կողմերում, իսկ արոտատեղիները երկարում էին դեպի հյուսիս-արևելք իրար խաչաձևող լեռների կողմը։ Բնակչության գլխավոր զբաղմունքը անասնապահությունը և հողագործությունն էր։

Հազարին ուներ երկու եկեղեցի, որոնցից Ամե-

նափրկչի ավերակները գտնվում էին Կապույտ բլուրի ստորոտում, Տիրաշենը՝ գյուղի արևմտյան կողմում։ Այս գյուղն էլ պատկանում էր Ռեսիգան աշիրեթին։

9. Վարդենիկ։ Մանսուրից հարավ-արևմուտք, Ռեսիգան աշիրեթի տիրապետության տակ գտնվող լավագույն գյուղերից մեկն էր սա, 45 տուն (450 հոգի) հայ և 60 տուն (360 հոգի) քուրդ բնակչությամբ։

Մանսուրից Վարդենիկ հեռավորությունը հասնում է 45 բոպե կամ մոտավորապես հինգ կիլոմետր էր։ Ճանապարհն անցնում էր ձորամիջից, բարձրանում հանդիպակաց գագաթը և թեքվելով նախ դեպի արևմուտք, ապա քիչ հարավ, հասնում էր Վարդենիկ։ Ըստ տեղեկությունների, գյուղը ժամանակին եղել է բավմամարդ ու բարգավաճ մեծ ավան, բայց հետագայում կործանվել ու մասամբ վերականգնվել է։

Տարօրինակ է, որ այդ գյուղի հայերն ու քուրդերը իրար «էմօղլի», «լաճե ափի», «խալ օղլու» էին կոչում։ Մարդ կտարվի մտածել, թե արդյոք հայը քրդից բաժանված է ու քրիստոնյա դարձած, թե բնակչության մի մասը նախապես հայ եղած է, հետո քրդացած, որն ավելի հավանական կերևի։ Վկա՝ ձորամիջի ս. Աստվածածին եկեղեցու կիսակործան տաճարը, արևելյան բարձունքի ստորոտում, Ջխտակ աղբյուրներին մոտիկ ս. Սարգիս եկեղեցու ավերակները և տապանաքարերը։

Բնակչության գլխավոր զբաղմունքն անասնապահությունը, հողագործությունը, մասամբ էլ պաղամշակությունն էր։ Մոտիկ լեռներից սկիզբ առնող երկու արագահոս գետակ ոռոգում էին Վարդենիկի պարտեզներն ու ջրարբի արտերը։

10. Լաչին։ Դերսիմի սահմանապահ Ջիարեթ գյուղից դեպի Խոզաթ, Պայազիտից հյուսիս-արևելք և Խոզաթից հարավ-արևմուտք, Թահարա լեռներից հոսող նույնանուն գետի աջ եզերքին էր ընկած 96 տնից (576 հոգի) բաղկացած քրդաբնակ այս գյուղը։ Պայազիտից Լաչին երկուսուկես ժամվա, իսկ Լաչինից Խոզաթ՝ երեք ժամվա ճամփա էր։

Լաչինան աշիրեթի հովանավորության տակ գտնվող այս գյուղի բնակչությունը պահակի դեր էր կատարում, հսկելով Խոզաթի շարժումներին՝ ինքնապաշտպանության նպատակով, ընդդեմ թուրքական իշխանությունների ոտնձգությունների։ Գյուղի դիրքը լեռնային էր, մանավանդ դեպի Պայազիտ նայող ճակատը ամրացված էր անմատչելի բնական ապառաժներով. մի քանի լեռնագագաթների զարտուղի միացման հարթավայրում, ձորափի երկայնքին էին ընկած գյուղի քարափոր և քարակերտ տները։

Պայազիտից Լաչին ճանապարհը օտարին անմատչելի էր։ Գյուղի փայտե կամուրջը գտնվում էր արևմտյան կողմը, իսկ դեպի Խոզաթ տանող արահետն անցնում էր Ղարակետուկից, որը պաշտպանված էր հանդիպակաց ժայռերով։

Գյուղի վարելահողը գտնվում էր սարալանջերում, ծմակներում և բացատներում։ Լաչինն ուներ հարուստ արոտավայրեր և գեղատեսիլ սարեր։ Բնակչության գլխավոր զբաղմունքն անասնապահությունն էր, մասամբ էլ երկրագործությունը։

Լաչինցիները խիզախ կռվողներ և քաջամարտիկ հրացանակիրներ էին ու թեև թվով փոքր, բայց մարտերում անուն հանած մարտիկներ։

Ղարակետուկի ստորոտում գտնվում էին մի մեծ եկեղեցու ավերակներ և մի արհեստական քարայր, որը խորանում էր Ղարակետուկի սիրտը։ Ասում էին, թե հին ժամանակներում շահագործվող հանքահոր է եղել, բայց թե ինչ հանքանյութեր է պարունակել, ոչ ոք չգիտեր, որովհետև հնարավոր չէր խորանալ քարայրից ներս, ուր զորավոր հոսանքներից տարօրինակ ձայներ էին լսվում։

11. Թանելեր։ Խոզաթից հյուսիս-արևմուտք, Լաչինից ուղղակի հյուսիս, մի ձորակի ափին էր ընկած այս գյուղը։ Ջուրն անցնում էր գեղամիջով, գյուղը բաժանելով երկու մասի։ Հեռավորությունը Լաչինից Թանելեր երկուսուկես ժամ էր։

Թանելերի բնական դիրքը և լեռներից պատրսպարված լինելու հանգամանքը հնարավորություն էին տալիս պտղատու ծառեր աճեցնելու։ Հակառակ պտղատու ծառերի խիտ անտառներին, լեռնային հարուստ բուսականությանը և աճող վայրի բանջարներին, գյուղացիք ունեին առանձին բանջարանոցներ և պտղատու ծառերի պարտեզներ, որոնք գտնվում էին գյուղի տակ, հանդիպակաց երկու բլուրների՝ Հողդարի և Լեռնակի սրանքում։

Գյուղի տների մեծամասնությունը գետնափոր էր, մուտքի կողմից՝ քարե պատ, իսկ թիկունքը՝ թաղված հողի մեջ։ Կային և հոլիկների նման տնակներ, որոնք վերևից անտեսանելի էին։

Լաչինան աշիրեթին պատկանող և մոտ 160 տուն (960 հոգի) ունեցող քրդարնակ այս գյուղը տառապում էր հողի պակասից, հարթավայրեր գրեթե չկային, իսկ եղածները, թեքության պատճառով, ջուր չէին բռնում, բացի բոստաններից և

այգիներից, ուստի ցորենի տեղ ցանում էին կորեկ, կլկիլ և գարի։

Թանելերցիների գլխավոր պարապմունքն անասնապահությունն էր ու մեղվապահությունը, որոնց մթերքների փոխանակումով լրացնում էին հացի և այլ պիտույքների պահանջը։ Որսորդությունը իրենց սիրած հաճելի զբաղմունքների մեջ առանձին տեղ էր գրավում։

12. Մոխտուր (Մոդտուր)։ Ջմտնելով կիսանկախ շրջանի սահմաններից ներս և շրջանց կատարելով Խոզաթի արևմտյան կողմից, արևելյան կողմում թողնելով Թանելեր և Թահար գյուղերը, ճանապարհը թեքվում էր նախ արևմուտք, ապա դառնում հյուսիս և հասնում քրդական այս գյուղը։ Աշուրեկից մինչև Մոխտուր չորս ժամ էր, համփան նեղ ու դժվարանցանելի, Թահարի ուղղությամբ՝ բոլորովին վտանգավոր. փոքր շեղում ու ճամփորդը կմատնվեր կորստյան։ Առանց առաջնորդի կարելի չէր անցնել անմատչելի և անտառածածկ այդ սարերից, մանավանդ, երբ արահետը հասնում էր գյուղի ստորոտի անանցանելի ձորին, ուր ժայռերի միջից վար էր թափվում գետը՝ մոլեգնած վիշապի նման։ Կամուրջը փայտաշեն և շատ նեղ էր, ամրացված հանդիպակաց մեծ ժայռին։

Մոխտուրն ընկած էր երկու լեռնաշերտի բացվածքում գտնվող բավական ընդարձակածավալ մի դաշտագետնում, որը երկու մասի էր բաժանվում՝ արևելյան և արևմտյան։ Արևելյանը կոչվում էր Սարտիպ, արևմտյանը՝ Պերատեղ։ Վերջինում չորս արհեստական բլուր կար, որոնց տրամագիծը 200—1000 մետրի էր հասնում, իսկ բարձրությունը՝ 30—100-ի։ Տեղացիք այս բլուրներին Հողդար էին ասում, և ըստ նրանց, դրանց տակ իրենց նախնիների գերեզմաններն էին գտնվում, բայց թե ովքեր էին այդ նախնիները և ինչ շրջանի էին պատկանում, ոչ ոք չէր իմանում։ Նախկին զուտ հայկական այս գյուղում այլևս հայեր չէին ապրում։

Գյուղը չնայած բարձր լեռնային դիրք ուներ, մի շարք պտուղներ ու բանջարեղեններ էին հասնում այդտեղ (թութ, ծիրան, դեղձ, տանձ, խնձոր, սալոր)։

Գյուղի արևելյան կողմում, Սարտիպի արտերից բավական վեր, անտառի բացատներից մեկի կենտրոնում կային մի եկեղեցու ավերակներ, որի ստորոտից բխում էր շրառատ մի ակ, և որը սրբատեղի էր։ Վարդավառին այս շրի մոտ մեծ տոնախմբություն էր լինում։ Չար աչքից ու չար նաղարից հեռու մնալու համար աղբյուրի ջուրը միմյանց վրա էին սրսկում։

Մոտավորապես 80 տուն (480 հոգի) բնակչությամբ քրդաբնակ այս գյուղը գտնվում էր Դերսիմի ամենազորավոր աշիրեթներից Շեյխ-Հասանանցիների տիրապետության տակ։ Բնակչության զբաղումը առավելապես խաշնարածությունը և մասամբ հողագործությունն էր։

13. Թահար։ Թանելերից հյուսիս-արևմուտք, երկու ժամ հեռու, համանուն շրի եզերքին և համանուն լեռան լանջերին, անտառածածկ երկու գագաթների արանքի բացատում էր ընկած 170 տնից (1020 հոգի) բաղկացած Մամգունների աշիրեթին ենթակա։ քրդաբնակ այս գյուղը։ Այն հարուստ էր ոչ միայն արոտավայրերով, այլև վարելահողով։ Արահետը, որ դուրս էր գալիս Թանելերի ձորամիջից, գնում էր նախ դեպի հյուսիս, ապա թեքվում արևմուտք և ոլորապտույտ շառավիղով բարձրանում գյուղի վերևի սարերն ու անցնում Ճերմակ-քարերի (Քեմերե-սրբե) լեռան գագաթը, կրկին թեքվելով հյուսիս։

Թանելերի ամառանոցներից վերև դժվարանում էր վայրէջքը, տեղ-տեղ ժայռերի մեջ ճանապարհը կորչում էր, մանավանդ դեռ չհասած Տելիք-Թաշի (Ծակքար) ստորոտի ակնաղբյուրը, իրար խաչաձևվում էին անծանոթ ուղիներ և մոլորեցնում ուղևորին։ Չսխալվելու համար, ճամփորդը պետք է ընտրեր այն արահետը, որը տանում էր դեպի դիմացի նշանակը։

Թահարի վարելահողերը գտնվում էին Պողեր կոչված լեռնահովտում, որը գտնվում էր գյուղի արևելյան կողմում և բաժանված էր հինգ մասի, որոնք կոչվում էին Տելօգան (Հին տեղ), Սուրբգան, Հողդար, Աղրաձոր, Սանասոր։ Լեռները անտառածածկ էին, նշանավոր էին սև կաղնու անտառները և կեչու պուրակները։

Այս գյուղի բնակիչները ծանոթ էին շրջակա գյուղերին որպես լավ կապերտագործներ և բրդից ապա (աբա) պատրաստողներ։

Սանասորի արտերի արևմտյան կողմում գտնվում էր մի մեծ լքված գերեզմանոց և մի հին փլատակ եկեղեցի, որի արտուճների ստորոտից բխում էր շրջանի ամենաշրառատ և պաղ աղբյուրը։ Սա համարվում էր զիարեթ (ուխտատեղի), քանի որ շերմ բուժելու հատկություն ուներ։ Քրդերը ամեն տարի Վարդավառի տոնին ուխտագնացության էին գնում բերքատվության սրբին, իրար վրա ջուր սրսկում այդ աղբյուրից ու մատաղ անում։

14. Ղլիբատա (Մոգտուն)։ Մոխտուրից դեպի արեմուտք արահետը միշտ դժվարանցանելի էր՝ ժայռեր, ձորեր, անտառ, ճամփու տևողությունը երկու ժամից ավելի էր, Թահարից՝ չորս ժամ։ Գյուղը գտնվում էր Ղաղխլի լեռան հարավ-արևելյան կողմում։ Կոչվել է Մոգտուն (Մոկաց տուն). Ղլիբատան հետագա վերանվանում էր։

Զուտ բրդաբնակ այս գյուղն ուներ ավելի քան 170 տուն, 1020 հոգի բնակիչ։ Շրջակա լեռները հարուստ էին պաղատու ծառերի անտառներով, մասնավորապես կաղին, ընկույզ, տանձ և խնձոր։ Գյուղի վերևի ժայռերը ծածկված էին բնական ու արհեստական քարայրներով, որոնք հաղորդակցության անցքերով կապված էին մեկը մյուսին, սակայն տեղացիք սարսափում էին մոտենալ այդ դետնուղիներին, ուր ճիների թաքստոց էր և չարքերի տուն։ Բարեբախտաբար, գյուղի արևելյան կողմի երկու բարձունքին բաղմած այդ պաշտպան սրբերը՝ ս. Սարգիս (Հաղրեթիխրդը) և ս. Գևորգ (Խրտր-Էլիաս) եկեղեցիները մասամբ հանդստացնում էին չարքերից սարսափած ժողովրդին, այլապես գյուղացիք հավանարար կլքեին գյուղը։

Սրբատեղիները և դրանց շատ մոտիկ մի գյուղի ավերակները ապացուցում էին, թե ժամանակին շեն ու բարգավաճ մի ավան է եղել այդ կործանված գյուղը։ Ժայռափոր ս. Գևորգը ուխտատեղի էր, ուր մատաղ էին մորթում դրա տոնի օրը։ Այդ եկեղեցու ստորոտում մի արհեստական բարայր կար՝ զանազան ստորաբաժանումներով և դետնուղիներով։

Ս. Սարգսի բլուրին կից կային քարյուղի փոքր աղբյուրներ, որոնք օգտագործվում էին գյուղացիների կողմից կրակ վառելու համար։

Գյուղի վարելահողը գտնվում էր երկու սրբատեղիների շուրջը, հին գյուղի ավերակների ստորոտում։

Բնակչությունը պատկանում էր Շեյխ-Հասանանցիների աշիրեթին, որոնք քաջ կռվողներ և լավ որսորդներ էին։ Զբաղվում էին առավելապես անասնապահությամբ և գորգագործությամբ, գրեթե ամեն տուն գորգագործ և կերպասագործ էր։ Շատ հարգի էին այս գյուղի պատրաստած ձեռնոցները և թաթպանները, որոնք գործվում էին այծի մազից (թֆթիկ)։

15. Ղուզուլճա։ Ցից ապառաժների վերելքից հետո մի գեղատեսիլ լեռնադաշտում, Մոգտունից արևմուտք, երկու ժամ հեռու, երկու ջրառատ ձորի մեջ էր ընկած գյուղը։ Ուներ մոտ 350 տուն բնակչություն, որից 150-ը (1500 հոգի) հայ, 200-ը (1200 հոգի) քուրդ էին։ Հայերը պահպանել էին իրենց ազգային և կրոնական բոլոր սովորույթները, ունեին ժայռերի մեջ փորված Ամենափրկչի մատուռը, որը գտնվում էր գյուղի արևելյան կողմում, անտառածածկ մի գագաթի ստորոտում, իսկ գյուղի կենտրոնից քիչ դուրս, դեպի կալերը տանող ճամփի վրա կար քարաշեն և կամարակապ ս. Աստվածածին եկեղեցին։ Քահանան, որ խեղեքի և շալվար էր հագնում, բնավ տարբերություն չուներ քրդերի սեիդից։ Մի ժամանակ նա ծառայել էր ս. Կարապետի վանքում և այնտեղ էլ քահանա ձեռնադրվել, ուներ ութ տղա և վեց աղջիկ։ Նա՝ Տեր-Սահակը, հալիվ 50 տարեկան, բարձրահասակ, առողջակազմ և քաջարի կրոնական էր, որը գիտցած էր կրոնքը հաշտեցնել տեղական պայմաններին՝ եկեղեցուն՝ քահանա, եկեղեցուց դուրս՝ հողագործ, մեղվարույծ և համայնքի մեջ անուն հանած քաջ կռվող։ Երկու ժողովրդի կրոնապետները՝ սեիդն ու քահանան, անբաժանելի ընկերներ էին. ժողովուրդը հավասարապես հարգում էր թե՛ մեկին, թե՛ մյուսին։ Քահանայի երկու մեծ եղբայրները, որ իրենց զավակներով, հարսներով և թոռներով ապրում էին միևնույն հարկի տակ, հակառակ ավագության կարգին, տան կառավարության իրավունքը հանձնել էին իրեն, իսկ տան ներքին գործերի վարումը մեծ եղբոր՝ Պաղտոյի կնոջը՝ Զմոյին։ Նա բոլորի կողմից մամ էր կոչվում։

Գյուղի շրջակա լեռներն անտառածածկ էին։ Ունեին առատ բուսականությամբ արոտավայրեր և բավականաչափ վարելահող։ Վարելահողի արտերը բաժանված էին երկու խմբավորման՝ մեծ մասը գտնվում էր գյուղի ստորոտում և կոչվում էր Հողդարի արտեր, իսկ մնացյալը, որ գտնվում էր գյուղի հանդիպակաց կողմը, կոչվում էր Դիմացի արտեր։ Ցանում էին առավելապես ցորեն, գարի և կորեկ։ Բնակչության գլխավոր զբաղմունքը անասնապահությունն էր, ունեին երկու մեծ ամառանոց։

16. Էլղազի։ Սարե-Սալթիկի լեռներից ծագում առնող երկու ձորակների միջև, Ղլիբատայի հյուսիսային կողմը, Քուռի ամենաբարձր գագաթների արանքում թառել էր նախկին հայկական Արծվաբույն, ներկայիս քրդաբնակ այս գյուղը, որն ուներ 46 տուն (276 հոգի) բնակիչ։

Ղլիբատայից Էլղազի թեև հեռու չէր, բայց լեռնային կածանները և ժայռերի բարձունքները հաղթահարելը շատ դժվար էր, այնպես որ ուղիղ ղծով

փոխանակ մեկուկես ժամվա, մեծ դժվարություններով երեքուկես ժամից հազիվ կարելի էր հասնել գյուղ։

Գյուղի արևելյան կողմը, Պերե-Կեիկանի (եղնիկների պերատեղի) ստորոտում գտնվում էր ս. Աստվածածին մեծ եկեղեցին, որի գմբեթի և խորանի մի մասը քանդված էր, բայց խաչքարերը և քանդակված խոյակները մնում էին իրենց տեղում։

17. Փիր-Սուլթան։ Այս գյուղը գտնվում էր Դերսիմի հզորագույն սրբերից մեկի՝ Տուժիկ-ղալայի հարավ-արևմտյան լանջին։ Արծվաբների նմանող տները շարք-շարք թառել էին իրար վրա։ Քովնտի արահետը կեռման-կեռման ոլորտներով հասնում էր ժայռերի գագաթը և թեքվում դեպի արևելք, ուր չքանում էր ապառը և հայտնվում ղոդավոր մի լեռնահովիտ, շրջապատված Տիզկինի, Ապառի ու Սալթիկի գագաթներով։ Էլղաղիից հեռու էր չորս ժամով։ Գյուղն ուներ 140 տուն (840 հոգի) քուրդ բնակիչ։

Մամգուն և Շեյխ-Հասանան մեծ աշիրեթների հովանավորության ենթակա այս բնական ամրոցը անառիկ էր՝ ճեղքված ժայռերի պատնեշը պաշտպանում էր գյուղին։

Փիր-Սուլթանում գտնվում էր հայերեն հին ձեռագրերի պահեստ, որոնք իբրև քրդական գերբեր խնամքով պահվում էին սեիդ-Ալիշանի կողմից։

Հոբիկից անցնող աղմկահույզ դետը հասնում էր գյուղ, բայց վար չէր թափվում ապառաժների կտտարից, այլ թեքվելով մերթ արևմուտք, մերթ արևելք ու բավարարելուց հետո գյուղի ջրի պահանջը, անցնում էր ապառաժների կողքով դեպի արևմուտք։ Ինչպես գյուղը արծվաբնի էր նման, նույնպես և նրա բնակիչներին կարելի էր կոչել արծիվներ՝ սլացիկ պարթև հասակով, լայնակուրծք ի լայնաթիկունք, հնադարյան սև կաղնու տոկունությամբ, անսասան հսկաներ։ Ըստ իրենց, «ցավ ու չոռ» չտեսած այդ մարդիկ իրենց լե-լեներով, դլե-յաման-ներով և լաուք-ներով թնդացնում էին սար ու ձոր, երգում լիաթոք, ռազմաշունչ և բարձրաղաղակ, կարծես կոկորդնին «ջերմ» չէր տեսել, երգում էին աշխատանքի ժամանակ, ճամփու ընթացքին, սար բարձրանալիս կամ վար իջնելիս։ Ասում էին, թե սրանք քրդացած հայեր են, իրենց սովորությունները, նիստ ուկացը, կենցաղային պայմանները ոչնչով չէին տարբերվում հայերից և սակայն ավելի քրդեր էին ու խոսում էին ղազաերեն։

Ունեին բավարար վարելահող, ընդարձակ արոտավայրեր և մթին անտառներ։ Կեչին, ուռկաղնին, թաքղին և վայրի բարդին խոր արմատ էին ձգել ապառաժների արանքում, ժայռից վեր սլացել ե դարավոր պայքար մղել ամեհի փոթորիկների դեմ։

Գյուղն ուներ իր նախկին բնակիչների մի հին գերեզմանատունը, որը գտնվում էր գյուղից բավական հեռու՝ դեպի Տուժիկ տանող ճամփան. փոքր մի գագաթի վրա։ Տապանաքարերի մեծությունը կարելի չէր համեմատել ներկա գերեզմանաքարերի հետ։ Երևի վիթխարի մարդիկ էին հանգչում այդ քարերի մեծության տակ։

Բնակչությունը զբաղվում էր խաշնարածությամբ և մասամբ հողագործությամբ։ Առատ էր մանանայի բնատուր հարստությունը և վայրի պտուղների բերքը։

18. Տերե-Արիան (Ջաղջին ձոր)։ Կար ձորը, մնում էր և անունը, բայց ջրաղացներ չկային։ Եղել էն, երբ շրջանն ունեցել է խիտ բնակչություն, բայց քարը քարի վրա չէր մնացել նախկին շին ավանից։

Քաջտրանից ուղղակի դեպի հյուսիս, Քուռի գագաթների հարթության վրա և Տուժիկի ստորոտի լանջերին էր ընկած այս գյուղը՝ կազմված 25 տուն (250 հոգի) հայ, 35 տուն (210 հոգի) քուրդ բնակչից։ Գյուղի բնական դիրքը լեռնային էր, ջուրը՝ առատ, վարելահողը՝ սակավ, կլիման՝ առողջ. բայց ցուրտ։

Քաջտրանից Տերե-Արիան ճամփու տևողությունը երեք ժամ էր, կար և ավելի կտրուկ արահետ, որն անցնում էր ապառաժների միջով . ու վտանգավոր էր։ Սովորական արահետը դուրս էր գալիս Քաջարանի Տեր-Օվանի օպայի արևմտյան կողմից, բարձրանում դեպի անտառների խորքը, ապա թեքվելով հյուսիս, անցնում Թխիի-կետուկից և հասնում գյուղ։

Գյուղը կազմված էր այս ու այնտեղ ընկած քարափոր տներից, բացատների մեջ հաստատված գետնափոր որջերից և ամեն մի գագաթի տակ ծվարած հյուղակներից։ Այս բոլորի բնակիչները միասին կոչվում էին արեացիք (ջաղջիպաններ)։

Գյուղի նախկին ջրաղացներից քիչ վերև կային երեք եկեղեցու փլատակներ։

Բնակչության ղլխավոր զբաղմունքը խաշնարածությունը և որսորդությունն էր։ Անվանի էին այս շրջանի այծերն իրենց մեծությամբ, կաթնատվությամբ և թթթիկով։

19. Թարան (Թորդան)։ Գտնվում էր ինքնակախ Դերսիմի արևմտյան խորության և Տուժիկ-պապայի ոնմատչելի ծերպերի ստորոտում։ Արևելքից Տուժիկի լանջերը, արևմուտքից Հաղաջուր սարերի սրածայր դագաթները և հյուսիսից Պոդ-թեփե երկնասլաց լեռը պարսպապատել և չեղոքացրել էին գյուղն իր շրջակայքից։

Իրար շատ մոտիկ Փիր-Սուլթան և Թորդան գյուղերը (շշփոթել Կամախի Թորդան գյուղի հետ, ուղիղ հանապարհով հազիվ մեկ ժամ հեռավորություն ունենային միմյանցից և սակայն Փիր-Սուլթանի արևմտյան կողմում գտնվող այս գյուղը գնալու համար պետք էր շրջանցել Հաղաջուրի կիրճը, որը տևում էր շուրջ չորս ժամ։

Շեյխ-Հասանան և Պալան աշիրեթների սահմանակետ նկատվող այս գյուղը, հակառակ իր բարձր դիրքին, զարմանալիորեն շրջապատված էր դարավոր հին ծառերի անտառներով և այնքան խիտ ու անանցանելի, որ առանց վտանգի կարելի չէր խորանալ դրանց մեջ։ Տեղանքն առհասարակ խիստ լեռնոտ ու դժվարանցանելի էր, ուստի նույնիսկ բնիկները գիշերը գյուղից դուրս էին գալիս միայն դյուրավառ մարխերի օգնությամբ, իսկ ցերեկը ճամփան չկորցնելու համար ուշադրությամբ հետևելու էր նշանակ ուղեցույցներին։

Գյուղը գրեթե հողաղուրկ էր, ուստի ցանում էին միայն կլկիլ, մասամբ էլ բանջարեղեն, աճեցնում պտղատու ծառեր։

Բնակչության 30 տունը (300 հոգի) հայեր, 15 տունը (90 հոգի) քրդեր էին, որոնց գործածական լեզուն զազաերենն էր, թեև հայերը իրար մեջ խոսում էին հայերենի տեղական մի բարբառով, որը գրեթե անհասկանալի էր։

Գյուղը բաժանված էր երկու մասի՝ արևելյան և արևմտյան։ Տները քարափոր խրճիթներ էին, միասին ապրում էին մարդն ու անասունը, հավն ու ճուտը նույն հարկի տակ, տեղ-տեղ անջատված միջնորմներով։

Գյուղը նշանավոր էր իր գելխեղդ շներով (որոնք մարտնչում էին նույնիսկ արջերի դեմ) և որսորդական յուրահատուկ հմտություններով։ Բնակչության եկամուտի և ապրելու գլխավոր աղբյուրը շնաբուծությունը և վայրի գազանների կենդանի ձագերի վաճառումն էր, որը կատարվում էր փոխանակության կարգով։ Գնորդն ինքը բերում էր նախապես պայմանավորված փոխանակելի իրը կամ ապրանքը՝ ցորեն, գարի, չթնդեն, կտավ, ձեթ, զենք, ռազմամթերք և այն բոլորը, ինչի կարիք ուներ վաճառողը։ Փոխանակությունը կատարվում էր տեղում, առանց սակարկության։ Նույնիսկ պատահում էր երբեմն, որ արտադրանքը չբավարարեր պահանջին ու մնար երկրորդ շրջանին։ Նման դեպքերում փոխանակելի ապրանքը թողնվում էր տեղում, հաջորդ անգամ իր ստանալիքը կանխավ ապահոված լինելու համար։

Զբաղվում էին նաև այծաբուծությամբ։ Այս գյուղի նույնիսկ ընտանի նոխազները և մայր այծերը թե՛ կաթնատվության և թե՛ մազի կողմից տարբերվում էին մյուս շրջաններից՝ դրանք ավելի մարմնեղ, առույգ և դիմացկուն էին։ Շատերը փոխանակության կարգով ձեռք էին բերում այստեղի այծերից, ի մասնավորի՝ նոխազներից, իրենց այծերի ցեղը աղնվացնելու համար։

Տուժիկ-պապա լեռին նայող ձորերից մեկի ծմակը շողի էր արտաթորում և ձյուն չէր բռնում։ Այդ նույն վայրի արևմտյան ժայռերում գտնվում էր վիմափոր մի եկեղեցի (զիար), որին վերագրում էին տաք ջրի բնածին հատկություն, և որի ներսը լուսավորվում էր ժայռերի արանքից վեր խոյացող մի գմբեթից։ Զարմանալին այն էր, որ ջերմությունը կար, բայց ինքը՝ տաք ջրի ակը, չկար։ Ասում էին, թե շարքերը ժամանակին գողացել և գետնի տակից ուրիշ վայր են փոխադրել ամբողջ մի ձորամեջ տաք ջրի հետ միասին։ Այնպես գաղտնի են արել այդ, որ ջրի ակի պաշտպան սուրբը չիմանա։

Գյուղից դեպի արևելք, մեկուկես ժամ հեռավորության վրա գտնվում էին մի հին գյուղի ավերակներ, Պոդ-քաշի ստորոտի գերեզմանատան տապանաքարերը (որոնց մեծ մասը զերծ էին մնացել հողի տակ ծածկվելու վտանգից) և Զեքեմների ստորոտի երկու կիսակործան եկեղեցու փլատակները, որոնք վկայում էին, թե անցյալում մի մեծ և շեն ավան է եղել։

Ըստ թաթանցիների, իրենց նախնիների լեռնածածկ այս գյուղի բնակչության մի մասը, որ զերծ էր մնացել բնական աղետից, հեռացել և նոր գյուղ է հիմնել Բոլոմորիի արևմտյան կողմը՝ Զերտիկ գյուղի մոտերքում, դարձյալ Թաթան անվամբ։ Պատմում էին, թե գյուղը կործանվել է երկու սարերի՝ Պոդ-քաշի և Խութաց-սարի միացման հետևանքով։ Խութաց-սարի մի մասը սահել է Պոդ-քաշի վրա, և Պոդ-քաշը տեղահանված ընկել է գյուղի վրա, ծածկելով ամբողջ վարելահողը և գյուղի մի մասը ու փոխել ձորի ընթացքը։

20. Փեռչենկ։ Տիրավանի հյուսիս-արևելյան, Ղլիրաայի ճիշտ արևմտյան կողմը, վերջինից մե-

կուկես, առաջինից երկուսուկես ժամ հեռու էր ընկած Շեյխ-Հասանան աշիրեթի սահմանների մեջ մտնող և նույն աշիրեթի ընտանիքին պատկանող քրդաբնակ այս գյուղը, մոտ 120 տուն (720 հոգի) բնակչությամբ, բաժանված հինգ թաղի։ Գտնվում էր ինքնանկախ Դերսիմի արևմտյան ինքնապաշտպանության գոտու մեջ։

Նկատի ունենալով վարչական կենտրոնի մոտիկությունը, գյուղի բնական դիրքի անմատչելիությունը, իրավացիորեն այս գյուղը նկատված էր աշիրեթի արևմտյան հսկող աչքը։

Գյուղի վարելահողը անբավարար էր, զբաղվում էին առավելապես խաշնարածությամբ, ունեին առատ ջուր և լավ բուսականություն, մանավանդ վայրի պտուղների մեծ անտառներ, որոնք հնարավորություն էին տալիս պարապել նաև որսորդությամբ ու մեղվապահությամբ։

21. Կյուզուք։ Տանձիկից եկող երկու ձորերի միացման տեղը, Փեռչենկի հյուսիս-արևմտյան կողմն էր ընկած 90 տուն (900 հոգի) հայ և 80 տուն (480 հոգի) քուրդ բնակչությամբ Կյուղուք գյուղը։

Գյուղը դիրքավորված էր երկու լեռների խաչաձևումից գոյացած լայն բացատում։ Արահետը Փեռչենկից Կյուղուք դժվարանցանելի էր, ուստի թեև միմյանց մոտիկ, ճամփորդը հարկադրված էր շրջանցել երկու գյուղերն իրարից բաժանող լեռնագագաթները, թեքվելով նախ դեպի արևմուտք, հասնել Չխտակ-սարի երկու գագաթների միջանցքին և ուղղակի հյուսիսից հարավ մտնել գյուղ այն կետից, ուր երկու ձորերը միանում էին իրար և ուր ձգված էր երկար գերաններով փայտե կամուրջը։ Այդ տաժանելի ճամփորդությունը տևում էր երեքուկես ժամ։ Կար և ուրիշ կարճ, բայց վտանգավոր անցք, որով կարելի էր գյուղ մտնել 45 րոպեում, բայց դրա գոյությանը տեղյակ էին միայն բնիկները և այն մատչելի էր միայն նրանց։ Դա Տինկի գլխի ճամփան էր։

Կյուղուք գյուղի Տինկի գլխի ճամփի քարայրն ուներ գաղտնի անցք։ Անցնելով ժայռի թիկունքը, կարելի էր հասնել բնական քարայրի մուտքի դռանը։ Այդ քարայրին Ալքերի այր էին ասում, ուր, իբր, թաքնված էր չար ոգիների յոթ գլխանի դևը իր օգնականներով և որտեղ կային մարդ կուլ տվող ածդահաներ։ Եղել են դեպքեր, երբ կռիվների ժամանակ սպանվածները կրոնապետի կարգադրությամբ գաղտնի բերվել դրվել են այդ այրի մուտքի մոտ՝ դա վերադրելու համար չար ոգիների պատուհասին, որպեսզի սարսափը այրի նկատմամբ տարածվեր ամեն կողմ և ոչ ոք չհամարձակվեր անցնել ժայռի ետևից։ Հասնելով այրին, կարելի էր մտնել ներս և քայլել դեպի արևմուտք, բավական առաջանալուց հետո հասնել իրար դեմ բացվող (մեկը դեպի հյուսիս. մյուսը հարավ, երրորդը արևմուտք նայող) անցքերի, որոնք սանդուղքի աստիճաններով բարձրանում էին քարափոր դետնուղիներով դեպի վեր՝ անմատչելի ժայռերի գիրտը և տարբեր ուղղություններով դուրս գալիս ժայռերի հարավային, արևմտյան և հյուսիսային գագաթների մոտի անտեսանելի խոռոչներից։ Այդ քարափոր գետնուղիները ծառայում էին թշնամուն անակնկալի բերող և չսպասված տեղից «հրաշքով լույս աշխարհ եկող», «դերբնական» ուժի աղդեցությունը տարածելուն և թշնամուն սարսափի մեջ պահելուն։

Գետնուղու աջ և ձախ կողմերին փորված էին մեծ ու փոքր սենյակներ, բոլորը միակտուր ժայռերի մեջ, որոնք ծառայում էին որպես զենքերի և ռազմամթերքի պահեստատնոց, ուտեստեղենի շտեմարան, իսկ մեկը հատկացված էր գրապահեստի՝ հնուց ի վեր ինչ գիրք ու մատյան ձեռք էին գցել բերդից և ավերված վանքերից, խնամքով փաթաթել էին սեկի մեջ և պահել այդտեղ։ Դրան «մյուպարեկ» (շնորհալի) անունն էին տալիս, և ուր մտնելը սրբապղծություն էր համարվում։

Գյուղի լեռնադոգերում ընկած հովիտները լավ վարելահողեր էին։ Դրանց մի մասը գտնվում էր Քառսուն մանկանց խաչերի մոտ, մյուսը՝ Աղլներում, իսկ մնացյալը՝ արտուճների անտառի ստորոտում, ուր գտնվում էին նաև երեք եկեղեցու փլատակներ և մի հին գերեզմանոց մեծ ու փոքր տապանաքարերով։ Գյուղի արևելյան բարձունքին կանգուն մնում էր ս. Գևորգի եկեղեցին։ Բնակչության գլխավոր զբաղումը խաշնարածությունն էր, մասամբ՝ հողագործությունն ու մեղվապահությունը։ Հայերն առհասարակ արհեստավորներ էին, որոնք հաճախակի հրավիրվում էին շրջակա գյուղերում աշխատելու։

22. Հալվորի։ Արևելքից Մալ, հյուսիսից Քուռ և Տուժիկ-պապա լեռների միացման բացատում, երկու լեռներից հոսող աղմկահույզ ձորերի մեջտեղը, անտառածածկ գագաթների հովանու տակ էր ընկած հնադարյան այս գյուղը (նաև՝ Հալվորի, Հալևոր, Ալևոր), որն ուներ 60 տուն (600 հոգի) հայ, 35 տուն (210 հոգի) քուրդ բնակիչ։ Սա Թորուտից հյուսիս-արևմուտք էր՝ երկու ժամվա ճամփա։ Ավանդաբար ասվում էր, թե այս գյուղի պատմությունը գալիս է հին-հին դարերից, ավե-

լի հին, բան Տրդատ թագավորը և Գր. Լուսավորիչը, որովհետև, երբ նրանց հսկողության տակ կառուցվել է մերձակա ս. Կարապետի վանքը, գյուղը գոյություն է ունեցել, ուստի նրա անունով էլ վանքը կոչվել է Հավլորու ս. Կարապետ։ Թե ինչու բոլոցիները կոչում էին այն Հալիվորի ս. Կարապետ, շմշկածագցիները՝ Հալվորի, քղեցիները՝ Հավլորու, տեղ-տեղ էլ՝ Ալևորի ս. Կարապետ, պարզված չէ, բայց փաստն այն է, որ հայարնակ այս գյուղը մինչև մեր օրերը անվթար պահել էր իր դիմագիծը։

Դերսիմի սրտին թառած և բնական ամրություններով պաշտպանված հայկական այս ավանի բնակիչները կոչվում էին նաև վանեցիներ, այսինքն՝ վանքաբնակներ, կապված ս. Կարապետ վանքի հետ, որը թեև ամեն շրջան նկատում էր իրենը, բայց գյուղն ու վանքը և նրանց բնակիչները անբաժան էին իրարից։ Վանքը թեև գտնվում էր համանուն գյուղի արևելյան կողմում, երբեմն-կես ժամ հեռու, շատերը կարծում էին, թե դա և վանքը միաձուլված ամբողջություն են կազմում։

Հայերը և քրդերը Դերսիմի բոլոր ծայրերից, ինչպես նաև Դերջանից, Մամախաթունից, Կամախից, Նույնիսկ Ակնից ուխտի էին գալիս Դերսիմի սուրբ հրաշագործին։ Ինչպես վանքը, նույնպես և Հավլորիի հայերը, առաջինն իր հրաշագործությամբ, երկրորդներն իրենց քաջագործություններով, հարգանք և պատկառանք էին ներշնչել դրացիներին։ Խուրշիտան, Շեյխ-Հասանան և Մամդուն աշիրեթների ինքնիշխան սահմանների մեջ իր տեղն ու անունն ուներ Հավլորաբնակ Միրագյանների համայնքը, որի թիվը Դերսիմի զանազան շրջաններում հաշվվում էր ավելի քան 8000 հոգի կամ չորսից-հինգ հազար շեշխանե, որը նշանակում էր՝ այդքան մարտունակ մարդ ունեցող։

Կարելի է ասել, թե Դերսիմի շրջանի ամենախիտ անտառները գտնվում էին այս գյուղը շրջապատող սարերում։ Նշանավոր էր այս շրջանի դյուրաբեկ ընկույզը, որի ստվերախիտ անտառները հասնում էին մինչև Տուժիկ և Մնձուր լեռների հանդիպակաց սարերը։

Գյուղն ընկած էր ձորամիջում։ Մնձուրից հոսող աղմկահույզ ջուրը անցնում էր ապառաժների միջով։ Մոխրագույն քարից միակտուր ապառաժները կարծես բնության կողմից մասնավոր երկու մասի էին բաժանված՝ անց տալու համար պիժ ու խեբան դետակին։ Ջուրը եզերող ծայրերը, որ ուղղաձիգ իջնում էին հյուսիսից հարավ, Հավլորու վանքը և Թորուտ գյուղը բաժանում էին Հավլորի գյուղից։

Հանդիպակաց երկու ժայռերի կրծքից, գրեթե համաչափ բարձրությունից դուրս էին ժայթքում երկու ջրառատ աղբյուր, որոնք փոխանակ ուղիղ դուրս ցայտելու և կամ վար թափվելու, կարծես արհեստական մղումով հորիզոնական ձևով գետի վեր էին խոյանում, ապա կլոր շրջագծով առաջ մղվում և նոր վար թափվում, օգի մեջ կազմելով բնական մի կամար, ավելի ճիշտ՝ ձևացնելով մշտնջենական ծիրանի գոտու զարմանահրաշ պատկեր։ Այս ցայտաղբյուրների ջրերը հանքային էին, սակայն տեղացիք դա վերագրում էին ս. Կարապետի հրաշագործությանը և երկյուղածությամբ պաշտում։ Ըստ տեղական հավատալիքների, այս աղբյուրների ջրերը կենարար էին և կոչվում էին զավակատու, արևելյան կողմի աղբյուրը՝ արու, իսկ արևմտյանը՝ էգ, այնպես որ արու զավակ ունենալ ցանկացողները խմում էին արևելյան ակից, իսկ աղջիկ ուզողները՝ արևմրայան աղբյուրից։ Արու և էգ կենսատու ակերը կոչվում էին Արևգի սուրբ աղբյուրներ, այսինքն՝ արու և էգ աղբյուրներ։

Հանդիպակաց ժայռերը և հյուսիս-արևմուտքում գտնվող Քուռ, արևելքում՝ Մալ լեռան գագաթները բնական պատվարներով այնպես էին շրջապատել ձորամիջի փոքր հովիտը, որ ոչ մի կողմից կարելի չէր իջնել այնտեղ կամ բարձրանալ վեր, առանց ապառաժների մեջ փորված նեղ սանդղանման մատներից, ավելի ճիշտ՝ ոտնատեղերից օգտվելու։ Բնական այդ պաավարը հնարավորություն էր տալիս ձորամիջում աճեցնելու ամեն տեսակ պտղատու ծառեր և բանջարեղեն։ Հողը թեև սակավ, բայց շատ բարեբեր էր։ Կլիմայական փոփոխություններից զերծ այս անկյունը կարելի էր նկատել Բարձր Հայքի բնական հրաշալիքներից մեկը։

Բնակչության գլխավոր զբաղմունքը անասնապահությունն էր, գորգի, կապերտի գործումը, իսկ մետաղամշակությունը, վառոդի պատրաստումը, հյուսնությունը, դարբնությունը, քարտաշությունը հայերի արհեստներն էին։ Գյուղից վեր գտնվում էին նշանկաների ցուցանակներ և հավարի բարձունքներ, ուր և գտնվում էր վարելահողի մի մասը։ Հանդի և Պենտի արտերը գտնվում էին գյուղի հյուսիս-արևելքում։

Գյուղն ուներ երկու եկեղեցու փլատակներ, ձորամիջում՝ մի հին գերեզմանատան ցրիվ եկած տապանաքարեր, աստ ու անդ գեռ մնում էին

խաչքարերի կանոնն կամ կիսով հողի մեջ թաղված մնացորդներ։

23. Թորուտ (Թոռիտ)։ Խոզաթի հյուսիսային, Թանելերի հյուսիս-արևելյան կողմը, Հավլորիից հոսող ջրի ափին, երեք կողմից լեռներով շրջապատված գեղատեսիլ մի գյուղ էր սա, բաղկացած զանազան մեծ ու փոքր թաղերից (գոմահանդ)։ Երեք ուղղությամբ ցրված այս մեղրենները իրարից ոչ հեռու երեքից-տաս տնից բաղկացած թաղեր էին, որոնց հավաքական թիվը հաղիվ 90 ընտանիք էր կազմում. 65-ը (650 հոգի)՝ Միրաբյան հայեր, 25-ը (150 հոգի)՝ ղաղա քըրդեր (ալևի)։

Թորուտից երեք արահետ էր դուրս գալիս, ավելի ճիշտը՝ երեք արահետ կամրջի գլխին միանում էին իրար։ Առաջինը դալիս էր Խոզաթի կողմից, երկրորդը՝ Թանելերից, երրորդը՝ Հավլորիից։ Սրանցից ամենավտանգավորը Խոզաթի հյուսիսային կողմից՝ Ալվերեն գյուղից եկող արահետն էր։ Թանելերից Թոռիտ հեռավորությունը երկուսուկես ժամ էր, սակայն այդ կարճ տարածությունն անցնելու համար պետք էր հաղթահարել մեծ դժվարություններ հասնելու համար ս. Կարապետի վանքը, որի սեփականությունն էր եղել հին գյուղը։ Գյուղի տնտեսություններն ունեին առանձին վարելահողեր, սակայն վարուցանը, հունձնուկալը կատարում էին համագործակցությամբ։ Միևնույն հանդում իրար սահմանակից արտատերերը միասնաբար կատարում էին գյուղատնտեսական աշխատանքները և արդյունքը բաժանում ըստ արտերի համեմատական տարածության։ Եթե վարելահողը պատկանում էր անհատների և նկատվում էր անհատական սեփականություն, ապա արոտավայրերը և անտառները համարվում էին համայնքային սեփականություն և օգտագործվում էին բոլորի կողմից։

Մեղրեցիների գլխավոր զբաղմունքը խաշնարածությունն էր, որից հետո՝ մեղվապահությունը։

Գյուղի արևելյան կողմում, նախկին հին գյուղի ավերակների մեջ երևում էին Տիրամոր և ս. Համբարձումի կիսակործան եկեղեցիները։

24. Խոան։ Թորուտից հյուսիս-արևմուտք, Թանելերից արևելք երկու ժամ, Խոզաթից հյուսիս-արևմուտք չորս ժամ հեռու էր գտնվում խոանցիների մշտապես ապստամբ բնակչության մի հատվածը, որն իր աշիրեթի անունով կոչել էր նաև գյուղը։ Բնակչության մեծ մասը վաղուց հեռացել էր Խոզաթի շրջանից և Խութաց-ձորի աջափնյա անմատչելի սարերում հիմնել նոր գյուղ։ Բնակիչները քրդեր էին՝ 28 տուն (168 հոգի)։

25. Իզոլի։ Խոանցիք և Միրաղան (հայ) աշիրեթները համագործակիցներ էին, որոնք նախքան Խոզաթը թուրքերի կողմից գրավելը Դերսիմի հզորագույն աշիրեթներից են եղել։ Իզոլանցոց աշիրապետի կենտրոնանիստ Իզոլի գյուղը հին գյուղի մանրանկարը կարելի է համարել։

Խոզաթի գրավումից հետո աշիրեթի մեծ մասը թուրքերի ճնշման տակ հեռացել էր իր ծննդավայրից և բնակություն հաստատել Խարբերդից Մալաթիա տանող ճանապարհի վրա, Մալաթիայի լեռնային շրջաններում, Եփրատի սղմկահույզ ափերից քիչ վեր։ Լեռնային այս շրջանը և Եփրատի վրա ձգված Քառասնակ (Կրխ-Կյող) ունեցող մեծ կամուրջն այնուհետև կոչում էին աշիրեթի անունով՝ Իզոլիի կամուրջ, շրջանը՝ Իզոլիի շրջան, ուր գտնվում էր ավելի քան 30 գյուղ։

Իզոլցիները (Մալաթիա) 1915 թ. հայկական Մեծ եղեռնի ժամանակ հաղարավոր տարագիրներ և որբեր աղատագրեցին և, հակառակ թուրք իշխանության սոիդումներին, չհանձնեցին թուրքերին։

Սույն Իզոլի գյուղը գտնվում էր Խոզաթի հյուսիս-արևմտյան, Խոանի հարավային կողմում։ Ճամփու տևողությունը Խոանից Իզոլի թեև շատ կարճ էր, բայց անմատչելի դիրքի պատճառով երկուսուկես ժամ էր տևում, իսկ Խոզաթից Իզոլի՝ երեքուկես ժամ։

Հավլորիի վանքից հոսող գետափին գտնվում էին ս. Լուսավորիչ եկեղեցու փլատակները։

Կային շատ քրդախոս հայեր։ Գյուղն ուներ 28 տուն (280 հոգի) հայ, 165 տուն (990 հոգի) քուրդ բնակիչ։

26. Ալվերեն։ Գտնվում էր Իզոլիի հարավ-արևելքում, Հավլորիից եկող ջրի ափին։ Ճամփու տևողությունը Իզոլիից Ալվերեն երեք ժամ էր։ Բնակիչները քրդեր էին՝ 142 տուն (852 հոգի)։

27. Արտաբերդ։ Խոզաթի արևելյան. կողմը, Շենից արևմուտք, երկուսուկես ժամ հեռու գտնվում էր 80 տնից (480 հոգի) բաղկացած քրդական այս գյուղը, որի բնական դիրքը անառիկ էր, շրջապատված ապառաժներով։ Շենից Արտաբերդ ճանապարհը դժվարանցանելի և վտանգավոր էր։

Գյուղի արևմտյան բարձունքի վրա գտնվում էին մի հին բերդի ավերակներ։ Գյուղը հավանաբար կոչվել է բերդի անունով։ Արտաբերդի ավերակներից կանգուն էին մնում արտաքին պարսպի պատերի որոշ մասը, երկու աշտարակների հիմնաքարերի վերին սանդղամատներն ու դարպասի մուտքի գռան անկյունավոր խոռոչները։ Բերդը, հավանաբար, ունեցել է ստորերկրյա գետնուղի-

ներ և կամ պահեստներ, թեև այդ անցքերից ոչ մեկի հետքը դանել կարելի չէր, բայց տեղ-տեղ դեպինը թնդում էր ուժեղ հարվածներից։

Երկու ջրառատ աղբերից մեկը ջրվեժանման թափվում էր ձորը, իսկ մյուսը՝ հոսում դեպի գյուղ։ Վարելահողը գտնվում էր Շվոտի քարի շրջակայքում։ Ժայռերից անջատված միակտուր այս ապառաժը հնադարյան կալնու նման դուրս էր ցցվել դետնի ընդերքից և ուղիղ կանգնել առանց որևէ հենարանի։ Ժայռի ուղղաձիգ բարձրությունը ավելի քան 50 մետր էր։ Իբր թե «շվոտ» անունով շարքը երեխաներին գողանում և այդ ժայռի կատարից ցած էր գցում, ապա արյունը ծծում և մարմինը թաղում, մինչև որ թարմությունը կորցներ, նոր ուտում էր։

Շվոտի քարից դեպի Մողաձոր տանող արահետի աջ կողմում, հնդարյան արտուճների ստորոտում լին գտնվում ս. Գևորգ (Խրար-էլիաս) եկեղեցու փլատակները։

Գյուղն ուներ լավագույն արոտավայրեր և ընկուզենու ու կաղնու անտառներ։ Հողն արդասաբեր էր, ջուրն՝ առատ։ Գյուղացիների զլխավոր զբաղմունքը խաշնարածությունը և հողագործությունն էր։ Անտառներում առատ մանանա էր իջնում, որը շատ թանձր էր լինում։

28. Դաշտակ։ 30 տուն (300 հոգի) հայերից, 100 տուն (600 հոգի) քրդերից բաղկացած այս գյուղը գտնվում էր Արտաբերդի հյուսիսային կողմում, երկու ժամ հեռավորության վրա։ Իքձորից հոսող և Հավլորու ս. Կարապետ վանքի մոտով անցնող ձորը սահմանագծում էր գյուղի արևմտյան կողմը՝ հյուսիսից հարավ, արևելքում Խութաց ձորն էր, իսկ գյուղը շրջապատող լեռները Մալի ճյուղավորված թևերն էին, որոնք կարծես դիտումնավոր կերպով ներս քաշված և բավական մեծ տարածությամբ ծնունդ տված էին բնական զմայլելի գեղեցկությամբ լեռնադաշտի։

Խուրշիտան աշիրեթի կենտրոնանիստ այս գյուղի ճանապարհն էլ դժվարանցանելի էր։ Արահետը անցնում էր անտառների միջով և բարձրանում միշտ դեպի վեր ու խաչաձևվում Հավլորիի ս. Կարապետ վանքը տանող ճամփի հետ։

Դաշտակն էլ Արտաբերդի նման հարուստ էր պատմական կոթողներով։ Մալի հարավային լանջին, Հաղրեթի-Խրդրի (ս. Սարգիս) ստորոտում էին գտնվում Առաքելոց վանքի (կոչվում էր նաև Դաշտավանք) ավերակները, իսկ վանքի հարավային կողմում, դեպի Արտաբերդ, ճամփի ստորոտում գտնվում էին քարուկրից կառուցված ս. Խաչ եկեղեցու փլատակները։

29. Շեն (Սին, Սեն)։ Ինչպես Հապսը, նույնպես և Շեն ավանը երկուսն էին՝ մեկն ավերված, մեկը՝ կանգուն։

Պատմական նախկին Շեն ավանը գտնվում էր Խողաթի հյուսիս-արևելքում, Դաշտակից արևելք, Խութաց-ձորի արևմտյան կողմում։

Դերսիմն ընդհանրապես, պատմական Շեն ավանը մասնավորապես կարելի էր կոչել «եկեղեցոց գավառ», որովհետև Շենի և Խութաց-ձորի ներկայումս անմարդաբնակ տարածության միջև գտնվում էին հարյուր եկեղեցիների ավերակներ՝ տաճարներ, խորաններ, սրբատաշ քարեր, վիմաքարեր, խաչքարեր, սրբազան ակնաղբյուրներ, կիսակործան կաթողիկեների պատերի մնացորդներ, ծաղկազարդված կամարաքարեր լին դրանք։

Դաշտակից Շեն տևողությունը երեք ժամ էր, Արտաբերդից՝ չորս ժամ։ Մամեղից Շեն ճամփի տևողությունը աչքաչափով հեռու չէր, բայց Մալի ճյուղավորումները հեռացնում էին այն, երկու գյուղերի միջև ընկած ճանապարհը հինգ ժամվա հասցնելով։

Գյուղը կազմված էր 35 տուն (350 հոգի) հայերից և 40 տուն (240 հոգի)՝ քրդերից, որոնք զբաղվում էին անասնապահությամբ, մասամբ էլ հողագործությամբ։ Տները դետնափոր ու բարափոր խրճիթներ էին։ Նոր գյուղի դիրքը հնից բարձր էր։

30. Մամեգի (Մամիկ)։ Առանց հանդիպելու Մեծկերտի հյուսիսում գտնվող Սեղանք գյուղին, հարավում թողնելով Թյումյուրթաքը և Լաղվանը, ճամփան անցնում էր ուղղակի արևմուտք՝ դեպի Խողաթ և առանց մտնելու Խողաթ, կանգ առնում Պալքան (Պալիկան) աշիրեթի սահմաններում, ուր, Խողաթի ու Մնձուրի ջրերի միջև, կային մի շարք գյուղեր։

Մամեգի գյուղը գտնվում էր Խողաթի հյուսիս-արևելքում՝ Մալ լեռան հարավային դաղաթներից դեպի արևելք նայող Ծին (Զին) սարալանջի ստորոտում, արագավազ մի գետակի աջ ափին։ Շենից Մամեգի ճամփի տևողությունը երեք ժամ էր։ Սարերի վրա ընկած լեռնադաշտը և այն հովանավորող նոր բարձունքները գյուղին տալիս էին բնական ամրոցի տեսք։ Ուներ լավագույն վարելահող, որը բավարարում էր 186 տնտեսությունից բաղկացած բնակիչներին, որոնցից 56 տունը (560 հոգի) հայ էր, 130-ը (780 հոգի)՝ քուրդ։

Ավանդաբար պատմում էին, թե անցյալում այս շրջանը պատկանելիս է եղել Մամիկ անունով մի իշխանի, որն ունեցել է բերդեր, ամրոցներ և տասից ավելի մեծ ու փոքր ավաններ։ Ինքը՝ իշխանը, բնակվելիս է եղել ներկա գյուղի արևելյան բարձունքում, Ծին լեռնագագաթից քիչ վար գտնված իշխանական ապարանքում, որի փլատակների մնացորդները և կառույցի զբաղեցրած տարածությունը կենդանի վկաներ էին ճարտարապետական այդ կերտվածքի անցյալ փառքի և հզորության։

Դղյակի վայրը օժտված էր լավագույն հողամասով։ Ամեն կողմից դլգլացող աղբյուրների մեղմաշունչ ձայնը և առվակների կարկաչը, դույնդրդույն ծաղիկների բույրը և անտառածածկ սարերի կուսական գեղը դիտողի աչաց առջև պատկերացնում էին գեղատեսիլ մի բնապատկեր։

Իշխանական ապարանքի հյուսիսային կողմը, անտառածածկ ժայռերի ընդերքում, դարերի փլուզումից անվթար էին մնացել տասից ավելի քարափոր շտեմարաններ, որոնք շինված էին այնպիսի ճարտարապետությամբ, որ մարդկային տեսողությունից թաքնված էին մնում։ Այդ քարայրներն օգտագործվում էին տեղացիների կողմից որպես պահեստանոցներ։ Դրանք ունեին ամեն հարմարություն՝ ջուր, լույս, մեկը մյուսի հետ հաղորդակցվելու գետնուղի և սարի մյուս կողմից դուրս գալու գաղտնի ելք, որի մոտ բնակվում էր տասից ավելի ընտանիք, որոնք քարայրի ծածուկ թաքստոցի ելքի դռանը հսկող արթուն պահակներ էին։

Ծին կոչվող սարալանջը, որ գյուղի արոտատեղին էր և ձմեռանոցը, ղտնվում էր ապարանքից բավական բարձր ու հեռու։ Այդտեղ կային հին գոմերի ավերակներ։ Ինչպես պատմում էին, ժամանակին այդ գոմերում ձմեռել են իշխանի անասունները։ Ըստ ավանդության, սարալանջին Ծին անունը տրվել է այդ գոմերի պատճառով, իսկ քրդերը «ծ» հնչյունը փոխելով «ղ»-ի, Ծինը Ջին էին արտասանում։

Գյուղի վարելահողը գտնվում էր անտառի խորքում, իսկ պտղատու ծառերի պարտեզները՝ հարավային ձորամիջում։

Պալքան աշիրեթի սահմաններում գտնվող այս գյուղի բնակչության գլխավոր զբաղմունքը երկրագործությունը, պտղահավաքումը, անասնապահությունը և բանջարահավաքումն էր, որոնց արդյունքները փոխանակության կարգով իրացնում էին շրջկենտրոններում։

Մամիկ իշխանի ապարանքի փլատակներից ոչ հեռու, դեպի արհեստական քարայրները տանող ճանապարհի աջ ու ձախ կողմերում նշմարվում էին այստեղ ու այնտեղ ցրիվ ընկած խաչքարեր՝ կամ թաղված հողի մեջ, կամ էլ կանգուն քարափանքների արանքում։ Կային և խիստ մամռապատված անընթեռնելի արձանագրություններ։

Նույն տարածության վրա, իրարից բավական հեռու, եռանկյունաձև Արջնքարի ստորոտում ու Ջեքեմների բացատում գտնվում էին երեք եկեղեցու փլատակներ, որոնցից մեկը, Տիրամայր անունով, ուներ կիսակործան մի մեծ խորան, որի ճարտարապետական կառույցը և քարերի դույնը տարբերվում էին մյուսներից։

* * *

Այսպիսով, Խոլաթի շրջանը բաղկացած էր 30 բնակավայրից, որից զուտ քրդաբնակ էր 15-ը, հայ ու քուրդ խառն՝ 15-ը, իսկ ենթառն հայաբնակ բնակավայր չէր մնացել։ Այդ բնակավայրերում կար 5070 տուն, որից հայի տուն՝ 1966, քրդի տուն՝ 3104։ Բնակչության ընդհանուր թիվը հասնում էր 38284 հոգու, որից հայեր՝ 19660, քրդեր՝ 18624։

II. ՕՎԱՃԳԻ ՇՐՋԱՆ

31(1). Օվաճգ։ Խոլաթից հյուսիս-արևմուտք, Սարե-Սալթիկ լեռնաշղթայից արևելք, Տուժիկ-պապայից արևմուտք, Մնձուր լեռան Անահիտի կաթնաղբյուրներից կազմված գետակի ափին էր գտնվում Օվաճգ գայմագամանիստ գյուղաքաղաքը։

Օվաճգը բարձրադիր լեռների արանքում ամենաբարձր և ամենագեղեցիկ լեռնադաշտն էր։ Գյուղաքաղաքն իր անունն ստացել էր լեռնադաշտից, որը Երզնկայի հովտի մանրանկարն էր, շատ ավելի բարձր, քան Երզնկան։ Տարածությունը մի օրվա ճամփա էր, լայնքն անցնելը կես օր էր տևում։

Այս շրջանը թուրք կառավարության համար ծանր բեռ է եղել, քանի որ մշտապես ապստամբ էր։ Ամռանը երթևեկությունը ապահովելու համար բերված զինվորները և դոսերտերները (հեծյալ ժանդարմ) հաճախ ենթարկվում էին հարձակման և կողոպտվում ապստամբ քրդերի կողմից, իսկ ձմռանը մինչև հինգ մետրի հասնող ձյան հաստ ավանը թույլ չէր տալիս դուրս գալու գյուղերից, այնպես որ ամռան մի քանի ամսին Ջերտնիկի

կամուրջը պահպանելու համար բերված գինվորներն ու ոսպիկանները աշնանը վերադառնում էին իրենց տեղերը։

Օվաճգը թեև լեռնա-դաշտային էր, բայց շրջապատված էր Ղազան-Տաղիի, Մնձուրի, Պաղաձորի անմատչելի դագաթներով։ Տեսական սպառնալիքի առաջ էր պահում Զարսանջակի, Ակնա, Կամախի և Երզնկայի մի շարք գյուղերը, որոնք գանվում էին Եփրատի ձախափնյա մասի Դերսիմի սահմաններում։

Թուրք իշխանությունները թեև մեծ գումարներով կաշառում էին Ռեսիգան, Արսլանան և Սալթիկան աշիրապետներից ոմանց, բայց առիթը ներկայանալիս այդ նույն աշիրապետները ուրիշ աշիրեթների միջոցով չարդել էին տալիս թրքական զորախմբերին։

Օվաճգի հյուսիս-արևմտյան լեռնաշղթու Ղազան-Տաղիի դեպի Դերսիմ երկարող աջ բազուկի ստորոտում կային հինգ եկեղեցու և մի հին բերդի ավերակներ ու տապանաքարեր։ Երզնկայի ս. Կիրակոս վանքի արևելյան կիրճով Օվաճգ գնալիս կարելի էր թեքվել դեպի Ղազան-Տաղի և տեսնել այդ ավերակները։ Եկեղեցիներից մեկը կոչվում էր ս. Պողոս-Պետրոս, երկրորդը՝ Շողակաթ, երրորդը՝ Լուսավորիչ։ Թաթանից Օվաճգ ճամփի տեվողությունը երեքուկես ժամ էր։ Ուներ 38 տուն (380 հոգի) հայ, 336 տուն (2016 հոգի) քուրդ բնակիչ։

32(2). Հոբիկ[1]։ Վարչական կենտրոն Օվաճգ գյուղաքաղաքին չհասած, Պալան աշիրեթի սահմաններում, Թաթանի հյուսիսային կողմը, վերջինից երեքուկես ժամ, շրջկենտրոնից մեկ ժամ հեռու էր գտնվում քրդաբնակ այս գյուղը՝ կազմված 40 տնից (240 հոգի)։

Թաթանից Հոբիկ արահետն անցնում էր ժայռերի ու անտառների միջով, հասնում Տիզկինի (Տուժիկ-պապայի արևմտյան մեկ գագաթը) և Սարե-Սալթիկի միացման բարձունքի նշանակային, ուր բացվում էր մի ընդարձակ լեռնահովիտ, որի վարի սարալանջի ձորափին էր գյուղը։

Գյուղը բաժանված էր երկու թաղի՝ աջափնյա և ձախափնյա, իսկ կալերը գտնվում էին գյուղի և Գանիե-Տիզկինի միջև, գրեթե իրար կից, բարդիների ու ուռիների ստվերախիտ հովանու տակ, ջրին մոտիկ։

Գյուղն օժտված էր առատ ջրերի ակերով և բավարար վարելահողերով։ Արտերը գտնվում էին դեպի լեռնադաշտ իջնող երկու ձորերի արանքում և բաժանված էին երեք մասի՝ Գոմեր, Արալուխ և Մեվլուտան, իսկ պարտեզ-բանջարանոցները գտնվում էին Գանիե-Տիզկինի շրջակայքում։ Այստեղ վարուցանը, հունձնուկալը կատարվում էր գրեթե համատեղ՝ փոխօգնությամբ։ Գյուղացիների գլխավոր զբաղմունքը հողագործությունն էր։ Պահում էին նաև անասուններ ու փեթակներ։

33(3). Աշուր։ Գտնվում էր Հորիկի հյուսիս-արևելյան կողմում, երկու ժամ հեռավորության վրա, Սարե-Սալթիկի լանջին, Սեիտ-Թեփե գագաթի ստորոտում։ Ուներ 25 տուն քուրդ բնակիչ (150 հոգի), որոնք պատկանում էին Աշուրան աշիրեթին։ Հակառակ իր լեռնային դիրքին, ուներ լավագույն վարելահող և առատ ջուր։

34(4). Աշուրան (Աշուրեկ)։ Մանսուրից հյուսիս, Օվաճգի բարձրավանդակի ժայռերի ստորոտում էր ընկած այս գյուղը, որն Աշուրանցի աշիրեթի գլխավոր զինամթերանոցը և բնակատեղին էր։

Անմատչելի ժայռերի մեջ փորված անձավների ու գետնուղիների մուտքի և ելքի ճամփաները ծանոթ էին միայն աշիրապետին և նրա վստահությունը վայելող օգնականներին։ Այստեղ էր, որ խնամքով պահվում էին ամբողջ աշիրեթի ոչ միայն զենքերն ու զինամթերքը, այլ նույնիսկ մի տարվան բավականանալու չափ սննդամթերք (չորթան, կորեկի հաց, կարագ, պանիր, աղած ու չորացրած միս, չորացրած բանջարներ, կարասներով մանանա, ալյուր և չորացրած սաճի հաց)։ Ամեն տարի աշնանը պարենեղենը փոխվում էր նորով, իսկ հինը գործածվում էր։

Գյուղի թիկունքին անմատչելի ապառաժներ էին, ձորի աջափնյա լեռները՝ շատ սարփ, բայց անտառածածկ, գյուղի մուտքի ճամփան անցնում էր ձորամիջի փոքր կիրճով, որը պաշտպանված էր այդ կիրճի քարանձավների մեջ բնակվող քաջ ու վստահելի ընտանիքների կողմից։ Մանսուրից Աշուրեկ արահետն անցնում էր կածաններից, հեռավորությունը մեկուկես ժամից ավելի էր։

Աշուրեկն ուներ մոտ 160 տուն, որից 115-ը (690 հոգի) քուրդ էին, 45-ը (450 հոգի)՝ քրդախոս հայեր, որոնք անվթար պահել էին իրենց ազգային և կրոնական ավանդությունները ու հավատալիքները, ինչպես նաև հայերեն բարբառը, որը շատ խրթին էր։ Հայերը տոնում էին քրիստոնեական բոլոր տոները (վարդավառ, բարեկենդան, զատիկ և այլն), որին մասնակցում էր ամբողջ գյուղը։

Քրդերն էլ շատ հյուրասեր էին, սակայն այս գյուղի հայերի հյուրասիրությունն արտակարգ էր։

[1] Գյուղն իր անունը, հավանաբար, առած պետք է լինի Հոբ-ից, որ նշանակում է շրարաշխ կայան, որպիսիք պետք անվամբ իրոք կային այդտեղ։

ԵԹԷ պատահում էր, մի օտարական էր անցնում գյուղից, ճամփան շարունակել չէր կարող՝ առնը-վաղն մի երկու օր կպահեին գյուղում, իսկ եթե պատահեր, որ անցորդը հայ լիներ, ոչ միայն հայերը, այլև քրդերը բռնադատում էին և մերժումի պարագային սպառնում, որ իրենց համայնքի պատիվը ոտքի տակ չտան ու հյուր մնան։ Այդ օրը բոլոր հայերի տոնական օրն էր լինում, դաուլ-զուռնա, տամբուրա, քրդական սրինգ և սազ մեջտեղ էին հանում։ Խորտիկները, պապգոները, սած-դաուրմասին, պիրանը հաջորդում էին իրար։ Քրդերը ևս պատվում էին հազվագյուտ անցորդին՝ «պրա-էհերմենին» (կամ հարմենին)՝ եղբայր հային, որը պատիվ էր արել, հյուր մնալով իրենց հայերի մոտ։

Գյուղի վարելահողը ընկած էր ձորամիջի հովտում, որի արևելյան բարձունքին, դալարագեղ մի պուրակի խորքում և երկու կարկաչուն աղբյուրների կենտրոնում էր ավերված ս. Սարգիս (Հազրեթի-Խրդր) եկեղեցին, որը գյուղի պաշտպան սուրբն էր։

Այստեղի բնակիչները երկարակյաց էին։ Մի հայ ընտանիքի տանտերը՝ Տեր-Սարգսի Թոռան Բոռ Սահակե Ակին (Սահակի որդի Հակոբ), որը պապի անունով էր ճանաչվում գյուղի մեջ և բոլորի հարգանքն էր վայելում, 125 տարեկան կայտառ ծերունի էր, մինչև գոտեստեղն իջնող սպիտակահեր փառավոր մորուքով, երկար բեխերով, թավ հոնքերով, որոնք պատկառելի երևույթ էին տալիս այս պատվական պապին։ Ըստ պապի պատմածների, իրենց նախնիները բնակվելիս են եղել Բող վանքի ստորոտում, Ծաղկասարի հովտում։ Միջաշիրեթական մի կռվի ժամանակ, գյուղը կրակի էր տրվել և բնակչության մեծ մասը բնաջնջվել։ Ողջ մնացածներից ոմանք ապաստանել էին Կյուզուքում, մի մասն էլ հաստատվել այս գյուղում։ Ծաղկասարի իրենց Ծաղկաձոր գյուղը ունեցել է ավելի քան 450 տուն բնակչություն, որից 300 տունը՝ հայ, 150-ը՝ քուրդ, բոլորն էլ նույն աշիրեթի անդամներ։ Ծաղկաձորն ունեցել է երեք եկեղեցի և երկու սրբատեղի՝ ս. Նշան և ս. Խաչ անունով։ Ըստ պապի հավաստիացումների, եկեղեցիների բոլոր մասունքները, ձեռագրերը, ավետարանները պահված են ս. Աստվածածին եկեղեցու խորանի տակի քարափոր թաքստոցի մեջ և անվթար մնում են եկեղեցու փլատակների տակ։ Ս. Աստվածածինը գտնվում էր գյուղի արևելյան կողմում, Ջաթալ-քարի ստորոտում, ուր կար մի մեծ գերեզմանատուն և պաղ աղբյուրի ակ։ Ամեն տարի, Աստվածածնա տոնին, գյուղացիներն ուխտի էին գնում կիսակործան այդ տաճարին, հանդիպելով իրենց նախկին համագյուղացիներին, որոնք ցրված էին զանազան գյուղերի մեջ։

Ծաղկասարը շրջանի դալարագեղ լեռներից էր, իսկ Ծաղկաձոր գյուղը գտնվում էր նույն սարի բարձունքից հոսող երկու գետերի միացման տեղը, բայց գյուղացիները չէին դառնում այնտեղ բնակվելու, վախենալով ս. Աստվածածին տաճարի վրեժխնդրությունից, որը պատժել էր իրեն այրող աշիրեթի անդամներին։

Հայերի մեծամասնությունը արհեստավոր էր։ Այստեղ էլ հայ ու քուրդ լավ գորգագործներ ու կապերտագործներ էին, մասնավորապես պապի հարսներն ու զավակները մասնագետ վարպետներ էին։

Գյուղի գլխավոր զբաղումը անասնապահությունը և մեղվաբուծությունն էր։ Հայերն ու քրդերը ապրում էին հաշտ ու համերաշխ։

35(5). Աղտատ (Աղտակ)։ Սարե-Սալթիկի Աղտատ գագաթի ստորոտում, Աշուրի արևելյան կողմը, մեկ ժամվա ճամփի վրա էր գտնվում 40 տուն (400 հոգի) հայ և 20 տուն (120 հոգի) քուրդ բնակիչ ունեցող այս գյուղը։

Գյուղն անցյալում ունեցել էր բազմամարդ բնակչություն, բայց կործանվել էր երկրաշարժից։ Ողջ մնացած բնակիչները հաստատվել էին Աշուրին մոտիկ այս հարթավայրում։ Հին գյուղի ավերակների մի մասի հետքերը երևում էին Աղտատ սարի ստորոտում, որի արևմտյան կողմը, ճնուտի հանդի բարձունքում, կային կիսակործան մի տաճարի մնացորդներ։ Դրանցից քիչ հեռու, մի փոքր ապառաժի վրա ագուցված մնացել էր մարդու հասակից շատ բարձր գեղակերտ մի խաչքար, որի ստորոտից բխում էր Քառասուն-մանկանց առատահոս պաղ աղբյուրը, և որը ուխտատեղի էր նկատվում բոլորի կողմից։

Հին Աղտատի մասին ավանդություններ շատ կային։ Իբր թե կործանված գյուղի արևելյան կողմում, երկու ձորերի միջև, գեղատեսիլ մի հարթավայրում հիմնված է եղել պարսպապատ և քարակերտ եկեղեցիներով մի վանք՝ ս. Նշան անունով, որն ունեցել է գիշերօթիկ վարժարան և հարուստ գրապահեստ։ Ժողովրդի մեջ դեռ պահպանված էին վանքի անվան հետ կապված հրաշագործությունների պատմություններ։ Իբր թե հայոց Տրդատ թագավորն անձամբ հսկել է վանքի կառուցմանը և իբր Գր. Լուսավորիչը պատարագել է Աստվածածնա խորանում։ Վանքի անունը կար, բայց

հնարն անպում չկար։ Ադտաա սարից և Սարե-Սալթիկից անցաված լեռնամասերը փուլ էին եկել վանքի և գյուղի վրա։ Միայն Քառասուն-մանկանց խաչքարն էր կանգուն մնացել, որպես ապացույց լեռների տակ ծածկված վանքի և գյուղի բնակչության անցյալի պատմության։

Հայերի մեծամասնությունը շինարարներ էին՝ բարաաշներ, որմնադիրներ, միևնույն ժամանակ երկրագործներ ու պտղամշակներ։

Կառուցողները հրավիրվում էին շրջանի մյուս գյուղերից, ի մասնավորի աղաներից՝ նոր ղոնախներ կառուցելու։ Քրդերը պարապում էին խաշնարածությամբ և մասամբ հողագործությամբ։

36(6). Սատո։ Աղտատից հյուսիս-արևելք, Տուժիկի փեշերից մեկում բացված ծոցավոր մի հարթության վրա էր գտնվում քրդաբնակ այս գյուղը՝ կազմված 30 տնից (180 հոգի)։

Աղտաաից Սատո տևողությունը մեկուկես ժամ էր, արահետը՝ հաճելի, կարելի էր ճամփորդել, բացի սայլից, փոխադրական բոլոր միջոցներով։

Դիրքը լեռնային էր, վարը Օվաճգի լեռնադաշտն էր իր գետակներով ու ձորերով, որոնք ծնունդ էին առնում Մնձուրից, Սարե-Սալթիկից և լեռնադաշտը շրջապատող դանդաղ լեռնապրիսպներից։ Լեռների բարձր գագաթները մշտնջենական ձյունածածկ էին, զուրկ՝ անտառներից։

Գյուղի բնակչության գլխավոր զբաղմունքը հողագործությունն ու անասնապահությունն էր։

37(7). Մնձուր (Սեիդ-Մունզուր)։ Այս գյուղը գտնվում էր Օվաճգի լեռնադաշտի հյուսիսային կողմում, Մնձուրի և Տուժիկի միացման սարահարթում։ Ճամփի տևողությունը Սատոյից երկուսուկես ժամ էր։ Ուներ 17 տուն (170 հոգի) հայ, 25 տուն (150 հոգի) քուրդ բնակիչ։

Մնձուրի լեռնաշղթա, Մնձուր գետ, Մնձուրի Անահիտի սրբազան աղբյուրներ և Մնձուր գյուղ՝ ղուտ հայկական պատմական այս անվանումները թրքացրել էին «ձ»-ն «զ»-ի փոխելով։

Գյուղը իրաբ խաչաձևվող, ծուռումուռ արահետ հիշեցնող փողոցներով մի թաղամասի էր նման։ Գոմերը գտնվում էին գյուղի արևելյան կողմում, հողմերից և ցրտից պաշտպանված տարածության վրա, որի երեք կողմերից բարձրանում էին կանաչազարդ լեռնակներ։

Բնակչությունը զբաղվում էր հողագործությամբ, անասնապահությամբ և մասամբ տնայնագործությամբ։ Շրջակա լեռների բարձունքները զուրկ էին անտառներից, ուստի գյուղացիք ստիպված էին իրենց վառելափայտը բերել հեռու անտառներից։

38(8). Ջերանիկ։ Մնձուր գետի ձախ ափին էր ընկած այս գյուղը, Սևիտ-Մունզուրից երկուսուկես ժամի ճամփա հեռու։ Գետը ջրառատ և արագահոս էր ու անանցանելի, ուստի Ջերանիկ և Բլուր գյուղերի միջև կառուցված էր միակ կամուրջը, որով էլ անցնում էր արևելյան Դերսիմի ճանապարհը դեպի արևմտյան ինքնանկախ շրջանը։ Ինքնապաշտպանության տեսակետից մեծ արժեք էր ներկայացնում այդ կամուրջը, որի հսկողությունը գտնվում էր երկու գյուղի բնակչության ձեռքին։

Գետի ակնաղբյուրներից վեր ճանապարհ չկար, արևելքից արևմուտք երկարող անմատչելի ապառաժները հարկադրում էին ճամփորդին երկար շրջանց կատարել և անցնել Բլուրի կամրջով։

Ուներ 40 տուն (400 հոգի) հայ, 70 տուն (420 հոգի) քուրդ բնակիչ։ Բաժանված էր չորս թաղի։

Տինկից վերև, Ջոթանի ստորոտում կարելի էր տեսնել երկու եկեղեցու փլատակներ, իսկ եկեղեցիներն իրարից բաժանող տարածությունում՝ հին գերեզմանաքարեր։ Անկախ այդ հին գերեզմանից, որը չէին օգտագործում, ակնաղբյուրների վերը, հսկա մի ժայռի ստորոտում, կային տասից ավելի տապանաքարեր, որոնք իրենց բարձրությամբ, երկարությամբ և լայնությամբ կարելի չէր համեմատել ուրիշ տապանաքարերի հետ։ Ըստ տեղացիների ավանդական պատմության, այս գերեզմանները նախաքրիստոնեական իշխանական դամբարաններ էին։ Նման տապանաքարեր գտնվում էին նաև Սարե-Սալթիկի մոտ և դիտվում էին որպես սրբատեղի։

Գյուղի վարելահողը գտնվում էր դեպի Օվաճգ նայող սարահարթում և գետի երկայնքում։ Ժողովրդի գլխավոր զբաղմունքը երկրագործությունը և խաշնարածությունն էր։ Ցանում էին առավելապես կորեկ, գարի և ցորեն։

39(9). Գետակ։ Այս գյուղը, ըստ ավանդության, հին իշխանանիստ քաղաք էր եղել։ Ներկա Գետակի հյուսիս-արևելյան կողմը, երկու բլուրների միջև, լայն տարածության վրա նկատվող ավերակների հետքերը վկայում էին, թե հին ժամանակներում այստեղ ավելի մարդաշատ է եղել։

Գյուղը հավանաբար իր անունն առած լինի Մնձուրի մի ուրիշ ճյուղերից եկող գետակից, որն անցնում էր հին Գետակ գյուղի միջով և հոսում նոր Գետակի մոտով։

Գետակ գյուղը գտնվում էր Ջերանիկի հարավարևմուտքում, ճամփի տևողությունը մեկուկես

ժամ էր։ 25 տնից (150 հոգի) բաղկացած քուրդ բնակչության գլխավոր զբաղմունքը հողագործությունը և անասնապահությունն էր։

40(10). Օխնի։ Գետակ գյուղի հյուսիսային կողմը, մեկ ժամ հեռավորության վրա, երկու ձորի խորության մեջ իրարից անջատ տնակներով, սարերի միացումից գոյացած ամեն մի հարթավայրում երեքից հինգ տնտեսությունից բաղկացած տասից ավելի ժայռափոր մեղրեների բնակավայրը հավաքաբար կոչվում էր Օխնի։ Բնակիչները քուրդ էին, 35 տուն (210 հոգի), զբաղմունքը՝ խաշնարածություն։

41(11). Բլուր։ 1860 թվականից սկսած վարչական բաժանմամբ Բլուր գյուղը, որպես գավառ, Խոզաթի կուսակալությանն էր ենթակա, բայց այդ ենթակայությունն ավելի անվանական էր, քան իրական։

Բլուրը, բացի Մնձուրի գետակից, որը գալիս էր հյուսիսից, ուներ երկու ջուր ևս, որոնք հոսում էին արևելքից ու հարավից։ Դրանց միջև էր գտնվում գյուղի ցանքահողը, որը լեռնային լինելով հանդերձ, արգասաբեր էր ու բավարարում էր 60 տուն (600 հոգի) հայ և 170 տուն (1020 հոգի) քուրդ բնակչություն ունեցող գյուղին։

Բլուրը գտնվում էր Ջերանիկի դիմացը։ Ճանապարհն անցնում էր կամրջով, մեծ շրջանցով, նույնպես էր նաև Օխնիից, ուստի երկարում էր այն ու տևում, մեկի փոխարեն, երկուսուկես ժամ։ Կամուրջն ամռանը պահպանում էին զինվորները։

Գյուղն ուներ հինգ թաղամաս՝ Մրտոների թաղ, Քեքոների թաղ, Ծպոյից մազրա, Ջեյնոների և Ամիրենց մազրա։

Մրտոների թաղամասում էր գտնվում հայոց եկեղեցին, որի երկու կողմը քրդերի տներ էին։ Եկեղեցին, ս. Գևորգ անվամբ, բավական մեծ էր, քահանա չուներ։ Գյուղից դուրս (խարապներում) կային երկու եկեղեցու ավերակներ, մեկը մյուսից բավական հեռու։

Հայերի մեծամասնությունը արհեստավոր էր, առավելապես հյուսներ, դարբիններ ու զինագործներ։ Տնայնագործներ կային նաև քրդերի մեջ։

Վարելահողը սկսվում էր Տինկի գլխից, անցնում Սալթիկա ձորից և հասնում Պենաերի բաժանքին, երկարում մինչև Խզանդաների դուրանը, ապա թեքվելով դեպի արևելք, սահմանագծում Տիատինի խարապները և հասնում Զմոների գոմերը։ Կալերը բաժանված էին ըստ թաղերի և այնպես դասավորված, որ մոտ լինեին մարագներին։ Բնակիչների գլխավոր զբաղմունքը հողագործությունը, անասնապահությունը և մեղվապահությունն էր։

42(12). Խորխոր։ Մնձուրի սարալանջերից կազմված գոգավոր բլրակների ստորոտում, մի փոքր կիրճի վերջույթի վրա անսպասելիորեն հայտնվում էր գեղատեսիլ մի դաշտավայր։ Երեք կողմից լեռներով շրջապատված այդ դալարագեղ լեռնահովիտը կարելի էր մտնել միայն հարավային կողմից՝ Խորխորի կիրճից, որին Խորխորանց ձորամեջ էին ասում։

Բլուրից հյուսիս-արևմուտք, երեք ժամ հեռավորության վրա էր գտնվում գյուղը՝ կազմված 60 տուն (600 հոգի) հայ, 25 տուն (150 հոգի) քուրդ բնակչից, որոնք խոսում էին թե հայերեն, թե քրդերեն։

Հազիվ դուրս գալով Բլուրի սահմաններից, արահետը մտնում էր ժայռերի մեջ և դառնում վտանգավոր, ապա ելնում ապառաժների արանքով և կեռմաններով հասնում Խորխորանց կիրճի մուտքին։ Մինչև այստեղ կարելի էր ճամփորդել, դիմելով նշանկաների օգնությանը, բայց ամենահամարձակ ուղևորն անգամ սարսափով կանգ էր առնում կիրճի մուտքի մոտ և տատանվում բարձրանալու քարափոր ոտնատեղերից, որոնք առաջնորդում էին գորշ ապառաժների կատարից վայր թափվող ջրվեժի աջակողմյան անցքը։ Այստեղ արդեն ուղեցույցն էր օգնում՝ աջ թեքվելու և կրկին վեր ելնելու։ Առանց ուղեցույցի ցուցումների և քաջալերանքի, անծանոթ ուղևորը տեղն ու տեղը շշմում և հրաժարվում էր ճամփան շարունակելուց։ Շատ երկար չէր վտանգավոր այդ ուղին և սակայն տաժանելի էր։ Հասնելով ջրվեժի թափման վայրը և հավասարվելով ջրի հոսանքին, արահետը մտնում էր կիրճը և ձորն ի վեր շարունակում վերելքը, մինչև հասնում էր այն լեռնադաշտին, ուր հիմնված էր գյուղը։

Գյուղի կառույցը հարմարեցված էր լեռնադաշտերի բնական դիրքերին, մերթ երկարում և նեղանում էր, մերթ ընդլայնվում ու խտանում։ Ամեն պարագայի, նախապատվություն էին տվել ապավինել ժայռերի հովանավորությանը, քան իջնելու դաշտային մասը, որը տարածվում էր երեք լեռների կիսակլոր պարիսպների միջև։ Տների մեծամասնության թիկունքը թաղված էր ապառաժների խորության մեջ և առաջին մասն էր, որ դուրս էր մնում ժայռերից, հյուսված քարե պատերով, ուր և տան մուտքի դուռն էր։

Կարելի է ասել, թե ամբողջ Դերսիմի մեջ չկար մի գյուղ, որը, համեմատած իր բնակչությանը,

աններն այնքան տարածված լինեին, որքան Խորխորին։ Կիրճի մուտքից դուրս եկող Համփորդը երբ անցնում էր ձորամիջի տարածությունը և հասնում առաջին տների առջև, նկատում էր, որ գյուղի անները, բոլորակաձև կիսակլոր դարձվածքով ձախից սկսած, անցնում էին կենտրոնական միջին ժայռերից, ապա նույն կլորությամբ շարունակվում և հասնում աջին, այնպես որ կիրճի մուտքի առջև աջ ու ձախ թևերը դիմավորում էին մեկզմեկի։

Գյուղը շրջապատող ապառաժներում կային բնական քարայրներ, որոնցից երկուսը պատմական արժեք էին ներկայացնում։ Առաջինը, որը խորանում էր դեպի արևելք, և որի մուտքը դտնըվում էր Սառցակասարի կադաթից քիչ վար, միակտուր ապառաժների մեջ խորացած լայն ու շատ երկար գետնուղի էր, որի վերջավորությանը հասնել կարելի չէր, որովհետև քարայրը, նախ, դեպի արևելք, մոտ երեք հարյուր քայլ ուղիղ ընթանալուց հետո, թեքվում էր դեպի հյուսիս և ապա խորանում վար։ Մինչև թեքման վայրը մի կերպ կարելի էր գնալ՝ ցրտից չսառչելու համար լավ հագնրված և մարմնի ամեն կողմերը ծածկված, իսկ թեքման վայրում դիմացից եկող սառն օդը ետ էր մղում, կարծես օդամուղ մեքենաներով ուժեղ հոսանք էին առաջացնում և արգելում առաջընթացը։ Քարայրի խորքում տիրում էր հավիտենական սառնամանիք, քանի որ այն լի էր սառցադաշտերով, որոնք խափանում էին ճանապարհը և փակում դեպի վերջավորություն տանող ուղին[1]։

Ըստ տեղացիների տված անբավարար տեղեկությանց, ստորերկրյա այդ սառցարանի գոյությունը շատ հին էր, ոմանք նույնիսկ այն վերագրում էին հիների (ոգիների) ազդեցությանը, բայց իրականությունն այն էր, որ այդ քարայրը, գոնե մինչև ներկա սառցարանի տեղը, փորված էր մարդոց ձեռքով, որովհետև կարելի չէր, որ համաչափ բարձրությամբ և տարածությամբ ու մանավանդ այդքան երկարությամբ ժայռափոր գետնուղին բնական լիներ։ Իսկ թե մարդիկ երբ և ինչ նպատակով էին փորել այդ գետնուղին, կարելի չէր պարզաբանել։

Երկրորդ քարայրը գտնվում էր գյուղի հարավարևմուտքում, դեպի Տուժիկ նայող ժայռերի խորության մեջ և կոչվում էր Տիզկին։ Դա շատ հին հանքահոր էր, որի մուտքի դուռը շատ մեծ էր ու բարձր։ Ուղիղ բավական հեռանալուց հետո քարայրը բաժանվում էր երեք բացվածքի, որոնցից երկուսը՝ հյուսիս և արևմուտք գնացողները, շատ երկար ու խորն էին, ոչ ոք չէր համարձակվում մտնել ներս, ամեն մեկը մի-մի բավիղ էր, մեջեմեջ դռներով և հորերով։

Ըստ տեղացիների պատմածների, հին ժամանակներում օգտագործված այդ երկու հանքերից արծաթ և ոսկի են հանել, բայց հետագայում, երբ մարդիկ փորձել են մտնել այդ գետնուղիներից մեկն ու մեկը, այլևս չեն վերադարձել։ Ասում էին, թե Տիզկինը չար ոգիներ է բանաարկել այդ այրերի խորության մեջ և թույլ չի տալիս, որ լույս աշխարհ գան, իսկ գնացողները ոչնչացվում են չար ոգիների կողմից։ Իսկապես, այդ այրերից մեկն ու մեկի մեջ մի քիչ հառաջացողն անպայման շնչահեղձ էր լինում։

Դեպի հարավ բացված գետնուղին տեղ-տեղ լուսավորված էր, օդ և լույս էր թափանցում ժայռերի արանքից և զերծ էր մյուսների զորավոր հոտերից։ Գետնուղին դեպի հարավ՝ ժայռերի սիրտը խորանալուց հետո կանգ էր առնում մի լայն քարայրի առջև, որի պատերը, առաստաղը և հատակը ցոլցլում էին տարօրինակ փայլ ունեցող սև ու գորշ քարերից, որոնք կարծես մասնավոր մարդոց կողմից դարսված լինեին իրար վրա։ Հանքաքարը կարծր չէր, կարելի էր պոկել առանց պայթեցնելու։ Տեղացիք այս հանքն օգտագործում էին մեծ չափերով՝ հանքաքարից կապար էին ձուլում։ Վարելահողը թեև սակավ, բայց հանքի եկամուտներից ապրանքափոխանակությամբ բավարարում էին իրենց պահանջները։

Գյուղն ուներ մի քարափոր եկեղեցի, որը գտնըվում էր Սառցակասարի ստորոտում և կոչվում էր ս. Գևորգ։

43(13). Ձիարեթ։ Քրդաբնակ այս գյուղը (75 տուն, 450 հոգի) գտնվում էր Մարաց լեռների (Քոռ-Մարան) և Մնձուրի լեռնաշղթայի միացման տեղում, Խորխոր գյուղի հյուսիս-արևմտյան կողմը, երկու ժամ հեռավորության վրա։ Սա ինքնանկախ Դերսիմի հարավային շրջանի ամենավերջին գյուղն էր, որը հսկում էր մի կողմից Կամախի կիրճի մուտքին, մյուս կողմից՝ Երզնկայի արևմտյան կողմից՝ ս. Կիրակոս վանքի ձորամիջով դեպի Օվաճգ անցնող ճանապարհին։

Բնական անառիկ դիրքի շնորհիվ գյուղը մեծ դեր էր խաղում պատերազմների ժամանակ, մի

[1] Նման բնական մի սառցարան էլ գտնվում էր Խարբերդի Քար բերդում, բայց, համեմատած սրա հետ, Խարբերդինը թե իր կառույցով և թե ծավալով շատ փոքր էր, մանավանդ որ չուներ սրա զորավոր հոսանքը, բայց և այնպես ջուրը սառչում էր, մինչդեռ այս սառցարանում ջուրը չէր երևում, միայն սառցակույտեր էին։

տեսակ տեղեկատուի պարտականություն էր կատարում, առաջին առթիվ աղդանշանը տալով կենտրոնական աշիրեթներին։ Գտնվում էր սարալանջին, իսկ վարելահողը՝ գյուղի ստորոտում և երկու կողմերի թեք հարթության վրա տարածված երեք ձորերի միջև։ Գյուղացիների գլխավոր զբաղմունքը խաշնարածությունն էր։

44(14). Գոմեր։ Բլուրի հյուսիսային, Խորխորի արևելյան կողմը, առաջինից երկուսուկես ժամ, երկրորդից երկու ժամ հեռավորության վրա, Մեռճանի լեռնաշղթայից դեպի արևմուտք երկարող լեռնագագաթներից սկիզբ առնող երկու ձորերի միացման լեռնահովտում էր գտնվում այս գյուղը (շշփոթել Կամախի Գոմեր գյուղի և Դերսիմի զանազան շրջաններում եղած Գոմերի հետ), որի նախկին բնակիչները հայեր են եղել։

Ավանդաբար պատմում էին, թե Կամախի Գոմեր գյուղի բնակիչները, որ հայեր էին, թրքական արշավանքների ժամանակ Դերսիմի այս Գոմերից են գաղթել և բնակություն հաստատել այնտեղ։ Այս ավանդությունները հաստատող պատմական տվյալների կարգին կարելի է հիշել գյուղի ստորոտում, երկու ձորերի միացման տեղը գտնված երկու եկեղեցիների փլատակները, որոնցից մեկը, ըստ պահպանված քարափոր արձանագրության, ս. Թորոս է կոչվել։

Այս գյուղը, որն ուներ լավագույն արոտավայրեր, առատ ջուր և հողմերի դեմ պաշտպանության բնական պատվարներ, ամենահարմարաղույն վայրերից մեկն էր՝ ի մասնավորի խաշնարածության։ Ժամանակին Անահիտին նվիրված անասնապահության կենտրոններից մեկն է եղել ու պահում էր իր անունը և ծառայում նույն նպատակին, այսինքն՝ Սեիտան աշիրեթի անասնապահությանը, ավելի ճիշտ՝ ոչխարների և այծերի հոտերի ձմեռանոցն էր։ Բնակիչները քրդեր էին՝ 85 տուն (510 հոգի)։

45(15). Փութա։ Մնձուրի և Մեռճանի լեռնաշղթաների միացման հովտում էր ընկած այս գյուղը, նույնքան հին, որքան Գոմերը, ու կռապաշտության շրջանից պահել էր իր անունը։

Դերսիմում Փութա անունով ուրիշ գյուղեր էլ կային։ Բոլոր փութաներում նախկինում հայեր են բնակվելիս եղել, ունեցել են եկեղեցիներ, հետագայում քրդաբնակ են դարձել։

Գոմերից Փութա ճամփան դժվարին էր, տևում էր երեք ժամ։

Փութայից Կամարեկ գյուղը տանող ճամփի վրայի մեծ գերեզմանատան տապանաքարերից մի քանիսի արձանագրությունները, սրսորդի, եղչերուի, գուսանի, աղավնու քանդակները, խաչքարերը և մեծ եկեղեցու փլատակները խոսուն վկաներ էին այս գյուղի հայկական լինելուն։ Բնակիչները քրդեր էին՝ 68 տուն (408 հոգի)։

46(16). Կամարեկ (Կամարիկ)։ Փութան շրջապատող լեռնագագաթների արևելյան ծոցում, երկու գետակների ափին, Փութայի արևելյան կողմն էր գտնվում Կամարիկ գյուղը, որի հյուսիսային մասում դեռ կանգուն էր քարափոր ս. Գևորգ եկեղեցին, վերածված քրդերի ուխտատեղի՝ Հազրեթի-Խրդր անունով։

Գյուղն իր անունն առել էր բնական այն ժայռակամարից, որը գտնվում էր մերձակայքում և կամրջի նմանվող երկու ժայռագագաթները միացնում էր իրար։ Կամախում ևս նույնանուն գյուղ կար, որի բնակիչները հայեր էին, գաղթած Դերսիմի Կամարիկից, որն ուներ 138 տուն (828 հոգի) քուրդ բնակիչ։

47(17). Քարփանք (Ատրուշան)։ Կամարիկից հարավ-արևմուտք, Գոմերից հյուսիս-արևելք, ձախափնյա ձորափին էր գտնվում այս գյուղը։

Ըստ ավանդության, բնական ամեն հարմարություններով օժտված, ջրառատ, դալարագեղ և ծաղկազարդ այս լեռնահովտում, որը շրջապատող բարձրադիր լեռնագագաթները միշտ ձյունածածկ էին, հիմնված է եղել Անահիտին նվիրված ատրուշան, որից էլ՝ գյուղի նախկին անունը՝ Ատրուշան։ Ոմանք էլ կոչում էին Ալիշան։ Իբր Գրիգոր Լուսավորիչը և Տրդատ թագավորն անձամբ են կործանել ատրուշանը, ծածկել տալով այն ժողովրդի կողմից բերված ժայռաբեկորներով, որոնք կային գյուղի արևելյան կողմում որպես քարաբլուրներ ու կոչվում էին քարփանքներ, և որոնց անունով էլ հետագայում գյուղը վերանվանվել է Քարփանք։

Ասում էին նույնպես, թե նախկին կրակատան կառույցը քանդված չէ, այլ ծածկված և պահպանված է բլուրների տակ, որոնք կոչվում էին «Ինհանեթ նամե» (անիծված) Սատանի բլուր և Լեվենտի տուն[1], որոնց տակ թաղված էին նաև կռապաշտությունից մնացած տապանաքարեր ու այլ հուշարձաններ։ Սատանի բլրի ստորոտում գտնվում էին Գրիգոր Լուսավորիչ կաթողիկեի փլատակները, որոնց ստորոտից բխում էր հորդառատ մի

[1] Լեվենտ նշանակում է մայր ոն, որը հափշտակում, բռնկրտում և ագահարար ուտում է մարդկանց։ Արագ ուտող շատակերներին լեվենտ էին ասում՝ լեվենտը եկավ, անկուշտ լեվենտ, լեվենտի նման կուտես և այլն։

ապրյուր, որն աչքուցավը դարմանելու բուժիչ հատկություն ուներ և կոչվում էր Ակնաղբյուր, իսկ անիծված արհեստական բլուրների արևելքում գտնվում էին երեք եկեղեցու փլատակներ։ Ըստ նույն ավանդության, երբ հրամայվել է ամեն բնակիչ ժայռաբնակորներ նետել ատրուշանի, հարակից շենքերի և կերեզմանատան վրա, չանսայոները պատապարտվել են քարկոծման։

Գոմերից Քարփանք տեղությունը երկու ժամ էր, Կամարեկից Քարփանք՝ երկուսուկես ժամ։ Բնակիչները քրդեր էին՝ 76 տուն (456 հոգի)։

48(18). Քեմալան։ Համանուն սարերի ստորոտում, գետի ափին էր գտնվում գյուղը, Բլուրի արևելյան կողմում, երեք ժամի ճամփա հեռու։ Բնակիչները քրդեր էին՝ 45 տուն (270 հոգի)։

49(19). Տուժիկ։ Քրդերի պաշտամունքի առարկա Տուժիկ սրբազան սարի (որը, ըստ Խորենացու, կոչվում էր Առյուծ) անունով էր կոչվում այս գյուղը։ Գտնվում էր Մնձուր գետի ափին։

Գյուղից վերև, Տուժիկի միակտուր ժայռագագաթին էր գտնվում քառասուն սրբերին ու հայրապետներին նվիրված քառասուն խորան ունեցող ս. Սարգիս վանք-եկեղեցին, որը քարափոր էր, միայն կմրեթն էր ժայռերից դուրս։ Կարելի է ասել, որ պատմական Հայաստանի մեջ միակ եկեղեցին էր, որ 40 խորան ուներ։

Տուժիկը գտնվում է Օվաճգի արևելյան կողմը, Սատո գյուղից արևելք, մեկուկես ժամ հեռավորության վրա։ Բնակիչները քրդեր էին՝ 135 տուն (810 հոգի)։

50(20). Լերթիֆ (Լեռթիֆ)։ Տուժիկ լեռան արևելյան և Մալի արևմտյան կողմը, դրանց միացման բարձունքի լեռնադաշտի կենտրոնում էր ընկած ինքնանկախ Դերսիմի սիրտը նկատվող Լերթիք մեծ գյուղը, որը երեք կողմից պաշտպանված էր անմատչելի ապառաժներով։ Գյուղի տակով հոսում էր նույնանուն գետը։

Գտնվում էր Բլուրից հոսող գետակի աջ ափին, Տուժիկ գյուղից հարավ, հինգ ժամ հեռու։ Գյուղից հարավ էր գտնվում Փոսի վանքը (Բոզ-վանք)։

Լերթիքից Փոսի վանք տանող ճամփի վրա, Գետակի մերձակա անտառների բացատում գտնվում էին երկու եկեղեցու փլատակներ, որոնք թեև գյուղից դուրս էին, բայց անցյալում հին գյուղի կենտրոնում են եղել։ Մեկը՝ ս. Մինաս, մյուսը Տիրամայր էր կոչվում։ Բնակչությունը օգտվում էր Փոսի վանքի եկեղեցուց։

Գյուղի 350 տնից 82-ը (820 հոգի) քրդախոս հայեր էին, մյուսները՝ 268 տուն (1608 հոգի)՝ քրդեր։ Ապրում էին խառը, բայց հայերը պահում էին իրենց բոլոր ավանդություններն ու կրոնական հավատալիքները, միմյանց հետ խոսում էին հայերեն շատ խրթին բարբառով, հպարտությամբ ասում էին, թե իրենք Թիք լեռան ամենահին բնակիչներն են և տարին մի քանի անգամ ուխտի էին գնում Բոզ-վանքի ավերակներին ու ս. Կարապետի հրաշագործ սրբին։

Հայն ու քուրդը ծնված ու մեծացած էին միասին, կարելի չէր զանազանել մեկը մյուսից և կամ ստուգել, թե ով որից է ազդված։ Լերթիքցիները (որ պատկանում էին Խորմեգան աշիրեթին) հայտնի էին որպես քաջարի կռվողներ։ Խիստ ատելությամբ էին վերաբերվում մանավանդ թուրք զինվորական կարավաններին, որոնց կտրողները մեծ մասամբ իրենք էին լինում։ Լերթիքցին ատում էր քաղաքն ու քաղաքացուն, երբեք կապ չէր պահում վարչական կենտրոնների հետ և չէր հեռանում իր լեռնաշխարհից։

Գյուղացու գլխավոր զբաղմունքը խաշնարածությունն էր, մասամբ հողագործությունը և ավարառությունը, նա իր չունեցածը, պակասը հոգում էր զենքի ուժով, բռնագրավումով, թշնամի էր հարուստներին ու հարստությանը։ Պատահել է, որ լերթիքցին որևէ թրքական գյուղի ոչխարի հոտերը կամ նախիրը քշել է սարերից ու երբ պարզվել է, որ այդ նախիրի մի մասը աղքատ գյուղացիներին է պատկանում և ոչ թե այսինչ կամ այնինչ բեկին, փաշային, անմիջապես ետ է վերադարձրել տերերին։

Երբ լուր էր ստացվում, թե Երզնկայից զինվորական փոխադրություն է կատարվում դեպի Կարին, լերթիքցին ցնծում էր, բոլորը պատրաստվում էին արշավանքի։ Նման պարագային օգնության էին կանչում Ղոչ-Ուշաղի և Լոլանցիների աշիրեթներին, որոնք միացած խորմեջցիներին, իջնում էին Սանսայի կիրճը (Եփրատի ափին), որտեղից անցնում էր պետական խճուղին, և ուր լերթիքցիներն ունեին սեփական կամուրջ՝ Սատանի կամուրջ անունով, որը շարժական էր և օգտագործվում էր նման արշավանքների ժամանակ։

Սովորաբար արշավախումբը դիրք էր գրավում ապառաժների երկու հանդիպակաց եզերքին և թույլ տալիս, որ կարավանը կիրճից ներս մտնի։ Հենց այդ ժամանակ էլ տեղում էր համազարկը, կարկտի նման գնդակները սլանում էին աջից ու ձախից, միաժամանակ ահագնագոչ աղմուկ-աղաղակ էին գցում, որից կարավանի պաշտպանությանը սահմանված զինվորները սարսափում էին։

Հարձակվողներից քիչ թե շատ թրքերեն իմացող մեկը հրահանգում էր պաշարված զինվորներին, որ զենքը վար ձգեն, քանի որ իրենք թշնամի չեն նրանց ու չեն ուզում անմեղ մարդկանց արյուն թափել։ Զինաթափումը սկսվում էր, որից հետո, դեռևս դիրքավորված, հրահանգում էին կողոպտել իրենց աղաներին։ Բանակցություններից հետո խնայում էին նաև աղաներին, բոլորին թույլ էին տալիս իրենց գրաստներով (ձի, ավանակ, ուղտ) հեռանալ զինակույտի մոտից և գնալ ուր կուզեն։ Կողոպտվողները լքում էին զինամթերքը և հեռանում։

Առաջապահ դիրքերից տրված ազդանշանով, թե զինվորները հեռացած են, արշավախումբը դործի էր լծվում։ Նախ սարքում էին Սատանի կամուրջը (որին Մազե կամուրջ էլ էին ասում) և ավարը շալակներով փոխադրում էին ձախ ափը։ Երբ արշավախումբն անցած էր լինում Ավզերտիկետիկը և մտած այլևս իր շրջանի սահմաններից ներս, ավարը բաժանում էին կռվի մասնակիցների կամ շալակտարների միջև հավասարապես, միայն աշիրապետը իրավունք ուներ ստանալու մի բաժին իրեն, մի բաժին փիրին, մի բաժին հյուրի ծախսերի համար, այսինքն՝ որպես թե չորս զենքով մասնակցած էր կռվին։

Կարգապահությունն անթերի էր, հաղթանակը տոնվում էր մեծ խանդավառությամբ և հերթական կարգով, այսինչ կամ այնինչ աշիրեթի սահմանների մեջ ուխտագնացությամբ՝ ս. Լուսին, Տուժիկին և կամ Հազրեթի-Խզրին, ուր զոհեր էին մատուցվում հաղթանակի փիրին կամ օջախին, ապա նույն կարգապահությամբ, առանց որևէ նեղություն և անհանգստություն պատճառելու ճամփին պատահած գյուղերին, վերադառնում էին տուն։

51(21). Աղբաձոր։ Դեպի Տուժիկ-պապա երկարող լեռնաշղթայի վրա էր գտնվում այս գյուղը՝ կազմված 16 տուն (160 հոգի) հայից, 64 տուն (384 հոգի) քրդից, ենթակա Լերթիքին, որից արևելք հեռու էր մի ժամաչափ ճամփա, որն անցնում էր անտառներով՝ հաճելի ու անվտանգ։ Ուներ հիանալի կլիմա, և հակառակ իր բարձր դիրքին՝ նաև պտղատու ծառերի մեծ պարտեզներ. դեղձը, ծիրանը, տանձն ու խնձորը առատ էին։

Գյուղի արևելյան կողմից տեսնվում էին մի եկեղեցու ավերակներ և այս ու այնտեղ ընկած խաչքարեր։ Հայերը պահել էին իրենց ազգային և կրոնական բոլոր սովորությունները, լեզուն, խոսում էին նաև քրդերեն ու չէին զանազանվում քրդերից, մասնակցում էին նրանց բոլոր շարժումներին և սիրված էին աշիրեթից։ Հայերի մեջ կային լավ քարտաշներ ու պատ շարողներ, որոնք շրջակա գյուղերից կանչվում էին տներ կառուցելու, դուռ-պատուհան, արոր և զանազան երկրագործական գործիքներ պատրաստելու ձմռանը։

Գյուղի բնակչության գլխավոր պարապմունքը խաշնարածությունը, մասամբ էլ երկրագործությունն էր, մշակում էին իրենց բավարարելու չափ բանջարեղեն և առատ պտուղներ։

52(22). Մոկան։ Մալ լեռան հյուսիսային թեի ստորոտում, Լերթիքի ջրի ձախ ափին, Աղբաձորի արևելյան կողմում մեկուկես ժամ հեռավորության վրա էր գտնվում այս գյուղը։ Բնակիչները քրդեր էին՝ 70 տուն (420 հոգի)։

53(23). Իֆնոր (Իֆզոր)։ Մալի հյուսիսային կողմի երկու ձորերի արանքում, Բարդիից հյուսիս-արևմուտք, Մոկանից հարավ, մեկուկես ժամ հեռու էր ընկած այս գյուղը։ Գյուղի ստորոտում, Իքձոր կիրճի սկզբին, Արջասար տանող ճամփից քիչ վեր զանվում էին Հովհաննես Մկրտչին նվիրված մի եկեղեցու փլատակները, որի մոտի լեռնագագաթի վրա կային գերեզմանատան տապանաքարեր։ Նույն բարձունքի ստորոտից, ժայռի կրծքից ժայթքող տաք ջրի աղբյուրը ոսկրացավի բուժիչ սուրբն էր։ Բնակիչները քրդեր էին՝ 30 տուն (180 հոգի)։

54(24). Բարդի։ Մալից հյուսիս-արևելք, Լերթիքից հոսող աղմկահույզ մեծ գետի ձախ ափին էր գտնվում այս գյուղը, որի արևելյան կողմից հոսում էր նույնքան արագավազ և ավելի ջրառատ Մեռջանի գետը, այնպես, որ գյուղը նմանվում էր երեք կողմից ջրերով շրջապատված թերակղզու։ Ուներ 135 տուն (1350 հոգի) հայ, 162 տուն (972 հոգի) քուրդ բնակիչ։

Բարդին կարելի էր դասել հայկական հին մեծ ավանների շարքը։ Սա, ինչպես մի ուրիշ Բարդի գյուղ ևս, իր անունը ժառանգել էր սրբազան անտառից։ Բարդին հարուստ էր հիշատակության արժանի պատմական կոթողներով։ Գյուղի արևմտյան ժայռերում գտնվում էին արհեստական քարայրների տասից ավելի մեծ ու փոքր սենյակներ, որոնք ծառայում էին որպես զինապահեստ, ինքնապաշտպանության ամրոցներ և հայերեն հին ձեռագրերի պահեստներ։

Գյուղի արևելքում, դեպի Մեռճանի ջուրը ձգվող լեռնահովտի հյուսիսային կողմում գտնվում էին երկու եկեղեցու փլատակներ՝ ս. Սարգիսը ավելի մեծ, Քառասուն Մանուկը կամ Խանակտուրը

ավելի փոքր։ Ղարա-Կեռուկի անմատչելի ապառաժների ստորոտում կային նաև ամրոցի փլատակներ։

Իքձորից Բարդի ճամփի տեղություն, բնական դժվարությունների հետևանքով, երեք ժամ էր։ Հայերը թեև քրդախոս, բայց պահել էին Միրագյանների հայ բարբառը և կոչվում էին Միրագներ։

55(25). Զատի։ Լերթիքի ձորի աջ ափին, Բարդիից երկուսուկես ժամ հեռու, նույն գյուղի հարավային կողմն էր գտնվում քրդաբնակ այս գյուղը։ Ուներ 45 տուն (270 հոգի) բնակիչ։

56(26). Հոռեկ։ Ընկուլգի-ու կաղնի անտառների խորքում, Զատիից հոսող ջրի ափին, մեկուկես ժամ հեռու էր գտնվում այս գյուղը, որի արևմտյան Կապույտ-Քարի ստորոտում կային եկեղեցու փլատակներ։ Բնակիչները քրդեր էին՝ 90 տուն (540 հոգի)։

57(27). Գոմեր։ Բարդիի արևելյան կողմում, Հոռեկից հյուսիս-արևելք, Մեռջանի ջրի ձախ ափին, Հոռեկից ու Բարդիից չորսական ժամ հեռավորության վրա էին գտնվում Սուրիգան աշիրեթի անասնապահության գոմերը։ Ինչ խոսք, որ սրանք էլ ուրիշ շատերի կարգին նախկինում պատկանելիս են եղել աստվածուհի Անահիտին, որից էլ մնացել է գյուղի Գոմեր անունը։ Բնակիչները քրդեր էին՝ 75 տուն (450 հոգի)։

58(28). Հայտեր։ Գոմերից հարավ-արևելք, Սուրիգան աշիրեթի տիրապետության սահմաններում, Կորնգանի սարերից սկիզբ առնող ջրի ձախ ափին էր գտնվում այս գյուղը, որի անունը՝ Հայտեր, քրդերեն նշանակում է՝ «Հայ վանք»։ Ճամփու տևողությունը Գոմերից երկու ժամ էր։ Բնակիչները քրդեր էին՝ 63 տուն (378 հոգի)։

59(29). Փառչիկ։ Նույնանուն կիրճի սկզբին, Հայտերից հարավ-արևելք, երեք ժամ հեռու էր գտնվում այս գյուղը, որի գիրքը լեռնային էր, շրջապատված անտառածածկ լեռնագագաթներով։ Ճանապարհը դժվարանցանելի էր։ Բնակիչները քրդեր էին՝ 70 տուն (420 հոգի)։

60(30). Պուղա։ Խութաց ձորը, որ Դերսիմի ամենաանառիկ կիրճն էր, սկսվում էր Պուղա գյուղը շրջապատող լեռնաշղթայի հյուսիս-արևելյան գագաթներից։ Պուղան գտնվում էր նույն սարերից սկիզբ առնող ձորի աջ ափին, Փառչիկ գյուղի հյուսիս-արևելյան կողմը, չորս ժամ հեռու (լեռնային արահետով՝ երկու ժամ)։ Այս գյուղի բնակչությանը վիճակված էր հսկելու Խութաց-ձորի ուղղությամբ կատարվող շարժումներին և տեղեկություն տալու համապատասխան աշիրեթներին։ Բնակիչները քրդեր էին՝ 140 տուն (840 հոգի)։

61(31). Հաղաջուր։ Կորնգանի լեռներից հոսող ձորի աջ ափին, Հայտերից հյուսիս, Գոմերից հյուսիս-արևելք, երկու ժամ հեռու գտնվում էր Ղարապալան աշիրեթին պատկանող սույն գյուղը, որն ինքնանկախ Դերսիմի կենտրոնական մասի գլխավոր գյուղերից մեկն էր։

Այստեղ քրդերի հետ խառն ապրում էին իրենց առանձին բարբառն ունեցող Միրագյան հայեր, որոնք բնապաշտ էին։ Քրդերն էլ խոսում էին Միրագյանների հայերենով։

Հաղաջուրը պատմական հին ավան էր, և այդ ապացուցող տվյալներ շատ կային, որոնցից գլխավորները դեպի Մեռջանի ջուրը տանող ճանապարհի վրա ընկած Գոմերի սահմանին մոտիկ երկու եկեղեցու փլատակները և հին տաղանալարերով հարուստ ղերեզմանատունն էին։ Եկեղեցիներից մեկը, որն ավելի մոտիկ էր Գոմերին, քան Հաղաջուրին, կոչվելիս է եղել ս. Ստեփանոս, որի խորանի վեմ քարը, տաճարի կամարների սրբատաշ քարերը և տասից ավելի խաչքարերը կիսով թաղված էին հողի մեջ։ Գյուղի հյուսիսային բարձունքի ստորոտում գտնվում էր ս. Հրեշտակապետ եկեղեցին, որը մնում էր անվթար, սակայն առանց քահանայի։

Ուներ 85 տուն (850 հոգի) հայ, 30 տուն (180 հոգի) քուրդ բնակիչ։

62(32). Քորնֆա (Կորնգան)։ Մեռջանի ջրի ձախ ափին, Կորնգանի լեռնաշղթայի արևմտյան գագաթներից մեկի ստորոտում, Հաղաջուրից երեք ժամ հեռու գտնվում էր Քորնքա գյուղը։ Գյուղը և շրջապատի սարերը իրենց անունը ժառանգել էին վայրի կորնգանի առատ բուսականությունից, որն աճում էր առանց մշակության և խնամքի և որը առատ անասնակեր էր հայթայթել նախկինում Անահիտի գոմերում պահվող անասուններին։ Այդ անասնակերը օգտագործվում էր վերջերում էլ։

Գյուղի արևելյան կողմի ժայռերի մեջ գտնվում էր մի քարափոր եկեղեցի ս. Նշան անունով, որի ստորոտից բխում էր գողի աղբյուրը։

Գյուղում քրդերի հետ խառն ապրում էին քրդախոս հայեր, որոնք անաղարտ պահում էին իրենց ազգային դիմագիծը։

Բնակիչները՝ 25 տուն հայ (250 հոգի), 68 տուն քուրդ (408 հոգի)։

63(33). Մեռջան։ Մեռջանի երկու ձորերի միացման տեղից քիչ վերև, արևմտյան ճյուղի աջ ափին, Կորնգանի հյուսիս-արևմուտքում, հինգ

ժամ հեռու, անտառածածկ լեռնածոցում, ժայռերի տակ ծվարել էր Մեռջան գյուղը, որը համարվում էր Օվաճգի արևելյան շրջանի ինքնապաշտպանության դուռը։ Մեռջանի ջրի մեծ ձորը հյուսիսից հարավ սահմանագծում էր Օվաճգի և Բոլոմորիի սահմանը։ Բնակիչները քրդեր էին՝ 185 տուն (1110 հոգի)։

64(34). Սարը-Ղայա: Դեղնագույն ժայռերի ստորոտում, Տուժիկից դեպի արևելք երկարող լեռնագագաթների արանքում, Մեռջանի ջրի աջ ափին էր գտնվում այս գյուղը (չշփոթել Ծփրատի աջ ափին գտնվող նույնանուն գյուղի հետ)։

Գյուղն իր անունն ստացել էր երեք կողմից շրջապատված դեղնագույն ապառաժների գույնից և դասվում էր Դերսիմի ինքնանկախ շրջանի ինքնապաշտպանության գլխավոր ամրոցների շարքը։ Ճանապարհը դժվարանցանելի էր ու տևում էր երեք ժամ։ Բնակիչները քրդեր էին՝ 362 տուն (2172 հոգի)։

65(35). Ակունք: Գրեթե ամեն հաղորդակցությունից զրկված, Տուժիկ-պապայի և Մեռջանի երկու ձորերի միացման արևելյան ճյուղի ձախ ափին էր գտնվում Քեչելան (Քաչարան) աշիրեթի սահմանապահ այս գյուղը, որը Բոլոմորին բաժանում էր Օվաճգի շրջանից։

Ակունքը հարուստ էր հանքային տաք և պաղ ջրերի աղբյուրներով, որոնք զանազան հիվանդություններ բուժելու հատկություն ունեին, սակայն, որպես արգելված գոտի, ոչ ոքի իրավունք չէր տրվում այցելել գյուղ և օգտվել հանքային ջրերից։ Երկու սարերի միացման բարձրավանդակում կային բնական և արհեստական քարայրներ, որոնք օգտագործվում էին որպես զինամթերանոցներ և ինքնապաշտպանության ամրոցներ։ Գյուղի արևմտյան շրջանում, երկու ձորերի միացման տեղում, կիրճի մուտքից քիչ վերև գտնվում էին ս. Հրաշափառ եկեղեցու ավերակները, հարակից մեծ գերեզմանոցով, որն այլևս չէր օգտագործվում գյուղի բնակիչների կողմից։

Սարը-Ղայայից հյուսիս գտնվող Ակունք գյուղը հասնելու համար պետք էր հաղթահարել բնական դժվարություններ. ճանապարհի տևողությունը հինգ ժամ էր։

Քրդերի հետ խառն ապրում էին Միրագյան հայեր, որոնք անաղարտ պահում էին ազգային սովորությունները, ընտանեկան ավանդությունները և կրոնական հավատալիքները։

Ուներ 96 տուն (960 հոգի) հայ և 125 տուն (750 հոգի) քուրդ բնակիչ։

66(36). Ծմակ: Ծմակներ շատ կային, բայց սույն գյուղը գտնվում էր գրեթե Ակունքի պայմաններում, նրա հյուսիսային կողմի երկու ձորերի արանքում։

Պալան աշիրեթին սահմանակից, Քալան աշիրեթին ենթակա այս գյուղը նույն դերն էր կատարում, ինչ որ Ակունքը։ Ճանապարհի տևողությունը Ակունքից Ծմակ վեցուկես ժամ էր։ Բնակիչները քրդեր էին՝ 120 տուն (720 հոգի)։

67(37). Տանձիկ (Տանզիկ): Վայրի պտուղների շտեմարան և վայրի կենդանիների ապաստարան այս գյուղը գտնվում էր Պալան աշիրեթի սահմաններում, Կյուղուքից հյուսիս-արևմուտք, մոտ երեք ժամ հեռավորության վրա։ Դիրքը լեռնային էր՝ շրջապատված խորն ու մթին անտառներով, հրսկում էր ինքնանկախ Դերսիմի արևմտյան բարձունքներին։

Կյուղուքից Տանձիկ արտհեռը դժվարանցանելի էր, սանդղանման վերելքը հասցնում էր եռապատկած ապառաժների ստորոտը և շրջանցումով ժայռերի արանքից իջնում վար, ապա առատահոս աղբյուրի հոսանքով իջնում ուղղակի ձորը, ուր անցնելով փայտե կամուրջը, մտնում էր գյուղ։ Առաջին հանդիպածը, որին Վարի-մեյլե էին ասում, հայկական թաղն էր. իրար միացած հողե տանիքներով տները և նեղ ու ծուռ փողոցը առաջնորդում էին Նախրքաշ կոչված հրապարակը, ուր մի բլուրի վրա թառած էր Տիրամոր ս. Աստվածածին եկեղեցին։ Ուներ 120 տուն (1200 հոգի) հայ, 80 տուն (480 հոգի) քուրդ բնակիչ։ Քրդերը խառն ապրում էին Վերի-մեյլեի և Ռեսենց թաղի հայ բնակչության հետ։ Հայերը պատկանում էին Միրագյան տոհմին, զինապաշտ ու քաջ ռազմիկներ էին։

Գյուղը, ինչպես ասվեց, հարուստ էր վայրի պտուղների անտառներով, ուներ ընդարձակ արոտատեղեր, ջուրը առատ էր, իսկ վարելահողը՝ անբավարար, արտերը գտնվում էին Արալուխների և Սև-քարի միջև, նույնպես և ձորափնյա Սանասարա ու Գոմերի կողմը, ուր գտնվում էին ս. Նշան անունով մի հին եկեղեցու ավերակները և հին գերեզմանոցը, շրջապատված արտուճի հնադարյան ծառերով, ուր և էին Լիսաղբյուրը և մի քանի խաչքարեր։

Բնակչության գլխավոր զբաղմունքը անասնապահությունն էր, իսկ հայերի մեծամասնությունը արհեստավորներ էին։ Այստեղ զարգացած էին փայտե ամաններ (գուշ, տեփուր, գդլնոց, խնոցի, տաշտ, դնտլա, խատվիչ, սխտոր-գուշ, շերեփ, գդալ) պատրաստելու և գորգ, կապերտ, գոգնոց-

ներ, բարձր զորձելու արհեստները։ Կային դարբիններ, հյուսներ, գինագործներ, որոնք անասնապահության և հողամշակության զուգահեռ պարապում էին նաև վերը նշված տնայնագործական արհեստներով թե իրենց գյուղի և թե շրջակա գյուղերի համար։

68(38). Հարսի։ Դերսիմի արևմտյան ինքնապաշտպանության գոտու և Ռեսիդան աշիրեթի սահմաններում, Տանձիկից հյուսիս-արևմուտք երեք ժամ հեռավորության վրա էր ընկած քրդաբնակ այս գյուղը[1]։

Տանձիկից արահետը դեպի հյուսիս երկարող լեռնաշղթի ստորոտում ելնում էր վեր, ապա Ղայատիսի ժայռերի արանքով թեքվում արևմուտք։ Այն բարբարուտ և դժվարանցանելի էր։

Հարսիի բրդերը վայելում էին լավ կովողի համրավ։ Գյուղը, թիկն տված բարձր սարերի անմատչելի ժայռերին, կարողանում էր մարտնչել դրսից եկող ամեն հարձակման դեմ։

Լեռները անտառածածկ էին, ջուրը՝ առատ, կլիման թեև լեռնային, բայց մեղմ ու հաճելի, գյուղը գտնվելով ատամնավոր լեռնապարիսպների ստորոտում, պաշտպանված էր հովերից ու փոթորիկներից, որը հնարավորություն էր տալիս հարեցիներին աճեցնել պտղատու ծառեր։ Անտառներում կային մեծ քանակությամբ վայրի տանձի, խնձորի, սալորի, կարմիր ու դեղնորակ ալոճների ծառեր, ի մասնավորի առատ էր մանանայի բնատուր քաղցրեղենը, որն օգտագործվում էր անխտիր բոլորի կողմից։ Այդտեղ շատ էին նաև վայրի կենդանիները, որոնց մեջ աչքի էին ընկնում արջերի զանազան տեսակներ։

Վարելահողը սակավ էր, բայց շատ բարեբեր, մշակում էին տեղավելապես կորեկ, կլկիլ ու ցորեն։ Արտերն ընկած էին Գոմերի ստորոտում, Քարփանքների շրջակայքում ու Խաչելիի եզերքին, ուր գտնվում էին նաև մի անանուն եկեղեցու փլատակներ՝ մոտակա մեծ գերեզմանոցով, որի արտուճների ստորոտից դուրս էր ժայթքում սառնորակ Լիսաղբյուրը, որը բժշկում էր ջերմից տառապողներին։

Մոտ 80 տուն (480 հոգի) բնակչություն ունեցող այս գյուղի ղլխավոր պարապմունքը անասնապահությունը, մասամբ պտղամշակությունը, որսորդությունը, հողագործությունն ու մեղվապահությունն էր։ Կային տնայնագործներ, որոնք պատրաստում էին զորգ, կապերտ, փալաս, խուրջին, պարան և փոխանակում զանազան պիտույքների հետ։

69(39). Շատիկ (Զատիկ, Սատիկ)։ Քրդաբնակ այս գյուղը, համանուն աշիրեթով (Շատիկան), ընկնում էր Հարսիից արևմուտք, երկու ժամ հեռավորության վրա և կազմված էր առանձին զոմահանդերից (մեղրե)։ Հինգից տասը տնանոց փոքր համայնքներ բնակություն էին հաստատել Քաղցր-ջրի լեռներից սկսվող ջրառատ ձորի լայնին ու երկայնքին, իրար շատ մոտիկ տասից ավելի այս թաղերի հավաքականությունը գրեթե աղգակցներ էին միմյանց, ավելի ճիշտը՝ նահապետական մի տան հինավուրց շառավիղներ, որոնք բազմացել և անջատվելով տոհմի միավորից, կազմել էին համանման մեղրեներ, որոնց բնակչության թիվը հասնում էր մոտ 80 տան (480 հոգի)։ Մեղրեների այս խմբավորումը ուներ ընդհանուր մեկ անուն՝ Շատիկ։

Հարսիից Շատիկ արահետը դժվարին, տեղ-տեղ նույնիսկ վտանգավոր էր, քանի որ անցնում էր մեկը մյուսին հաջորդող ատամնավոր գագաթների ու անտառախիտ բարձունքների միջով։ Խրտրքանների մեղրեի առջևից, փայտե կամուրջն անցնելուց հետո, արահետը թեքվում էր արևմուտք և մտնում կաղնիների անտառի խորքը, որը հասցրնում էր Սև-քարի բարձունքը, որի ստորոտում էլ գտնվում էին վերը նշված մեղրեները։

Թեև թաղերն առանձին էին, բայց վարելահողի սակավության պատճառով արտերը կցված էին իրար, այնպես որ դաշտային աշխատանքը, վարն ու ցանը, քաղն ու կալը կատարում էին փոխօգնությամբ։

Շատիկի բնակչության գլխավոր զբաղումը անասնապահությունն էր։

70(40). Սեկյուքլի։ Բնական բոլորովին տարբեր միջավայրում էր ընկած Սեկյուքլի գյուղը, որը գտնվում էր Շատիկից արևմուտք, մոտ երեք ժամ հեռավորության վրա։ Այնահետ անցնելով Շատիկի ձորամիջով, բարձրանում էր ուղիղ սարնիվեր, օձապտույտ ոլորաններով ճեղքում անտառը և ուղղվում դեպի սարի գագաթը, մինչև հասնում էր Քաղցր-ջրի սարի ստորոտը։

Գյուղն օժտված էր բավարար վարելահողով, առատ ջրով և անտառածածկ լեռներով։ Վարելահողը գտնվում էր սարալանջերից կազմված գոգավոր հարթության վրա և բաժանված էր երեք մասի՝ Գոմերին հարակից, Լեռնակաձորի ստորո-

[1] Դերսիմում կային երկու Տանձիկ և երեք Հարսի, որոնցից առաջին Տանձիկը և Հարսին գտնվում էին արևելյան ինքնապաշտպանության գոտու հյուսիսում, երկրորդ Հարսին՝ ինքնանկախ Դերսիմի կենտրոնում, իսկ սույն Հարսին և արդեն ներկայացված Տանձիկը՝ արևմտյան Դերսիմի Սարե-Սալիկից ծագում առնող առաջին գետափին։

տում, իսկ ամենամեծը՝ Քարփանքների հանդում։ Բանջարանոցները և պարտեզները զետեղված էին տնամերձ հողերում, ուր և գտնվում էին կալերը։

Արտերը գրեթե ջրարբի էին։ Ցանում էին ցորեն, գարի, կորեկ, կլկիլ, ոլոռն, ֆիկ, քուշնա, պոյ, առվույտ և կորնգան։

Ռեսիգան աշիրեթի միջնաբերդը նկատվող քրդաբնակ այս գյուղը իր բնական գեղեցկությամբ կարելի էր կոչել գյուղերի թագուհի։

Ձորերի եզերքին աճեցված էին ուռենիների, բարդիների և պտղատու ծառերի պուրակներ։ Տները կիսագետնափոր և միհարկանի էին։

Բնակչության գլխավոր զբաղումը հողագործությունն ու անասնապահությունն էր։ Նշանավոր էին այս շրջանի այծերը, որոնց մաղերը երկար էր, իսկ կաթը առատ։

Ավանդաբար պատմվում էր, թե Քարփանքների մոտի կիսակործան եկեղեցիների փլատակների տեղում Անահիտի մորը (Անա) նվիրված տաճարներ են եղել, իսկ վարի Քարփանքի ստորոտի գերեզմանոցը կռապաշտության շրջանից մնացած հուշարձան էր։ Անահիտի պաշտամունքից մնացած սովորության համաձայն, ալևիների բոլոր կրոնապետների կանայք Անա (տիրամայր) էին կոչվում։

Սեկյուբլին ուներ 180 տուն (1080 հոգի) բնակչություն, որոնք ինքզինքին նկատում էին բնիկներ, ավելի ճիշտը՝ Լեռնակաձորի ստորոտում գտնվող մի հին փլատակ գյուղի նախկին տերերի շառավիղներ։

Այդ գյուղատեղում գտնվում էր իրարից ոչ այնքան հեռու երեք ավեր եկեղեցի, որոնցից մեկին, որպես Հազրեթի-Խըդրի սրբատեղիի, ուխտի էին գնում ս. Սարգսի տոնախմբության օրը։

Սեկյուբլեցիները քաջ կովողներ և անվախ մարդիկ էին, բոլորն էլ զինված, Ռեսիգան աշիրեթի անդամներ և Աղուշանի օլախին ենթակա թալըպներ (ծխեր)։

71(41). Ձիարեթ։ Քաղցր-ջրի լեռների ստորոտում, նույն լեռան դեպի հյուսիս երկարող սարալանջին էր ընկած պատմական անցյալ ունեցող այս գյուղը[1]։ Սեկյուբլիից դեպի հյուսիս երկուսուկես ժամ հեռավորության վրա ընկած այդ գյուղն ուներ 130 տուն (1300 հոգի) հայ, 160 տուն (960 հոգի) քուրդ բնակչություն, որոնք ենթակա էին Ռեսիգան աշիրեթին և ապրում էին հաշտ ու համերաշխ։

Հայերի մեծամասնությունը արհեստավոր էր։ Դերսիմի համայնքում անուն հանած զինագործ Համբո-քիրվան և իր ութ զավակներից երեքը՝ Կիրոն (Կիրակոս), Ճնտոն (Ճանիկ) և Խաչոն (Խաչատուր) հանրածանոթ վարպետներ էին։ Կային նաև հյուսներ, դարբիններ, փայտամշակներ և կապերտագործներ։

Գյուղի վարելահողը գտնվում էր Պենտերի շրջակայքում, Հողդարի և Քարափի ստորոտում, սարալանջի հովտում և դիմացի ղռերում։

Այս գյուղն անցյալում հայկական մեծ ավան էր եղել։ Գյուղի ստորոտի հին գյուղի ավերակները, ովելի վեր, ղերեզմանատան տապանաքարերը, երկու եկեղեցու ավերակները և տեղ-տեղ հողի մեջ թաղված խաչքարերը գյուղի անցյալի իրական ապացույցներն էին։

Տինկի-գլուխ կոչված վայրին շատ մոտիկ, ապառաժների ստորոտից բխում էին հանքային տաք ջրերի աղբյուրներ, լճանում բնական ավազաններ մեջ և օգտագործվում տեղացիների կողմից որպես հոդացավի բուժիչ։

Բնակչության գլխավոր զբաղումը հողագործությունը, անասնապահությունը, մասամբ տնայնագործությունն էր։

72(42). Կաղնուտ։ Հաղարիի հյուսիս-արևմտյան կողմում, Ղաղբխլիի լեռնածոցում, երկու ձորերի միացման կետից քիչ վար, Ջխտակի ստորոտում իր գոյությունն էր պահում լեռնականների մի հին սերունդ՝ կաղնիի նման երկարակյաց և տոկուն Կաղնուտ գյուղը 130 տնից (1300 հոգի) բաղկացած հայ համայնքը։ Մամգուն (Մամիկոնյան) աշիրեթին պատկանող Կաղնուտը գտնվում էր Օվաճգից հարավ-արևմուտք, չորս ժամվա ճամփա հեռու։

Կաղնուտի բնական դիրքը անառիկ էր, շրջապատված իրար խաչաձևվող լեռների գագաթներով ու կիրճերով, որոնք գյուղը դասում էին անառիկ ամրոցների շարքը։ Դեպի Տիրավան երկարող արահետը ստիպված էր անցնել համանուն կիրճով, իսկ դեպի Ջմշկածագ նայող գագաթները տիրապետում էին հարավ-արևելյան բոլոր ուղիներին։ Ունեին իրենց մասնահատուկ ճամփաները, նույնիսկ միջլեռնային գետնուղիները մեկզմեկու հետ հաղորդակցություն պահելու համար։ Առաջին անգամ լինելով, ծանոթացա մի գյուղի բնակչությանը, և այն էլ աղաների, աշիրապետների, փի-

[1] Համանուն գյուղեր կային Մնձուրի աղբյուրների մոտ (Ձիարեթ մեծ սրբատեղին) և Մշո դաշտում (հայաբնակ Ձիարեթ գյուղը, որի բնակիչները, ըստ ավանդության, այդտեղ էին վերաբնակվել Մնձուրի Ձիարեթից)։

ների և տետենների շրջանակի մեջ, որը տեր և ծառա, բեկ կամ աղա չուներ։ Գյուղի հայ համայնքը մի հավաքականություն էր, բոլորն էլ կապված իրար արենակցական կամ խնամական կապերով՝ հորեղբայրներ, մորեղբայրներ, հորաքույրներ, մորաքույրներ, քեռեկիններ ու նենեներ, խնամիներ ու կնքահայրեր էին։

Բնակչության մեծ մասը արհեստավորներ էին, որոնք դարբնում ու կառուցում էին ոչ միայն իրենց, այլև ամբողջ շրջանի համար, ուստի և մեծ համբավ էին հանել։ Դյուլկերենց Ավետը, Դարբինենց Խաչոն, Տեմիրճոնց Մոսիկը, զինագործ Հարոն անվանի վարպետներ էին։ Զինագործ Հարոն և իր երկու եղբայրները ոչ միայն նորոգում էին ամեն տեսակ դենքեր, այլև շինում նորերը՝ արծաթապատ և ոսկեգր շեշխաններ, Մարտին հրացաններ, երկաթ կտրող թրեր և խենջալներ (մեծ գանակներ)։

Այստեղ ամեն ինչ բնական էր՝ լեզուն, կրոնը, հավատալիքը, երդն ու պարը, ամեն ինչ նախնական։

Առատ մանանա (կաղպե) էր իջնում կաղնի ծառերի անտառին։ Ժողովուրդը վերագրում էր գա աստծու ողորմածությանը, պաշտում անտառը և երկյուղածությամբ ու զմայլանքով ունկընդրում անտառի մեղեդուն՝ «աստծու ձենին»։ Հանքային տաք աղբյուրների հրաշագործությանը հավատում էր, պաշտում բնությունը և աստծուն վերագրում դրա ստեղծագործությունը։ Մատաղ էին մորթում Լուսնակի գագաթին, տաք ջրի աղբյուրին, կաղնի անտառին, ջխտակ քարերի ջրիտակ աղբյուրին և մանավանդ գարնան վերազարդնումին ու Վարդավառին։ Վերջապես, բնությունը վերածած էին աստվածապաշտության և իրենց ըմբռնած ձևով հաշտեցրած մեկը մյուսի հետ։

Կաղնուտցիք հաստատ համոզված էին, թե իրենց գոյությունը կպարտին ոչ միայն բնական անառիկ դիրքին, այլև իրենց միասնական ու համերաշխ գործակցությանը և ի պահանջել հարկին՝ իրենց իրավունքները զինու զորությամբ պաշտպանելու գիտակցությանը և պատրաստակամությանը։

Գործում էր Լուսնակի գագաթին կառուցված բերդանման ս. Լուսավորիչ եկեղեցին։ Գյուղի ստորոտում գտնվում էին ս. Փրկիչ եկեղեցու փլատակները։

Կաղնուտցիք ինչպես լավ արհեստավորներ, նույնպես և լավագույն հողամշակներ ու անասնապահներ էին, ունեին պտղաստու ծառեր և իրենց կարիքը բավարարելու չափ նաև բանջարանոցներ։

73(43). Տիրավան։ Կաղնուտից հյուսիս-արևմուտք, Գազգլիի անտառածածկ գագաթների խորության մեջ թաքնված էր 45 տուն (450 հոգի) հայ, 30 տուն (180 հոգի) բուրդ բնակիչ ունեցող այս գյուղը։

Կաղնուտից Տիրավան ճամփան թեև երկար չէր, բայց լեռների ելևէջների պատճառով տևում էր չորս ժամ, այն էլ տեղանքին լավ ծանոթի համար։ Գյուղը թաքնված էր միմյանց խաչաձևվող գագաթների ու կիրճերի խորքում։

Կաղնուտից մեկնող արահետը ձորամիջով բարձրանում էր դեպի հյուսիս, ամեն 100 կամ 200 բայլի վրա փոխելով ուղղությունը, ըստ հանդիպող լեռների շարքավորման։ Մեկը մյուսին չնմանող այս լեռնաշերտերը Կաղնուտից բավական վեր երկու ձորերի միացման տեղում, ուր գտնվում էր փայտից շինված նեղ կամուրջը, շփոթության էր մատնում ուղևորին։ Երեք ուղղությամբ երեք արահետ միանում էին իրար ճիշտ կամրջի առջև, առաջինը դեպի արևմուտք՝ Սիլվան տանողն էր, երկրորդը՝ հյուսիս-արևելք՝ Փեռչենկ էր երկարում, երրորդը, որ միջին ուղին էր, բարձրանում էր ուղղակի հյուսիս և անցնելուց հետո մի քանի ելևէջ ունեցող գագաթներից, հասնում էր Տիրավան։

Գյուղը գրեթե վարելահող չուներ, լեռնային դիրքը, անտառածածկ ժայռերը կաշկանդել էին գյուղացու ձեռն ու ոտը, ուստի նա հարկադրված էր զբաղվելու բացառաբար խաշնարածությամբ, որսորդությամբ և փայտե իրեր (տաշտ, շերեփ, գդալ, դուշ, տեփուր, խնոցի) պատրաստելով։ Հողի պակասության հետևանքով զարգացրել էին կլկիլի (կորեկի մի տեսակը) մշակությունը, որով լրացնում էին ցորենի ու գարու պակասը։

Գյուղի արևելյան լեռնալանջի գոմերի մոտ էին գտնվում կիսակործան Տիրաշեն եկեղեցին և հանքային աղբյուրների ակերը։

Թեև հայերը պահել էին իրենց բարբառը, ս տեղացի քրդերն էլ խոսում էին հայերեն, բայց գյուղից դուրս տիրապետող լեզուն քրդերենի ղաղա բարբառն էր։ Գյուղի բնակչությունը առավելապես ենթարկված էր կաղնուտցիների ազդեցությանը, և Կաղնուտի քահանան հովվում էր նաև այս գյուղի հայ համայնքը, առանց որևէ սակի։

Բնակչության ապրուստի գլխավոր միջոցը կաթնամշակման արտադրանքն էր, ինչպես նաև կլկիլը, մեղրը կամ մանանան և որսի միսը, որը ժողովրդին քաջառողջ և երկարակյաց էր դարձնում։ Այս պարագան, սակայն, վերացրում էին բնության հղորությանը և կաթնաղբյուրի ջրի դե-

բակայությանը, որը մարսողական հատկություն ուներ։ Մարդիկ այստեղ կշտանալ չդիտեին, բարեբախտաբար կլկիլի գնդաձև հատիկները գոգավոր և դժվարամարս լինելով, մասամբ մեղմում էին ուտողների ախորժակը։

* * *

Այսպիսով, Օվաճգի շրջանում կար 43 բնակավայր, որից 26-ը՝ քրդաբնակ, 16-ը՝ հայ ու քուրդ, խառն և միայն մեկը (Կաղնուտ գյուղ)՝ զուտ հայաբնակ։ Այդ բնակավայրերում ապրում էր 5279 տուն (շուրջ 36330 հոգի) բնակիչ, որից 1164 տունը (11640 հոգի) հայ էին, 4115 տունը (24690 հոգի)՝ քուրդ։

III. ԱԿՆԱ ՇՐՋԱՆ[1]

74(1). Մովիկ։ Հաստատված էր Լեռնակա սարերից ծագում առնող ձորի ձախ ափին ու սահմանապահի դեր էր կատարում։ Քուրիշան աշիրեթի սահմաններում գտնվող այս գյուղից դեպի Լեռնակա սարը տանող արահետի ստորոտում գտնվում էին մի եկեղեցու ավերակներ։ Քրդերը եկեղեցին անվանում էին Զիարե Միյան-ոզգան (ոչխարների ու այծերի սուրբ)։ Մովիկից Մաթ ճամփու տևողությունը հինգ ժամ էր։ Բնակիչները քրդեր էին՝ 72 տուն (432 հոգի)։

75(2). Մաթ։ Մովիկից հինգ ժամ հեռավորության վրա գտնվող քրդաբնակ այս գյուղն ընկած էր Լեռնակա սարերի մի թևը կազմող ձորի ափին։ 28 տուն (168 հոգի) ունեցող այս գյուղի բնակիչներն առավելապես խաշնարածներ և լավ որսորդներ էին։ Բնատուր մանանայի անուշ բուրումը այս շրջանի անտառներն էր հրապուրում ամեն տեսակի կենդանիների, մանավանդ ընկուզի, կաղնու համն ու հոտը արջերին ու վայրի խոզերին խելքից հանում էին։

76(3). Դուշովա (Ղուշովա)։ Մովիկից հյուսիս-արևելք, չորս ժամ հեռու, Լեռնակա սարերի ստորոտում էր գտնվում այս գյուղը, որի ստորոտում տարածվում էր համանուն լեռնագագաթը։ Բնակիչները քրդեր էին՝ 165 տուն (990 հոգի)։

77(4). Մեզիրե (Մեզիրեներ)։ Ղուշովայից հյուսիս, չորս ժամ հեռու, Ղարասարի հարավային բարձրավանդակում էր գտնվում մեղիրեների խմբավորումը, որն այսուայնտեղ ցրված հինգից տասը տուն բնակիչ ունեցող թաղերից էր կազմված։ Բնակիչները քրդեր էին՝ 50 տուն (300 հոգի)։

78(5). Պարտիզակ։ Ֆերհաթան և Գարապալան աշիրեթների սահմանագլխին, Եփրատի ձախափնյա լեռնային շրջանի երկու ձորի միջև, Մեղիրեներից հինգ ժամ հեռու էր գտնվում այս գյուղը։

Ավանդաբար պատմվում էր, թե հին Պարտիզակը, որի ավերակները դեռ մնում էին, նախկինում հայկական մի մեծ ավան է եղել, որի բնակիչների մեծ մասը Դերսիմի Ղոչկիրան աշիրեթի հետ գաղթել է Սեբաստիա, ուր քրդերը հիմնել են Ղոչկիրի շրջանը, իսկ հայերը նախկին գյուղի հիշատակը հավերժացնելու համար Ալիս գետի (Ղըզըլ-Իրմագ) ձախափնյա շրջանում հիմնել են նոր գյուղ՝ Պարտիզակ անվամբ։ Դերսիմի պարտիզակցիների մի մասն էլ գաղթել է Պոլսո շրջանը և այնտեղ հիմնել Պարտիզակը, պահպանելով բարբառային որոշ ձևեր։ Դերսիմում էլ կային Պարտիզակներ (Զարսանջակի և այլ շրջաններում), որոնք թուրքերի կողմից կոչվում էին Պաղջեճիկ։ Ներկա Պարտիզակի հարավային մասում, երկու ձորերի միացման լեռնագագաթների տակ, մեծ տարածության վրա ընկած նախկին Պարտիզակի և չորս եկեղեցու ավերակները հավաստում էին պահպանված ավանդությունների իսկությունը։

Ուներ 45 տուն (450 հոգի) հայ, 95 տուն (570 հոգի) քուրդ բնակիչ։

79(6). Մուղատիմ (Մոդտուն)։ Կռապաշտության և քրիստոնեության պայքարի կենդանի վկաներ, արհեստական մեծ ու փոքր բլուրներ շատ կային այս գյուղում։ Դրանց ծանրության տակ թաղված մնում էին նախկին ատրուշանների (կրակատուն), մոգերի բնակության վայրերի կառույցները։

Դերսիմի այլ շրջաններում նույնանուն ուրիշ գյուղեր և արհեստական բլուրներ շատ կային, որոնք Անահիտի պաշտամունքի ժամանակ ծառայելիս են եղել կռապաշտությանը։

Մոդտունը թեև անվանապես պատկանում էր Զարսանջակի շրջանին, բայց իրականում շատերը նրա գոյության մասին անգամ դաղափար չու-

---

[1] Դեպի արևմուտք հոսող Եփրատ գետը Կամախն անցնելուց հետո հանդիպելով ապառաժների, փոխում է ուղղությունը և հոսում հարավ ու միանում Արածանիին։ Եփրատն անկյունադարձով Ակն քաղաքը հյուսիսից հարավ սահմանագծում և անջատում է արևմտյան Դերսիմից։ Ակնա արևելքում, Եփրատի ձախ ափին ղտնվող մի շարք քրդական գյուղեր վարչականորեն գտնվում էին Ակնի ստորաբաժանման մեջ, բայց իրականում պատկանում էին արևմտյան Դերսիմի կիսանկախ և ինքնանկախ շրջաններին ու մտնում նրանց ազդեցության գլուխների մեջ, ուստի Դերսիմի տեղագրությունը տալիս չենք անցնում Եփրատի աջ ափը և ձախափնյա քրդական գյուղերն էլ միայն ներկայացնում։

նեին, որովհետև աշխարհագրորեն գյուղն ընկնում էր արևմտյան Դերսիմի կիսանկախ շրջանի մեջ։

Ակնից հարավ հոսող Եփրատի ձախ ափի բարձրակիր ապառաժների ստորոտում, Վարդենիկից արևմուտք հիմնված այս գյուղը գտնվում էր Պարտիզակից հյուսիս, հին ժամ հեռավորության վրա։ Սատանի քարերի ստորոտում, հին գյուղի ավերակների կենտրոնական բարձունքի վրա դեռևս մնում էին քարուկիրով կառուցված մի մեծ եկեղեցու փլատակներ։

Գյուղը քրդարնակ էր, ուներ 50 տուն (300 հոգի) բնակիչ, կազմված էր իրարից անջատ թաղերից (մահալա), մտնում էր Ջարսանջակի գյուղախմբի և Գոջան (կամ Ղոջան) աշիրեթի սահմանների մեջ։

Վարդենիկից Մուգատիմ արահետը անցնում էր անտառածածկ լեռներով և ճամփի կեսին բաժանվում երկու ճյուղի՝ դեպի ձախ (արևմուտք) Մուղատիմի արահետն էր, որն անցնում էր մի ավերակ եկեղեցու ստորոտով, աջը (հյուսիս-արևմուտք) հասնում էր Սոսի գյուղին։

80(7). Սեղմերն։ Մուղատիմից հյուսիս-արևմուտք, երկու ժամ հեռու, Սոսի և Կեմիճի գյուղերի միջև, Եփրատ գետի ձախափնյակում, ինքնակախ Դերսիմի ինքնապաշտպանության ղռանն էր ընկած այս գյուղը, որն ուներ 80 տուն (800 հոգի) հայ, 90 տուն (540 հոգի) քուրդ բնակիչ։

Գյուղը բաժանված էր երեք մասի՝ Հողդար, Բերդար և Լեռնակ անուններով, որոնք բոլորաձև շրջադարձով միացած էին իրար։ Լեռնակ ձորը և Բերդարի ջուրը Հողդարի ստորոտում միանում էին միմյանց և գյուղը սեղմում իրենց բաղուկների մեջ։

Ուներ մի կանգուն և երկու կիսակործան եկեղեցի, որոնք գտնվում էին գյուղից դուրս, առաջինը՝ ս. Միանձումը, Հողդարի երկրորդ բլուրի ստորոտում, երկրորդը՝ ս. Մինասը, Բերդարի և Լեռնակի միացման տեղը։ Գյուղի եկեղեցին գտնվում էր Լուսաղբյուրի վերևը, գեղատեսիլ բարձունքի վրա և կոչվում էր ս. Գևորգ (Խրտր-Էլիաս)։

Հայերը խոսում էին հայերենի տեղական բարբառով և քրդերեն (ղաղա կամ տմբլի բարբառով), նույնպես և քրդերը՝ հայերեն։

Բնակչության գլխավոր զբաղմունքը անասնապահությունը, մեղվաբուծությունը և հողագործությունն էր։ Գյուղը երեք կողմից շրջապատված լինելով լեռներով, ինչպես և պաշտպանված քամիներից, ուներ նաև պտղատու ծառերի լավագույն այգիներ։ Նշանավոր էր հավկթաձև թամասը (մեծ սալոր), որը քաղցրահամ և ջրալի էր։ Կային թթի, ծիրանի, բալի, խնձորի, տանձի և այլ պտուղների բազմաթիվ ծառեր։

Բնակչությունը պատկանում էր Ռևիդան աշիրեթին, որը բարեկամական և համագործակցական լավագույն կապերով կապված էր Ղոջան և Մամդան (Մամիկոնյան) աշիրեթների հետ։

81(8). Կեմիճի։ Մեշքերեից հյուսիս-արևմուտք, 4—5 կմ հեռու, Եփրատի ձախափնյա լեռնահովտի խոռոչավոր մի հարթության վրա էր ընկած բաղմադարյան այս գյուղը։

Եփրատն այստեղ անսանձ էր, կարելի չէր կամուրջ դցել, ուստի այդ պակասը լրացնում էին գյուղի քուրդ բնակիչները, որոնց գլխավոր զբաղմունքը նավավարությունը, ձկնորսությունը, մասամբ էլ հողագործությունն ու անասնապահությունն էր։ Կեմիճին Դերսիմի շարժական կամուրջն էր, նույնպես և մուտքի դռներից մեկը, սակայն գեսափի հսկայական ժայռերը և ջրի վարար սահանքը անառիկ և անմատչելի մի դիրք էին ապահովում այս 75 տնից (450 հոգի) կազմված գյուղին։ Քելեկ կամ սալ կոչվող տկանավերը վարպետ նավավարների շնորհիվ արագ և անվտանգ կատարում էին ամեն տեսակ փոխադրություն։ Եթե աշիրեթի կողմից դա թույլատրված էր։

Այս գյուղի քուրդ բնակչության խոսակցությունը հար և նման էր Հելլենք, Սավա և որոշ այլ գյուղերի հնչականությանը։ Այստեղ էլ «շ»-ն արտասանում էին «ս»՝ Շեթեր (գյուղանուն)՝ Սեթեր, շեքեր (շաքար)՝ սեքեր, շո (գնա)՝ սո, շեյթան՝ սեյթան, իսկ «չ»-ն հնչեցնում «ց»՝ Ցարրդան (աշիրեթի անուն)՝ Ցարրդան։ Հավանաբար, այս գյուղի բնակիչները ևս նախկինում հույն են եղել ու ապա կամ քրդացել են և կամ իրենց լեզվի աղդեցությանն են ենթարկել քրդերենը։

82(9). Բղուղ։ Կեմիճից հյուսիս-արևելք արահետն անցնում էր դժվարամատչելի ապառաժներից, գյուղի հյուսիսային կողմից բարձրանում վեր և դառնալով սրածայր քերծերի ստորոտից, խորանում անտառների մեջ ու հասնում այս գյուղը։ Գյուղին մոտիկ մի ապառաժի սրտից ժայթքում էր տաք աղբյուր և ջրվեժանման դահավիժում վար՝ քարափոր ավազանի մեջ։

Բղուղի բնական դիրքը շատ գեղեցիկ էր, ուներ մշակելի լավ հողեր ու արոտավայրեր։ Կեմիճից Բղուղ հեռավորությունը մոտ երեք ժամ էր։

Գյուղի 60 տնից (360 հոգի) ավելի բնակչությունը մաս էր կազմում Ղոջան աշիրեթին։ Բնակչության գլխավոր զբաղումը խաշնարածությունը

և հողագործությունն էր։ Ունեին նաև պտղատու ծառեր։

83(10). Սոսի։ Բղուղի հարավ-արևելյան կողմում, Մեշքերեից հյուսիս-արևելք ընկած էր քրդաբնակ այս գյուղը, հաղիվ 25 տնից (150 հոգի) բաղկացած։ Գյուղն ապրում էր առավելապես անասնապահությամբ, վարելահողը պակաս էր։ Հավանաբար իր անունն առել էր գյուղից վեր գտնված սոսյաց անտառից։ Անտառի մուտքի մոտ գտնվում էին մի եկեղեցու փլատակներ, որին քրդերը Ջիար (ուխտատեղի) էին անվանում։

Բղուղից Սոսի տևողությունը մոտ երկուսուկես ժամ էր, արահետն անցնում էր Սևքար լեռնագագաթով և առանց ընդմիջվելու հասնում գյուղ։

84(11). Սիլվան։ Բղուղից հյուսիս-արևելք և Սոսիից հյուսիս-արևմուտք, մի լեռնահովտի երկու ձորերի միացման տեղում էր ընկած քրդաբնակ այս գյուղը, որի բնակչության թիվը հասնում էր մոտ 150 տան (900 հոգի), ենթակա Սամդուն աշիրեթին։ Գյուղի բնական դիրքի և բնակչության բազության համբավի շնորհիվ գյուղը դասվում էր արևմտյան Դերսիմի ինքնապաշտպանության ամրոցների շարքը։

Գյուղը նշանավոր էր ոչ միայն իր անտառներով, այլև հանքային ջրերով, որոնցից մեկը դառնահամ էր ու գտնվում էր գյուղի արևելյան կողմում՝ Քեմերե-Սուրիի (կարմիր քարեր) լեռնագագաթի ստորոտում, զորավոր տաք ջրի աղբյուրը՝ Սանասորի ս. Նշան եկեղեցու կիսակործան դավթի արևմտյան կողմում, եկեղեցուց հաղիվ 25—30 քայլ հեռավորության վրա։

Գյուղն ուներ նաև բնական քարայրներ, որոնց մի քանիսի խորությունը, ավելի ճիշտ՝ դեպի լեռան սիրտը խորացող երկարությունը, ավելի քան երկու կիլոմետր էր։ Թեև բնական քարայրներ անվանեցինք, բայց կկարծվեր, թե ժամանակին օգտագործված հանքահորեր են։ Այդ քարայրների մի մասը օգտագործվում էր որպես զենքի, ռազմամթերքի, սննդեղենի պահեստ։

Սիլվանը հայտնի էր նույնպես իր ընկուզենու անտառով և վայրի պտղատու ծառերով։ Վարելահողը գտնվում էր գյուղից վեր, երկու ձորերի ընդգրկած լայն տարածության վրա։

Սոսիից Սիլվան արահետն ավելի դժվարանցանելի էր, քան Բղուղից Սիլվան, հեռավորությունը՝ երկուսից-մեկուկես ժամ։

Այդ շրջանների մեջ ամենալավագույն կալերտները, բարձերը, գոգնոցները և գոտիները պործվում էին Սիլվանում։

Բնակչության գլխավոր զբաղումը անասնապահությունը և հողագործությունն էր։ Մշակում էին նաև լավագույն ծխախոտ, որի համբավը տարածված էր շատ հեռուները։ Պտղամշակության պարտեզները գտնվում էին գյուղի ստորոտում, երկու ձորերի միացումից բավական վար, ուր և կային բանջարանոցներ։

85(12). Պաղաձոր։ Այս գյուղը, որ կոչվում էր նաև Պարաձոր, գտնվում էր նույնանուն սարալանջի ստորոտին, ձորի ձախ ափին։ Ղոչան և Ռեսիգան աշիրեթներին սահմանակից այս գյուղի արևելյան կողմում գտնվում էին երեք եկեղեցու փլատակներ և հին գյուղի դեպի հյուսիս-արևելք տարածված ավերակները։ Եկեղեցիներից մեկի դռան կամարի արձանագրությունից հայտնի էր դառնում, որ այն կոչվելիս է եղել ս. Ընծայման իտրան։

Բնակիչները քրդեր էին՝ 136 տուն (816 հոգի)։

86(13). Մատրգան։ Այս գյուղը գտնվում էր Պաղաձորի հյուսիս-արևմուտքում, Քաղցր-ջրի սարերից ծագում առնող երկու ձորերի արանքում։ Ակնա շրջանից Եփրատը պատանեղող լեռնագագաթները բնական այնպիսի պատվարներ էին ստեղծել, որ գյուղից գյուղ երթևեկությունը դժվարանում էր, այնպես որ Պաղաձորից Սատրգան ճամփի տևողությունը չորս ժամ էր։ Բնակիչները քրդեր էին՝ 40 տուն (240 հոգի)։

87(14). Ծաղիկ (Ծաղկունք կամ Ջաղիկ)։ Սատրգանից հյուսիս-արևմուտք, սարի ժայռերի ստորոտում, Պաղաձորից երեք ժամ հեռու էր գտնվում Ծաղկունք գյուղը։ Գյուղի ստորոտում, Կեիկան քարերի պատվարին դեռ չհասած, Ջեքմների պուրակում գտնվում էին ս. Ստեփանոս եկեղեցու փլատակները։ Բնակիչները քրդեր էին՝ 25 տուն (150 հոգի)։

88(15). Թամար (Թամա)։ Շենրգան աշիրեթի հովանավորության տակ, Ծաղկունքից երկու ժամ հեռու էր գտնվում Թամար գյուղը, որը բաղկացած էր վեց մեզրեից։ Բնակիչները քրդեր էին՝ 35 տուն (210 հոգի)։

89(16). Պարտիզակ (Պաղճեճիկ)։ Գտնվում էր Ակն քաղաքի արևելյան կողմում։ Առերևույթ Ակնին շատ մոտիկ, բայց իրականում ութ ժամվա մաքառումներով հաղիվ կարելի լիներ շրջանցել Եփրատի ձախափնյա ապառաժները և Թամարի ստորոտի կիրճի մուտքից բարձրանալ գյուղ, որը հեռու էր Թամարից երեքուկես ժամ։ Բնակիչները քրդեր էին՝ 60 տուն (360 հոգի)։

90(17). Մաղկո։ Բաղեակրան (Բաղեակիր) տշիրեթին պատկանող այս գյուղը գտնվում էր Պարտիզակից հյուսիս-արևելք, Քաղցր-ջրի սարերից

հոսող ջրերի արեմտյան ափին, Պարտիզակից երեք ժամ հեռավորության վրա։ Բնակիչները քրդեր էին՝ 75 տուն (450 հոգի)։

91(18). Սեիկ (Սնկաղեղ)։ Իվում էր, որ այս գյուղի անունը կապված պետք է լինի Անահիտին նվիրված անասունները ծնեցնելու վայրի հետ։

Բարձրադիր լեռնապալաթներով շրջապատված լավագույն արոտավայրեր և առատ ջուր ունեցող այս գյուղը գտնվում էր Բաղեակիրների աշիրեթի ռահմաններում, Քաղցր-ջրի և Պաղաձորի միացման վայրի դուլարադեղ մի լեռնածոցում։ Հեռավորությունը Մամղունից երեք ժամ էր։ Կային Տիրաշեն և ս. Կույս անուններով եկեղեցիների փլատակներ։ Բնակիչները քրդեր էին՝ 136 տուն (816 հոգի)։

92(19). Զեմերի։ Մամկայից հյուսիս-արևելք, երեքուկես ժամ հեռու գտնվում էր Զեքերի գյուղը, բաղկացած երկու մեղրեից։ Բնակիչները քրդեր էին՝ 15 տուն (90 հոգի)։

93(20). Ռապեթ (Ռապաթ)։ Սնիկից հյուսիս, վեց ժամի չափ հեռու, Քաղցր-ջրի սարերից դեպի արևմուտք երկարող թևի ստորոտում էր գտնվում Բաղեակիրան և Զեքիրան աշիրեթների սահմանապահ Ռապեթ գյուղը։ Բնակիչները քրդեր էին՝ 160 տուն (960 հոգի)։

94(21). Մազուտ (Մազուտան)։ Արևմտյան Դերսիմի հյուսիսային սահմանին իշխող ամենաբարձր և ամենալավ պաշտպանված գյուղերի շարքին էր դասվում Մազուտան աշիրեթի Մազուտան գյուղը։ Գտնվում էր Կամախից հարավ-արևմուտք, որից բաժանված էր երկու լեռնաշղթայով։

Հեռավորությունը Ռապաթից ութ ժամ էր, Կամախից՝ մեկուկես օրվա ճամփա։ Բնակիչները քրդեր էին՝ 385 տուն (2310 հոգի)։

* * *

Այսպիսով, Ակնա շրջանի այս մասում կար 21 բնակավայր, որից քրդարնակ՝ 19-ը, հայ ու քուրդ խառն՝ 2-ը, դուտ հայաբնակ չէր մնացել։ Այդ բնակավայրերում ապրում էր 2052 տուն (12812 հոգի) բնակիչ, որից հայ՝ 125 տուն (1250 հոգի), քուրդ՝ 1927 տուն (11562 հոգի)։

IV. ԲՈԼՈՄՈՐԻԻ ՇՐՋԱՆ

95(1). Բոլոմորի։ Բնակչությամբ ոչ այնքան բազմամարդ, բայց աշխարհագրական կարևոր դիրքի շնորհիվ հանրածանոթ շրջկենտրոններից էր, քանի որ արևելյան Դերսիմը արևմուտքին միացնող և Խութաց-ձորի ու մի շարք այլ կիրճերի ինքնապաշտպանության առաջին և գլխավոր պատվարները Բոլոմորին շրջապատող բարձրադիր սարերն էին։

Առանց Բոլոմորիի աջակցության, իր Ռիկունքում գտնվող Ավղերտ լեռան դեպի Եփրատ և Պալալանի լեռնաշխարհին նայող Ավղերտի-կետիկում կառուցված թրքական զորանոցները դատապարտված էին անշարժության, ուստի թուրք կառավարությունը ներողամիտ աչքով էր նայում Բոլոմորիի աշիրեթների սանձարձակ գործողությանը և հաճախ լռությամբ էր անցնում նրանց ասպատակությունների կողքով։ Բոլոմորին ուղղակի կապված էր Երզնկայի չորրորդ զորաբանակի զինվորական կենտրոնին։ Պալան, Ռշքոտան (Ռշտունիք), Քալան, Քեչելան (Քաջարան), Միսանան, և Հայգերան աշիրեթների տիրապետության տակ գտնվող այս բարձրավանդակը քաղաքական հույժ կարևոր նշանակություն ունեցող պատմական կենտրոն էր։ Թեև գայմագամանիստ, բայց իրականում անվանապես էր միայն ենթակա թուրք կառավարությանը։

Բոլոմորին գտնվում էր կենտրոնական Դերսիմի հյուսիսային լեռնաշղթաներից Պագր-պապայի, Ավղերտի և մասամբ դեպի արևելք երկարող Մընձուրի լեռնապարիսպների կենտրոնում, Պաղրից եկող հորդառատ ջրերի միացման կետից քիչ վար, կենտրոնական մեծ ջրի աջ ափին, որն իր անունով կոչվում էր Բոլոմորիի գետ։

Դերսիմի ինքնապաշտպանության ամենագրավոր կիրճը, որ թուրքերը Քութու-տերեսի, իսկ հայերը՝ Խութաց-ձոր էին անվանում, անցնում էր Բոլոմորիի արևելքից և Դերսիմը բաժանում երկու մասի՝ արևելյան և արևմտյան Դերսիմ անուններով։

Բոլոմորիի արևելյան պատնեշի ստորոտում, շրջկենտրոնից բավական հեռու գտնվում էին հինգ եկեղեցու ավերակներ, որոնք կարծես թաքնված էին կույս անտառների մեջ։ Եկեղեցիներից մեկը ս. Գևորգի տաճարն էր, որը քրդերի Խզդր-էլիասն էր, մյուսը, որ դեպի Խութաց-ձորի ապառաժները տանող ճանապարհի ձախ կողմում էր, կոչվում էր ս. Փրկիչ, իսկ երրորդը քրդերի կողմից սեփականացված ս. Մարգսի կիսակործան կաթողիկեն էր, որը վերանվանված էր Զիարե-Հաղրեթի-Խզդր։

Ուներ 38 տուն (380 հոգի) հայ, 750 տուն (4500 հոգի) քուրդ բնակիչ։

96(2). Շեենոր (Շեենակ)։ Մալ լեռան դեպի հյուսիս տարածված արևմտյան սարալանջից բխող տաք ջրերի աղբյուրները այս շրջանին ավել էին բնական բացառիկ դիրք։ Շրջակա լեռները

տեղ-տեղ մինչև հինգ մետրի հասնող ձյան հասա շերտով ծածկված ժամանակ էլ ձորամիջում և սարալանջերում կարծես գարուն էր, որովհետև հողի տակից անցնող տաք ջրերի ակերից գոլորշի էր բարձրանում և ձյունը հալում։ Ժողովուրդն այս հրաշագործությունը վերագրում էր Մալի արևելյան գագաթի ստորոտում գտնվող ս. Մինասի կիսակործան տաճարի զորությանը։ Այդ եկեղեցուց դեպի հյուսիս, քարայրների մեջ անվթար մնում էր ս. Մեսրոպի (Մարսուլ) քարափոր եկեղեցին, որի մուտքը բացվում էր բարձրադիր երկու ժայռերի արանքից։

Հայզերան և Սիսանան աշիրեթների տիրապետության տակ գտնվող այս գյուղը հիմնված էր Բոլոմորիի արևելյան կողմը, նույնանուն մեծ ջրի ձախ ափին, որին միանում էր ս. Մինասի ստորոտից հոսող ջուրը։ Բոլոմորիից Շենակ ճամփու տևողությունը երկուսուկես ժամ էր։

Աղաջանգեղից արևմուտք, Մալ լեռան արևմրյան սարալանջին, բնական շատ գեղեցիկ լեռնածոցի խորքն էր ընկած այս գյուղը։ Աղաջանգեղից ճանապարհը մտնում էր անտառախիտ ապառաժների մեջ և տեղ-տեղ վեր էր ածվում արահետի, այնպես որ լեռնավարժ ավանակներն անգամ մեծ դժվարությամբ, մեկուկես ժամվա տքնաջան վերելքից ու վայրէջքից հետո էին հասնում այդտեղ։ Գյուղը ծովի մակերևույթից մոտ 2500 մետր բարձրության վրա էր գտնվում, սակայն դիրքով և կլիմայով զանազանվում էր շրջակա գյուղերից՝ լոլիկը կարմրում էր և առատորեն աճում էին ամեն տեսակ բանջարեղեններ՝ բազուկ, լուբիա, ձմերուկ, սեխ, կաղամբ, պղպեղ և աղցաններ ու համեմներ։ Պտղատու ծառերի շարքին նշանավոր էին սերկևիլը, ծիրանը, խնձորը, տանձը, սալորը, նույնիսկ նուռն ու նուշը։ Գյուղացիք, որ լավ պտաբաիղպաններ ու բանջարամշակներ էին, իրենց գյուղի առանձնահատկությունը վերագրում էին Մալ լեռան վրա գտնված ս. Մինասի կիսակործան տաճարի հրաշագործությանը ու հավատում, որ լեռան փիրն է, որ կյանք ու կենսունակություն է տալիս աշխարհից կարված այս գյուղին։ Պտղաբանջարամշակությունից բացի, պարապում էին նաև երկրագործությամբ, բայց առավելապես անասնապահությամբ։

Ուներ 80 տուն (480 հոգի) քուրդ բնակիչ։

97(3). Իքոր (Իքձոր)։ Գտնվում էր Շենակի հյուսիսային կողմում, Տանձիկից և Պաղրից հոսող երկու ջրի միացման տեղում։ Շենակից Իքձոր ճանապարհի հեռավորությունը երկու ժամ էր, իսկ Բոլոմորիից՝ երեք ժամ։ Գյուղի հյուսիսում, Պաղրի լեռնածոցում գտնվում էր Տիրամոր կիսակործան տաճարը, անվթար էին գերեզմանատան տապանաքարերը։

Քրդերի հետ խառն ապրում էին հայ Միրագներ, որոնք թեև պահում էին իրենց հայերեն բարբառը և տոհմային ու եկեղեցական բոլոր ավանդություններն ու հավատալիքները, բայց առավելապես խոսում էին քրդերեն և կոչվում էին քուրդ Միրագներ կամ Միրոներ։

Ուներ 78 տուն (780 հոգի) հայ, 95 տուն (570 հոգի) քուրդ բնակիչ։

98(4). Մախո։ Հայզերան աշիրեթին պատկանող այս գյուղը գտնվում էր Իքձորից հյուսիս-արևելք, ձորի աջ ափին։ Իքձորից հեռու էր երեք ժամի ճամփա։ Բնակիչները քրդեր էին՝ 120 տուն (720 հոգի)։

99(5). Ղալաճուխ (Բերդակ)։ Բոլոմորիից հյուսիս-արևմուտք ընկած, Հայզերան աշիրեթին պատկանող այս գյուղը նախկինում հայկական ավան էր եղել։ Գտնվում էր Պաղրից սկիզբ առնող երկու ձորերի մեջտեղում։ Գյուղի արևմտյան լեռնածոցի անտառների խորքում դեռևս կարելի էր դիտել պատմական հին ամրոցի, իսկ մոտակա բացատում՝ հին եկեղեցու փլատակներ։

Մախոյից Բերդակ ճամփու տևողությունը չորս ժամ էր։ Բերդակը այս ու այն կողմ ցրված մեղրեների ամբողջությունն էր։ Բնակիչները քրդեր էին՝ 130 տուն (780 հոգի)։

100(6). Տինկ։ Մախոյից հյուսիս-արևմուտք, Ղալաճուխից հյուսիս-արևելք գտնվում էր այս գյուղը։ Հեռավորությունը Բերդակից երկուսուկես ժամ էր։ Բնակիչները քրդեր էին՝ 35 տուն (210 հոգի)։

101(7). Պաղր։ Պաղր-պապայի անունը կրող այս գյուղը Բոլոմորիի հյուսիսային կողմի ամենաբարձրադիր բնակավայրն էր և սահմանապահի դեր էր կատարում։ Տինկից Պաղր ճամփու տևողությունը հինգ ժամ էր։ Բնակիչները քրդեր էին՝ 360 տուն (2160 հոգի)։

102(8). Քարսան։ Քարշան աշիրապետի կենտրոնանիստ այս գյուղը գտնվում էր Պաղր գյուղի արևելքում, լեռնագագաթների ստորոտում։ Պաղրրից Քարսան հեռավորությունը չորսուկես ժամ էր։ Բնակիչները քրդեր էին՝ 250 տուն (1500 հոգի)։

103(9). Շեթերի։ Սիսանան աշիրեթին պատկանող այս գյուղը գտնվում էր Պաղր-պապայի արևելյան սարալանջերից սկիզբ առնող երկու ջրի

արանքին, Քարսանից հարավ-արևելք մեկուկես ժամ հեռու։ Բնակիչները քրդեր էին՝ 160 տուն (950 հոգի)։

101(10). Հարսի։ Շեթերից հյուսիս-արևելք, մեկ ժամ հեռավորության վրա էր գտնվում անտառածածկ սարերի թաղուհին, հայկական հին ավան Հարսի գյուղը։ Հին Հարսիի դիրքը ավելի բարձրադիր է եղել։ Նոր Հարսիի հարավային սարալանջին կար մի կանգուն և չորս ավերակ եկեղեցի, որոնցից երկուսի անունն էր հիշվում՝ Ավետման տաճար և ս. Հակինթ։ Գտնվում էին անտառի այն բացատում, ուր կային բերդի և իշխանական ապարանքի փլատակները հարակից գերեզմանատան մեծ տապանաքարերով։

Ապարանքի արևելյան ամրոցի կիսակործան կամարների ստորոտից դուրս էր ժայթքում թթվահամ ջրի հորդառատ աղբյուր, որը մարսողական հատկություն ուներ և կոչվում էր Փորացավի-լիսապրիր, ուր ուխտի էին գնում ստամոքսի հիվանդությամբ տառապողները, որոնք գարմանվում էին երեք օրվա ընթացքում։

Բոլոր ավանդության, գյուղն իր անունը ստացել էր իշխանապունի հետ մի աղջկա ծածուկ հարսնանալու պատճառով։

Հարսին ուներ խոր քարայրներ և իշխանական ապարանքից մինչև Շեթերի փորված գետնուղի։ Սեթերիից Հարսի համփու տևողությունը երեք ժամ էր։

Ուներ 60 տուն (600 հոգի) հայ, 115 տուն (690 հոգի) քուրդ բնակիչ։

105(11). Տանձիկ։ Թուրք իշխանության կողմից բաղարական պատճառներով հալածված հայ աղգային գործիչների ապաստարանն էր քուրդ աշիրեթների պաշտպանությունը վայելող այս գյուղը։ Գտնվում էր Բոլոմորիի, Քղիի և Դերջանի սահմանների միացման եռանկյունում, տարբեր սարերից սկիզբ առնող երկու ձորերի կենտրոնում։ Հարսիից Տանձիկ համփու հեռավորությունը վեց ժամ էր։

Տանձիկն էլ Հարսիի նման պատմական անցյալ ունեցող հայկական հին ավան լինելը հաստատող կոթողներ շատ ուներ, որոնցից գլխավորները Պաղր-պապա լեռնաշղթայի հյուսիսից հարավ թեքվող անկյունաղարձի երեք գագաթների ստորոտում ընկած անմատչելի ժայռերով պաշտպանված նախկին բերդի կիսակործան ավերակները և գատարական ս. Նշան վանքն ու հարակից Աստվածածին մեծ եկեղեցին էին։ Բերդի արևելյան անտառների մեջ էին գտնվում Քառասուն-մանկանց եկեղեցու ավերակները, իսկ արևմտյան բարձունքում՝ Լուսավորչին նվիրված կաթողիկեի կիսակործան խորանի կամարների մի մասը։

Ուներ 85 տուն (850 հոգի) հայ, 140 տուն (840 հոգի) քուրդ բնակիչ։

106(12). Աղայե-շենլիկ։ Դերջանի ու Քղիի հյուսիսային մասերի և Բոլոմորիի գյուղերի մեծամասնության տիրակալն էր։ Շահ Հյուսեին-բեկ երկրորդը, որը կողոպտում էր իր գերիշխանությանը ենթակա հայերին, երկար տարիներ որպես դայմագամ վայելելով թուրք կառավարության պաշտպանությունը, վերջապես սպանվեց հայերի կողմից ու անգրանիկ որդին՝ Հայտեր-բեկը հաջորդեց իրեն։ Ահա այդ բռնակալի ապարանքի անունով էլ գյուղը կոչվում էր Աղայե-շենլիկ։ Գտնվում էր Բոլոմորիի արևելյան կողմում, Պաղրպապայի լեռներից սկիզբ առնող ձորերի ձախ ափին, բարձրադիր գագաթներով շրջապատված մի լեռնահովտում, որի կլիմայական պայմանները հնարավորություն էին տալիս աճեցնելու պրտղատու ծառերի և բանջարեղենի զանազան տեսակներ։

Աղայե-շենլիկի արևելյան կողմում, Սուրբ-լուսս (Սլպուս) լեռան քարայրների ստորոտում էին գտնվում Ավետման և Քառասուն-մանկանց եկեղեցիների փլատակները։

Գյուղի 60 տնից (360 հոգի) բաղկացած քրդական համայնքը Շահ Հյուսեին-բեկի գործակատարներն ու ծառայողներն էին։ Նրա վինու զորությունը հասնում էր 12000 չախմախլիի։ Բնակիչները քրդեր էին՝ 60 տուն (360 հոգի)։

107(13). Ալբուն-Հյուսեին։ Քերդեսուրի անմատչելի կիրճի հյուսիսային կողմի գեղատեսիլ մի լեռնադաշտում էր գտնվում այս գյուղը, որի հեռավորությունը Աղայե-շենլիկից երեք ժամի ճամփա էր։

Գյուղն ուներ իր Մայր Աստվածածին եկեղեցին և վարժարանը, ուր դասախոսում էր քահանան, իրեն ողնական ունենալով Երգնկայի Ներսես Հայրապետի վանքի գիշերօթիկ վարժապետանոցի շրջանավարտ վառվռուն մի երիտասարդ՝ ոդ. Սուրեն անունով։

Դեպի Քերդեսուրի կիրճը նայող Պաղ-թեփեի ստորոտում գտնվում էին մեծ գերեզմանոց, իսկ ավելի վեր, անտառների խորքում՝ Աստվածածին եկեղեցու փլատակները (հնի անունով նորն էին կառուցել)։

Գյուղի հյուսիսային բարձունքից շրջակայքին իշխում էր Շահ Հյուսեին-բեկ երկրորդի եղբոր՝ Իբրահիմ-բեկի տղոց՝ Ապաս-բեկի և Շահ Հյուսեին-բեկի ապարանքը (ղոնախ)։

Անդրանիկն իր «Տերսիմ» գրքում այս գյուղի բնակիչների թիվը տալիս է 300 տուն հայ, 8—10 տուն քուրդ։ Ինձ մոտ եղած տվյալները կրկին ստուգելով այս գյուղից Երևանում վերաբնակված ծերունիների միջոցով, համոզվեցի, որ Անդրանիկի բերած թվերը ճիշտ չեն։ Ալթուն-Հյուսեին գյուղն ունեցել է 68 տուն (680 հոգի) հայ, 25 տուն (150 հոգի) քուրդ բնակիչ։

108(14). Պաղրան։ Պաղը գյուղից հետո, Պաղրանը երկրորդն էր, որ գտնվում էր Բոլոմորիից հյուսիս-արևելք, իսկ Աղայե-շենլիկից հյուսիս, երկու ձորերի մեջ։ Պաղրանի բնակչությանը վիճակված էր հսկելու Դերսիմի ինքնապաշտպանության գլխավոր կիրճից Խութաց-ձորի ուղղությամբ կատարվող բոլոր շարժումներին։

Պաղրանում թեև հայեր չկային, բայց կային հայկական նախկին ավան լինելը հաստատող պատմական կոթողներ։ Գյուղի հյուսիսային լեռնադաշտում գտնվում էին ս. Կիրակոս եկեղեցու փլատակները, կային նաև արհեստական բլուրներ, որոնց տակ թաղված էին ատրուշաններ։

Աղայե-շենլիկից Պաղրան ճամփու տևողությունը երկուսուկես ժամ էր, Ալթուն-Հյուսեինից՝ չորս ժամ։ Բնակիչները քրդեր էին՝ 130 տուն (780 հոգի)։

109(15). Թուղլա։ Շրջանի ամենագլխավոր աղի հանքը, որի անունով կոչվել էր այս գյուղը, գտնվում էր Բոլոմորիից հյուսիս-արևմուտք մեկուկես ժամ հեռավորության վրա։ Բնակիչները քրդեր էին՝ 25 տուն (150 հոգի)։

110(16). Ճանճիկե։ Թուղլայից հյուսիս-արևմուտք, մեկուկես ժամ հեռու, Պաղրից հոսող ջրի աջ ափի ժայռերի ստորոտում էր գտնվում այս գյուղը։ Բնակիչները քրդեր էին՝ 60 տուն (360 հոգի)։

111(17). Ալիշան։ Թոռնե Ալիշերի Քեքո աղայի տիրապետության տակ գտնվող այս գյուղը տեղավորված էր Պաղրից հոսող երկու ջրերի միջև։ Քեքո և Պաքո աղաները որպես հայտնի հայասերներ հետուց ի վեր գործակցած էին հայերի հետ և աջակցած ազատագրական այն բոլոր պայքարներին, որ ուղղված էին թուրք իշխանության դեմ։

Այս շրջանի ամենահայտնի ս. Նշանի վանքը, որ երկար ժամանակ որպես թաքստոց էր ծառայել հայ ազատագրական շարժմանը նվիրված մարտիկներին, գտնվում էր վերը նշված աղաների պաշտպանության տակ, որոնք թույլ չէին տալիս թուրք զինվորներին դուրս գալու Բոլոմորիի շրջկենտրոնից և մտնելու իրենց տիրապետության սահմանները։

Ուներ 25 տուն (250 հոգի) հայ, 70 տուն (420 հոգի) քուրդ բնակիչ։

112(18). Թաքան։ Ալիշտնից հյուսիս-արևմուտք, երկուսուկես ժամի վրա ընկած մի լեռնածոցում էր բուն դրել քրդական այս համայնքը, որը պատկանում էր Սասանան աշիրեթին։ Բնակիչները քրդեր էին՝ 15 տուն (90 հոգի)։

113(19). Ջերաիկե։ Թաթանից հյուսիս-արևմուտք, երկու ժամ հեռավորության վրա էր գտնվում այս գյուղը։ Բնակիչները քրդեր էին՝ 80 տուն (480 հոգի)։

114(20). Ձնձոր։ Քաջարան (Քեչելան) աշիրեթին պատկանող այս գյուղը գտնվում էր Ջերենիկից հյուսիս-արևմուտք, երկուսուկես ժամ հեռավորության վրա։ Քրդերի հետ խառն ապրում էին քրդախոս հայեր, որոնք թեև պահպանել էին իրենց ազգային բոլոր ավանդությունները և կրոնական պաշտամունքը, նույնիսկ բարբառը, որն իրենք «ճնճղկա լեզու» էին անվանում, բայց զինված էին քրդերի նման, կրում էին նրանց տարազը և խոսում գաղաթերեն։

Ձնձորի ստորոտում, հին գերեզմանատան բարձունքին, գտնվում էին մի եկեղեցու փլատակներ։

Ուներ 40 տուն (400 հոգի) հայ, 60 տուն (360 հոգի) քուրդ բնակիչ։

115(21). Լեռնակ։ Պալան աշիրեթի սահմաններում գտնվող այս գյուղը հիմնված էր Քելլերից հոսող ջրի աջ ափին, նույն գյուղից մեկուկես ժամ հեռավորության վրա։ Բնակիչները քրդեր էին՝ 56 տուն (336 հոգի)։

116(22). Բունֆ։ Լեռնակից հյուսիս-արևելք, երկու ժամ հեռու, Պաղրից հոսող ջրի ձախ ափին էր գտնվում հայկական այս հին ավանը, որի ավերակները դեպի Պաղր տանող ճամփից բավական վերև, անտառածածկ երկու բլուրների արանքում կանգնած էին որպես անցյալի կենդանի վկաներ։ Նույն բլուրներից քիչ վար պահպանված էին ս. Սարգիս եկեղեցու խորանի մի մասը և կամարների ծաղկազարդ քարերը։ Բնակիչները քրդեր էին՝ 70 տուն (420 հոգի)։

117(23). Քելլեր։ Պաղր-պապայի բարձունքին թառած այս արծվաբույնը հյուսիսային Դերսիմի սահմանապահ ամրությունն էր և հսկում էր Երզընկայից Դերսիմ տեղի ունեցող շարժումներին։ Այս գյուղի ստորոտում խաչաձևվում էին հյուսիսից, արևելքից և արևմուտքից եկող լեռնային արահետները։

Քելլերը գտնվում էր Պաղր-պապայի լեռնանց-

թում, Բունք գյուղից Հյուսիս-արևելք, երեք ժամ հեռավորության վրա։

Իրենց ազգային դիմագիծը և տեղական բարբառը պահպանած քրդախոս հայերի և քրդերի միջև ոչ մի տարբերություն չկար։ Գյուղի հանդիպակաց նշանկանների ստորոտում էին գտնվում Վարագա խաչի եկեղեցու փլատակները և հին ասպետաքարեր։

Ուներ 85 տուն (850 հոգի) հայ, 160 տուն (960 հոգի) քուրդ բնակիչ։

118.(24). Ղուզուչան։ Այս անունով շրջան կար, սակայն ինքը շրջկենտրոն չէր։ Նույնանուն կենտրոնական գյուղը գտնվում էր Բոլոմորիից հարավարևմուտք, վեց ժամ հեռու, Խութաց-Ձորից արևմուտք, Հայտարան մեծ գյուղից չորս ժամ հեռու։

Ղուզուչանի շրջանն ընդգրկում էր Բոլոմորիի, Դերջանի, Սփբատ գետի ձախափնյա և Պալապանի լեռնաշխարհի արևելյան շրջանները, որոնց տիրակալն էր հայտնի բռնակալ Շահ Հյուսեին-բեկ Բ-ն։

Այս գյուղում բնակվող հայերը պատկանում էին Միրագյանների մեծ տոհմին և մեծ համբավ էին հանել իրենց քաջագործություններով։

Գյուղն ուներ քարուկրից կառուցված ս. Թադեոս անունով մի մեծ եկեղեցի, իսկ Ծառուկա-քարեր կոչված ձորափին կային երկրորդ մեծ եկեղեցու փլատակները, նաև՝ տապանաքարերով հարուստ գերեզմանատուն, որի արևելյան կողմը, բարձրագիր ապառաժների կատարին՝ բերդի և երկու ամրոցի փլատակներ։

Ուներ 172 տուն (1720 հոգի) հայ, 386 տուն (2316 հոգի) քուրդ բնակիչ։

119(25). Պարտի։ Բոլոմորիի արևմտյան կողմը, Լերթիկի հյուսիս-արևելյան լեռնադաշտում, առատահոս գետի ձախ ափին էր ընկած այս գյուղը, որն ուներ 480 տուն (1080 հոգի) քուրդ բնակիչ։ Շրջակա գյուղերից ամենաբերքառատն էր նկատվում։ Այս գյուղի քրդերը ծայրաստիճան հայասեր էին։

Գուրեղանցիների աշիրապետ Վելի աղայի հոգատարության տակ գտնվող այս գյուղը Ղուզուչանի շրջանի առաջին գյուղն էր, որ ընկած էր կիսանկախ Դերսիմի և ինքնանկախ շրջանի սահմանի վրա և կատարում էր սահմանապահի գեր։ Չնայած Բոլոմորի վարչական կենտրոնին շատ մոտ էր, որևէ գայմագամ կամ ժանդարմ իրավունք չուներ մտնելու այստեղ, եթե քուրդ չէր, և կամ եթե Վելի աղայից արտոնված կամ հրավիրված չէր։ Իրենք՝ պարտեցիները, հազվադեպ էին այցելում շրջկենտրոն, քանի որ նողկանք էին զգում թուրքական իշխանության պաշտոնյաների նկատմամբ, եթե նույնիսկ գրանք քրդեր լինեին։

Պարտիից սկսվում էր հյուսիսային շրջանի անկախության գոտին և երկարում դեպի արևելք՝ Քղիի մոտերքը ու արևմուտք՝ Օվաձգի լեռները։

Գյուղը թեև գտնվում էր լեռնային բարձունքում, սակայն շրջապատված լինելով հարավից Մալի, իսկ հյուսիսից Պաղրի ձախակողմյան գագաթներով, առնում էր մի լեռնահովտի տեսք։ Գյուղի շրջակա լեռները անտառածածկ էին, կլիման չոր, օդը առողջ, ջուրը առատ և սառնորակ, ուներ մշակելի հողերի լավ արտեր, պարտեզներ և բանջարանոցներ։ Գյուղից քիչ վեր, արահետը երկու մասի բաժանվելու կետում, երկու հարյուր մետր բարձրության վրա, հսկա մի ապառաժի տակ գտնվում էր մի մեծ գետնուղի, որը խորանում էր դեպի լեռան սիրտը, ուր գտնվում էր հնադարյան մի հանքահոր։ Կկարծվեր, թե այս հանքահորը օգտագործվել է բյուզանդացիների կողմից։ Հանքահորի ճակատին կար արձանագրություն, որը չէր կարդացվում։ Ասվում էր, թե հանքը պարունակում է ոսկի և պղինձ, սակայն Վելի աղայի կարգադրությամբ, բացի տեղացիներից, ուրիշ ոչ ոք իրավունք չուներ մտնել գետնուղուց ներս և կամ մոտենալ այն հանքաղբյուրին, որ եռալու աստիճան տաք էր և հոսում էր աննպատակ։ Այս հանքաջուրը, որպես տաք ջուր օգտագործվում էր միայն պարտեցիների կողմից, իսկ ձմռանը, երբ բարձրավանդակը ծածկված էր լինում 3—5 մետր հաստությամբ ձյունի հաստ վերմակով, սնունդ և ապաստան էր տալիս վայրի գադանիկին ու թռչնիկին։

Պարտին հարուստ էր նաև սրբատեղիներով։ Գյուղից վերև, մի բարձունքի հարթության վրա, շարքի կեցած զինվորների նման, դեպի վեր սլացած ծառերի անտառը սրբազան էր։ Դարերի ընթացքում այս անտառը պահել էր իր գոյությունը և ոչ ոք չէր համարձակվում մի շյուղ անգամ պոկել։ Անտառն օտար ծառեր չուներ, անմիջապես արմատախիլ էին անում, եթե նկատում էին, որ մի օտար ծիլ եկել է սրբապղծելու անտառի կուսությունը։ Սպիտակ վայրի բարդիներ էին, որոնց բների վրա ճյուղեր չկային, գագաթն էր, որ ճյուղավորված և տերևածածկ էր, տեղ-տեղ մինչև 50 մետրի հասնող այս ծառերը հավանաբար ժամանակին տնկված ու մշակված էին։ Ենթադրվում էր, թե գյուղն իր անունն առել էր պարտեղների անտառից[1]։

---

[1] Ավանդաբար պատմվում էր, թե հանքային գետնուղու

Պարտեզների անտառի արևելյան կողմում էր գտնվում ս. Եղիայի կիսակործան տաճարը, իսկ արևմտյան կողմի լեռնաբլուրի ստորոտում՝ Դարբիել հրեշտակապետի (Էզրաիլ) քարափոր մատուռը։

Բնակչությունը ինքնաբավ էր, պարապում էր երկրագործությամբ (ցանում էին առանձնապես ցորեն, գարի, կորեկ), խաշնարածությամբ, մեղվաբուծությամբ, երբեմն էլ ավարառությամբ։ Արհեստավորներ չունեին, այդ պակասը լրացնում էին շրջակա հայ գյուղերի արհեստավորները, սակայն կանանց մեջ շատ զարգացած էր կապերտագործությունը և գորգագործությունը։

Այս գյուղի գորգերի ներկը, ծաղիկների և զարդանկարների գեղարվեստական ճաշակը, որակը և նրբությունը կարող էր մրցել ամենաընտիր գորգերի տեսակների հետ, անկողինների տակի փռոցները, հյուրերի հատուկ բարձերը, բոլորն էլ գեղազարդ կապերտներ էին։ Գործում էին նաև շուրջ երեք սեմ լայնքով և 4—5 մ երկայնքով ծոպավոր գոտիներ, կանանց բրդե գոգնոցների վրայից կապելու համար։ Դրանց ծաղիկների գեղեցկությունը նրբաճաշակ ձեռագործի տպավորություն էր տալիս, կարծես թե ասեղով աշխատած լինեին քերկեֆի վրա, մինչդեռ գործված էին քելքիթով (ատամնավոր երկաթից մի ծանր գործիք, որ հյուսքը խտացնելուն էր ծառայում)։

120(26). Ասկրեկ։ Գտնվում էր Աղբաձորի արևելյան, Լերթիկի հյուսիսային կողմը, Տուժիկ-պապայի մի թևի բարձունքում։ Արահետը Աղբաձորից վեր դժվարանցանելի էր և տևում էր մեկուկես ժամ, իսկ Լերթիկից ու Պարտիից՝ մի ժամ։ Զուտ քրդական այս գյուղն ուներ 40 տուն (240 հոգի) բնակչություն, գրեթե բոլորն էլ իրար աղգական կամ խնամի։ Ուներ լավ վարելահող և դալարագեղ արոտավայրեր։ Գլխավոր կբաղմունքը խաղողագործությունը և խաշնարածությունն էր։

121(27). Ծմակ։ Երկու ձորերի միջև ընկած գեղատեսիլ քրդաբնակ գյուղ էր, ուներ 25 տուն (150 հոգի) բնակչություն։ Պատկանում էր Քաջարան աշիրեթի հարավային հատվածին։ Այստեղ կային մի եկեղեցու ավերակներ։

Ասկրեկից Ծմակ հեռավորությունը հազիվ մեկ ժամ տևեր, արահետը անցնում էր ձորի աջ ափով։ Ծմակ գյուղը սահմանակից էր ինքնանկախ և կիսանկախ Դերսիմին, գտնվում էր Բոլոմորիի անմիջական աղդեցության տակ, բայց և այնպես պատկանում էր ինքնանկախ շրջանին։

Պարապում էին մեղվաբուծությամբ, խաշնարածությամբ, մասամբ երկրագործությամբ։

122(28). Քաջարան (Քեչելի)։ Հավլորիից հյուսիս, Քուռիի անմատչելի սարալանջին, անտառների խորության մեջ էր ընկած այս գյուղը, որը Դերսիմի զանազան կողմերում հանդիպող Քեչելան աշիրեթի բնակավայրերից էր։

Հավլորիից այս գյուղը երկարող ճանապարհը մի արահետ էր՝ տոտիկ-տոտիկ ժայռերի մեջ փորված հետքեր, ինչպես ձյան վրա ձգված ոտնատեղերը։ Սակայն տեղացիները ծանր բեռներ շալակած, եղջերուների նման ցատկոտելով երթևեկում էին այդ կածաններով։

Գյուղը, որ բնակիչների պնդմամբ Միրագյանների տոհմատունն էր եղած, բաժանված էր երկու թաղի (աջափնյա և ձախափնյա)։

190 տուն բնակչության 115 տունը (1150 հոգի) հայ միրագներ էին, 65 տունը (390 հոգի)՝ ալևի քրդեր։ Առաջինները խոսում էին հայերենի տեղական բարբառով, մյուսները՝ զազա քրդերենով։ Այս շրջանների բնակչության երկարակեցությունը թեև իրենք վերագրում էին սրբերի և սրբազան ջրերի զորությանը, բայց իրականում կլիման, սնունդը և ջուրը մեծ դեր էին խաղում։ Նախ՝ մսակեր չէին, միս ուտում էին մատաղների, խորովածի կամ տոնակատարության ժամանակ։ Ամենագործածական սնունդը կարագն էր, որը խմում էին ջրի նման։ Գարնանը և ամռանը օգտագործում էին վայրի բանջարների տեսակներ, որոնք շատ առատ էին, իսկ սովորական ճաշացուցակը շատ պտղով և համեստ էր, առավելապես օգտագործում էին կաթ, մածուն, սեր, ձու, մեղր, մանանա և թորախ պանիր, իսկ որպես կերակուր՝ թանապուր, թթմաճապուր, պուլղուրից փլավ, թանխաշ, խաշիլ սուն, որպես տապկոցներ՝ մոր-

մեջ բնակվում են ալքեր և չվոտներ, որոնք հալածված են բարդիների անտառի փիրից և բանտարկված այդ այրի խորության մեջ և որոնց վառած կրակով է, որ հանքային աղբյուրի ջուրը լեռնային ավազանների մեջ կեռ ու ժայռերից դուրս կժայթքի և այդ ջերմության շնորհիվ է, որ ձմեռը ձյուն չի բռնում։ Բարդիների անտառի փայիրը՝ տերը, միշտ հսկում է այդ չար ոգիներին։ Երբեմն, երբ լեռը սարսռում էր, և ժայռերը գղրդում էին, չարի և բարու պատերազմին էին դա վերագրում։ Նման պատերազմների ժամանակ Էզրաիլն էլ ոգնության էր հասնում և բարիին պաշտպան սրբերը հաղթում էին չարին։ Ու երբ պատերազմը դադարում էր, երկիրը խաղաղվում ու արևը ծագում, ամբողջ գյուղի ժողովուրդը դուրս էր թափվում ողջունելու արևածագը, որ գալիս էր ավետելու սրբերի հաղթանակը։ Նույն օրն իսկ հավաքական մատաղներ էին անում և խրախճանություններ սարքում սրբազան անտառին կից ծաղկազարդ դաշտագետնի վրա, իսկ եթե ձմեռ էր՝ խարույկների դուրշը։

կոր, սունկ, լվին..., շերեշուկ և դանդան կանաչիներ։ Այս բոլորի պաարասությունի համար օգտագործվում էր կարագ յուղ։ Ձեթի գործածությունը դրեթե անծանոթ էր այս լեռնականներին։ 80—120 տարի ապրողների թիվը շատ էր, բայց ամենապառամյան անդամ ձեռից-ոտից ընկած չէր։

Թորոման (բառացի՝ դյուցազն) պապը, որ ինքգինքը Միրագներու իշխան հռչակել էր, 1913 թվականին 110 տարեկան էր։ Բարձրահասակ, լայնաթիկունք, թավ հոնքերով, արծվաքիթ, երկար լեզերով ե ալեփառ մորուսով այս ծերունին աշխույժ պատանու նման թվոուն էր։ Նրա օջախի ծուխն անմար էր, թթխմորը դարերի հնություն ուներ, իսկ սան անգամների թիվը հարյուրից անց էր։ Ըստ պապի տված տեղեկությունների, ծաղկապարդ այս հովիտը, որի նմանը հազվադեպ կարելի էր տեսնել այլուր և որը կոչվում էր Տեր-Օվանի օպա, պատկանել էր իր նախնիներին, որոնք մարտերի հետևանքով ցրվել էին զանազան տեղեր։

Գյուղի վարելահողը, ընկած ընդարձակ լեռնահովտում, բավարար էր, ջրարբի, բերքն առատ։ Ցանում էին ցորեն, դարի, քիլուռ, կորեկ, ոսպ, պոյ։ Տնայնագործական զբաղմունքի մեջ կապերտագործությունը առաջնակարգ տեղ էր բռնում։ Բնակչության գլխավոր զբաղումը երկրագործությունն էր ու անասնապահությունը, ունեին նաև փեթակներ։

123(29). Ջիտների։ Բոլոմորիից արևմուտք, Քաջարանից հյուսիս-արևմուտք, երեքուկես ժամ հեռավորության վրա էր գտնվում այս գյուղը։ Բնակիչները քրդեր էին՝ 48 տուն (288 հոգի)։

124(30). Քեռդեսուր (Քարթեսուր)։ Ատամնավոր ժայռերի ստորոտում, համանուն կիրճի մուտքի պաշտպանությանը սահմանված Սարը-Ղայայի և Սուրբ-լույս լեռների գագաթներով շրջապատված այս գյուղը գտնվում էր երկու ջրի միջև։ Իր բնական դիրքի շնորհիվ գյուղը համարվում էր արևելյան Դերսիմի ինքնապաշտպանության գլխավոր ամրոցներից մեկը։ Գտնվում էր Ալթուն-Հյուսեինի հարավում, Սարը-Ղայայից դեպի արևմուտք։ Ճամփի տևողությունը հինգ ժամ էր։ Քերգեսուրից հյուսիս, անտառների խորքում կային հին ամրոցների, երկու եկեղեցու ավերակներ և ժայռերի մեջ փորված մատուռ, որը ղժվարամատչելի էր և կոչվում էր Ջարխափան։

Գյուղում քրդերի հետ խառն ապրում էին Միրագյան հայեր։

Ուներ 120 տուն (1200 հոգի) հայ, 230 տուն (1380 հոգի) քուրդ բնակիչ։

125(31). Սերկեվիլիկ։ Վարչականորեն Քղիի գյուղախմբին պատկանող այս գյուղը դասում եմ Բոլոմորիի գյուղերի շարքը, որովհետև աշխարհագրական գիրքով ավելի կապված էր այս շրջանի հետ։

Սերկեվիլիկը առաջին հայ գյուղն էր, որ 1834 թ. միացավ Խնձորեկի, Դվնիկի և Վիժանի ու այլ գյուղերի հետ ու մասնակցեց աղաներին, բեյերին և փաշաներին կոռ չտալու հայ-քրդական շարժումներին։

Քերթեսուրից արևելք, երեք ժամ հեռու, Սարը-Ղայայի բարձրադիր գագաթներով շրջապատված այս գյուղը շրջանի ամենարազմամարդ հայությունն ունեցողն էր։ Գյուղում կար ս. Գևորգ անունով եկեղեցի և հարակից վարժարան։

Գյուղի արևմտյան բարձունքի անտառածածկ հարթության վրա պահպանվում էր նաև ս. Աստվածածնա վանքը, հարակից շինություններով, իսկ վանքի արևելյան կողմում կային ս. Ստեփանոս Նախավկայի երեք քարակերտ տաճարների մնացորդները։

Ուներ 225 տուն (2250 հոգի) հայ, 35 տուն (210 հոգի) քուրդ բնակիչ։

126(32). Սարը-Ղայա։ Համանուն սարի ստորոտում, գետի ակունքների մոտ, Սերկեվիլիկից հյուսիս-արևելք, երկու ժամ հեռավորության վրա էր գտնվում այս գյուղը։ Բնակիչները քրդեր էին՝ 80 տուն (480 հոգի)։

127(33). Խոշմաք։ Լեռնագագաթների արանքում սեղմված այս գյուղը գտնվում էր Սարը-Ղայայից հյուսիս-արևմուտք, մեկուկես ժամ հեռու։ Բնակիչները քրդեր էին՝ 30 տուն (180 հոգի)։

128(34). Մեֆ (Մեգ)։ Գյուղն անցյալում ունեցել է հայերի հոծ բնակչություն։ Այդ էին վկայում բարձրավանդակի հյուսիսային կողմում եղած կիսակործան եկեղեցու փլատակները և եկեղեցուց քիչ վեր, կանաչ բլուրի ստորոտի գերեզմանատան տապանաքարերը։ Բնակիչները քրդեր էին՝ 70 տուն (420 հոգի)։

129(35). Ակուֆ։ Գտնվում էր Մեքից հյուսիս-արևմուտք, երեք ժամ հեռավորության վրա։ Գյուղից արևելք, Պաղր-պապայից հարավ, լեռնահովտում, գտնվում էին ծաղկազարդ արոտավայրեր, ուր իրարից քիչ հեռու բխում էին երեք հարյուր վաթսուն ակնաղբյուրներ։ Դեպի բազմաղբյուրները տանող ճամփեզրին գտնվում էին քարայրներ, որոնք արևելյան Դերսիմի նախադռները փակում էին Ավղերտի-կետուկի թուրք զորանոցներից։ Նույն քարայրների ստորոտում, մի բացատի մեջ

գտնվում էին ս. Սարգիս (Հազրեթի-Խըդր) եկեղեցու փլատակները։

Ակունքի հայերը պատկանում էին Միրադյանների մեծ տոհմին, պահպանում էին իրենց ազգային ինքնությունը և մայրենի բարբառը, թեև խոսում էին քրդերեն։

Ուներ 75 տուն (750 հոգի) հայ, 90 տուն (540 հոգի) քուրդ բնակիչ։

130(36). Զախո։ Բոլոմորիի, Դերջանի և Քղիի սահմանների միացման եռանկյունում, Ավզերտիկետուկի արևելյան կողմը, Տանձիկից հյուսիս-արևելք չորս ժամ հեռավորության վրա գտնվում էր Սանասարա կիրճի պաշտպանությանը սահմանված այս գյուղը։ Բնակիչները քրդեր էին՝ 85 տուն (510 հոգի)։

131(37). Ծմակ։ Ավզերտից Եփրատին նայող և Ջայ-գոմի հետ Եփրատի անցքին հսկող այս գյուղը գտնվում էր Զախոյի հյուսիսային կողմում, երկու ժամ հեռավորության վրա։ Եփրատի վրա ձգված Մթին և Սատանի կամուրջներին (շարժական) պահակի դեր կատարող այս գյուղի բնակչության պարտականությունն էր հսկել Ավզերտիկետուկի թուրք զորանոցների զինվորական շարժումներին։ Բնակիչները քրդեր էին՝ 70 տուն (420 հոգի)։

* * *

Այսպիսով, Բոլոմորիի շրջանում կար 37 բնակավայր, որից 24-ը՝ քրդաբնակ, 13-ը՝ հայ ու քուրդ խառն, զուտ հայաբնակ չէր մնացել։ Այդ բնակավայրերում ապրում էր 5666 տուն (38740 հոգի) բնակիչ, որից հայեր՝ 1186 տուն (11860 հոգի), քրդեր՝ 4480 տուն (26880 հոգի)։

V. ՂԸԶԸԼՔԻԼԻՍԵԻ ՇՐՋԱՆ

132(1). Ղզզըլքիլիսե։ Հայերեն՝ Կարմիր եկեղեցի (այժմ՝ Նազմիե)։ Գտնվում էր Քղիից արևմուտք, Բոլոմորիից հարավ-արևելք, Բալուից հյուսիս, Խութաց-ձորի ձախ ափին, Սիմ և Սուրբ-լույս (Սիլպուս) լեռների անմիջական պաշտպանության տակ, Սաղմանից երկու ժամ հեռավորության վրա։

Ղզզըլքիլիսեն թեև որպես գայմադամանիստ շրջկենտրոն (գավառ) գտնվում էր նվաճված շրջանների սահմաններում, իրականում պատկանում էր ինքնանկախ Դերսիմի կենտրոնական հատվածին և կատարում էր Խութաց-ձորի պահապանի դերը հարավում, ինչպիսի դեր կատարում էր Բոլոմորին հյուսիսում։

Նոր Ղզզըլքիլիսեն հնի մանրանկարն էր։ Հին տվանք իր Կարմիր վանքով և Կարմիր բերդով գտնվում էր նորի հյուսիսային կողմում, Սիմ և Սուրբ-լույս սարերի միացման եռանկյունում, անտառածածկ գագաթների ստորոտում, որոնց կիսակործան ավերակների սրբատաշ քարերը որպես սրբություններ պահպանվում էին քրդերի կողմից։

Հինն ուներ իր անմահության աղբյուրը, որ գտնվում էր Կարմիր վանքի և Կարմիր բերդի միջև և որի մի ակը փոխադրել էին նոր Ղզզըլքիլիսեի հին եկեղեցու մոտ։

Կարմիր վանքն ունեցել է երեք եկեղեցի, որոնցից մեկը նվիրված է եղել Բարդուղիմեոսին, մյուսը՝ Լուսավորչին, երրորդը՝ Տիրամորը։ Այդ երրորդությունը միասին կոչվել է Կարմիր վանք։ Կարմիր ներկերով ծաղկազարդված ձեռագիր մագաղաթյա ավետարանի անունով է, որ վանքը անվանելիս են եղել նաև հրաշագործ Կարմիր ավետարանի վանք։ Այդ ավետարանի կրկնօրինակը գտնվում էր Դերջանի Կոթեր գյուղում։ Տեր-Սիմոնը, որին ավանդաբար վերագրվում էր Դերսիմի անվանակոչությունը, որը 1604—1606 թթ. Կարմիր վանքի առաջնորդն է եղել, այդտեղ էլ դրել է այդ ավետարանը, ուր արձանագրված են Դերսիմի հայերի քրդանալու պատճառները։

Գյուղը ենթակա էր Ալանաց աշիրապետին և Քուրեշանների օջախի կրոնական ազդեցությանը։ Ուներ 45 տուն (450 հոգի) հայ, 315 տուն (1890 հոգի) քուրդ բնակիչ, որոնց գլխավոր պարապմունքը երկրագործությունն ու խաշնարածությունն էր։ Ուներ լավ արոտատեղեր, առատ ջրեր։ Ցանում էին ցորեն, գարի, կորնգան, առվույտ, կորեկ, ոսպ, լոբի, բակլա։ Ստանում էին առատ և համեղ մեղր, մի քանի տեսակ պանիր՝ թորախ, տկի պանիր, նաև չորթան ու չոր սեր։ Շրջակայքը շատ հարուստ էր բուսականությամբ և վայրի պտուղներով, որոնց մեջ աշքառու տեղ էր բռնում բարակ կեղևով և սպիտակ միջուկով վայրի ընկույզը։

133(2). Սաղան (Սաղման)։ Լեռնային շրջանի առաջին գյուղն էր, որ գտնվում էր Խոզաթի արևելյան և Բերիի հյուսիս-արևմտյան կողմը, Ղզզըլքիլիսեից հարավ-արևմուտք հինգ ժամ հեռու։ Գյուղի դիրքը լեռնային էր, սակայն գտնվելով Սել և Մալ լեռների միացման տեղի լեռնադաշտում, ուներ լավ վարելահող և ընդարձակ արոտատեղեր, լեռներն անտառածածկ էին, հարուստ բուսականությամբ։

Սաղանը հնում հայկական մեծ ավան ու բերդաքաղաք էր եղել, ունեցել էր յոթ եկեղեցի, որոնցից երկուսը կիսակործան էին, չորսը՝ բոլո-

ռոլին ավերակ, մեկը՝ կանգուն, խճանկարով ծաղկաղարդված։ Գյուղն իր դիրքով հսկում էր լեռնային Դերսիմի մուտքին։

Սողանի բնակիչներն այնի քրդեր էին՝ 250 տուն (1500 հոգի)։ Պարապում էին առավելապես խաշնարածությամբ, նաև երկրագործությամբ։ Բոլոմորիից եկող գետերից բացի, գյուղն ուներ երկու առատահոս ջուր ևս, որոնք բավարարում էին մշակելի հողերի և պարտեզների ոռոգմանը։ Բարիքներն էին՝ ցորեն, դարի, կորեկ, ընկույզ, կարագ, չոր սեր, մեղր և բուրդ։ Կենտրոնական շուկաների հետ հաղորդակցության միջոցների պակասությունը և կենարոններից խույս տալու հարկադրանքը արդելք էին լինում արտածման ենթակա ապրանքների վաճառմանը։ Ավելացած ապրանքները փոխանակում էին հարևան գյուղերի բնակչության հետ։

134(3). Քարաթուշ (Ղարաթուշ)։ Ղըզըլքիլիսեից արևմուտք, Տեր-Օվանից հյուսիս երեք ժամ հեռավորության վրա էր գտնվում քրդարնակ այս գյուղը, Սիմ և Սիլպուս լեռների զոտիներից կազմված թեք հարթության վրա, Մոսրդան (Մոսիկյան) աշիրեթի իրավասության սահմանների մեջ։

60 տուն (360 հոգի) բնակիչ ունեցող այս գյուղը կազմված էր շեներից և մեղրեներից, որոնք ցրված էին զանազան ուղղությամբ։

Անմահության աղբյուրի մի քանի ակերից մեկը գտնվում էր սույն գյուղի սահմաններում, որը առիթ էր տվել գյուղի հանրաճանաչմանը։

Գյուղի արևմտյան կողմում, վարելահողից քիչ հեռու, գտնվում էին Քառասուն մանկանց եկեղեցու փլատակները և լքված մի մեծ գերեզմանատուն բազմաթիվ տապանաքարերով, որոնց մեծ մասը ծածկված էին հեղեղների բերած խճաքարերով։

Բնակիչների գլխավոր զբաղմունքը խաշնարածությունն էր, մասամբ էլ հողագործությունը։ Մշակում էին ծխախոտ և պահում փեթակներ։

135(4). Գոմձոր։ Սլպուս լեռան արևմտյան կողմում, Քարաթուշից մեկուկես ժամ դեպի հյուսիս, մի լեռնալանջի վրա էր գտնվում քրդարնակ այս գյուղը, ընկած խորը ձորի մեջ։ Ուներ 45 տուն (270 հոգի) բնակիչ։ Գյուղը շրջապատված էր խիտ անտառներով, ուներ առատ ջուր և իր կարիքները գոհացնելու չափ վարելահող, արոտատեղեր։ Զբաղվում էին խաշնարածությամբ։ Արտագրում էր առավելապես կաթնամթերք, բուրդ և այծի մազ։ Գյուղից-գյուղ հաղորդակցության միջոցները շատ նախնական էին, ճամփաները դժվարանցանելի։ Ձմռանը առավելապես պարապում էին որսորդությամբ, քաջ որսորդներ և լավ կովողներ էին։

Գյուղի ստորոտում գտնվում էր ջրաղացը, որին շատ մոտ տաք ջրի հանքային մի մեծ աղբյուր կար։ Ջուրն այնքան տաք էր, որ առանց սառը ջուր խառնելու կարելի չէր լողանալ։ Գյուղացիք օգտագործում էին այն լվացքի, լողանալու և տնային այլ կարիքների համար։ Ջուրը շատ առատ էր։

Գոմձորի եկեղեցու ավերակները և դեպի Ջաղջին-ձորը գտնվող շատ մեծ գերեզմանատունը (քրդերը նոր գերեզմանատուն ունեին) ապացուցում էին, թե այս գյուղը ժամանակին բարգավաճ և բազմամարդ մի ավան է եղել։

136(5). Հերտիֆ։ Դերսիմի արևելյան շրջանի լեռնային ամենամեծ գյուղը Հերտիֆն էր, մոտ 380 տուն (3800 հոգի) հայ բնակչությամբ։ Դրանվում էր Քղիի արևմտյան, Ղըզըլքիլիսեի հյուսիսային կողմում, Գոմձորից արևելք, դեպի Երզնկա տանող ճամփի վրա, երեք լեռներով շրջապատված, բնական դեղեցկություններով օժտված մի լեռնադաշտում։ Ուներ առատ ջուր և ինքնաբավ վարելահող։ Թեև դիրքը բարձր էր, սակայն գտնվելով լեռնադոտում, բարենպաստ էր ամեն տեսակի բանջարեղեններ (բացի կարմիր լոլիկից)՝ սոխ, սխտոր, սամիթ, աղատքեղ, շոմին, լուբիա, ոլոռն (քիլուռ), դեղնախնձոր, բակլա, գդում և վարունգ հասցնելու համար։ Ուներ պտղատու ծառերի պարտեղներ և անտառածածկ լեռներ։

Հերտիֆի հայությունը, որ սերած էր Միրագյանների տոհմից, այդ շրջանի գյուղերից միակն էր, որ ուներ դպրոց, ուր ուսանում էին հայ և քուրդ աշակերտներ։ Դպրոցը, սակայն, երկար կյանք չունեցավ. Թուրք կառավարության դրդումով Շահ Հյուսեին փաշան այրել տվեց այն։

Գյուղն ուներ երկու եկեղեցի՝ Ամենափրկիչ և ս. Սարգիս։ Բնակչության տասը տարեկանից վեր այրերը զինված էին, քաջ կովողի անուն էին հանել և ինքզինքին հարգել տված էին բոլոր աշիրեթներին, անխտիր մասնակցել էին Դերսիմի ինքնապաշտպանության բոլոր մարտերին։

Հերտիֆը թեև պաշտոնապես Քղիի վարչական շրջանի մեջ էր մտնում, բայց աշխարհագրորեն և աղգագրորեն գտնվում էր Դերսիմի ինքնանկախ խմբավորման սահմաններից ներս և ենթակա էր նրա իշխանությանը։

Հերտիֆցին ապստամբ էր, զինվոր չէր տալիս Թուրք կառավարությանը և ոչ էլ տուրք վճարում, իսկ փոխհարաբերությունը քրդերի հետ եղբայրական էր։

Հերտիֆն իր աշխարհագրական դիրքով աչքառու տեղ էր գրավում հարևան գյուղերի մեջ, գրեթե անվթար պահպանել էր ազգային ավանդական բոլոր սովորությունները, նահապետական տան կառույցը, նիստն ու կացը, ապրելու կերպը և անգիր օրենքները։

Ուներ լավ արհեստավորներ՝ հյուսն, դարբին, քարկոփ, երկաթագործ, զինագործ, վառոդ պատրաստող, կապար ձուլող և երկրագործական գործիքներ պատրաստողներ։ Բնակչության մեծամասնությունը պարապում էր հողագործությամբ և անասնապահությամբ, գրեթե ամեն տուն ուներ իր փեթակներն ու բանջարանոցը։

Հերտիֆում եկվորներ չկային, հավատացած էին, թե իրենք պատմական Հայաստանի բնիկներն են և շառավիղները Միրադյան տոհմի՝ «Թոռան Թոռը Միրադյան տան»։

137(6). Աղաջանգյոզ։ Գտնվում էր Հերտիֆից հյուսիս երկու ժամի ճամփա հեռու, Պաղը լեռանը դեռ չհասած, Մալ լեռան հյուսիսային կողմում։ Զուտ քրդական էր, ուներ մոտ 70 տուն (420 հոգի) բնակիչ։ Դիրքը բարձր էր, շատ լեռնոտ, իսկ կլիման խիստ լինելով, գյուղացիք պարապում էին առավելապես անասնապահությամբ և որսորդությամբ։ Վարելահողի պակասը հացահատիկային մշակույթների զարգացման հնարավորություն չէր տալիս, ցանում էին առավելապես գարի ու կորեկ և այն էլ հազիվ իրենց կարիքները բավարարելու չափ։

Շրջակա գյուղերի հետ հաղորդակցության կանոնավոր ճամփաներ չկային, եղած արահետներով հնարավոր փոխադրամիջոցը ավանակն էր, իսկ վարուցանը կատարում էին եզներով։

Լեռներն անտառածածկ և հարուստ բուսականությամբ էին օժտված, որը հնարավորություն էր տալիս կաթնատնտեսության զարգացմանը։ Ունեին փեթակներ, անտառները ծածկված էին մանանայով (կաղպե), որն այնքան առատ էր, որ տեղացիք չէին կարողանում սպառիչ կերպով օգտագործել։ Անուշահամ և անուշահոտ այս քաղցրեղենը վայելում էին վայրի գազանները՝ արջը, աղվեսը, կզաքիսը և նույնիսկ մի շարք վայրի թռչուններ։

Գյուղը ենթակա էր Սիսական և Հայաբերան ամրոցների տիրապետությանը և Աղուշանի օշակի կրոնական ազդեցությանը։

Գյուղից վերև գտնվում էր Հազրեթի-Խըդրի (ս. Սարգիս) ուխտատեղին, որը հայկական մի հին եկեղեցու ավերակ էր, շրջապատված արտուհի մեծ ծառերով։

138(7). Հազս (Էքրզ)։ Դերսիմում համանուն գյուղեր շատ կային։ Սույն Հազսը պատմական Հազս գյուղի մանրանկարն էր, միայն այն տարբերությամբ, որ վերջինիս նախկին բնակիչներն ամբողջությամբ հայեր են եղել, իսկ ներկա Հազսինը խառն էին։ Հին Հազսը, որ գտնվում էր Խութաց-ձորի աջ ափին, ուներ ինը եկեղեցու փլատակներ, ինքնապաշտպանության երեք ամրոցի կիսակործան կոթողներ, տապանաքարերով հարուստ գերեզմանոց, բայց արդեն բնակիչ չուներ։

Նոր Հազսը գտնվում էր Սիմ լեռան արևմտյան գագաթների ստորոտում, դետի ափին, Կարաթուշից հարավ երկու ժամ հեռավորության վրա։

Ուներ 22 տուն (220 հոգի) հայ, 160 տուն (960 հոգի) քուրդ բնակիչ։

139(8). Թաֆսիեն։ Ղարաթուշի հյուսիս-արևմուտքում, Բոլոմորիից եկող ջրերի միացման տեղում էր գտնվում այս գյուղը, որի բնակչությանը տրվել էր «տսիլեր» (ըմբոստներ) տնունը։

Մոսիկան աշիրեթին պատկանող 130 տնից բաղկացած բնակչության 40 տունը (400 հոգի) քրդախոս հայեր էին, 90 տունը (540 հոգի)՝ քրդեր։ Հայերը թեև պահպանում էին ազգային ավանդությունները և ջերմեռանդ հավատացյալներ էին, բայց բոլորովին մոռացել էին մայրենի լեզուն։

Բնավորությամբ անողոք, կազմվածքով բարձրահասակ և ի ծնե հանդուգն այս մարտիկները զարմանալիորեն քնքուշ և բարյացակամ էին կանանց ու երեխաների նկատմամբ։ Թեև դերսիմցիք առհասարակ ձեռք չէին տալիս կանանց ու երեխաներին, բայց Մոսիկան աշիրեթի անգամները ընդհանուր օրենքի կարգ անցած այս սովորությունը պահպանում էին սրբությամբ։ Կինն անձեռնմխելի էր, նույնիսկ եթե գինված էր։ Երեխաներին ձեռք չէին տալիս մինչև չափահասություն, երբ դուրս էին գալիս «ֆեք ռութ» (մերկ բերան) կոչվելու սահմաններից, այսինքն՝ վերի շրթունքի վրա բեղերի ծայրերը սևին տալու տարիքին հասնելիս։

Նշանավոր էր այս շրջանի վայրի մեղրը։ Հնապարյան հասակ ծառերի փչակներում և նույնիսկ փոքր քարայրներում անհամար փեթակներ կային, հին նորի հետ խառնված մեղրապահեստներով, որոնցից շատերը անմատչելիության պատճառով մնում էին անձեռնմխելի, ոչ մարդկային ձեռքն էր հասնում և ոչ էլ գազաններին թաթն ու գունչը, և տարիներ շարունակ իրար վրա գարսված մեղրաբջիջներից հաճախ դուրս էր ծորում ու ժայռերից վար թափվում վայրի մեղրը։ Այս մեղրը հոտով, հոտով ու բուժիչ հատկություններով տարբեր

ուժեղ էր, բան ընտանի փեթակներից ստացվածը, ուստի այն առավելապես օգտագործում էին որպես բնական դեղ, մի շարք հիվանդություններ դարմանելու համար։

Գյուղի հյուսիս-արևելքում, դեպի Կարմիր-եկեղեցի նայող բարձրավանդակի ստորոտում, իրարից բավական հեռու, գտնվում էին երկու եկեղեցու փլատակներ, որոնք լքված վիճակում ծածայում էին որպես ուխտատեղի։

Կարաթուշից Թաքսինե ճամփի տեղությունը երկուսից-երկուսուկես ժամ էր, լեռնային արահետար անցնում էր կածաններից, մտնում անտառ և այսպես շարունակ աջ ու ձախ թեքումներով հասնում գյուղ։

Գյուղն ուներ ջրառատ և արդտսաբեր վարելահող, բերրի առատ էր լինում։ Բնակչության զլխավոր զրաղումը հողաղործությունը, անասնապահությունը և մեղվապահությունն էր, իսկ ձմեռ ժամանակ՝ տնայնաղործությունը։

140(9). Խնձորի։ Թարսինից հյուսիս-արևմուտք երկարող արահետը լեռնային, դժվարանցանելի կածաններից անցնելով, երկու ժամում հասնում էր երկու ձորամիջում հաստատված, 120 տուն (1200 հոգի) հայերից և 140 տուն (840 հոգի) քրդերից կազմված Խնձորի գյուղը։

Հայերը Միրաղյան էին, խոսում էին բարբառային հայերենով, պահպանում իրենց ազգային, կրոնական և տոհմային բոլոր սովորությունները։

Ըստ տեղացիների պատմածների, գյուղն անցյալում եղել է բաղմամարդ մի ավան, ունեցել է երեք եկեղեցի, բայց ժամանակի ընթացքին հայերի մեծամասնությունը ներքին աշիրեթական կռիվների հետևանքով ցրվել է զանազան գյուղեր։

Երեք եկեղեցուց մեկը կիսակործան էր և գտնվում էր գիմացի պլենտի ստորոտում, մնացյալ երկուսը հիմնահատակ կործանված էին։ Ս. Սարդիս եկեղեցու մեծությունը, ճարտարապետական կառույցի ձևն ու ոճը, խաչքարերի բարձրությունը և լայնությունը, մանավանդ հատակագծական ձևերը հար և նման էին Պալապանի լեռնաշխարհում գտնվող Խնձորևկի կործանված հին գյուղի ս. Սարդիս եկեղեցու կառույցին և խաչքարերի հատակ ձևագաղարդմանը։

Դերսիմի Խնձորիի հին գերեզմանոցը ծածկված էր, խաչքարերի տակ ոչ մի արձանագրություն հնարավոր չէր հայտնաբերել առանց պեղումների, մինչդեռ Պալապանի Խնձորիի կործանված հին գյուղի գերեզմանաքարերի մեծ մասը մնում էր անվթար և պահում հատուկտոր արձանագրություններ։ Այսպես, ՃԻԳ=123+551=674 թ., ԽՃԹ=149+551=700 թ., ՄԿԶ=266+551=817 թ., ՆԼԴ=434+551=985 թ., ՇԿԲ=562+551=1113 թ., ՌԺԷ=617+551=1168 թ., ՌԺԲ=1012+551=1563 թ., ՌԽԷ=1047+551=1598 թ.։

Բավարարվելով այսքանով, նկատենք, որ 674 թ. մինչև 1598 թ. գոյություն ունեցած այս գյուղի բնակչությունը այդ թվագրություններից առաջ կամ հետո դաղթել են մեկ գյուղից մյուսը։ Ուշադրավն այն է, որ երկու օրվա ճանապարհով իրարից հեռու ընկած Խնձորիի և Խնձորեկի գիրքը, ջրերի հոսանքի ուղղությունը և տեղանունները համանման էին՝ Խնձորեկն ուներ Ճերմակ-քարեր, Կարմիր-լեռ, Հայտարի, Թամքար, Լեռնակ. Սևբար, Ջաթալ-քար, Հորուն-քարեր, Կեիկան-քարեր, Գեղին-տակ, Հողդար, Գեղին-գլոխ, Պենսլ, Մանասորի-ձոր, Ջաղչին-ձոր, Կարմիր-աղբյուր և այլ տեղանուններ։ Միևնույնն ուներ նաև Խնձորի գյուղը։ Երկուսի էլ բնակչության հայ բարբառների մեջ զրեթե տարբերություն չկար, նույնը և նիստուկացի ու սովորությունների միջև։

Անտառածածկ և անմրցելի բուսականություն ունեցող այս շրջանի լեռները ջրառատ և ծաղկաղարդ էին։ Տարվա հինգ ամիսը խստաշունչ ձմեռ էր, երթևեկությունը գյուղից-գյուղ դժվարանում և հաճախ ընդհատվում էր, հինգից վեց մետր ձյուն էր տեղում, տնից-տուն գնալու համար թունելներ էին բացում և երթևեկում ձյան տակից։ Վաղ գարնանը ձյունը հալվում էր շատ արագ՝ «լոդոս» կոչված տաք քամին երկու շաբաթվա ընթացքում լեռնագագաթների ստորոտից վար էր սրբում, մաքրում ձյան հաստ շերտերը և ձորերը վերածում վարար գետակների։

Գյուղի արևելյան կողմում, Ջաղչին-ձոր կոչված երկու լեռնագագաթների արանքում, միակտուր մի ժայռի վրա փորագրված յոթ խաչքարերի արտակարգ բարձրությունը, լայնքը, խորությունը, ծաղկանկար շրջանակների գեղակերտ տեսքը դիտողին զմայլանք էին պատճառում։ Միակտուր ժայռը հարթված, հղկված և փորագրված էր, խաչերը մեկը մյուսից շրջանակներով զատված, կենտրոնի խաչը ամենաբարձրն ու ամենալայնն էր, մյուսները աստիճանաբար ավելի փոքր, համաչափ ցածրանում և ընդհանուր գծագրին կամարի ձև էին տալիս։ Վարի մասը հավասար հորիզոնական փորագրի ժապավինաձև գոտու վրա կանգնած՝ աստիճանաբար բարձրանում էր վեր և հասնում կենտրոնի խաչի գլխավերևից անցնող դեղակերտ և ծաղկագիր կամարի համաչափությանը։ Կենտրոնի խաչի բարձրությունը հինգ փայտաչափ էր, լայնքը՝ երեք, հաստությու-

նը՝ անչափելի, որովհետև ժայռը իր հսկա տարածությամբ թաղված էր լեռան ընդերքում և միայն ճակատն էր ցուցադրել արևի շողերին։

Բնակչության գլխավոր զբաղումը անասնապահությունն ու հողագործությունն էր։

141(10). Տեր-Օվան։ Նոր Հագսից հարավ-արևելք, Ղըզըլքիլիսեից հարավ-արևմուտք, Խութաց-ձորի աջ ափին, անտառածածկ Սիմ լեռան հարավային թևերի արանքի գեղատեսիլ մի լեռնահովտում էր գտնվում 75 տնից (750 հոգի) կազմված հայաբնակ քրդախոս Տեր-Օվան գյուղը։

Հագսից Տեր-Օվան արահետն անցնում էր կույս անտառների խորություններից, անմատչելի ապառաժների արանքից՝ նախ դեպի արևելք, ապա թեքվելով հարավ, անասելի դժվարություններով հասնում Խրտր-Էլիասի (ս. Գևորգ) Լուսաղբուրին, ապա անցնում Հողդարի լեռնանցքից ու երեք ժամվա տաժանակիր ճամփորդությունից հետո հասնում Տեր-Օվանի լեռնադաշտը։

Այստեղի հայերի սովորությունները, կենցաղը, ինստուկացը և տարազը բոլորովին չէր տարբերվում քրդերից։ Գյուղի բնակիչների մի մասը ներաշիրեթային կռիվների հետևանքով գաղթել էր Խոգնգեղ։

Գյուղի արևմտյան սարալանջի ստորոտում կային եկեղեցու ավերակներ, իսկ Բերդարից ձգվող ձորամիջում՝ ս. Սարդիս եկեղեցու կիսակործան տաճարն էր։ Գեղակերտ ծաղկազարդ խաչքարերը մնում էին անվթար։ Տարին երկու անգամ՝ գարնանը և աշնանը, ուխտի էին գնում և զոհեր մատուցում Հազրեթի-խըդրի ավերակներին ու աղոթում քրդերեն. «Յա հեզ թը նեհեքզի մաբա տուրի պերե» (ով աստված, դու անիրավներին մեզնից հեռու պահես)։ Մնում էին նաև Տիրամոր վանքի ավերակները, որի դիմացի քարայրում պահվում էին հայերեն մագաղաթե ձեռագրեր։

Կային լավագույն արհեստավորներ, մանավանդ զինագործներ, որոնց կերտած կեռ թրերը համբավ էին ստեղծել շրջակայքում։ Կային նաև կառուցողներ, երկրագործական գործիքներ պատրաստողներ, ինչպես և կապերտագործներ։

Գյուղն ուներ ջրարբի լավագույն վարելահող, պտղատու ծառերի պարտեզներ, ջրաղաց և տինկ։

Բնակչության գլխավոր զբաղմունքը հողագործությունն ու անասնապահությունն էր, մեղրը և մանանան ևս շատ առատ էին։

142(11). Զյվքլիկ։ Փոքր մեզրեներից կազմված այս գյուղը, որ նախկինում Անահիտին նվիրված տնասունների ձմեռանոց-գոմ էր եղել, անասնապահ հովիվների բնակավայր էր։ Գտնվում էր Տեր-Օվանից հարավ-արևելք երկու ժամ, Սաղմանից հարավ-արևմուտք մեկ ժամ հեռու, անտառածածկ գագաթների ստորոտում։ Բնակիչները քրդեր էին՝ 35 տուն (210 հոգի)։

143(12). Փախ։ Ալանաց աշիրեթին պատկանող հայկական այս հին ավանը, որ գտնվում էր Սուրբ-լույս և Սիմ լեռներից հոսող երկու գետերի արանքում, հիմնված էր սարալանջերից կազմված գեղատեսիլ անտառածածկ լեռնահովտում, որը հնարավորություն էր տալիս հողագործության զարգացմանը։ Գտնվում էր Տեր-Օվանի լեռնադաշտի հարավ-արևմուտքում երկու ժամ հեռավորության վրա, Խութաց-ձորի արևելքում։

Փախը մի ժամանակ թրքական գայմագամանիստ դյուղաքաղաք էր եղել, սակայն 1908 թ. սահմանադրությունից հետո կցվեց Ղըզըլքիլիսեի գայմագամությանը և վերածվեց միյտերեթի (գավառակ), որովհետև քրդերը հաճախ ավարի էին տալիս թուրք զորանոցները և թալանում ռազմամթերանոցները։

Երկու գետերի միացման հարթավայրի արևելյան մասում կային երկու եկեղեցու ավերակներ, մեկը Գրիգոր Լուսավորչին նվիրված մեծ կաթողիկեն էր, մյուսի անունը անհայտ էր։

Ուներ 90 տուն (900 հոգի) հայ, 230 տուն (1380 հոգի) քուրդ բնակիչ։

144(13). Զամլի։ Թեև ինքնանկախ Դերսիմի բնական սահմանից դուրս, բայց փաստորեն նրա մասն էր կազմում այս գյուղը։ Ընկած էր Քղիի և Բոլոմորիի ջրերի միացման կետում, թեև գտնվում էր Բերիի վարչական սահմաններում։

Գյուղի 30 տնից (180 հոգի) բաղկացած քրդական համայնքին վերապահված էր երկու ջրերի հոսանքին հսկելու պարտականությունը։ Այս ջրի վրա կամուրջ չկար, ջրերի նվազման ժամանակ՝ շալակով, հորդանալիս լաստով էին կատարում փոխադրությունները։

Զամլիի դիրքը թեև լեռնային էր, բայց գանվելով երկու ջրերի միջև ընկած ձորամիջում, նպաստավոր էր պտղամշակության համար։ Ուներ նաև լավ վարելահողեր։ Մշակում էին բարձրորակ ծխախոտ, պտուղներ, մասամբ խաղող։

Գյուղացիների մեծամասնության զբաղմունքը կամուրջի դեր կատարելն էր, այսինքն՝ մարդոց, անասունների կամ գույքերի փոխադրությունը մեկ ափից մյուսը, իսկ վտանգի պահին, երբ ազդանշան էր տրվում թշնամու շարժումների մասին, բարձրանում էին գյուղի վերևի անմատչելի ապառաժները և հսկում ջրի հոսանքին, թույլ չտալով որևէ շարժում դեպի անցքի կետերը։

Գյուղը բաժանված էր երկու թաղի՝ արևելյան և արևմտյան, կային լավագույն ջրաղացներ և ոռնկ, որոնցից օգտվում էին նաև մերձակա գյուղերը բնակիչները։

Համայնքը ենթակա էր Բիրանան աշիրեթի աղատոհմին և գտնվում էր աշիրեթի անմիջական հովանավորության տակ։

145(14). Խոզնգեղ։ Զամլիի հյուսիս-արևելյան կողմում, երկու լեռնաղաղաթների խորքի լեռնաշատում էր գտնվում այս գյուղը։

Հաղիվ դուրս եկած Զամլիի հյուսիսային կողմից դեպի Զիտակա քարերը, արահետը մտնում էր կածանների մեջ, նախ՝ դեպի արևմուտք, ապա՝ Պողերի դաղաթից դեպի հյուսիս խորանում անտառների մեջ և կանգ տոնում ապառաժների առջև, որտեղից էլ սկսվում էր վերելքը։ Գյուղերի ոռհմանները հեռու չէին իրարից, բայց ճամփի դժվարությունների պատճառով, հաղիվ երկու ժամում կարելի էր հասնել մեկից մյուսը։

Լեռնաղաշտի բնակարը շատ դեղեցիկ էր, ուներ լավագույն վարելահող, կային պտղատու ծառերի պարտեզներ։

Զուտ հայաբնակ այս գյուղի համայնքը բաղկացած էր 68 տնից (680 հոգի), որոնց գլխավոր զբաղմունքը ծխախոտի մշակությունն էր։ Այս գյուղի ծխախոտն իր որակով մրցում էր հանրածանոթ Քարտերեի ծխախոտի հետ և գերազանցում այն։

Դերոիմում շատ տեղեր էին մշակում ծխախոտ, բայց ոչ արտածման, այլ իրենց օգտագործման համար։ Քարտերեի համբավը գալիս էր հին ժամանակներից։ Այդտեղի ծխախոտն իր համով, հոտով և որակով գերազանցում էր Սամսոնի շրջանի ծխախոտին։ Քարտերեի ծխախոտի ծուխը գլխապտույտ և հաճելի գինովություն էր պատճառում։ Առհասարակ ծխում էին երկար չիպուխներով և կավից պատրաստված լուլաներով։ «Չիպուխ մը քաշեի Խոզնգեղի կամ Քարտերեի թութունից ու հետո մեռնեի» ասացվածքը հաճախ կրկնվում էր հայրենիքից հեռու գտնվող պանդուխտների կողմից։

Տեղացիներն իրենց նկատում էին Միրաղների տոհմի նախահայրերի շառավիղները։ Ինչպես ամեն միրաղ ոչ ոքի չէր զիջում այդ սերնդին պատկանելու պատիվը, նույնպես և այդ գյուղի բնակիչները։ Առողջ կազմվածքով, հանդուգն, ուղղամիտ, աշխատասեր և անուն ու համբավ ձեռք բերած քաջեր էին։ Ունեին լավագույն զինագործներ և ամեն տեսակի արհեստավորներ։ Զբաղվում էին հողագործությամբ, պտղամշակությամբ, արհեստներով, մասամբ էլ անասնապահությամբ։

Հայրենասեր և ազդասեր այս տոհմի զավակները հավակնություն ունեին ասելու, թե իրենք են ամենաբնտիր հայերը և կրթություն չունենալով հանդերձ, ավանդաբար պահպանում էին ազգային ու կրոնական բոլոր տոներն ու սովորությունները։ Բծախնդիր էին օջախի սրբության ու հարատևության և սակայն խաչապաշտ լինելուց ավելի զինապաշտ էին, քրիստոնյա լինելով հանդերձ՝ բնապաշտ։

— Ինչու չեք վերականգնում Խաչկերտի կործանված ձեր հին եկեղեցին,—հարցուցիս՝

— Ամեն հայի ժամը շեշխանու մեջ, ասվածը (աստված) սրտումն ա,—պատասխանեց պատկանելի ծերունի տանուտեր Հարոյի թոռ Համրո պապը և ավելացրեց.

— Մեր թագավորներից վե՞ր մենծ ա, կռապաշտ Տիգրանը, թե՞ խաչապաշտ Տրդատը։

— Բնական է, Տիգրան Մեծը,—պատասխանեցի։

— Իսուս Քրիստոսը զվեթ կիտար Տիգրանին, չեննմի Անահիտը, էս լեռները, մեր էպրատը (Եփրատ), Աստղաբերդը։

Կարելի չէր վիճել տոհմային ռազմիկի հետ։

Գյուղի դիմաց գտնվում էր Խաչկետիկ անունով մի բարձունք, ուր կային արտուճի հսկա ծառեր և բարակերտ մի եկեղեցու փլատակներ։ Ուխտատեղի էր, մատաղներ էին մորթում, բայց ժամ չէին ուզում կառուցել։

— Միք (մենք) օր ժամ չունինք, հայ չի՞նք, էլա մեկը էկեր (եթե) կռնա (կարող է) հայուն բան-մոն ասա, քըրֆն (հայհոյի), շան սատակ կանիմ։

Գյուղն ուներ նաև ս. Հուսիկին նվիրված վանք ու համանուն եկեղեցի, ուր թաղված էր հայրապետի մարմինը։

Հակառակ այն բանին, որ Խոզնգեղը գտնվում էր Մեծկերտի, Բերիի և Սաղմանի վարչական կենտրոնների եռանկյունու միջև, կիսանկախ էր և սերտորեն կապված Տեմենան (Տեր-Մանվելյան), Հուրբգան, Սիսանան (Սիսական) և Բիրանան աշիրեթների հետ։

Գյուղի անվան շուրջը զանազան ավանդություններ էին պահված։ Սրանք հավատում էին Գր. Լուսավորչին շարշարելու հետևանքով Տրդատ թագավորի կերպարանափոխման առասպելին և ասում, թե գյուղի անունը ոչ թե Խոզնգեղ է, այլ Խոզնտեղ։ Իբր թե Տրդատը, խոզի կերպարանափոխվելուց հետո, ապրել է դիմացի Խաչկետիկի քարայրում, որի ստորոտում գտնվում էին վերը

հիշված մեծ եկեղեցու փլատակները։ Խաչկետուկի խաչերը և եկեղեցին իբր թե կառուցվել են Տրդատի կողմից, և ժողովուրդն, իբր թե հավերժացնելու համար այդ ավանդությունը, այն կոչել է Խոզնտեղ։

146(15). Խոան։ Համանուն գյուղեր կային արևմտյան Դերսիմում և Խութաց-ձորում, որոնք պատկանում էին նույն աշիրեթին և ինքնապաշտպանության նպատակներով գրավել էին ղանաղան դիրքեր։ Գյուղը գտնվում էր Խողնեղեղից հյուսիս-արևելք, վեց ժամ հեռավորության վրա, Կարմիր-բերդից հոսող ջրի աջ ափին։ Բնակիչները քրդեր էին՝ 76 տուն (456 հոգի)։

147(16). Մաստան։ Չյֆթլիկից հարավ-արևելք երկու ժամ, Խոանից մեկուկես ժամ հեռու գտնվող այս գյուղն բնկած էր նույն լեռնադոտու բարձունքում։ Բնակիչները քրդեր էին՝ 85 տուն (510 հոգի)։

148(17). Կարմիր-բերդ (Ղըզըլ-ղալե)։ Կարմիր-վանքի հարավային կողմում գտնվող այս բերդը կործանված էր, բայց համանուն գյուղը պահպանում էր իր գոյությունը։ Բերդի պարիսպների և ինքնապաշտպանության աշտարակների կիսակործան պատերի հաստությունը և կառույցի ու մանավանդ ղբաղեցրած տարածության մեծությունը գլխավոր ապացույցներն էին բերդի անցյալի հզորության։

Հոտ տեղական ավանդության, Դերսիմի արևելյան շրջանում, Քղիի Աստղաբերդին զուգահեռ այս ամրոցն էլ պատկանելիս է եղել հայ իշխաններին, որը վկայվում էր նաև բերդի շրջապատում գտնված երկու եկեղեցիներով։

Կարմիր-վանքից Կարմիր-բերդ ճամփի տևողությունը չորս ժամ էր, իսկ Մաստանից՝ երեքուկես ժամ։ Քրդերի հետ խառն ապրում էին Միրագյանների աշիրեթին պատկանող քրդախոս հայեր, որոնք պահում էին իրենց բարբառը և ազգությունը։

Ուներ 30 տուն (300 հոգի) հայ, 90 տուն (540 հոգի) քուրդ բնակիչ։

149(18). Ճանճիկե։ Կարմիր-բերդի հարավ-արևելքում երկու ժամ հեռու, Մաստանի հյուսիս-արևելքում երեքուկես ժամ հեռու գտնվում էր այս գյուղը, հիմնված Կարմիր-վանքից հոսող ջրի աջ ափին։

Ուներ 25 տուն (250 հոգի) հայ, 35 տուն (210 հոգի) քուրդ բնակիչ։

150(19). Քարնձոր (Գարուն-ձոր)։ Ճանճիկեի արևելյան ձորափի հարթավայրում մեկ ժամ հեռու գտնվում էր այս գյուղը։ Գյուղի սահմանում, արտուտների խիտ անտառի բացատում էին գտնվում ս. Մինաս եկեղեցու փլատակները, կային և տապանաքարեր։ Բնակիչները հայեր էին՝ 30 տուն (300 հոգի)։

151(20). Կոլլան (Կոլլեր)։ Քարնձորի հարավային կողմում մեկուկես ժամ հեռու գտնվում էր այս գյուղը։ Անունն ստացել էր իր արոտավայրերի շրջակայքում ղանաղան ուղղությամբ և հեռավորությամբ գտնված մեծ ու փոքր լճակներից, որոնց ջրերը չէին ցամաքում և որոնցից առաջացած ծմակներում աճում էր առատ բուսականություն։ Բնակիչները քրդեր էին՝ 50 տուն (300 հոգի)։

152(21). Արղին։ Կոլլերից հյուսիս-արևմուտք երկու ժամ հեռու, Քարնձորից արևելք մեկուկես ժամ հեռու, երկու լեռնադաշտերի արանքում տեղավորված այս գյուղը թեև Քղիին սահմանամերձ էր, բայց պատկանում էր Կարմիր-վանքի գյուղախմբին և շեյխ Հասանան աշիրեթի տիրապետության տակ էր։ Բնակիչները քրդեր էին՝ 25 տուն (150 հոգի)։

153(22). Մամգուճ (Մանկուճ)։ Սուրբ-լուսս սարի արևելյան գագաթներից հոսող ջրի ձախ ափին, Յուսուֆան աշիրեթին պատկանող այս գյուղը գտնվում էր Կարմիր-բերդի հյուսիս-արևելքում մեկուկես ժամ հեռավորության վրա։

Ուներ 15 տուն (150 հոգի) հայ, 40 տուն (240 հոգի) քուրդ բնակիչ։

154(23). Տիատին։ Տերիգան աշիրեթի պետի կենտրոնանիստ գյուղն էր, որը Դերսիմի արևելյան շրջանը սահմանագծում էր կենտրոնականից՝ Կարմիր-վանքից, Կարմիր-բերդից և Խութաց-ձորից։ Գտնվում էր Արղինի հյուսիսում (երկու ժամ հեռու), երկու գյուղերը իրարից բաժանող Կարմիր-լեռների արևելյան գագաթների ստորոտում, ձորի աջ ափին։

Գյուղը շրջապատված էր բարձրադիր գագաթներով, ուներ երկու գետնուղի թշնամուն տարբեր ուղղություններով վրա անակնկալի բերելու և թիկունքից կամ թևերից հարվածելու համար, ուներ նաև երկու կիրճ, մեկը պաշտպանված բնական քարայրներով։ Բնակիչները քրդեր էին՝ 560 տուն (3360 հոգի)։

155(24). Սբլիս (Սիլպուս)։ Ինչպես Տուժիկ-պապան քրդերի, նույնպես և Սուրբ-լուսս (Սիլպուս) լեռը հայերի պաշտամունքի առարկան էր։ Երկարում էր Քգիից Ղըզըլքիլիսե, այսինքն՝ արևելքից արևմուտք, տեղ-տեղ ծնունդ տալով մանր կիրճերի, լեռնածոցերի ու լեռնադաշտերի։ Սիլպուս սրբազան սարն ուներ նաև իր անվամբ

գյուղ, որը գտնվում էր Կարմիր-վանքից հյուսիս-արևմուտք, Անմահության աղբյուրների (գանին՝ անմահություն) ակերից մեկին շատ մոտիկ, ջրի աջ ափին։ Թեև Կարմիր-վանքից հազիվ երեք ժամ հեռավորության վրա, բայց բոլորովին անկախ և ինքնավար այս գյուղի բնակչությունը ենթակա չէր շրջկենտրոնի ազդեցությանը։ Գյուղի արևելյան հարթավայրում գտնվում էին երկու եկեղեցու փլատակներ՝ ս. Լույս եկեղեցին իր սրբարան ակնաղբյուրով և ս. Նշանն իր կիսակործան տաճարի ծաղկազարդված խոյակներով։

Այստեղ ապրող հայերը պատկանում էին Միրաքյանների մեծ տոհմին։

Ուներ 80 տուն (800 հոգի) հայ, 230 տուն (1380 հոգի) քուրդ բնակիչ։

156(25). Այդրի (Այդրան)։ Հրեղեն ձիերի անուներ կրող լեռնային Այդր լեռի անունով էր կոչվում այս գյուղը։ Գտնվում էր Սլդուսից հյուսիս-արևելք երկու ժամ հեռավորության վրա, երկու ձորերի միջև։ Բնակիչները քրդեր էին՝ 60 տուն (360 հոգի)։

157(26). Հայտերան։ Հայ-տեր (բրդերեն՝ «ոմանի հայր») անունով հանրածանոթ աշիրեթը Դեսպիմի ամենազլխավոր ուժերից մեկն էր, որը բնակություն էր հաստատել առավելապես Խութաց-ձորում և այլ անառիկ վայրերում, որոնք բացարձակապես ինքնանկախ էին։

Հայտերան աշիրեթն ուներ համանուն մի քանի գյուղ, որոնք քաղաքական նկատառումներով հաստատված էին տարբեր վայրերում և վտանգի դեպքում տարբեր ուղղություններից պաշտպանում էին իրար։ Այս աշիրեթը համագործակցում էր Միրաքյան տոհմի անդամների հետ և ծայրաստիճան հայասեր էր։ Աշիրեթի մարտիկների թիվը հասնում էր 25.000 չախմախլիի, ըմբոստ էին և թրքատյաց։ Սույն գյուղը կենտրոնի ճյուղերից մեկն էր, գտնվում էր Կարմիր-վանքի շրջկենտրոնի արևմտյան կողմում, Խութաց-ձորի ափին, Սիմ և Սուրբ-լույս լեռների ղաղաթներից գոյացած ծոցում։ Ղըզըլքիլիսեից Հայտերան ճամփի տեղությունը վեց ժամ էր, սակայն ոչ մի օտարի չէր թույլատրվում մոտենալ գյուղի սահմաններին։ Գյուղի բնակիչները Խութաց-ձորի արևելյան կողմի պահապաններն էին։

Ուներ 135 տուն (1350 հոգի) հայ, 360 տուն (2160 հոգի) քուրդ բնակիչ։

158(27). Հազս։ Դաշտակից հյուսիս, Խութաց-ձորի անառիկ կիրճում էր ընկած այս գյուղը։ Ուներ 20 տուն (200 հոգի) հայ, 40 տուն (240 հոգի) քուրդ բնակիչ։ Ղըզըլքիլիսեից դեպի արևմուտք, Սիմ լեռան հյուսիսային փեշերի տակ ծվարած փոքրիկ այս համայնքի գլխավոր զբաղումը անասնապահությունն էր։ Մշակում էին նաև ծխախոտ և հացահատիկային բույսեր. գլխավորաբար կորեկ։ Նշանավոր էին վայրի ընկույզի անտառները։

159(28). Արևմտյան Հազս (Էքըզ)։ Խութաց-ձորի արևելյան հատվածում ընկած Հազսի մասին խոսելիս ակնարկվեց պատմական Հազսը, որը գտնվում էր արևմտյան շրջանում, Խութաց-ձորի աջ ափին, ուր պահպանվում էին կործանված Հազսի մնացորդները (երկու բերդի, մեկ ամրոցի և յոթ եկեղեցու ավերակները)։

Պատմական Հազսի ավերակներից դեպի հյուսիս, խիտ անտառների խորքում թաքնված էր անմատչելի պատնեշներով շրջապատված երրորդ Հազսը, որը գտնվում էր նշված Հայտերանից հարավ-արևմուտք ութ ժամ հեռու, առաջին Հազսից արևմուտք վեց ժամ հեռու։

Ուներ 60 տուն (600 հոգի) հայ, 145 տուն (870 հոգի) քուրդ բնակիչ։

160(29). Ղայալի։ Արևմտյան Հազսից հյուսիս հինգ ժամ հեռու, Խնձորիից հարավ-արևմուտք մեկ ժամ հեռու, ձորի աջ ափին էր գտնվում այս գյուղը, որի գիրքը անմատչելի էր և դասվում էր արդելված զոտու գյուղերի շարքը։ Բնակիչները քրդեր էին՝ 80 տուն (480 հոգի)։

161(30). Միրավան։ Խութաց-ձորի արևմտյան սահմանապահ գյուղերի շարքին էր պատկանում Միրավան գյուղը, ուր բնակվում էին իրենց ազգային ու տոհմային բոլոր ավանդությունները պահպանած, նույնիսկ մայրենի բարբառն օգտագործող, բայց և քրդախոս հայեր, որոնք քաջամարտիկ զինվորներ էին և պատկանում էին Միրաքյան մեծ տոհմին։

Միրավանը գտնվում էր Ղայալիի հյուսիսում, կենտրոնական Հայտերան գյուղից հարավ-արևմուտք հրեք ժամ, Խնձորիից արևմուտք երկուսուկես ժամ հեռու, Խութաց-ձորի արևմտյան թևի աջ ափին։ Գյուղի լեռնային դիրքը, շրջապատող ապառաժների անմատչելի պատվարները և անկախության գոտու սահմաններում գտնվելու հանգամանքը դարձրել էին այն անառիկ ամրոց։ Առանց Միրավանցիների թույլտվության ոչ ոք չէր կարող մոտենալ արհեստական քարայրների սահմաններին, որոնք ծառայում էին որպես զինապահեստ, մթերանոց, թաքստոց, աշտարակ-ամրոցներ։

Սիֆտանի և Միրավանի միջև, Սատոյից հոսող ջրի ձախ ափին գտնվում էին երեք եկեղեցու ավե-

ռակներ, որոնցից մեկը՝ ս. Սարգիսը, կիսակործան վիճակում ծառայում էր որպես աղոթատեղի, իսկ Աստվածածնի և ս. Խաչ եկեղեցիները առաջինի հետ եռանկյունի էին կազմում, գտնվում էին Զարխափան գագաթի ստորոտում, ուր կար նաև տապանաքարերով հարուստ գերեզմանատուն։

Ուներ 180 տուն (1800 հոգի) հայ, 230 տուն (1380 հոգի) քուրդ բնակիչ։

162(31). Սեիտան։ *Սասունան աշիրեթի սահմաններում, Խութաց-ձորի ինքնապաշտպանության գյուղախմբի մաս կազմող այս գյուղը գտնվում էր Խութաց-ձորի վեցերորդ ճյուղավորման արևմտյան ափին, Միրավանից հյուսիս-արևմուտք երկու ժամ, կենտրոնական Հայտարանից արևմուտք երկուսուկես ժամ հեռու։ Բնակիչները քրդեր էին՝ 145 տուն (870 հոգի)։*

163(32). Եքմալ։ *Արևմտյան ինքնապաշտպանության հյուսիսային սահմանապահի պարտականություն կատարող Եքմալ գյուղը գտնվում էր աշխարհագրական նույն պայմաններում, ինչ վերը նշվածները։ Հիմնված էր ձորացանցերի վերջին, արևմտյան ձորի ձախ ափին։ Սեիտանից Եքմալ ամփի տևողությունը երեք ժամ էր։ Բնակիչները քրդեր էին՝ 30 տուն (180 հոգի)։*

164(33). Սատո (Կյուզելան)։ *Այս շրջանում իր քաջություններով հայտնի «Սատոյե ջերե-ջերան» (քաջերի քաջը Սատո) անունը հավերժացնող, Խութաց-ձորի ինքնապաշտպանությանը սահմանված հյուսիսային վերջին գյուղն էր սա։ Գյուղի նախկին անունը՝ Կյուզելան (գեղեցկուհի) վերափոխել էին Սատոյի, որի քաջագործությունների և թուրք զինվորների դեմ մղած մարտերի առասպելական պատմությունից հետաքրքիր գիրք կարելի էր կազմել։*

Գյուղը գտնվում էր Եքմալից հյուսիս-արևմուտք երկու ժամ հեռու, ակնաղբյուրների ստորոտում։ Բնակիչները քրդեր էին՝ 80 տուն (480 հոգի)։

165(34). Հայաստան (Հայ-տեռան)։ *Զանազանելու համար համանուն գյուղերից, այս գյուղը անվանում ենք կենտրոնական Հայտարան։ Այն իր մեծությամբ, աշխարհագրական բացառիկ դիրքով և Խութաց-ձորի ինքնապաշտպանության միջոցներով Դերսիմի ամենամեծ և ամենահզոր գյուղն էր։ Գտնվում էր Խութաց-ձորի բնական և արհեստական քարայրների ստորոտում, ուր կար հինգ ամրոց։ Առանձնաշնորհյալ օտար մարդիկ միայն հնարավորություն են ունեցել այցելելու այս գյուղը, որը տարածված էր հինգ ձորերի միջև ընկած լեռնադաշտում։ Ուներ ընդարձակ ու բերքառատ հողատարածություն։*

Ընկած էր Խնձորիից հյուսիս-արևմուտք մեկ ժամ, Միրավանից երկու ժամ, Սեիտանից երկուսուկես ժամ հեռու։

Հայերը Միրադյան էին, ունեին ս. Աստվածածին և ս. Մինաս անուններով երկու եկեղեցի։

Ուներ 175 տուն (1750 հոգի) հայ, 960 տուն (5760 հոգի) քուրդ բնակիչ։

166(35). Զորբերան։ *Երկրորդ Իքսորից ծագում առնող Խութաց-ձորի արևմտյան կիրճի և Անահիտի կաթնաղբյուրներից սկիզբ առնող գետակի աջ ափին, հին Սինի (Շեն) ավերակների արևմտյան կողմում, Մամեզիից հյուսիս երկուսուկես ժամ հեռավորության վրա էր գտնվում այս գյուղը։ Բացի Դաշտակի, Շենի և Հագսի միջև գտնվող 100 եկեղեցիների փլատակներից, Խութաց-ձորի երկրորդ թևի արևմտյան կիրճի պաշտպանությանը հատկացված Զորբերանի արևելյան կողմը գտնվում էին երեք եկեղեցիների ավերակներ, որոնցից մեկը, Վարագա խաչ անունով, գտնվում էր Տիղկին-Պողաղիի սարալանջին, հին գերեզմանատան վերևում։ Այստեղ ապրող քրդախոս հայերն էլ պատկանում էին Միրագյան տոհմին, պահպանում էին մայրենի բարբառն ու ազգային բոլոր ավանդությունները և կրոնական պաշտամունքները։*

Ուներ 70 տուն (700 հոգի) հայ, 160 տուն (960 հոգի) քուրդ բնակիչ։

167(36). Տերան (Վանքեր)։ *Եկեղեցիների և սրբատեղիների միջավայրում գտնվող և իր անունը հավանաբար դրանից առած այս գյուղը գտնվում էր Զորբերանի հարավում երկու ժամ հեռավորության վրա։ Բնակիչները քրդեր էին՝ 80 տուն (480 հոգի)։*

168(37). Տիլալի։ *Տերանի արևելքում, հանդիպակաց երկրորդ ձորի աջ ափին մեկուկես ժամ հեռավորության վրա էր գտնվում մի քանի մեղրևներից բաղկացած Տիլալի գյուղը։ Բնակիչները քրդեր էին՝ 35 տուն (210 հոգի)։*

169(38). Պեշերի։ *Սիսանաց աշիրեթին (սիսանցիք) պատկանող այս գյուղը գտնվում էր Տիլալիի հյուսիս-արևելքում, բարձրադիր գագաթներից կազմված լեռնածոցում, պատնեշված անտառածածկ սարալանջերով։ Տիլալիից հեռավորությունը չորս ժամ էր։ Բնակիչները քրդեր էին՝ 120 տուն (720 հոգի)։*

170(39). Պամասուր։ *Ալևի քրդերի չորս օջախներից մեկի անունը կրող այս գյուղում գտնվում էր Պամասուրի փիրի՝ սեիդ Մուրթուգայի սրբազան օջախը, որի կրտկր մշտավառ էր և պաշտամունքի առարկա։ Այս գյուղը եղերող ձորերի*

արևմտյան ափին գտնվում էր արհեստական բլուրների երրորդությունը, որոնք, բոլոր ավանդության, պատկանելիս են եղել Անայե-փիլի (մեծ մոր՝ Անահիտի) տաճարների երրորդությանը, որոնք թաղված էին բարարլուրների տակ։

Ըստ կրոնապետի (նախկին հայ) հավաստիացումների, իրենց օջախի կրակը այդ ատրուշաններից է տոնված ու պահպանված հանդիպակաց բարայրներում, մինչև որ Լուսավորիչը ատրուշաններից վերև շինել է տվել քրիստոնեական երեք տաճար, որոնք կործանված էին, բացի Հագրեթի-Խրդրի (ս. Սարգիս) եկեղեցուց, որը բարափոր էր և պահպանվում էր որպես սրբատեղի։ Ավելի ուշ քարայրներից սրբազան կրակը բերել և իրենց նոր հիմնած օջախում շարունակել են պահել։

Գյուղը գտնվում էր Պեշերիի արևմուտքում երեք ժամ հեռու, Զորբերանից չորս ժամ հեռու։ Բնակիչները քրդեր էին՝ 70 տուն (420 հոգի)։

171(40). **Կեվրան**: Խութաց-ձորի արևմտյան թևի ինքնապաշտպանությանը սահմանված Ղըզըլքիլիսեի շրջանին պատկանող վերջին գյուղն էր սա, որը գտնվում էր Պամասուրի հյուսիս-արևելքում երկուսուկես ժամ հեռավորության վրա։ Գյուղի դիրքը լեռնային էր։ Մեռջանի գագաթների արևելյան հատվածից հոսող ջուրն անցնում էր գյուղի աջ կողմից։ Բնակիչները քրդեր էին՝ 300 տուն (1800 հոգի)։

* * *

Այսպիսով, Ղըզըլքիլիսեի շրջանում կար 40 բնակավայր, որից 21-ը՝ քրդաբնակ, 15-ը՝ հայ ու քուրդ խառն, միայն 4-ը (Հերտիֆ, Տեր-Օվան, Խոյնգեղ և Քարնձոր գյուղերը)՝ զուտ հայաբնակ։ Այդ բնակավայրերում կար 7171 տուն (49666 հոգի) բնակիչ, որից հայեր՝ 1660 տուն (16600 հոգի), քրդեր՝ 5511 տուն (33066 հոգի)։

VI. ԲԱԼՈՒԻ (ԲԱԼԱՀՈՎՏԻ) ՇՐՋԱՆ

172(1). **Բալու**: Պատմական անցյալ ունեցող այս քաղաքը գտնվում էր Ղըզըլքիլիսեի հարավում, Զարսանջակի հարավ-արևելքում, Ճապաղջրի արևմուտքում, Քղիից հարավ-արևելք, Արածանի գետի աջ ափին և սահմանակից էր վերը նշված չորս շրջաններին էլ։ Վարչական բաժանմամբ սկզբում գավառակ (մյուտերեթ) էր, հետո վերածվեց գավառի (գայմադամության)։ Որպես առաջնորդանիստ կենտրոն, աչքի ընկնող դեր էր կատարում շրջանի ազգային մտավոր զարգացման գործում, ավել է լավագույն մտավորականներ (գրողներ, ազգային գործիչներ)՝ Ստյան, Աղաթոն, Լևոն Փաշայան, Մելքոն Կյուրճյան, Պետրոս ու Գասպար եղբայրներ և ուրիշներ, իսկ ճարտարապետության բնագավառում անմրցելի էին այստեղի զալֆաները՝ եկեղեցիներ, կամուրջներ, պալատներ, բաղնիքներ կառուցողները։

Ուներ չորս եկեղեցի և երեք վարժարան, որոնցից մեկը ժամանակին եղել է Միացյալ ընկերության խնամակալության ներքո։ Եկեղեցիներից ամենաաչքի ընկնողը գմբեթավոր քառաթև ս. Լուսավորիչն էր, որը համարվում էր ճարտարապետական գլուխգործոց։ Մյուս եկեղեցիները կոչվում էին ս. Սահակ, ս. Աստվածածին, ս. Կիրակոս։

Ավանդաբար պատմում էին, թե Մեսրոպ Մաշտոցը հայերեն տառերի գյուտի առաջին փորձերը կատարել է Բալուի բերդին կից գեռևս կանգուն ս. Մարսուպ (Մեսրոպ) վանքի երրորդ քարայր-մատուռի դռան աջ կողմում հաստատված հղկած սալաքարի վրա, ուր արձանագրել, ջնջել, նորից արձանագրել է տեսլային տառերի ձևերը, մինչև որ կատարելագործել է դրանք։ Այդ սալաքարը տախտակի տեղ է ծառայել, որից հետո այդ քարայրները կոչվելիս են եղել Մաշտոցի անունով։ Բալուի առջև, Արածանիի վրա ձգված պատմական քարաշեն կամուրջը կառուցողները բալուցի հայ վարպետներն են եղել։ Քաղաքում գտնվող այդ չորս եկեղեցիներից և ս. Մարսուպի երեք քարայր-մատուռների վանքից բացի, քաղաքից դուրս, արհեստական բլուրների ստորոտում գտնվում էին երեք հին եկեղեցու փլատակներ, մի այլ բարձունքի վրա էլ՝ մի քարափոր մատուռ։ Արհեստական բլուրների տակ թաղված էին նաև Անահիտի պաշտամունքին նվիրված կրակատան (ատրուշան) տաճարների ավերակները։

Ուներ 780 տուն (6240 հոգի) հայ, 450 տուն (2250 հոգի) քուրդ բնակիչ։

173(2). **Սագրաթ**: Բալուի հյուսիսային կողմում էր գտնվում Սագրաթ գյուղը, սահման ունենալով ս. Մարսուպ վանքի բարձունքը, որը Բալուն բաժանում էր այս գյուղից։ Ուներ ս. Թորոս անունով կամարակապ եկեղեցի և երեք դասարանով տեղական պայմաններին հարմարեցված վարժարան։ Գյուղի հյուսիսային կողմում, Գոմերից հոսող ջրի ափին գտնվում էին եկեղեցու փլատակներ և նույնքան հին գերեզմանատուն։ Բալուից Սագրաթ ճամփի տևողությունը մեկ ժամ էր։ Բնակիչները հայեր էին՝ 85 տուն (680 հոգի)։

174(3). **Սեիտլար**: Արածանի գետի աջ ափին, Բալուի արևմտյան կողմում երկու ժամվա հեռա-

վորության վրա էր գտնվում այս գյուղը, ընկած էր երկու ձորի միջև գոյացած տարածությունում։ Բնակիչները քրդեր էին՝ 60 տուն (300 հոգի)։

175(4). Առվան: Սեիտլարից հյուսիս-արևելք մեկուկես ժամ հեռու, Բալուից հյուսիս-արևմուտք մեկ ժամ հեռու, ջրի ձախ ափին էր գտնվում այս գյուղը։ Աջ ձորափին, Բալուի սարերի ստորոտում էին գտնվում Քառսուն-մանկանց կիսակործան տաճարի փլատակները, որոնք այդ վիճակում էլ ծառայում էին որպես սրբատեղի (երեխաների պաշտպան սուրբ)։ Բնակիչները քրդեր էին՝ 35 տուն (175 հոգի)։

176(5). Սղամ: Սագրաթից արևմուտք, Առվանից հյուսիս-արևմուտք, ձորի աջ ափին էր գտնվում այս գյուղը։ Ուներ մի եկեղեցի ս. Խաչ անունով, իսկ դեպի արևմուտք, Նորգեղամրղա տանող ճանապարհի աջ կողմում, արտուճի ծառերի արանքում գտնվում էին մի եկեղեցու փլատակներ, որի խաչքարերի մի մասը կիսովին թաղված էր հողի մեջ։ Բնակիչները հայեր էին՝ 72 տուն (576 հոգի)։

177(6). Ձեթ: Գտնվում էր Դավթա սարերի արևմտյան թևի բարձրադիր գագաթի ստորոտում, հյուսիսային լեռնագագաթներից սկիզբ առնող ջրի ձախ ափին, Սղամի հյուսիսում երկու ժամ հեռավորության վրա։ Այդ շրջանի ամենանշանավոր վանքը՝ Հայպատը, կառուցված էր նույն սարի արևմտյան դալարագեղ ու ծաղկավետ լեռնահովտում։ Ձեթը հայկական պատմական հին ավան էր։ Ավանդաբար պատմվում էր, թե Մեսրոպ Մաշտոցը հայերեն տառերի գյուտը կատարելիս իր մտորումների ժամանակ աղոթել ու ճգնել է, Բալուի քարայր-մատուռներից բացի, նաև Հայպատի վանքում։ Ձեթը եղել է մտավոր կենտրոն, ունեցել է իր միջնակարգ վարժարանը, որը տվել է մի շարք մտավորականներ։ Ուներ նաև կամարակապ քարակերտ եկեղեցի ս. Թորոս անունով, Հայպատի Քույր անվամբ սրբատեղին, որի մուտքը Հայպատի վանքից էր և որն արգասավորության խորհրդանիշ ու ուխտատեղի էր։ Կային նաև Թուխ-Մանուկ և երեք այլ ուխտատեղիներ, որոնք նախկինում եկեղեցիներ էին եղել։ Բնակիչները հայեր էին՝ 140 տուն (1120 հոգի)։

178(7). Գոմ (Գոմեր): Գտնվում էր երկու սարալանջերից կազմված և հովերից պաշտպանված լեռնածոցում։ Ուներ լավագույն արոտավայրեր և առատ ջուր։ Գյուղի ստորոտում, դեպի ձորակի ակունքները երկարող Պոզ-կետուկի լանջերում կային եկեղեցու փլատակներ և հին տապանաքարեր։

Ձեթից հյուսիս-արևելք էր երկուսուկես ժամ հեռու։ Բնակիչները քրդեր էին՝ 40 տուն (200 հոգի)։

179(8). Դոդիկ (Թոքիկ. Թաքիկ): Գոմերից հյուսիս-արևմուտք, երկու ձորակների արանքում սեղմված այս գյուղի դիրքը լեռնային էր։ Նախկին գյուղը, որի ավերակները գտնվում էին նորի հյուսիսում՝ բարձրադիր լեռների ծոցում, ուներ ոչ միայն երկու եկեղեցու փլատակներ, այլև ինքնապաշտպանության ամրոցի մնացորդ պատեր և աշտարակների սանդղաքարեր։ Ըստ ավանդության, նախկինում այդ սարը կոչվելիս է եղել Թաթկա սար, ուր առատորեն աճել է բողիների ընտանիքին պատկանող թաթիկ կոչված թթու դրվելիք բողին, որը քրդերը վաճառում էին Բալուի զափանում (կանաչեղեն և սննդամթերքներ վաճառելու վայր)։ Ասում էին նույնպես, թե գյուղն անունը ժառանգել էր թաթիկ բողիի անունից։ Գոմերից Դոդիկ ճամփի տևողությունը երկու ժամ էր, Ձեթից՝ երկուսուկես։ Բնակիչները քրդեր էին՝ 75 տուն (375 հոգի)։

180(9). Գուռան: Բալուի հյուսիսային սարերի ստորոտում, Գոմից հյուսիս երեքուկես ժամ հեռու, Դոդիկից հյուսիս-արևելք երեք ժամ հեռու էր գտնվում այս գյուղը։ Բնակիչները քրդեր էին՝ 50 տուն (250 հոգի)։

181(10). Քառոռ: Գուռանի լեռնային պայմաններում, նրանից արևմուտք, Դոդիկից երկուսուկես ժամ հեռավորության վրա էր գտնվում այս գյուղը։ Բնակիչները քրդեր էին՝ 85 տուն (425 հոգի)։

182(11). Հալալգոմ: Քառոռից հարավ-արևմուտք երկուսուկես ժամի վրա, գետակի ակունքների մոտ, Դոդիկից արևմուտք չորս ժամի վրա էր գտնվում այս գյուղը։ Բնակիչները հայեր էին՝ 25 տուն (200 հոգի)։

183(12). Դավթի-Մրզա (Մեզրե): Նույն ուղղությամբ, արևելքից արևմուտք երկարող երկու լեռնագոտիների գոգում, Հալալգոմից արևմուտք մեկուկես ժամի վրա էր գտնվում այս գյուղը։ Պահպանվում էին երկու եկեղեցու ավերակներ, որոնցից մեկը կոչվելիս է եղել ս. Սարգիս։ Բնակիչները հայեր էին՝ 32 տուն (256 հոգի)։

184(13). Խաճառ (Խաճար): Դավթի-Մրզայի արևմտյան կողմում, երկու ժամի վրա էր գտնվում Խաճառ գյուղը, որի հյուսիսային սարալանջի ստորոտում կային եկեղեցու ավերակներ, որոնք ավելի քրդերի ուխտատեղի էին, քան հայերի։ Եկեղեցուց դեպի արևմուտք ժայռերի ստորոտից բխում էր ջրառատ ակնաղբյուր, որին վերագրում էին զանազան հիվանդությունների բուժիչ հատ-

կուիյուն։ Բնակիչները հայեր էին՝ 26 տուն (208 հոգի)։

185(14). Քյանկյաուլի (Կանկաուլի)։ Հայերեն «կանկաու» (այդպեղի սարերում առատ աճող բույսի տեսակ) բառը բրդերը հնչյունափոխել էին «բյանկյաու»-ի, ու բան այդմ էլ հնչվում էր գյուղի անունը։ Գտնվում էր Խաճառի արևմուտքում, ձորի աջ ափին։ Գյուղի արևելյան կողմում, երկու ձորերի միջանցքում հարիվ մեկ ժամ հեռու գտնվում էր բրդական մի այլ գյուղ, որի բնակիչները իրենց համարում էին այս գյուղից։

Ուներ 40 տուն հայ (320 հոգի), 35 տուն քուրդ (175 հոգի) բնակիչ։

186(15). Պաշարաթ։ Կանկաուլիի հարավային կողմը երկու ժամ հեռու, երկրորդ լեռնադոտու ստորոտում, նույն սարերից սկիզբ առնող երկու դեսակներից արևելյան ճյուղի աջ ափին, բարձրադիր լեռնածոցում հիմնված էր Պաշարաթ գյուղը։

Ուներ 23 տուն (184 հոգի) հայ, 20 տուն (100 հոգի) քուրդ բնակիչ։

187(16). Ուզուն-Օպա։ Բալահովտի արևմտյան ծայրին, լեռնադաղաթների եռանկյունու ստորոտում էր գտնվում այս գյուղը, Պաշարաթից արևմուտք երկու ժամ հեռավորության վրա։ Գյուղը թեև եկեղեցի չուներ, բայց արևմտյան կողմում, ձորի աջ ափի բարձունքում կային երկու եկեղեցու փլատակներ, որոնցից մեկը ս. Փրկիչ անունով։ Բնակիչները հայեր էին՝ 36 տուն (288 հոգի)։

188(17). Պիսթեկ։ Արածանիի խելառ վազքը կասեցնող ապառաժների ուղղությամբ դեան ընթացքը փոխում և մի պահ հարավից հյուսիս հոսելով, կրկին շարունակում էր հորձանք տալ դեպի արևմուտք։ Այդ անկյունադարձի ապառաժուտ սարադագաթի հարթության վրա տեղավորված էր Հալիֆան աշիրեթին պատկանող քրդական այս գյուղը։

Բալահովտին տիրապետողը ոչ թե Բալուում նստող թուրք դավառապետը և իր զինվորներն ու ոստիկաններն էին, այլ քրդական Միրզան, Հալիֆան և Սուրան աշիրեթները։ Պիսթեկը հսկում էր Արածանին անցնել փորձող ամեն շարժման։

Գյուղի հյուսիսային լեռնադաղաթների ստորոտում գտնվում էին երկու եկեղեցու փլատակներ։

Պիսթեկը գտնվում էր Ուզուն-Օպայից հարավ-արևմուտք չորս ժամի վրա։ Բնակիչները քրդեր էին՝ 120 տուն (600 հոգի)։

189(18). Ախոռ։ Գտնվում էր Արածանիի ձախ ափին, Պիսթեկից արևելք երեք ժամի վրա. Ուզուն-Օպայից հարավ երկու ժամի վրա։

Ախոռն էլ Գոմերի նման նախկինում պատկանելիս է եղել Անահիտին նվիրված սրբազան անասուններ պահելու բնակավայրերի թվին։ Այստեղ կային արհեստական հողաբլուրներ ու եկեղեցիներ։ Գր. Լուսավորիչն ու Տրդատ թագավորը ատրուշաններն ավերելուց և հողի տակ թաղելուց հետո (որի հետևանքով էլ գոյանում էին բլուրներ) միայն նույն վայրերում կառուցել էին տալիս եկեղեցիներ։ Գյուղի հարավային դաշտավայրի հատման տեղում, արհեստական երկու բլրի ստորոտում գտնվում էին Տիրամոր եկեղեցու ավերակները։

Ուներ 100 տուն (800 հոգի) հայ, 60 տուն (300 հոգի) քուրդ բնակիչ։

190(19). Հավիկ։ Ախոռի արևելյան կողմի Արածանիի ձախափնյա գյուղերի շարքին էր պատկանում, որի հեռավորությունը Ախոռից ուղիղ գետափով երեքուկես ժամ էր։ Ուներ 80 տուն (400 հոգի) քուրդ բնակիչ։

191(20). Գոմմ։ Արհեստական բլուրների արանքում, գեղատեսիլ մի լեռնադաշտում էր հիմնված հայկական նախկին այս ավանը, որը նույնպես, ինչպես նախորդները, կապված է եղել Անահիտի պաշտամունքի հետ։

Գյուղի արևելյան կողմում, դեպի Արշամաշատ տանող ճամփի ձախ ափին գտնվում էին երկու եկեղեցու ավերակներ, մեկը՝ կիսակործան, ս. Սարգիս անվամբ։

Գոմքը գտնվում էր Ախոռից հարավ-արևմուտք, բնական անմատչելիության հետևանքով երեքուկես ժամ հեռու։

Ուներ ջրառատ և հարուստ արոտավայրեր, զարգացած էր անասնապահությունը։ Բնակիչները քրդեր էին՝ 130 տուն (650 հոգի)։

192(21). Խարապան (Ղարապան)։ Նախկին Արշամաշատի (Արմուշատ) ավերակներից քիչ վերև, Արածանիի ձախ ափը եզերող լեռնադոտու ծոցում էր ընկած այս գյուղը, Հավիկից արևելք չորս ժամ հեռու։

Գյուղի շրջակայքում գտնվում էին նախկին հայկական ավանի կոթողների մնացորդներ, յոթ եկեղեցու և իշխանական երեք ամրոցների փլատակներ։ Ավանդաբար պատմվում էր, թե Տիգրան Մեծը իր վերջին ճակատամարտը Լուկուլլոսի դեմ մղել է այս շրջանում։

Գյուղի բնակիչները նախկին հայեր էին, հետո քրդացած՝ 145 տուն (725 հոգի)։

193(22). Սարիղամիշ: Գոմքից հարավ-արևելք, Խարապանից հարավ-արևմուտք երեք ժամի վրա, սարալանջում էր գտնվում այս գյուղը։ Բնակիչները քրդեր էին՝ 70 տուն (350 հոգի)։

194(23). Վարի-Վարդենիկ: Տավրոսի լեռնաշղթային զուգահեռ, արևելքից արևմուտք երկարող լեռնագոտու հովտում, Սարիղամիշից մեկուկես ժամ հեռու էր գտնվում հայկական նախկին Վարդենիկ գյուղը, որի արևելյան կողմում, Լուսունկա գագաթ կոչվող սարալանջում կային երկու եկեղեցու փլատակներ։ Բնակիչները քրդեր էին՝ 30 տուն (150 հոգի)։

195(24). Նանուսան: Ծովածոցի տպավորություն գործող լեռնային այս գյուղի տեղանքն օժարված էր բնական գեղեցկությամբ, ուներ հարուստ վարելահողեր և լավագույն արոտավայրեր։ Գտնվում էր Վարի-Վարդենիկից հյուսիս-արևելք երկու ժամ հեռավորության վրա։ Բացի գյուղի ս. Նշան եկեղեցուց, գյուղի ստորոտի ձորափում կային ս. Գևորգ եկեղեցու փլատակները, որի շրջապատի լիսաղբիրը անասունների «դարաղ» կոչվող հիվանդությունը բուժելու հատկություն ուներ։

Այս շրջանի հայերի տարազը տարբերվում էր Բալահովտի հայերի տարազից։ Հագնում էին լեռնականներին հատուկ հագուստ, զինված էին և վարժ կերպով խոսում էին քրդերեն։ Բնակիչները հայեր էին՝ 45 տուն (360 հոգի)։

196(25). Վերի-Վարդենիկ: Լեռնային շրջանի հայկական այս գյուղն էլ իր անվանակցի նման քրդաբնակ էր։ Գյուղի ջրաղացների ստորոտում պահպանված էին որպես ուխտատեղի ծառայող ս. Սարդիս եկեղեցու կիսակործան խորանը, սյուների խոյակները և խաչքարեր։

Վերի-Վարդենիկը գտնվում էր Նաճարանի հարավային լեռնագոտու ստորոտում, դրանից չորս ժամ, Վարի-Վարդենիկից երկուսուկես ժամ հեռու։ Բնակիչները քրդեր էին՝ 65 տուն (325 հոգի)։

197(26). Թլակ: Վարի և Վերի Վարդենիկների միջև, ճանապարհից քիչ վերև ընկած լեռնածոցի մեջ էր գտնվում այս գյուղը, որի հեռավորությունը Վարի-Վարդենիկից երկու ժամ էր, Վերինից՝ մեկուկես ժամ։ Բնակիչները քրդեր էին՝ 20 տուն (100 հոգի)։

198(27). Պաիրան: Թլակի արևելյան կողմում երկուսուկես ժամ հեռու, բարձրադիր լեռնածոցում էր գտնվում այս գյուղը։ Բնակիչները քրդեր էին՝ 80 տուն (400 հոգի)։

199(28). Տուժիկ: Դերսիմի ինքնանկախ շրջանում ընկած քրդերի սրբազան սարի՝ Տուժիկ-Պապայի անունը հավերժացնող մի լեռնագագաթի ստորոտում էր գտնվում։ Պաիրանից հարավ-արևելք երկու ժամ հեռու գտնվող այս գյուղի դիրքն անմատչելի էր, իսկ բնակչությունը՝ ըմբոստ քրդեր՝ 150 տուն (750 հոգի)։

200(29). Սրին: Տուժիկ գյուղից հարավ-արևելք երեք ժամ հեռու սարալանջի ստորոտում էր գտնվում այս գյուղը։ Ուներ ս. Աստվածածին անունով եկեղեցի, իսկ հյուսիսային բարձունքում՝ Պենտի ճամփին, կային մի այլ եկեղեցու փլատակներ։

Բնակիչները թեև փոքրաթիվ, բայց քաջամարտիկ հայեր էին՝ 35 տուն (280 հոգի)։

201(30). Ճեպել: Տավրոսի լեռնաշղթայի ստորոտում ընկած, լավագույն արոտավայրեր ունեցող այս գյուղը գրեթե կղզիացած էր իր շրջապատից, որովհետև հալածվում էր թուրք իշխանության կողմից, բայց չէր ենթարկվում նրան։ Ճեպելը գտնվում էր Արինից հարավ-արևելք երկու ժամի վրա, և որպես ըմբոստ գյուղ, կապ չէր պահում շրջակա գյուղերի հետ։ Ուներ 180 տուն (900 հոգի) քուրդ բնակիչ։

202(31). Պաղին: Տավրոսյան լեռնաշղթայի հյուսիսային ուղղությամբ Բալու սարի երկու գագաթները փոքր շեղումով մոտենում էին հանդիպակաց սարալանջերին և կազմում լեռնադաշտ, ուր և ընկած էր սահմանային Պաղին գյուղը՝ Ճեպելից հյուսիս-արևելք երկու ժամ հեռու, բայց կապ չուներ Ճեպելի հետ։

Ուներ ս. Աստվածածին անունով եկեղեցի և դպրոց, ինչպես նաև կային մի հին եկեղեցու փլատակներ։

Բնակիչները հանդուգն և հաղթամարմին հայեր էին՝ 150 տուն (1200 հոգի)։

203(32). Կյունեյ: Արին գյուղից հյուսիս-արևելք երկու ժամ հեռու, հյուսիսային սարալանջի բարձրադիր լեռնածոցում հաստատված այս գյուղի Լարեր կոչված արոտավայրի գոգում կային մի հին եկեղեցու փլատակներ, որը քրդերի Հազրեթի-Խրդրը (ս. Գևորգ) ուխտատեղին էր։ Բնակիչները քրդեր էին՝ 40 տուն (200 հոգի)։

204(33). Միրվան: Միրվան սարերի անունը կրող այս գյուղը գտնվում էր երկու լեռնագոտիների միացման անկյունի հյուսիսային սարալանջին, Պաղինից հյուսիս-արևելք երեք ժամ հեռու։ Երկու լեռնագոտով անջատված լինելով Պաղինից, որևէ հարաբերություն չուներ նրա հետ։ Բնակիչները քրդեր էին՝ 130 տուն (650 հոգի)։

205(34). Զաբ: Կյունեյից հյուսիս-արևելք մե-

կուկես ժամ հեռու, Արածանիին նայող զագաթների ստորոտում էր ծվարած այս գյուղը։ Բնակիչները քրդեր էին՝ 25 տուն (125 հոգի)։

206(35). Պողազ (Կիրճ)։ Երկու սարերի լեռնանցքի հյուսիսային սարալանջին էր հաստատված այս գյուղը, Զաթից հյուսիս-արևելք երեք ժամ հեռու։ Բնակիչները քրդեր էին՝ 75 տուն (375 հոգի)։

207(36). Թեմրան։ Պողազ գյուղի արևելքում երկուսուկես ժամ հեռու, Արածանին շրջապատող առաջին լեռնագոտու հարավային լեռնալանջին էր գտնվում այս գյուղը։ Դեպի Սարաչոր տանող ճամփի վրա կային եկեղեցու փլատակներ։ Բնակիչները քրդեր էին՝ 50 տուն (250 հոգի)։

208(37). Թրխե։ Բայսի Արածանի գետի ձախափնյա գյուղախմբին էր պատկանում Թրխե հայկական հին գյուղը, որը Պաղինի և Սրինի նման գտնվելով քրդական գյուղերի շրջապատում, տոնակատարեն պահել էր իր ազգային ինքնուրույնությունը։ Բնակիչները իրենց մտավոր զարգացման և արհեստների շնորհիվ ստեղծել էին ոչ միայն բարեկեցիկ կյանք, այլև աղդել շրջապատի քրդերի վրա։

Գտնվում էր Նաճարանից արևելք երեք ժամ հեռու։ Գյուղի հարավային կողմում, բարձրաղիր ծագկազարդ լյուրի ստորոտում կար ս. Սարդիս անունով եկեղեցի, որի մասին ավանդաբար պատմում էին, թե կառուցվել է Թադեոս Առաքյալի կողմից · այնքան ամրակուռ, որ մինչև 1915-ի եղեռնը պահել է իր վեհափառ կառույցը։ Գյուղն ուներ նաև դպրոց։ Բնակիչները հայեր էին՝ 75 տուն (600 հոգի)։

200(38). Թիլ (Թիլմ)։ «Թիլ» նշանակում է հոդաբլուր՝ մեծ մասամբ արհեստական (ինչպես ասվեց, ղրանց տակ թաքնված էին ավերված ատրուշաններ)։ Թիլը գտնվում էր Արածանիի ձախ ափին, Թրխեից երկու ժամ հեռու, Սրինից հյուսիս։ Ուներ լեռների բարձունքին թառած ս. Խաչ վանքը, ս. Աստվածածին անունով եկեղեցի։ Կային նաև մի այլ եկեղեցու փլատակներ։ Ուներ 42 տուն (336 հոգի) հայ բնակիչ։

210(39). Ուզուն Օպայի Մրզե։ Կրկին անցնելով Արածանիի աջ ափը, ուր առաջին գյուղը Ուզուն Օպան էր, որից հյուսիս-արևելք երկու ժամ հեռու գտնվում էր Ուզուն Օպայի Մրզե փոքրիկ գյուղը։ Բնակիչները հայեր էին՝ 13 տուն (104 հոգի)։

211(40). Կյուլիշկեր։ Շրջանցելով Հաճի-Մեքքե միակ թրքական գյուղը, ներկայանում էր Կյուլիշկերը, որը գտնվում էր թրքականից արևելք, Կանկեռից հոսող ջրի ձախ ափին երկու ժամ հեռավորության վրա։ Բնակիչները հայեր էին՝ 40 տուն (320 հոգի)։

212(41). Արմճան։ Կյուլիշկերի հյուսիս-արևելքում երկու ժամ հեռու էր ընկնում Բիրան աշիրեթի հովանավորության տակ գտնվող Արմճան գյուղը, որը տեղավորված էր Դավթա Մրզայից հոսող երկու գետակներից արևմտյանի աջ ափին։

Գյուղը եկեղեցի չուներ, բայց հյուսիսային դաշտավայրի արևմտյան կողմում կային մի եկեղեցու փլատակներ։ Բնակիչները հայեր էին՝ 70 տուն (560 հոգի)։

213(42). Ղարակետուկ։ Դավթա Մրզայից հոսող երկու գետակների արանքում, բարձրաղիր գագաթների սարալանջին էր թառած այս գյուղը, որն իր անունը ժառանգել էր դյուգի վերը գտնվող ցից բարձունքից։ Գտնվում էր Արմճանից հյուսիս-արևելք երկուսուկես ժամ հեռու։ Բնակիչները հայեր էին՝ 26 տուն (208 հոգի)։

214(43). Նորգեղ։ Հինը կոչվելիս է եղել Հայգեղ, որի ավերակներից բավական հեռու, Ղարաեհաուկից հոսող ջրերի արևելյան ճյուղի ձախ ափին հաղիվ մի ժամ հեռավորության վրա էր դանվում նոր գյուղը։ Հին գյուղի ավերակներում կար երկու փլաաակ եկեղեցի, որոնցից մեկը՝ Տիրամայր անվամբ։ Բնակիչները հայեր էին՝ 30 տուն (240 հոգի)։

215(44). Նորզեղամրզա։ Մրզա կամ մղրա, բրդերեն՝ մի քանի տնից կազմված շեն կամ գյուղակ, ենթակա որևէ գյուղի կամ աղայի ու բեկի։ Գրանցվող մրզան, սակայն, արդեն դուրս էր եկել իր անունը բնորոշող նեղ սահմաններից և արգասաբեր հողերի շնորհիվ դարձել գյուղ։

Գտնվում էր Նորգեղից հարավ ընկած ձորափին մեկ ժամ հեռավորության վրա։ Բնակիչները հայեր էին՝ 32 տուն (256 հոգի)։

216(45). Նորշնակ։ Հայերը վերջին տարիներին լքել էին գյուղը։ Գտնվում էր Նորգեղի գրեթե արևելքում հագիվ երեք-քառորդ ժամ հեռու։ Բնակիչները քրդեր էին՝ 150 տուն (750 հոգի)։

217(46). Մրջոմի Մեզրե։ Գտնվում էր Նալրշից հյուսիս-արևմուտք երկուսուկես ժամ հեռու, Քաղցրահայաց սարի արևմտյան թևի ստորոտում։ Ուներ ս. Գևորգ անունով եկեղեցի։ Գյուղի ստորոտի հանդում կային մի եկեղեցու փլատակներ։ Ուներ 36 տուն (288 հոգի) հայ բնակիչ։

218(47). Հավավ[1]։ Բալվա հովտի ամենամեծ

[1] Ավանդաբար պատմվում էր, թե երբ Թադեոս Առաքյալը քրիստոնեություն է քարոզել, կռապաշտ հայերը նրան ծաղրելու համար թաքնված տեղերից շան հաչոցի ձայնով (հաֆ-

6—61

և ամենահայաշատ գյուղն էր, գտնվում էր Մրջոմի Մեզրևի հյուսիսում մեկուկես ժամ հեռու, Քաղցրահայաց սարի արևմտյան գագաթների ստորոտում։

Գյուղի այն մասում, ուր վերջանում էր Քաղցրահայաց սարի արևմտյան հատվածը, հիմնված էր շրջանի ամենամեծ վանքը, որը կոչվում էր Քաղցրահայաց կամ Հավավի վանք։ Կար նաև երկու եկեղեցի՝ ս. Աստվածածին և Կաթողիկե, նույնպես և երկու գյուղական դպրոց։ Քաղցրահայաց վանքի արևելյան կողմում, վանքից բավական հեռու, լեռնածոցում կային հին եկեղեցու փլատակներ։ Ուներ 235 տուն (1880 հոգի) հայ բնակիչ։

219(48). Շեազ։ Սագրաթից արևելք մեկուկես ժամ, Մ. Մեզրեից արևմուտք երկու ժամ հեռու գտնվում էր այս գյուղը, որն ուներ ս. Հակոբ անունով եկեղեցի և վարժարան։ Բնակիչները հայեր էին՝ 60 տուն (480 հոգի)։

220(49). Ղամիշլու։ Քաղցրահայաց սարից սկիզբ առնող ջրի ձախ ափին, հարավից-հյուսիս մեկուկես ժամ հեռու էր գտնվում այս գյուղը։ Ուներ 12 տուն (96 հոգի) հայ, 10 տուն (50 հոգի) քուրդ բնակիչ։

221(50). Խարապորք (Ղարապորք)։ Հարավից արևելք երկու ժամ, Ղամիշլուից հարավ-արևելք մեկուկես ժամ հեռու էր գտնվում այս գյուղը, հյուսիսից հոսող երկու ջրերի արանքում, որոնց միացման տեղի արևմտյան սարալանջին կային երկու եկեղեցու փլատակներ, մեկը մյուսից բավական հեռու։ Խարապորքը ուներ ս. Աստվածածին անունով մի եկեղեցի։ Բնակիչները հայեր էին՝ 30 տուն (240 հոգի)։

222(51). Արթխան։ Ղամիշլուի արևելյան կողմում երկուսուկես ժամ հեռու գտնվում էր այս գյուղը, որն ուներ ս. Մինաս անունով եկեղեցի։ Այս գյուղի հայերը սերտորեն գործակցում էին հարևան քրդերի հետ, որոնք հարկ եղած դեպքում արտաքին հարձակումներից պաշտպանում էին հայերին։ Կորովի և առնական մարդիկ էին։

Ուներ 50 տուն (400 հոգի) հայ բնակիչ։

223(52). Սեֆերան։ Բալուի հյուսիսային սահմանապահ գյուղերի շարքում առաջնակարգ տեղ և դիրք էր գրավում այս գյուղը, որ հաստատված էր հյուսիս-արևելյան լեռնագոտու անմատչելի գագաթների ստորոտում։ Այս գյուղի քրդերը թեև պատկանում էին սյունի աղանդին (մահմեդական էին), բայց մզկիթ չունեին և ատում էին թուրքերին։ Ալեի քրդերի նման, այստեղ ապրող շահվկ և սյունի քրդերն էլ պաշտում էին Հակրեթի խրդրրի սրբատեղիները։

Գյուղը գտնվում էր Արթխանից հյուսիս-արևելք երկուսուկես ժամ հեռու։ Ուներ 170 տուն (850 հոգի) քուրդ բնակիչ։

224(53). Գումպաթ (Գմբեթ)։ Ճապաղջրի և Քղիի հյուսիս-արևելյան սահմանների լեռնագոտին Բալուն բաժանում էր այդ շրջաններից։ Օսանկյունի այդ սահմանագծի վերջին հայ գյուղը Գումպաթն էր, որն իր քիչ ժողովրդով խիզախությամբ կարողացել էր պաշտպանել իր գոյությունը լեռնային այդ շրջանում, ուր տիրապետող տարրը շահվկ-սյունի քրդերն էին։

Գյուղը գտնվում էր Սեֆերանից հյուսիս-արևելք երեք ժամ հեռու։ Գյուղի արևելյան կողմում, անտառածածկ սարալանջին էին գտնվում ս. Ավետման եկեղեցու ավերակները, որի գմբեթի կամարների քարերի մի մասը և խոյակները մնացել էին անվթար, կիսովին թաղված խճաքարերի մեջ։ Կային նաև մի այլ եկեղեցու մնացորդներ և դարձյալ խճաքարերի ու ավազի մեջ կիսովին թաղված մի գերեզմանատուն իր տապանաքարերով, իսկ ավելի վեր, լեռնածերպերի արանքում մնում էին հին ամրոցի հիմնաքարերը։

Ուներ 38 տուն (304 հոգի) հայ, 15 տուն (75 հոգի) քուրդ բնակիչ։

225(54). Խեջֆ։ Գումպաթից հյուսիս մեկ ժամ հեռու, ջրի աջ ափին էր տեղավորված այս գյուղը։

Հայ գյուղերի հետ սերտ բարեկամությամբ կապված այս գյուղի քրդերը նախկին հայեր էին ու պահում հին հայկական բոլոր սովորույթները։ Գյուղից հյուսիս-արևելք կային հին եկեղեցու ավերակներ, որոնք քրդերի անասնապահության պաշտպան սուրբն էին նկատվում։ Բնակիչները քրդեր էին՝ 80 տուն (400 հոգի)։

226(55). Խաբեկ։ Սեֆերանից հարավ-արևելք մեկ ժամ հեռու, ակնաղբյուրների մոտ էր գտնվում այս գյուղը, որի գիրքը լեռնաղաշտային էր։ Գյուղի արևելյան կողմում, Կրպոյիկ կամ Կրոլո նախկին հայկական գյուղի կողմում գտնվում էին եկեղեցու ավերակներ։ Բնակիչները հայեր էին՝ 45 տուն (360 հոգի)։

227(56). Շարուճան։ Բարձրադիր լեռնագագաթների ստորոտում, Խապեկ և Օխու գյուղերի միջև, Գումպաթից հոսող ջրի աջ ափին էր գտնվում այս գյուղը, որն Խապեկից հեռու էր մեկուկես ժամ։ Գյուղի քրդերը սերտ բարեկամությամբ

հաֆ-ով) պատասխանել են առաքյալի քարոզներին, այդ պատճառով գյուղը կոչվել է Հավ-հավ, իսկ բնակիչները՝ հավ-հավցիք, այսինքն շան նման հաչողներ։

կապված լինելով Հայերի հետ, իրենց երեխաներին սովորելու էին ուղարկում Օխու գյուղի Հայկական վարժարանը, ուստի նրանք խոսում և գրում էին հայերեն, հայերեն տառերով քրդերեն նամակներ էին գրում միմյանց։

Գյուղի հյուսիսային անմատչելի ժայռերի ստորոտում էր գտնվում Ստեփանոս Նախավկային նվիրված կիսակործան եկեղեցին, իսկ եկեղեցուց վերև կային հին բերդի ավերակներ։

Ուներ 170 տուն (850 հոգի) քուրդ բնակիչ։

228(57). Կրպոն։ Նախկին հայկական այս գյուղում բնակվում էին քրդեր։ Կրպոն գտնվում էր Շարուանից հյուսիս-արևելք մեկուկես ժամ հեռու։ Ուներ 25 տուն (125 հոգի) բնակիչ։

229(58). Տեվենի։ Խարբեկից արևմուտք մեկ ժամ հեռու էր գտնվում այս գյուղը, որը թեև եկեղեցի չուներ, բայց գյուղի ստորոտում, Զորաբերանից բիչ վերև հինավուրց եկեղեցու փլատակներ կային։ Ուներ 20 տուն (160 հոգի) հայ բնակիչ։

230(59). Ապրանի (Ապարանք)։ Կան պատմական այնպիսի կոթողներ, որոնք իրենց կործանված վիճակում իսկ դիտողին վեհություն են ներշնչում։ Գյուղից դուրս, գետի հյուսիս-արևելք ընկած լեռնածոցում էին գտնվում կիսակործան ապարանքի, դղյակի, ամրոցների, եկեղեցու մնացորդները և խաչքարեր ու խոյակներ։

Գյուղը գտնվում էր Արթխանի հարավում մեկուկես ժամ հեռու, ջրի ափին։ Ուներ 18 տուն (144 հոգի) հայ բնակիչ։

231(60). Ներրի։ Արածանի գետի աջ ափին, Ապարանքի հարավ արևելքում մեկ ժամ հեռավորության վրա էր գտնվում այս գյուղը։ Ուներ 25 տուն (125 հոգի) քուրդ բնակիչ։

232(61). Նրպրշի (Նպշի)։ Հյուսիսից հոսող ջրի՝ Արածանի գետին միանալու եռանկյան վրա, Արածանիի աջ ափին էր գտնվում այս գյուղը, Ներրի գյուղից հարավ-արևմուտք մեկուկես ժամ հեռու։ Ուներ կանգուն մնացած ս. Աստվածածին անունով եկեղեցի (առանց քահանայի)։

Ուներ 32 տուն (256 հոգի) հայ, 10 տուն (50 հոգի) քուրդ բնակիչ։

233(62). Խոշմաթ։ Ներրի գյուղի արևելքում, Արածանի գետի աջափնյա գյուղերից ամենամեծը և հայաշատը համարվում էր Խոշմաթը։ Ուներ ս. Աստվածածին անունով եկեղեցի, քահանա և դրպրոց։

Խոշմաթը համարվում էր կիսալեռնային-կիսաղաշտային գյուղ, որի հեռավորությունը Ապրանքից մեկուկես, Ներրիից մեկ ժամ էր։ Գյուղից դուրս, հյուսիսային սարալանջի ստորոտում կար երկու ավերակ եկեղեցի, մեկը՝ ս. Նշան անվամբ, որին կից կային հողածածկ տապանաքարեր։ Բնակիչները հայեր էին՝ 105 տուն (840 հոգի)։

234(63). Հուն։ Այս գյուղը գտնվում էր Արածանիի ձախափնյա լեռնահովտում, Խոշմաթից հարավ չորս ժամ հեռու, ուներ լեռնային բարձր գիրք։

Հունի և Թեմրանի միջև, Արածանիին նայող լեռնագագաթի ստորոտում գտնվում էր երկու ավերակ եկեղեցի և մի հին գերեզմանատուն։ Բնակիչները քրդեր էին (նախկին հայեր)՝ 180 տուն (900 հոգի)։

235(64). Սարաչոր։ Հունի մոտ էր գտնվում, դեպի հարավ-արևելք մեկուկես ժամ հեռավորության վրա։ Գյուղից արևելք կային արհեստական հողաբլուրներ, շրջակայքում՝ բազմաթիվ մեղրեներ, որոնց բնակիչները քրդեր էին և մտնում էին այս գյուղի մեջ։ Ուներ 370 տուն (1850 հոգի) քուրդ բնակիչ։

236(65). Տիլիմլի։ Օխու գյուղից հարավ-արևելք երեք ժամ հեռու ընկած այս գյուղի հայ բնակիչները լքել էին գյուղը, իրենց տեղը զիջելով քրդերին։ Գյուղը գտնվում էր Արածանիի և Գումպաթի ջրի աջ ափին։ Բնակիչները քրդեր էին՝ 40 տուն (200 հոգի)։

237(66). Օխու (Եզ)։ Գտնվում էր Մատրակ գյուղից երկուսուկես ժամ, Խոշմաթից երկու ժամ, Թեփեից մեկ ժամ հեռու։ Ուներ ս. Կիրակոս անունով եկեղեցի, ուր հայերի հետ միասին սովորում էին նաև քուրդ երեխաներ։ Գյուղի մոտի բարձունքի վրա կար նաև երկու փլատակ եկեղեցի, որոնցից մեկը կոչվում էր ս. Սարգիս։ Ըստ իմ և նույն գյուղացի Տեր-Պողոսի (Դև մականվանյալ) կազմած վիճակագրության, գյուղը բաղկացած էր 45 տուն հայերից և 32 տուն քրդերից, հայերի թիվը 586 հոգի էր, քրդերինը՝ 200։ Սակայն Օխուի բնակիչների թիվը, հետևելով իմ ընդունած սկզբունքին, ցույց եմ տալիս՝ հայերինը 360 հոգի (տուներ ութ հոգու հաշվով), քրդերինը՝ 160 (տուներ հինգ հոգու հաշվով), ընտրելով, ինչպես մյուս բոլոր դեպքերում, նվազագույնը։

238(67). Թեփե (Բլուր)։ Օխուից հյուսիս-արևելք ընկած այս գյուղի բոլոր կողմերից ջրեր էին հոսում, որոնք լիքն էին ալապալխ համեղ ձկնով, որը Սևանա լճի իշխան ձկան միջին տեսակն էր։

Գյուղն ուներ հարուստ վարելահողեր և լավագույն արոտավայրեր։ Գյուղացիք օգտվում էին առավելապես ձկնորսության բարիքներից, լեռնային բանջարներից ու վայրի պտուղներից, ո-

բոնք շատ առատ էին այս շրջանում։ Նշանավոր էին մանավանդ բողիկի սունկը, խավրծիլը, թաթիկը, բոժախը, ժախը, մոսկորը, չեբեշուկը, լվինջը, կանկառների տեսակները։

Բնակչությունը ըմբոստ մարտական խառնվածք ուներ, չէր հանդուրժում բռնությունը և հարվածին հարվածով պատասխանելու քաջությունն ուներ։

Գյուղում կար դպրոց, դասավանդում էր քահանան։ Ուներ նաև ս. Թովմաս անունով մի եկեղեցի, իսկ գյուղի լեռնային մասում գտնվում էր մի հին ավերակ եկեղեցի և երկու այլ ուխտատեղի։

Ուներ 56 տուն (448 հոգի) հայ, 10 տուն (50 հոգի) քուրդ բնակիչ։

239(68). Յայլալի։ Հիմնված էր Թեփեից հյուսիս-արևելք մեկուկես ժամ, Գումպաթից հարավ-արևելք երկու ժամ հեռու։ Բնակիչները քրդեր էին՝ 85 տուն (425 հոգի)։

240(69). Լուսնակ (Աշմ)։ Յայլալիից հյուսիս-արևելք մեկուկես ժամ հեռավորության վրա էր գտնվում այս գյուղը, ընկած Լուսնկա գագաթի ստորոտում, որի արևելյան կողմում կար մի հին ավերակ եկեղեցի։ Բնակիչները քրդեր էին՝ 90 տուն (450 հոգի)։

241(70). Մեմգան։ Գերսիմի հարավ-արևմրայտն շրջանին իշխող Մեմգուն (Մամիկոնյան) զորավոր աշիրեթի անունով հիմնված այս գյուղը պատկանում էր նույն աշիրեթի արևելյան հատվածին։ Բնակիչները ալևի քրդեր էին (նախկին հայեր)։

Գյուղը գտնվում էր Գումպաթից հյուսիս-արևելք երկու ժամ հեռու, Պայրամլիից հոսող ջրի աջ ափին, հսկում էր դեպի Քզի տանող ճանապարհը։ Գյուղից դուրս, հյուսիսային լեռնագոտու ստորոտում կար երկու ավերակ եկեղեցի։ Ուներ 270 տուն (1350 հոգի) բնակիչ։

242(71). Պայրամլի։ Գտնվում էր Մեմգանից հյուսիս-արևելք երեք ժամ հեռու։ Բնակիչները, որ քուրդ էին, պատկանում էին Շատգանցիների աշիրեթին, որը գործակցում էր Ճանպեկան և Սանտալան աշիրեթների հետ։ Ուներ 130 տուն (650 հոգի) բնակիչ։

243(72). Գոմեր։ Հեռավոր Մնձուրի գագաթներից մինչև Բալահովտի սարերը՝ կրկին Գոմեր, Անահիտի պաշտամունքի վկայության մի նոր մնացորդ։

Գյուղը գտնվում էր Պայրամլիի արևմուտքում երեք ժամ հեռավորության վրա, հյուսիսից հոսող երկու ջրերի միջև։ Շրջակայքում կար երեք ավերակ եկեղեցի, որոնք գտնվում էին իրարից հեռու, տարբեր Գոմերի շրջաններում։ Գյուղի բնակչությունը զբաղվում էր անասնապահությամբ, մասամբ երկրագործությամբ, ուներ անգերպանցելի արոտավայրեր։ Բնակիչները քրդեր էին՝ 220 տուն (1100 հոգի)։

244(73). Զերտիկե։ Գոմերից հյուսիս-արևելք երկուսուկես ժամ հեռավորության վրա միմյանց մոտ բույն դրած մեղրեների հավաքականությունը կոչվում էր Զերտիկե։ Բնակիչները քրդեր էին՝ 140 տուն (700 հոգի)։

245(74). Մեռան (Մոռան)։ Գյուղի արևելյան կողմի Ղուրուճանի անտառածածկ սարերի ստորոտում էին գտնվում մի մեծ ավանի ընդարձակածավալ փլատակները։ Կործանված ամրոցների քարերի վրա կային անընթեռնելի արձանագրություններ։ Ավերակների մեջ զանազանվում էին երեք եկեղեցու փլատակներ, խաչքարեր, սյուների խոյակներ՝ ծաղկազարդ փորագրություններով։ Ժողովուրդը այս ավերակները անվանում էր Սուգե Մռռան, որը քրդերեն նշանակում է օձերի քաղաք։ Մռռան գյուղի (Օձագյուղ) բնակիչները ավանդաբար պատմում էին, թե իրենք կործանված այդ բերդաքաղաքի բնիկների ազատված ժառանգորդներն են և իրենց գյուղը կոչել են ոչ թե Սուգե Մռռան, այլ Սուգե Մեռան (սգից մահացան)։

Ըստ հայ ավանդության, պաշարվողները անոթությունից մահացել են, իսկ ըստ քրդական ավանդության, իբր թե այդտեղ էր բնակվում օձերի թագավորը, որը մի քանի տարին մի անգամ պատերազմ էր հայտարարում Քզիի Աժդահա սարի ակնաղբյուրներում բնակվող օձերին։

Գյուղը գտնվում էր Զերտիկեից հարավ-արևմուտք երկուսուկես ժամ հեռավորության վրա։ Բնակիչները քրդեր էին՝ 60 տուն (300 հոգի)։

246(75). Սեյրան։ Զերտիկեից արևմուտք երկու ժամ հեռավորության վրա էր գտնվում այս գյուղը, որի գիրքը լեռնային էր և ուներ հնադարյան կաղնու մեծ անտառներ։ Բնակիչները քրդեր էին՝ 35 տուն (175 հոգի)։

247.(76). Փալուտ (Փալուտլի)։ Կաղնու անտառներով հարուստ այս շրջանի բնակիչները օգտվում էին այդ ծառի պտղից, օգտագործելով այն կաշեգործության մեջ։ Գյուղը գտնվում էր Սեյրանից հյուսիս-արևմուտք մեկ ժամ հեռավորության վրա։ Բնակիչները քրդեր էին՝ 75 տուն (375 հոգի)։

248(77). Մոգտուն։ Գտնվում էր Փալուտլիից հարավ-արևմուտք երեք ժամ հեռավորության վրա։

հին եկեղեցու վերատակները ընկած էին գեպի Փաստուի երկարող փոքր լեռնադոտու լանջին։ Բնակիչները բրդեր էին՝ 125 տուն (625 հոգի)։

219(78). Միլվան։ Գտնվում էր Մոդոտունից հյուսիս-արևմուտք, նույնանուն կիրճից՝ հարավ-արևմուտք։ Գիրքը լեռնային էր և համարվում էր վանդվոր շրջան։ Բնակիչները բրդեր էին՝ 250 տուն (1250 հոգի)։

250(79). Լոխմատ։ Մոդոտունից արևմուտք երկու ժամ հեռու, Միլվանից հարավ-արևմուտք երկուսուկես ժամ հեռու էր գտնվում Իզոլան աշիրեթին պատկանող այս գյուղը, որի բնակիչների մի մասը նախկինում զբաղվել էին Մալաթիայի լեռնային շրջանները, ուր ապրում էին նույն աշիրեթի այլ գյուղերի շրջանում։ Բնակիչները բրդեր էին՝ 90 տուն (450 հոգի)։

251(80). Պալդայա։ Մաքսուտան աշիրեթին պատկանող այս գյուղի արևելյան բարձրադիր ժայռերից իսկապես մեղր էր ծորում, որը ամռան վերջերին ուղղակի թափվում էր անմատչելի ապառաժների կրծքերից, որոնց հասնել անհնարին էր։ Երևի գյուղը կոչվել է վայրի մեղրի թուրքերենով (պալ՝ մեղր, դայա՝ ժայռ), որը հայերեն կլիներ Մեղրաժայռ։

Գյուղի վերևից սկիզբ էր տանում Բերիի ջրի ճյուղը, որի ձախ ափին էլ գտնվում էր գյուղը։ Պալդայան ընկած էր Լոխմատից հարավ երկու ժամ հեռավորության վրա։ Ուներ 160 տուն (800 հոգի) բուրդ բնակիչ։

252(81). Մոդ։ Բալուի հյուսիսային լեռնադոտին սահմանագծում էր հայկական գյուղերը։ Քրդական գյուղերից Մոդը պատկանում էր անմատչելի լեռներում բնակվող գյուղատեղիին։ Գտնվում էր Պալդայայից հարավ-արևելք մեկուկես ժամ հեռավորության վրա։ Ուներ 30 տուն (150 հոգի) բուրդ բնակիչ։

253(82). Թերման (Թեմրան)։ Մոդից հարավ-արևելք երկուսուկես ժամ հեռու, նույն լեռնադոտու արևելյան ստորոտների ծոցում բույն էին դրել Մաքսուտան աշիրեթի արևելյան սահմանապահի դեր կատարող բաշամարտիկ լեռնականներ, որոնց էր վերագրվում շրջակա մի շարք գյուղերը սպանդանոցներ ու թալանելու պատիվը։

Գյուղի հյուսիսային կողմից պատնեշի դեր կատարող լեռնադագաթների ստորոտում գտնվում էին մի հսկա ամրոցի և երկու եկեղեցու ավերակներ, որոնցից մեկը՝ ս. Մարգիս (Հաղբեթի-Խաչը) անվամբ։

Ուներ 35 տուն (280 հոգի) հայ, 170 տուն (850 հոգի) բուրդ (քրդացած հայ) բնակիչ։

254(83). Սանսաս։ Բալուն շրջապատող հյուսիսային լեռնադոտու դեպի Բերիի ջուրը նայող սարալանջին ընկած էր ավելի քան 15 գյուղակ (մեղրեն), որոնց բնակիչները պատկանում էին Սուրան և Մաքսուտան աշիրեթներին և համատեղ կազմում էին մի գյուղ Սանսա անվամբ (շշփոթել Դերսիմի հյուսիսում գտնվող Սանսայի հետ)։ Գտնվում էր Պալդայայի արևմտյան կողմում երկու ժամ հեռավորության վրա։ Բնակիչները բրդեր էին՝ 230 տուն (1150 հոգի)։

255(81). Պալիկան։ Սանսայից հյուսիս-արևմուտք մեկուկես ժամ հեռավորության վրա էր գտնվում այս գյուղը, որի բնակչության մեծ մասը թրքական արշավանքների ժամանակ անպտիտվել էր Խարբերդի շրջան և Խարբերդի ու Կյումիշմատենի միջև հիմնել նոր գյուղ, Պալիկան անունով։ Բնակիչները բրդեր էին՝ 80 տուն (400 հոգի)։

* * *

Այսպիսով, Բալուի շրջանում կար 84 բնակավայր, որից 27-ը՝ հայաբնակ, 47-ը՝ բրդաբնակ, 10-ը՝ հայ ու քուրդ խառն։ Այդ բնակավայրերում ապրում էր 8561 տուն (51007 հոգի) բնակիչ, որից հայ՝ 2734 տուն (21872 հոգի), քուրդ՝ 5827 տուն (29135 հոգի)։

VII. ՄԵԾԿԵՐՏԻ ՇՐՋԱՆ

256(1). Մեծկերտ (Մազկերտ)։ Այս գյուղաքաղաքն էլ Բալուի, Չարսանջակի, Բերիի նման դայմադամանիստ էր, բայց այդքան միայն, քանի որ շրջկենտրոնից դուրս իշխանությունը պատկանում էր քրդերին։

Մեծկերտի սահմաններն էին՝ հարավ-արևելքից Բերին, հյուսիս-արևելքից Ղըղըլքիլիսան, արևմուտքից Խոզաթը, իսկ արևելքից Խութաձորը այն բաժանում էր Ղըղըլքիլիսանի շրջանից։

Մեհրան սարերից հոսող նույնանուն գետը արևելքից շրջանցելով քաղաքը, Ղըղըլչուխ գյուղի մոտ միանում էր Բոլոմորիի գետին և կազմում անցք չտվող ջրերից մեկը։ Քաղաքը գտնվում էր ապառաժների ստորոտում, իսկ շրջ բոլորը բարձրադիր լեռներ էին, մանավանդ հյուսիսում, որոնք անտառածածկ էին։

Հին բերդը, որ ընկած էր քաղաքի հարավ-արևմուտքում, թուրքերի նվաճումից հետո կորցրել էր նշանակությունը, որովհետև շրջապատի

բարձրադիր սարերը գտնվում էին քրդերի տիրապետության տակ և արժեզրկում էին այն։

Քաղաքն ուներ երկու եկեղեցի՝ ս. Աստվածածին և ս. Հակոբ, նաև նախակրթարան, իսկ քաղաքից դուրս, դեպի հյուսիս-արևելք, կար յոթ ավերակ եկեղեցի, որոնք կոչվում էին՝ ս. Փրկիչ, ս. Մեսրոպ, ս. Սարգիս, ս. Պողոս, ս. Գևորգ, ս. Աթանաս, ս. Եղիա։ Գրանց մոտ էր գտնվում նաև ավերակ Ճերմակա վանքը։

Ուներ 486 տուն (3888 հոգի) հայ, 43 տուն (215 հոգի) քուրդ բնակիչ։

257(2). Սնաամ։ Մեծկերտի հարավ-արևելքում մեկ ժամ հեռավորության վրա էր գտնվում այս գյուղը, հիմնված երկու ձորի միջև։

Ուներ 25 տուն (200 հոգի) հայ, 90 տուն (450 հոգի) քուրդ բնակիչ։

258(3). Լազվան։ Գտնվում էր Բոլոմորի գետի ձախ ափին, երկու փոքր ձորերի միջև, հեռավորությունը մեկուկես ժամ էր։ Ուներ ս. Աստվածամայր անունով եկեղեցի։ Հայ՝ 20 տուն (160 հոգի), քուրդ՝ 15 տուն (75 հոգի)։

259(4). Թյումիրքաք։ Մեռնանի արագավազ ջուրը Բոլոմորի գետին միանալու տեղից քիչ վերև, Մեռնանի ջրի աջ ափին, Լազվանից հյուսիս մեկ ժամ հեռավորության վրա էր գտնվում այս գյուղը։ Ընկնում էր Ալան (Ալանանցիք) և Սուրան աշիրեթների տիրապետության շրջանակում։ Բնակիչները քրդեր էին՝ 260 տուն (1300 հոգի)։

260(5). Զիլֆ (Ցիլֆ)։ Մնձուրի և Բոլոմորիի ջրերը այս գյուղն առել էին իրենց թևերի մեջ և շրջապատի սարերի հետ կազմացրել շրջակա գյուղերից։

Ասլանան աշիրեթին պատկանող սահմանապահ այս գյուղն իր բնական դիրքի շնորհիվ պատկանում էր արևմուտքից Խութաց-ձորը պաշտպանելու սահմանված գյուղախմբին։ Գտնվում էր Թյումիրքաքից հյուսիս-արևելք երկու ժամ հեռավորության վրա։

Վարելահողը և պարտեզները գտնվում էին Բոլոմորիից եկող ջրի ափերին։ Հողը բարեբեր էր, մշակում էին ծխախոտ, ցորեն, դարի և կորեկ։ Նշանավոր էր այս գյուղի քիլուրը (ոլորն), որն օգտագործում էին լոբու տեղ և փոխանակում շրջակա գյուղերի այլ բերքերի հետ։

Ուներ 20 տուն (160 հոգի) հայ, 140 տուն (700 հոգի) քուրդ բնակիչ։

261(6). Գալե (Բերդ)։ Եթե Թիրիշմեկի հին բերդը անցյալում Մեծկերտը պաշտպանել է հարավից, ապա Գալե կոչված հին բերդը սահմանված է եղել մի կողմից Խութաց-ձորի կիրճը, մյուս կողմից՝ Մեծկերտը հյուսիսից պաշտպանելուն։

Գյուղը, որ հին բերդի անունով կոչվում էր Գալե, գտնվում էր Զիլֆի հյուսիսային կողմը ու թեև շատ մոտիկ էր նրան, ուներ լեռնային երկրներ և ճամփա չտվող ժայռեր, ուստի այդ տարածությունը կարելի էր անցնել երկուսուկես ժամում։

Հին բերդի ավերակները գտնվում էին գյուղի արևմտյան բարձունքում, Յուսուֆ-պապայի մեկ թևի ստորոտում։ Պատերի մի մասը մնացել էր անվթար։

Գյուղը հաստատված էր բերդի ստորոտում, դեղատեսիլ մի լեռնահովտում, կազմված էր 35 տուն (175 հոգի) քրդից ու պատկանում էր Յուսուֆան աշիրեթին, որին թուրքերը ավել էին «ասի» (ըմբոստ) մականունը։

Գյուղն ուներ լավագույն արոտատեղեր, որը նպաստավոր էր անասնաբուծության համար։ Այստեղի ձիերը թեև փոքրակազմ, բայց շատ դիմացկուն էին, մանավանդ վարժ լեռնային ճանապարհներին։ Հողագործությունը դրավում էր երկրորդական տեղ։

262(7). Շատո։ Յուսուֆ-պապա սարի տրևելյան դաղաթների ստորոտին թառած այս գյուղը համարվում էր անմատչելի ամրոց։ Ընկած էր Գալեից հյուսիս երկու ժամ հեռավորության վրա, պատկանում էր համանուն աշիրեթին։ Ուներ 180 տուն (900 հոգի) քուրդ բնակիչ։

263(8). Տերե։ Քրդերեն վանքաբնակ է նշանակում, թեև այդտեղ վանք չկար։

Գյուղը գտնվում էր Շատոյից տրևմուտք երեք ժամ հեռավորության վրա, հյուսիսային սարալանջից հոսող ջրի ձախ ափին։ Բնակիչները քրդեր էին՝ 30 տուն (150 հոգի)։

264(9). Յուսուֆան։ Շատոյից հյուսիս մեկուկես ժամ հեռու գտնվող Յուսուֆ-պապա սարի հյուսիսային գաղաթների արանքում ընկած, որպես համանուն աշիրեթի կենտրոնանիստ, այս գյուղը մեծ դեր էր խաղացել քրդական ու թուրքական մարտերի ժամանակ։

Ուներ 30 տուն (240 հոգի) հայ, 320 տուն (1600 հոգի) քուրդ բնակիչ։

265(10). Քենկեռլի։ Բալուի հյուսիս-արևելքում գտնվող այս գյուղի բնակչության մի մասը չհանդուրժելով թրքական տիրապետությունը և տեղական բեկերի ճնշումները, գաղթել էր ավելի բարձր լեռնային շրջաններ և հիմնել նույնանուն գյուղ։

Գրանցվող Քենկեռլին գտնվում էր Յուսուֆան

գյուղից արևմուտք երկու ժամ հեռավորության վրա։ Բնակիչները քրդեր էին՝ 60 տուն (300 հոգի)։

266(11). Շեյթանքիվե։ Անունը ժառանգել էր Հանդիպակաց այն քարայրներից, որ ժողովուրդը կոչում էր Շեյթան-Թեփե, ուր իրոք թե բնակվում էին սատանաներ և ուր մուտքն արգելված էր այն նամոզումով, որ սատանաները կարող են վնասել մարդկանց, մինչդեռ իրականում դրանք դալանի դինապահեստներ էին։

Նույն քարայրների հյուսիսային կողմի ժայռերի մեջ փորված փոքր մատուռի տերը (փիրը)՝ Զարիափանը, հսկում էր սատանաներին և թույլ չէր տալիս վնասել բնակիչներին։ Զարիափանը քրդերի դպշամամների առարկա զորավոր սուրբն էր և ուխտատեղի։

Գյուղը գտնվում էր Քենկեսիի արևմտյան կողմում, Մնձուրի սարերից հոսող մեծ ջրի աջ ափին երեք ժամ հեռավորության վրա և պատկանում էր Սուրբդան աշիրեթին։ Բնակիչները քրդեր էին՝ 120 տուն (600 հոգի)։

267(12). Վերի-Զմբրխ։ Գտնվում էր Շեյթան-Թեփեի արևմտյան կողմի սարալանջին հինգ ժամ հեռավորության վրա։ Այստեղ կար ս. Մինաս անունով եկեղեցի։ Գյուղից արևելք գտնվում էին հին գյուղի ավերակները և մի եկեղեցու փլատակներ։

Ուներ 16 տուն (128 հոգի) հայ, 20 տուն (100 հոգի) քուրդ բնակիչ։

268(13). Ղարարունար։ Այս շրջանում կային արհեստական հողաբլուրներ և հին դերեզմանների տապանաքարեր, դեպի Վերի-Զմբրխ գյուղը տանող արահետի արևմուտքում՝ երկու եկեղեցու փլատակներ, որոնցից մեկը կոչվելիս է եղել Տերունական։ Այդ էր ապացուցում խաչքարերի առանքում կիսովին շրջված սրբատաշ քարի ընթեռնելի արձանագրությունը։ Եկեղեցիների ավերակներից բավական վեր, սարալանջում գտնվում էին հին գյուղի ավերակները։

Ղարարունարը գտնվում էր Վերի և Վարի Զմբրխ գյուղերի միջև, առաջինից մեկուկես, երկրորդից երեք ժամ հեռավորության վրա։

Ուներ 20 տուն (160 հոգի) հայ, 180 տուն (900 հոգի) քուրդ բնակիչ։

269(14). Վարի-Զմբրխ։ Լեռնային շրջանի այս գյուղը պատկանում էր Մաղկերտի գյուղախմբին, գտնվում էր Ղարարունարից արևելք երեք ժամ հեռավորության վրա։ Ուներ 22 տուն (176 հոգի) հայ, 15 տուն (75 հոգի) քուրդ բնակիչ։

270(15). Սեղանք։ Գտնվում էր Մեծկերտից հյուսիս-արևելք, շրջկենտրոնին շատ մոտիկ, բայց ենթակա չէր օրվա իշխանությանը, այլ գտնվում էր Պախթիարան աշիրեթի ազդեցության տակ։ Գյուղից հյուսիս, լեռնաղոտու անմատչելի տեղում ընկած էր նույնանուն ավանը իր բերդով ու հարակից ամրոցների փլատակներով, ուր կային նաև իրարից բավական հեռու երեք եկեղեցու փլատակներ։

Նոր գյուղը հին ավերակներից երկուսուկես ժամ հեռու էր ընկած, Մնձուրից հոսող ջրի աջ ափին։ Ուներ 65 տուն (520 հոգի) հայ, 50 տուն (250 հոգի) քուրդ բնակիչ։

271(16). Էսրիկ։ Մեծկերտի արևմուտքից հոսող ջրերի արևմտյան հյուղի աջ ափին գտնվող այս գյուղի դիրքը լեռնային էր, հեռավորությունը բաղարից, տեղանքի դժվարության պատճառով, երկուսուկես ժամ։ Ուներ 25 տուն (200 հոգի) հայ, 35 տուն (175 հոգի) քուրդ բնակիչ։

272(17). Ահրիման։ Զարսանջակի գյուղերին սահմանակից Ահրիման գյուղը գտնվում էր Էսրիկից արևմուտք երկու ժամ հեռավորության վրա։ Ենթակա էր Պախթիարան աշիրեթին։ Ուներ 30 տուն (240 հոգի) հայ, 140 տուն (700 հոգի) քուրդ բնակիչ։

273(18). Պեկթաշ։ Մեծկերտից հարավ երեք ժամ հեռու, Էսրիկից հարավ-արևելք, ջրի աջ ափին էր գտնվում այս գյուղը։ Ուներ 20 տուն (160 հոգի) հայ, 85 տուն (425 հոգի) քուրդ բնակիչ։

274(19). Տերման։ Պեկթաշից արևմուտք երկու ժամ հեռու, Էսրիկից հարավ մեկ ժամ հեռու էր գտնվում լեռնարնակների այս գյուղը։ Անունը ժառանգել էր բնակիչների հանդուգն ու խիզախ խառնվածքից։ Բնակիչները քրդեր էին՝ 60 տուն (300 հոգի)։

275(20). Ընճրդակ։ Թեև Խոզաթի շրջանին ավելի մոտիկ, բայց աշխարհագրական դիրքի հետևանքով գյուղը պատկանում էր Մեծկերտի գյուղախմբին։ Ընճրդակը գտնվում էր Զմբրխ գյուղից արևմուտք երկու ժամ հեռավորության վրա։ Տեղանքը լեռնային էր, ճանապարհները՝ դժվարանցանելի։ Ուներ ս. Մինաս անունով եկեղեցի։

Ուներ 35 տուն (280 հոգի) հայ, 30 տուն (150 հոգի) քուրդ բնակիչ։

276(21). Տիլան-Օղլու (Դիլան-Օղլի)։ Շորտանի (Զարսանջակի շրջան) արևմտյան կողմը, Խութաց-ձորի արևմուտքում, ջրի աջ ափին էր գտնվում այս գյուղը։ Շորտանից Տիլան-Օղլու ճամփի տեղությունը, բնական արգելքների պատճառով, շատ ժամ էր։

Ուներ 15 տուն (120 հոգի) հայ, 25 տուն (125 հոգի) քուրդ բնակիչ։

* * *

Այսպիսով, Մեծկերտի շրջանում կար 21 բնակավայր, որից 14-ը՝ հայ ու քուրդ խառն, 7-ը՝ քրդաբնակ, զուտ հայաբնակ չէր մնացել։ Այդ բնակավայրերում ապրում էր 3149 տուն (18232 հոգի) բնակիչ, որից 829 տունը՝ հայ (6632 հոգի), 2320 տունը՝ քուրդ (11600 հոգի)։

VIII. ՁԱՐՍԱՆՋԱԿԻ ՇՐՋԱՆ

Շրջանը գտնվում էր արևմտյան Դերսիմի հարավում, Բերիի ջրի և Արածանի գետի սահմանագծում։ Հյուսիսում ընկնում էին Չմշկածագի, Խոզաթի, Մեծկերտի, արևելքում՝ Բալուի շրջանները, արևմուտքից Եփրատ գետն էր, հարավից՝ Արածանին։ Հյուսիս-արևելքից հարում էր Ղըզըլքիլիսեին ու Քղիին։ Շրջկենտրոնը Բերին էր, սակայն սկսում եմ Սաղման գյուղից, քանի որ այն ընկած էր շրջանի կենտրոնում։

277(1). Սաղման (Սահման)։ Արածանի գետի և Բերդակի հյուսիսում, Բերիի արևմուտքում, ներկա գյուղի հյուսիս-արևմուտքում գտնվում էր հայկական կործանված հին ավանը։ Սաղման գյուղը, որն ընկած էր Խոզաթի ջրի ձախ ափին, նախկինի մանրանկարն էր։ Այստեղ ապրում էին հայեր, բրդեր և նկվոր թուրքեր։ Վերջիններս ունեին նաև խճանկարուն մի մզկիթ, որը կարծվում էր, թե հայկական եկեղեցի է եղել և արաբների ժամանակ վերափոխվել է մզկիթի։ Գյուղը ենթակա էր Տեվրիկե-Ճամալան աշիրեթին։

Հայերը թեև փոքրաթիվ, բայց պահում էին իրենց ս. Սարգիս եկեղեցին։

Ուներ 136 տուն բնակիչ, որից հայ՝ 18 տուն (144 հոգի), քուրդ՝ 86 տուն (430 հոգի), թուրք՝ 32 տուն։

278(2). Զյումպիլ (Զամպաղ)։ Խոզաթից և Բերդրա սարերից հոսող երկու ջրի միացման տեղում, Սաղմանից հարավ-արևմուտք երեք ժամի վրա էր գտնվում այս գյուղը։ Ուներ 16 տուն (128 հոգի) հայ, 12 տուն (60 հոգի) քուրդ բնակիչ։

279(3). Պոյնե։ Սավայի հյուսիսային ու Եղրիվանի արևելյան կողմում, առաջինից մի ժամ, երկրորդից երկու ժամ հեռավորության վրա, Խոզաթից եկող ջրի ձախ ափին էր ընկած 35 տուն (175 հոգի) բնակչությամբ քրդական այս գյուղը։ Պատկանում էր Փիլվանքան աշիրեթին։

Սրան վիճակված էր ջրի եզրապահի դերը. պարտավոր էր հսկել և կենտրոնական Դերսիմի բրդական իշխանությանը լուր տալ բոլոր այն շարժումների մասին, որ կատարվում էին Խոզաթի վերին հոսանքում։

280(4). Աշխենիկ։ Զարիդանի հյուսիս-արևելյան և Պոյնեի հյուսիս-արևմտյան կողմում Զարոանջակի լեռնային շրջանի առաջին գյուղն էր սա, ուներ 25 տուն (200 հոգի) հայ, 40 տուն (200 հոգի) քուրդ բնակիչ։

Գյուղի դիրքը լեռնային էր, ընկած լեռնալանջի ստորոտում։ Զարիդանից Աշխենիկ ճամփի տևողությունը մեկուկես ժամ էր, Պոյնեից՝ մի ժամ, իհարկե տեղ-տեղ դժվարանցանելի էր։

Այս գյուղի հայերն առավելապես արհեստավորներ էին՝ դարբիններ, երկաթագործներ, բարկոփներ և ձուլողներ։

Գյուղի արևելյան կողմում գտնվում էր կապարի նմանող մետաղի հանքահոր, որից սատանում էին կապար։ Արհեստավորների մեջ ամենամեծ համբավը վայելում էր չմշկածագցի գինագործ Խաչո վարպետը, որին անվանում էին Վարպետ։

Աշխենիկն ուներ արդասարեր վարելահող և մեծ արոտատեղեր։ Գյուղի արևելյան կողմում, հանքահորից բավական բարձր, կային անանուն եկեղեցու փլատակներ։

281(5). Զարիզան (Զարզան)։ Եղրիվանից հյուսիս-արևմուտք հավիվ մի ժամ հեռու, զետի Զարսանջակ տանող ճամփի վրա էր գտնվում Զարիդան աշիրեթի կենտրոնական այս գյուղը։ Ուներ մոտ 250 տուն (1250 հոգի) քուրդ բնակիչ, որի պարտականությունն էր հսկել գետի Խոզաթ կամ Բալու տեղի ունեցող շարժումներին։

Զարիդանի գիրքը կիսալեռնային էր, բայց ապահով, թիկունքի լեռները ինքնապաշտպանության բնական ամրոցներ էին։ Այս աշիրեթին վիճակված էր միշտ առաջին գնդակն արձակել թշնամու վրա և կռվի ազդանշանը տալ։ Ասվում էր, թե արշավանքների ժամանակ լեռից-լեռ էին ձայնում՝ իբր չարերն են գալիս, ուստի գյուղն անվանել էին Զարիդան։ Հիմնադրման թվականը հայտնի չէր։ Լեռնածոցի քարաշեն հին եկեղեցու ավերակներում ոչ մի արձանագրություն կարելի չէր գտնել, իսկ գյուղի հյուսիսային կողմի մատուռի գոյությունը և մի քանի պատնեշների ավերակների մնացորդները ոչինչ չէին ասում իրենց հիմնադրման թվականների մասին։ Զարը եկած ու կործանած էր գյուղը, սակայն ե՞րբ և ինչո՞ւ, ոչ որ չգիտեր, բայց և այնպես Զարիդանը կար ու կմրնար իր աշիրեթով, որը տարածված էր ինքնան-

կախ և կիսանկախ Դերսիմի գանագան շրջաններում։

Զարիգանցիների գլխավոր զբաղմունքը հողագործությունն ու անասնապահությունն էր։

282(6). Նդրիվան (Զերվան)։ Արածանիի աջափնյա բրդական շրջանի երկրորդ գյուղն էր, ընկած Սավայից դեպի արևմուտք մեկուկես ժամ հեռու, դեպի սարայանց տանող արահետի հյուսիսային կողմում։ Ուներ 60 տուն (300 հոգի) բուրդ բնակիչ։

Կար երեք եկեղեցու ավերակ, որոնցից մեկը՝ գյուղի մեջ, ուր գտնվում էր նաև Դանիել (անմահություն) աղբյուրը, որը բխում էր ավերակ եկեղեցու խորանի տակից։ Ջուրը հողե փողրանքներով փոխադրել էին դալարաղեղ մի վայր, ուր և կառուցվում էին վարդավառի նավասարդյան խաղերը։

Գյուղն ուներ պտղատու ծառերի, խաղողի այգիների և բանջարանոցների առանձին հողանդակներ ու վարկահող։ Արտերը գտնվում էին տուս-վերայուկս գյուղի արևելյան ու հարավային կողմում և ջրարբի էին։ Անասնապահությունը սահմանափակ էր։

283(7). Սավա։ Դեպի խողաթ երկարող խուզու ձախ, խողաթի ջրի աջ ափի սարահարթում էր գտնվում այս գյուղը։ Ուներ մոտ 80 տուն (400 հոգի) բնակիչ, որոնք չնայած մարուր բրդերեն էին խոսում, բայց այլ կերպ էին արտասանում ճ, ծ, շ հնչյունները։ Այսպես՝ ճ-ին փոխարինում էր ծ-ն՝ ճիրան-ը (զրացի) դառնում էր ծիրան, ճնճի-ն (կին)՝ ծնճի և այլն։ Իսկ բուն շ-ն հնչում էին ս՝ Ներքեր (գյուղի և աշիրեթի անուն)՝ Սեքեր, շեմեր (շարար)՝ սեմեր, փաշա՝ փասա և այլն։ Ջ-ն հնչում էին գ՝ շն-ն (տուն) դառնում էր գն, Զարգան-ը (աշիրեթի անուն)՝ Ցարգան և այլն։

Ենթադրվում էր, թե այս գյուղի բնակիչները նախապես հույներ են եղել, ապա հայացել են, ավելի ուշ՝ բրդացել։ Այս ենթադրությունը հիմնավորվում էր նրանով, որ դեռևս կանգուն էր մնում պատմական վկան՝ ս. Մարգոսի եկեղեցին, իսկ հույները ոչ միայն չեն հավատում, այլև ասում են սուրբ Մարգոսին։ Ըստ երևույթին, գյուղի նախկին բնակիչները հայերի հետ ձուլվելուց հետո, կառուցել են նաև այս եկեղեցին, բայց չեն կարողացել ուղղել իրենց լեզվի հնչականությունը և այն հետագայում փոխանցել են բրդերին։

Այս գյուղի բրդերի գլխավոր զբաղումը ադոբեղտությունն էր, ունեին լավ գործող ջրաղացներ ու դիպսեր. աղում էին նաև շրջակա գյուղերի աղունը, ծեծում բլղուրն ու ձավարը։ Շինում էին ոչ միայն իրենց, այլև ուրիշ գյուղերի ջրաղացքարերը և դիպի քարերը։ Ունեին լավ մշակված պարտեղներ, բանջարանոցներ ու փեթակներ, բավարար վարելահող և բիչ քանակությամբ կաթնատու կենդանիներ։

284(8). Սեզիրե։ Զարիգանի արևմուտքում մեկ ժամ հեռավորության վրա էր գտնվում այս գյուղը։ Բնակիչները բրդեր էին՝ 15 տուն (75 հոգի)։

285(9). Ինպրան։ Զմշկածաղից հոսող ջրի աջ ափին, Մեղրեից արևմուտք մեկուկես ժամ հեռու էր գտնվում Քուրեշան աշիրեթին պատկանող այս գյուղը։ Բնակիչները բրդեր էին՝ 20 տուն (100 հոգի)։

286(10). Աչգան (Աչիկան կամ Աչեկ)։ Արածանիի ձախ ափին գտնվող Դերսիմի սահմանապահ այս գյուղը, որ խարբերդից դեպի Զմշկածաղ տանող ճամփի ստաջին գյուղն էր, գտնվում էր Ինպրանից հարավ մեկ ժամ հեռու։ Բնակիչները բրդեր էին՝ 30 տուն (150 հոգի)։

287(11). Տիլալի։ Արածանի գետի աջ ափին, Ինպրանից հարավ-արևմուտք երկու ժամ հեռու էր ընկած այս գյուղը։ Բնակիչները բրդեր էին՝ 90 տուն (450 հոգի)։

288(12). Վարի-Աչխենիկ։ Տիլալիից հարավ-արևմուտք երկու ժամ հեռու, Լեռնակա սարերից հոսող ջրի ձախ ափին էր գտնվում։ Բնակիչները բրդեր էին՝ 35 տուն (175 հոգի)։

289(13). Փիրան։ Ինպրանից արևմուտք մեկուկես ժամ հեռու, հյուսիսային սարերից հոսող ջրի աջ ափին էր գտնվում։ Բնակիչները բրդեր էին՝ 130 տուն (650 հոգի)։

290(14). Ջրտակ։ Աշխենիկից հարավ-արևմուտք մեկ ժամ հեռու, Արածանի գետի աջ ափին էր գտնվում։ Բնակիչները բրդեր էին՝ 30 տուն (150 հոգի)։

291(15). Քեմրան։ Ջրտակից հյուսիս-արևմուտք մեկ ժամ հեռու էր գտնվում։ Բնակիչները բրդեր էին՝ 75 տուն (375 հոգի)։

292(16). Սինան։ Քեմրանից արևմուտք մեկուկես ժամ հեռու էր գտնվում։ Բնակիչները բրդեր էին՝ 60 տուն (300 հոգի)։

293(17). Սարտիկ (Սարտակ)։ Սինանից հյուսիս մեկուկես ժամ հեռու, ձորերի միջև էր ընկած այս գյուղը։ Արևելյան ձորի ձախ ափի Պոդ-Թեմի կոչվող բլուրի ստորոտում կային հին եկեղեցու ավերակներ։ Բնակիչները բրդեր էին՝ 25 տուն (125 հոգի)։

294(18). Սողնակ[1]: Գտնվում էր Սարտիկից հյուսիս մեկուկես ժամ հեռու, պատկանում էր Գուրիշան աշիրեթին։ Բնակիչները քրդեր էին՝ 45 տուն (225 հոգի)։

295(19). Սելեկ: Գյուղի ձորափի արահետի մոտ կային երկու եկեղեցու փլատակներ, իսկ երրորդը, ս. Սարգիս անունով, քարափոր մի մատուռ էր բարձրադիր կարմիր ապառաժների կենտրոնում։ Գյուղը գտնվում էր Ծիպրանից հյուսիս մեկուկես ժամ հեռու։ Բնակիչները քրդեր էին՝ 35 տուն (175 հոգի)։

296(20). Փիլ-Վանք (Մեծ Վանք): Գտնվում էր Սկեկից հյուսիս-արևմուտք մեկ ժամ հեռու, Զմշկածաղի ջրի աջ ափին։ Պատկանում էր Փիլվանքան աշիրեթին։ Գյուղից արևմուտք, Քիմերեսիա (սև բար) կոչվող ապառաժների ստորոտում կային երեք եկեղեցու փլատակներ։ Բնակիչները քրդեր էին՝ 120 տուն (600 հոգի)։

297(21). Մեվլուտ: Փիլվանքան աշիրեթի դաշնակից Սեվլուտան աշիրեթի անունը կրող այս գյուղը գտնվում էր Փիլ-Վանքի արևելքում, մի ժամից քիչ ավելի հեռավորության վրա։ Բնակիչները քրդեր էին՝ 60 տուն (300 հոգի)։

298(22). Խերան: Մեվլուտից հյուսիս-արևմուտք մեկ ժամ հեռու, բարձրադիր լեռների ստորոտում, ջրի աջ ափին էր գտնվում այս գյուղը։ Բնակիչները քրդեր էին՝ 75 տուն (375 հոգի)։

299(23). Կամար (Կամարիկ)։ Կամարակապ ժայռերի ստորոտում, երկու լեռնագագաթների տրանքում բացված ծոցի սրտին էր ծվարած այս գյուղը։ Ավանդաբար պատմվում էր, թե այս գյուղի հայ բնակչության մի մասը գաղթել է Սեբաստիայի շրջան և հիմնել իր նոր գյուղը, Կամարիկ անվամբ, որը հնչյունափոխվելով, դարձել է Կեմերեկ (Կեսարիայի մոտերքում էր)։

Արևելյան լեռնագագաթների սապատավոր բարձունքին կային հին ամրոցի փլատակներ։ Դրանց ստորոտում, բարձրադիր մի ժայռի կրծքից դուրս ժայթքող սառնորակ աղբյուրը, որ կոչում էին զոդի աղբյուր, քրդերի պաշտամունքի առարկա սրբավայր էր։ Աղբյուրի աջ ու ձախ կողմերում ս. Գևորգ և ս. Սարգիս եկեղեցիների փլատակներն էին։ Գյուղը գտնվում էր Խերանից արևմուտք երկուսուկես ժամ հեռավորության վրա։ Բնակիչները քրդեր էին՝ 50 տուն (250 հոգի)։

300(24). Տիլպեր: Կամարից արևմուտք մեկուկես ժամ հեռու, հյուսիսից հոսող փոքր ջրի ձախ ափին, երկու լեռնագագաթի տրանքում էր գտնվում այս գյուղը։ Գյուղի արևմտյան բարձունքի ստորոտում կային կիսակործան եկեղեցու ավերակներ, որին կից գերեզմանատան տապանաքարերի մի մասը և տասնից ավելի խաչքարեր կիսովին ծածկված էին խճաքարերով։ Բնակիչները քրդեր էին՝ 25 տուն (125 հոգի)։

301(25). Վերի-Աշխենիկ: Գյուղի արևելքում, Խոզաթի ջրի աջ ափին, Քիմերեսուր (Կարմիր բար) կոչվող ժայռերի ծոցում գտնվում էին հին ամրոցի փլատակներ, որի շրջակայքում կային խաչքարեր և եկեղեցու ավերակների մնացորդներ։ Եկեղեցին կոչվելիս է եղել ս. Բաղավոր, այդ էր վկայում մի սրբատաշ քարի վրա անվթար մնացած արձանագրություն։ Գյուղը գտնվում էր Խերանից հյուսիս-արևելք մեկուկես ժամ հեռու, ձորը շրջապատող բարձրադիր ապառաժների ստորոտում։ Բնակիչները քրդեր էին՝ 40 տուն (200 հոգի)։

302(26). Պատոան: Ընկած էր երկու մեծ ժայռերի պատռվածքի մեջ, ձորերի խաչաձևման ստորոտում, Աշխենիկից հյուսիս-արևմուտք երկու ժամ հեռավորության վրա։ Արահետն անցնում էր ձորամիջից և բարձրանում վեր։ Դիրքը լեռնային էր, ուներ տաք ջրի երկու հանքային աղբյուր, որոնք բխում էին ժայռի պատռվածքի ստորոտից և մի քիչ վար անհետանում խճաքարերի մեջ։

Բնակիչները, որ քրդեր էին, սերել էին մի տնից և բազմանալով հասել 60 ընտանիքի (300 հոգի)։

Պատոանն ուներ կիսակործան մի տաճար Հաղրեթի-Խրդրը (ս. Սարգիս) անունով, որը գտնվում էր տաք աղբյուրների վերևը և նկատվում էր աղբյուրների պաշտպան փիրը։

303(27). Տավուտլի: Աղուշանան աշիրեթին պատկանող այս գյուղը գտնվում էր Նորդեղի սարերից ծագող ջրի և Խոզաթի գետի տրանքում, Խերանից արևելք, Մեվլուտ գյուղից հյուսիս-արևելք երկուսկան ժամ հեռավորության վրա։ Բնակիչները քրդեր էին՝ 40 տուն (200 հոգի)։

304(28). Պիրան (Պերան): Տավուտլիից հյուսիս-արևելք մեկուկես ժամ հեռու, Նորդեղի սարերից հոսող գետակի ձախ ափին էր գտնվում այս գյուղը։ Բնակիչները քրդեր էին՝ 35 տուն (175 հոգի)։

---

[1] Զարսանջակի և Դերսիմի արևմտյան սահմանի մոտ գտնվող այս և վերի յոթ գյուղերը արձանագրեցի Զարսանջակի սահմաններին պատկանող գյուղախմբի մեջ, որպեսզի առանձին շրջան չկազմեմ, որովհետև դրանք (Արևմտյան Դերսիմի արևմտյան մասի գյուղերը՝ Ճիպրան, Տիլպի, Աշխենիկ. Փիրան, Ջրտակ. Քերման, Սինան, Սողնակ, որոնք Զարսանջակին չէին պատկանում, ինչպես նաև Տիլպիրը և Կամարը) վրիպել էին ուշադրությունից։

305(29). Վարի-Խանար: Պիրան գյուղից հյուսիս-արևելք երկու ժամ հեռու, Սվանդ գյուղից արևմուտք մեկուկես ժամ հեռու, Խոզաթի երկու ջրերի ակունքին էր գտնվում այս գյուղը, որի ստորոտում կային կիսակործան եկեղեցու փլատակներ: Ուներ 35 տուն (280 հոգի) հայ, 10 տուն (50 հոգի) բուրդ բնակիչ:

306(30). Նորգեղ: Վարի-Խանարից հյուսիս-արևմուտք մեկուկես ժամ հեռու էր գտնվում այս գյուղը: Ուներ ս. Գեորգ անունով եկեղեցի: Գյուղի արևելյան կողմում, գետի ձորափ տանող արահետի հյուսիսում գտնվում էին ս. Նշան անունով եկեղեցու փլատակները, որի խաչքարերի մի մասը և վեմ բարձ կիսով չափ ծածկված էին խճարարիով: Ուներ 20 տուն (160 հոգի) հայ, 12 տուն (60 հոգի) բուրդ բնակիչ:

307(31). Վերի-Խանար: Ապառան աշիրեթի տոհմամոլորության տակ գտնվող այս փոքր գյուղը կարողացել էր գոյություն պահպանել լեռնային այս շրջանում տարածված բրդական գյուղերի մեջ: Գտնվում էր Նորգեղից հյուսիս-արևելք մեկ ժամ հեռու: Գյուղի արևմտյան ձորափին կային հին եկեղեցու փլատակներ: Ուներ 16 տուն (128 հոգի) հայ, 8 տուն (40 հոգի) բուրդ բնակիչ:

308(32). Ալուղալ (Մեծ բերդ): Հեռում այս բերդը Խոզաթի շրջանի ամրությունների նախադուռն է եղել: Դրանց միջև գոյություն ունեցող գետնուղին, թեև ծածկված, դեռևս պահպանում էր իր գոյությունը: Գտնվում էր Նորգեղից հյուսիս-արևմուտք, երեք ժամ հեռու:

Գետի լեռնակա սարերի գագաթները տանող ճամփի արևմտյան կողմում, երկու ձորերի միջև գտնվող երկու եկեղեցիների փլատակները, խաչքարերն ու տապանաքարերը և նրանց վերևի բարձունքի կործանված հին ամրոցի ավերակները գրավոր ապացույցներ էին, որ նախկինում հոծ բազմությամբ հայեր են ապրել այս շրջանում: Գյուղի բնակիչների մի մասը պահում էր հայկական տոհմանունները, աղավաղված ձևով, այսպես՝ Թոռնն Պատտ Վերի Վելի (Գայլ Պատտարի թոռ Վելի), Թոռնն Սեղ Էննկի Տիզ (Գայլ Սարգսի թոռ Տիզրան), Թոռնն Ուսեֆի Գեոի Ուսո (Խալ Հովսեփի թոռ Հուսիկ) և այլն:

Ուներ 20 տուն (160 հոգի) հայ, 80 տուն (400 հոգի) բուրդ բնակիչ:

309(33). Սիրպիհան (Սուրբ Օհան): Պայպիից արևելք մոտ երկու ժամ հեռու, Խոզաթ տանող ճամփի ձախ կողմում, լեռնալուրների միջև տարածված էին 5—15 անանոց տասներկու գյուղակներ (գոմահանդեր), որոնք միասին կազմում էին մի գյուղ:

Ամբողջ այս ծավալուն գյուղը կառավարվում էր մի մարդու կողմից, որն իրենց նախահայրերի շառավիղն էր և նույն տան անդրանիկ դավակը: Պատմում էին, թե այստեղ նախապես գոյություն է ունեցել մի մեծ գյուղ՝ Սիրպիհան անունով, որը զարեր առաջ կրակի է տրվել և բնակչությունն էլ ջնջվել բոլորովին, բացի մի ընտանիքից, որը թարնված է եղել Սիրպիհանի քարափոր մատուռում: Այդ ընտանիքը վերականգնել է իր տունը Սուրբ-Օհան մատուռի ստորոտում, որից սերել են գոմահանդերի բնակիչները: Ապրում էին շատ համեստաշուք և կոկում հավասարաբար: Այդ շրջանից անցնող մեկը եթե պատահաբար հանդիպեր Սիրպիհանի տոհմակատարության օրին, կարծելու էր, թե գտնվում է պատերազմի ճակատում, պարարված մարտիկների ընդհանուր շրջագծի մեջ, որովհետև գյուղի ամեն կողմից կրակոցների ձայն էր լսվում:

Սիրպիհանի գոմահանդերի բնակչության ընդհանուր թիվը 120 ընտանիքի էր հասնում, որից 45-ը (360 հոգի) հայ էին, 75-ը (375 հոգի)՝ բուրդ:

Սրանց գլխավոր զբաղմունքը ձկնորսություն, որսորդություն, մասամբ էլ անասնապահություն էր: Վարելահողի պակասության հետևանքով անհրաժեշտ հացահատիկը փոխանակությամբ էին ձեռք բերում, թեև սեղ-տեղ կորեկ, գարի և ցորեն էլ ցանում: Շրջակա արագավազ ջրերում համեղ իշխանաձուկ էր լինում:

Բնակչության գլխավոր պարտականությունն էր հսկել իրենցից անցնող բոլոր ճամփաներին:

310(34). Երկան: Նորգեղի և Խաճարի հյուսիս-արևմուտքում, Խոզաթի ջրի ձախ ափին գտնվող այս գյուղը բաղկանում էր երեք գոմահանդից (մեղրն): Նախկինում բազմամարդ այս գյուղը կործանվելուց հետո, ողջ մնացածներից փոքրաթիվ հայեր հիմնել էին նոր բնակավայրը, պահպանելով գյուղի հին անունը: Հին գյուղի բնակիչների մի մասն էլ հեռացել էր Դերսիմից և հաստատվել գետի Երդնկա նայող Մնձուրի լեռնադագաթների ստորոտում, Եփրատ գետի ձախ ափին, իրենց գյուղը դարձյալ կոչելով Երկան և կառուցել ս. Աստվածածնոր եկեղեցին՝ հին եկեղեցու անունով: Գրանցվող Երկան գյուղն էլ ուներ նույնանուն եկեղեցի, իսկ հին գյուղի կործանված ս. Աստվածածնոր եկեղեցուց բիչ վերև գտնվում էին ս. Թորոսի եկեղեցու փլատակները, որի արև-

վրայոն բարձունքին մնում էին նաև հին գերեզմանատան տապանաքարեր։

Երկանից Խաճար ճամփի տեղությունը մեկուկես ժամ էր։

Ուներ 12 տուն (96 հոգի) հայ, 20 տուն (100 հոգի) քուրդ բնակիչ։

311(35). Լուստարիչ։ Երկան գյուղից հյուսիս, Խաճարից հյուսիս-արևմուտք էր գտնվում այս գյուղը, որը նախկինում եղել էր գիտության և լույսի տարածիչ։ Հավանաբար, Լույս-տարածիչը ժամանակի ընթացքում աղավաղվելով կազմել է գյուղի անունը։ Ուներ փոքր դպրոց և ս. Հակոբ անունով եկեղեցի։

Գյուղի հյուսիսային կողմի դպրոցներից մեկի ստորերկրյա ամրություններից բացի, բլուրի շրջակայքում գտնվող մի ամրոցի և այլ կառույցների փլատակները կենդանի վկաներ էին բլուրի ընդերքում գտնվող հուշարձանների։

Ավանդաբար պատմվում էր, թե Իսիդալե բերդը Ուլուդալե բերդի և Լուստարիչի արևելքում գտնվող Բլրաբերդի հետ կապել են մի պաշտպանական եռանկյուն։

Բացի գյուղից դուրս գտնվող Երեք Մանկունք կիսավեր տաճարի մնացորդներից, Բլրաբերդի հյուսիսային կողմում կային վանքի կամ ամրոցի, դուցե և դպրոցի շենքերի փլատակներ։

Ըստ տեղացիների վկայության, Լուստարիչի Բլրաբերդի ավերակներում՝ Չախ-չախ (կամ Շախ-շախ) կոչվող ապառաժներում բնակվում էին եղջերուվոր օձեր, որոնց թագավորը կամ թագուհին, միացած Բալուի Սուգե-Մոռանի (օձերի քաղաք) օձերին, մի քանի տարին մեկ անգամ պատերազմում է Քդիի արևելքում գտնվող Աժդահասարի (Օձտսար) օձերի հետ[1]։

Երկանից Լուստարիչ ճամփի տեղությունը մեկուկես ժամ էր։

Ուներ 30 տուն (240 հոգի) հայ, 10 տուն (50 հոգի) քուրդ բնակիչ։

312(36). Թանց։ Խողաթի անմիջական սահմաններում գտնվող և վարչականորեն Խողաթին պատկանող այս գյուղը թեմական կարգով ենթարկվում էր Զարսանջակի առաջնորդարանին, ուստի արձանագրվում է այս շրջանի գյուղախմբում։

Լուստարիչից հյուսիս մեկ ժամ հեռու գտնվող այս գյուղն ուներ ս. Սարգիս անունով եկեղեցի, իսկ գյուղի արևելյան կողմում կային հին եկեղեցու ավերակներ։ Ուներ 30 տուն (240 հոգի) հայ, 20 տուն (100 հոգի) քուրդ բնակիչ։

313(37). Պալչեր (Պալ-Նեհիր)։ Նախկին Մեղրաբաղաք բաղմամարդ ավանի մասին ավանդություններ շատ կային։ Ըստ քրդերի պատմածների, ժամանակին տասը հազար, իսկ ըստ հայերի՝ վեցից-ութ հազար բնակիչ ունեցած այս բնակավայրը շրջանի վաճառաշատ կենտրոններից մեկն է եղել։ Ասվում էր նաև, թե Մեղրաքաղաքը պաշտպանվելիս է եղել Լուստարիչում գտնվող ամրությունների կողմից։ Գյուղից դուրս, ընդարձակ տարածության վրա էին գտնվում հին քաղաքի ավերակները, ուր կային չորս եկեղեցու փլատակներ։ Դրանց սրբատաշ քարերի արձանագրություններից պարզվում էր, որ եկեղեցիներից երեքը կոչվելիս են եղել ս. Սարգիս, ս. Գրիգոր Լուսավորիչ և ս. Փրկիչ։

Հին քաղաքի ավերակների շրջապտտում կար ավելի քան հարյուր ակնոցրյուր։

Գյուղի արևմուտքից հոսող, Խողաթի արևելյան ձորի արտասվաղ ջուրը այնտեղ, ուր կեռման էր տալիս գետի կործանված հին քաղաքը, մոտավորապես հարյուր մետր բարձրաղիր ժայռից վար էր թափվում և կազմում Դերսիմի լեռնաշխարհին հատուկ բնական գեղեցկությամբ օժտված աղմկահույզ ջրվեժ։

Գյուղն ուներ ս. Սարգիս անունով մի եկեղեցի, որ հնի վերանվանումն էր։ Գյուղը զանվում էր Սուրբ-Օհանից հյուսիս երկու ժամ հեռավորության վրա։ Ուներ 35 տուն (280 հոգի) հայ, 30 տուն (150 հոգի) քուրդ բնակիչ։

314(38). Խոնեկ։ Խողաթի, Մեծկերտի և Զարսանջակի սահմանագծերում պահակի դեր կատարող քրդաբնակ այս գյուղը թեև մտնում էր Խողաթի վարչական շրջանի մեջ, բայց իրականում գտնվելով Զարսանջակի շրջանի հյուսիսային մասում տիրապետող Թերենիքան աշիրեթի տիրապետության տակ, փաստորեն մտնում էր Զարսանջակի ազդեցության գոտու գյուղախմբի մեջ։ Խոնեկը գտնվում էր Պալչերից հյուսիս-արևելք մեկուկես ժամ հեռավորության վրա։ Ուներ 75 տուն (375 հոգի) քուրդ բնակիչ։

315(39). Վերի-Հավսիկ։ Սուրբ-Օհանի հարավում մեկուկես ժամ հեռու, ջրի ձախ ափին էր գտնվում այս գյուղը։ Ուներ ս. Մինաս անունով եկեղեցի, 25 տուն (200 հոգի) հայ, 15 տուն (75 հոգի) քուրդ բնակիչ։

316(40). Ղայաճին (Ղայաշին)։ Տեվրեշ-ճեմտյան աշիրեթին պատկանող այս գյուղը գտնվում էր Վերի-Հավսիկից արևելք մեկուկես ժամ հեռու։

---

[1] Իբրև 1913-ին հեռվից ականատես եմ եղել Աժդահասարի օձերի ճակատամարտին։

Ուներ ս. Աստվածածին եկեղեցի, 35 տուն (250 հոգի) հայ, 20 տուն (100 հոգի) քուրդ բնակիչ։

317(41). Սվեռոյ։ Վարի-Հավսիկից հյուսիս մեկ ժամ հեռու, Ղայաճինից հարավ-արևմուտք երկուսուկես ժամ հեռու գտնվող այս գյուղն ուներ սեփական գպրոց և ս. Հակոբ անունով եկեղեցի։ Ընկած էր խոզաթից հոսող ջրի աջ ափին։ Առափնյա ապառաժների գագաթին գրոշմված էին ս. Սարգսի ձիու պայտերի փոսիկները՝ այդպես էին հավատացած անգացի հայ ու քուրդ բնակիչները և ուխտի էին գնում Հաղբեթի-Խրդրի սրբավայրին։

Հայերի մեծամասնությունը արհեստավոր էր, կային նաև լավագույն ծիսատարազներ, պարապում էին խոզաթի դեպի մի ափից մյուսը բեկեներով (ականավ) փոխադրություններ կատարելով։

Ուներ 46 տուն (368 հոգի) հայ, 32 տուն (160 հոգի) քուրդ բնակիչ։

318(42). Վարի-Հավսիկ։ Սաղմանից հյուսիս, Սվեռոյից հարավ մեկ ժամ հեռու, խոզաթի ջրի ձախ ափին էր գտնվում այս գյուղը։ Ուներ ս. Անանուն անունով եկեղեցի, 22 տուն (176 հոգի) հայ, 10 տուն (50 հոգի) քուրդ բնակիչ։

319(43). Ջերտան։ Ջարսանջակի հյուսիսի լեռնային գյուղերի մեջ էր մտնում Տեվրեշ-ճեմալան աշիրեթին պատկանող բրդարնակ այս գյուղը։ Գտնվում էր Ղայաճինից արևելք երկու ժամ հեռավորության վրա։ Գյուղի հյուսիսային գագաթների ստորոտում կային հին եկեղեցու փլատակներ, իսկ ավելի բարձր՝ մեծ գերեզմանատուն խոշոր տապանաքարերով։

Ուներ 70 տուն (350 հոգի) բնակիչ։

320(44). Կորճան։ Ջերտանից հարավ մեկուկես ժամ հեռավորության վրա էր գտնվում այս գյուղը, որն ուներ ս. Աստվածածին անունով եկեղեցի, 20 տուն (160 հոգի) հայ, 10 տուն (50 հոգի) քուրդ բնակիչ։

321(45). Խարեսիկ (Հարսի կամ Հարսիկ)։ Սաղմանից հյուսիս-արևելք, Կորճանից արևմուտք մեկուկես ժամ հեռավորության վրա էր գտնվում այս գյուղը, որի Մերձակա երկու գագաթների արանքում կային հին ամրոցի փլատակներ։ Գյուղն ուներ ս. Աստվածածին անունով եկեղեցի։ Գյուղի հայ բնակիչները բաջամարտիկ կովողների համբավ էին վայելում։

Ուներ 52 տուն (416 հոգի) հայ, 25 տուն (125 հոգի) քուրդ բնակիչ։

322(46). Ավ-Շաքար։ Խարեսիկից հարավ մեկ ժամ հեռու, Սաղմանից արևելք էր գտնվում այս գյուղը, որն ուներ ս. Գևորգ անունով եկեղեցի. 36 տուն (288 հոգի) հայ, 10 տուն (50 հոգի) քուրդ բնակիչ։

323(47). Սմախ։ Ավ-Շաքարից հարավ-արևմուտք մեկուկես ժամ հեռու, Սաղմանից արևելք մեկ ժամ հեռու էր գտնվում այս գյուղը։ Ուներ 15 տուն (120 հոգի) հայ, 8 տուն (40 հոգի) քուրդ բնակիչ։

324(48). Բաշաղակ (Փաշա-վանք, Փոսի-վանք)։ Մեռիմեկից հյուսիս, Սմախից հարավ-արևմուտք մեկուկես ժամ հեռու էր գտնվում այս գյուղը։ Հիմնված էր Բերդրա սարերի հյուսիսային գագաթներից ծագող ջրի աջ ափին։ Բաշաղակը Բերդակից հետո համարվում էր Ջարսանջակի արևմտյան մասի հաջորդ հայաշատ գյուղը, ուներ լավագույն գպրոց և ս. Սարգիս անունով եկեղեցի։ Ս. Հովանու վանքը ավերակ էր, բայց ժամանակին թեմի հարուստ վանքերից էր եղել։ Գյուղի արևմտյան սարալանջին կային երեք եկեղեցու ավերակներ։ Ուներ 125 տուն (1000 հոգի) հայ, 30 տուն (150 հոգի) քուրդ բնակիչ։

325(49). Վասկերա (Վասակակերտ)։ Բաշաղակից հարավ-արևելք, Մեռիմեկից հյուսիս-արևելք երկուական ժամ հեռավորության վրա էր գտնվում կործանված Վասակակերտ բաղարի անունով շինված Վասկերտ գյուղը։ Հին բնակավայրի ավերակները նորից կես ժամ հեռավորության վրա էին ընկած։ Այդտեղ կային երկու եկեղեցու փլատակներ, մեկը ս. Մարիամն էր, գեղեցիկ էկեղեցի, մյուսը՝ Քառասուն Մանկունը։

Վասկերա գյուղն ուներ ս. Թորոս անունով եկեղեցի։ Գյուղի արևմտյան կողմի ս. Վարվառ եկեղեցում թաղված էին մագաղաթներ և եկեղեցական անոթներ։ Վասկերար շրջապատող բարձրադիր ժայռերում կային բնական և արհեստական քարայրներ, որոնք միմյանց հետ կապված էին դեռնուղիներով։

Ուներ 60 տուն (480 հոգի) հայ, 25 տուն (125 հոգի) քուրդ բնակիչ։

326(50). Մեռիմեկ։ Վասկերից հարավ-արևմուտք մեկուկես ժամ հեռու, Բերդակից հյուսիս-արևելք էր գտնվում Մեռիմեկ գյուղը, որն ուներ ս. Հովհաննես անունով եկեղեցի։ Բնակիչները գաղթել էին դանադան վայրեր և գյուղում մնացել էին հաղիվ 20 տուն (160 հոգի) հայեր, որոնց մի մասը հայացած ասորիներ էին։

327(51). Վայնա (Վանա)։ Բաշաղակից ու Մեռիմեկից հյուսիս-արևմուտք մեկուկեսական ժամ հեռու, Բերդրա սարերից հոսող ջրի աջ ափին էր գտնվում այս գյուղը, ուր կար ս. Գևորգ անունով եկեղեցի։ Ուներ 16 տուն (128 հոգի) հայ, 15 տուն (75 հոգի) քուրդ բնակիչ։

328(52). Մեռնան։ Վայնայից հարավ-արևմուտք մեկ ժամ հեռու, Բերդրա սարերի ստորոտում էր գտնվում այս գյուղը, որի արևմտյան բարձունքների ստորոտում էին ընկած ս. Մինասի տաճարի փլատակները։ Այս գյուղի նախկին հայ բնակիչները արտագաղթել էին և Դերսիմի հյուսիսային մասում հիմնել նոր գյուղ։ Բնակիչները քրդեր էին՝ 30 տուն (150 հոգի)։

329(53). Հաղդար։ Մեռնիմեկից հարավ-արևմուտք, Մեռնանից հարավ-արևելք, Թիլից հյուսիս մեկական ժամ հեռու էր գտնվում այս գյուղը։ Ուներ 25 տուն (125 հոգի) քուրդ բնակիչ։

330(54). Թիլ։ Այս անունով գյուղերն ու ավանները մի քանիսն էին Եփրատի և Արածանիի միջագետքում, որն ըստ երևույթին կապված էր Անահիտի պաշտամունքի հեռավոր արձագանքների հետ։

Սույն Թիլ գյուղը գտնվում էր Խոզաթի ջուրը Արածանիին միանալու տեղում, ջրի ձախ, իսկ Արածանիի աջ ափին, Բերդակ և Ուռեկ գյուղերի միջև, Հաղդարից հարավ հազիվ մեկ ժամ, Ուռեկից արևմուտք մեկուկես ժամ, Բերդակից արևելք երկու ժամ հեռավորության վրա։

Գյուղում կար Թադեոս առաքյալի կառուցած ս. Սարգիս անունով մի եկեղեցի։

Ուներ 52 տուն (416 հոգի) հայ բնակիչ։

331(55). Ուռեկ։ Թիլից արևելք մեկուկես ժամ հեռու, Արածանիի աջ ափին էր գտնվում այս գյուղը, որը Թիլի և Հաղդարի հետ գտնվում էր Ֆինտան աշիրեթի ազդեցության տակ։ Գյուղում կար ս. Հովհաննես անունով եկեղեցի։ Ուներ 25 տուն (200 հոգի) հայ, 5 տուն (25 հոգի) քուրդ բնակիչ։

332(56). Բերդակ։ Դերսիմի հարավային սահմանի Արածանի գետի աջափնյա շրջանի ինքնապաշտպանության գլխավոր ամրոցն է եղել նախկին Բերդակ ավանի սև ապառաժների Բերդը, որն ավերակ էր։ Պահպանվում էին նաև չորս փլատակ եկեղեցիներ, որոնք քաղաքը բաժանելիս են եղել նույնքան մասի։

Նոր Բերդակը հիմնվել էր հնի հյուսիսային կողմում մեկուկես ժամ հեռավորության վրա, հյուսիսային լեռնադոտու ստորոտում, հին Բերդակի բնակիչների կողմից։ Ինչպես հին Բերդակը, նույնպես և նորը ծառայել են որպես Դերսիմի և Խարբերդի միջև ապրանքափոխանակության գլխավոր կենտրոն։ Հինգշաբթի և ուրբաթ օրերին մեծ տոնավաճառ էր լինում այդտեղ, ուր ասն ավանները հայ առևտրականներն ու արհեստավորներն էին, որոնք գալիս էին Խարբերդից ու շրջակա գյուղերից իրենց ապրանքները փոխանակելու Դերսիմի քրդերի հետ։

Նոր Բերդակում վերապրող հայերի մեջ գրեթե ձուլված էին 60 տուն ասորիներ, որոնք թեև ունեին ս. Շամունե անունով եկեղեցի, բայց այդտեղ, ինչպես և հայերի ս. Աստվածածին եկեղեցում (որը կոչվում էր նաև ս. Տիկին), կրոնական արարողությունները կատարվում էին հայ քահանայի կողմից, հայերեն լեզվով։

Բերդակցի հայերը զբաղվում էին առևտրով և արհեստներով, կային նաև երկրագործներ։

Բերդակը թեև առանձին շրջան էր և ուներ 30 գյուղ, բայց արձանագրում ենք այն ըստ թեմական վիճակի՝ Զարսանջակի առաջնորդության սահմաններում։

Բերդակից Թիլ ճամփի տևողությունը երկու ժամ էր։

Ավանում բնակվում էին հայեր՝ 320 տուն (2560 հոգի), քրդեր՝ 650 տուն (3250 հոգի) և թուրքեր։

333(57). Խոնարան։ Վասկերտից հյուսիս-արևելք երկու ժամ հեռու էր գտնվում այս գյուղը՝ հյուսիսից հոսող ջրի ձախ ափին։ Բնակիչները քրդեր էին՝ 30 տուն (150 հոգի)։

334(58). Խորզման։ Խոնարանից հարավ մեկ ժամ հեռու, ջրի ձախ ափին էր գտնվում այս գյուղը։ Բնակիչները քրդեր էին՝ 20 տուն (100 հոգի)։

335(59). Ճանպեկ։ Խորզմանից հարավ-արևելք մեկ ժամ հեռավորության վրա էր գտնվում այս գյուղը։ Բնակիչները քրդեր էին՝ 25 տուն (125 հոգի)։

336(60). Կուրս։ Խորզմանից հարավ մեկուկես ժամ հեռու, Ճանպեկից հարավ-արևմուտք էր գտնվում այս գյուղը, որի շրջակայքում կային արհեստական բլուրներ, իսկ դրանց ստորոտում՝ եկեղեցու փլատակներ։ Բնակիչները քրդեր էին՝ 35 տուն (175 հոգի)։

337(61). Ապտուլլի։ Ճանպեկից արևելք մեկ ժամ հեռավորության վրա էր գտնվում այս գյուղը։ Բնակիչները քրդեր էին՝ 40 տուն (200 հոգի)։

338(62). Թեվրզան (Թեզիզան)։ Ապտուլլիից հյուսիս-արևելք մեկ ժամ հեռու, Մեծկերից հոսող ջրի աջ ափին էր գտնվում այս գյուղը։ Բնակիչները քրդեր էին՝ 25 տուն (125 հոգի)։

339(63). Մարկեկ (Մարեկ): Պալրշերից արևմուտք մեկուկես ժամ հեռու, Թիթենիքան աշիրեթի սահմանագլխում էր գտնվում լեռնային Մարեկ գյուղը, որից հյուսիս, Խոզաթի արևելյան ձորի աջ ափին կային եկեղեցու փլատակներ։ Ուներ 15 տուն (120 հոգի) հայ. 12 տուն (60 հոգի) քուրդ բնակիչ։

340(64). Ալմեգրե (Զամպաղ): Բերդակից հյուսիս, Բաշաղակից արևմուտք երկու ժամ հեռու, Սաղմանի արևելքից և արևմուտքից հոսող ջրերի միացման տեղում էր գտնվում այս գյուղը։ Ուներ Թառսուն Մանկունք անունով եկեղեցի, իսկ գեղի Բերդրա սարերը տանող ճամփի եզերքի սարալանջին կային երկու եկեղեցու փլատակներ։ Ուներ 36 տուն (288 հոգի) հայ, 15 տուն (75 հոգի) քուրդ բնակիչ։

341(65). Խոնիկ (Խոնիկ): Կորճանից հարավարևելք մեկուկես ժամ հեռու, Մեծկերտի արևմուտքից հոսող ջրի աջ ափին էր գտնվում այս գյուղը, որն ուներ ս. Հակոբ անունով եկեղեցի, 20 տուն (160 հոգի) հայ, 10 տուն (50 հոգի) քուրդ բնակիչ։

342(66). Կոտոսան (Կատուսան): Խոնիկից հարավ մեկ ժամ հեռու, Կորճանից հոսող ջրի աջ ափին էր գտնվում այս գյուղը։ Ուներ ս. Կարապետ անունով եկեղեցի, 22 տուն (176 հոգի) հայ, 20 տուն (100 հոգի) քուրդ բնակիչ։

343(67). Իսմայլցիք (Զմայլեցի): Կոտոսանից հյուսիս-արևելք մեկուկես ժամ հեռու, Մեծկերտի արևելքից հոսող ջրի ձախ ափին էին գտնվում Զմայլցի կամ Զմայլեցի հայկական նախկին մեծ ավանի ավերակները, ուր կար ս. Աստվածածին անունով եկեղեցի։ Գյուղի շրջակայքում կային ևս երեք եկեղեցիների փլատակներ (որոնցից մեկը կոչվում էր ս. Գր. Լուսավորիչ), ս. Լույս վանքի և մի բերդի փլատակներ։ Բերդն ունեցել էր գետնուղի։ Գյուղում կար գլխոց։ Ուներ 50 տուն (400 հոգի) հայ, 15 տուն (75 հոգի) քուրդ բնակիչ։

344(68). Շեն (Շենցիք): Բնակիչների մեծ մասը զաղթել էր ավելի բարձր լեռնային շրջան։ Այս գյուղը գտնվում էր Քղիից հոսող Լրջիի կամ Բերիի ջրի աջ ափին, Իսմայլցիքից հարավ մեկուկես ժամ հեռավորության վրա։ Եկեղեցին ավերակ էր։ Ուներ 12 տուն (96 հոգի) հայ, 10 տուն (50 հոգի) քուրդ բնակիչ։

345(69). Մուկան: Իսմայլցիքից արևելք մեկուկես ժամ հեռավորության վրա էր գտնվում այս գյուղը, որը բաղկացած էր մի քանի գոմահանդից։ Բնակիչները քրդեր էին՝ 30 տուն (150 հոգի)։

346(70). Ելանլի: Բոլամորիից հոսող ջրի վրա. Մուկանից հյուսիս-արևմուտք երկու ժամ հեռու էր գտնված 25 ցիրուցան տնից (125 հոգի) բաղկացած քրդարնակ այս գյուղը։

Մնձուրի և Բոլամորիի ջրերի մոտերքում հաստատված գյուղերի բնակիչները զբաղվում էին ձկնորսությամբ։ Այստեղի ձկները շատ համեղ էին և գործածվում էին նաև որպես դեղ՝ մարմնի ճմլվածքները առհասարակ դարմանում էին ծեծված ձուկը կապելով վնասված տեղին։ Այս ձուկը կոչվում էր ալապալրդ (կարմրախայտ), որի ամենամեծը հազիվ կես կգ էր կշռում և սակայն ասենահարգի ձուկն էր։

Գյուղացիք զբաղվում էին ծխախոտի, մասամբ էլ հացաբույսերի մշակությամբ։ Ցանում էին առավելապես դարի, կորեկ, կլկիլ, նշանավոր էր այս գյուղի աղնուտ (անկուտ) թութը, որը շատ քաղցր էր։

347(71). Թիրիմեկ[2]: Ելանլիից ուղիղ գծով այնքան մոտ էր այս գյուղը, որ մարդիկ հանդիպակաց սարերի գագաթներից բղավելով խոսում էին միմյանց հետ, բայց ճամփան անցնում էր դարձդարձիկ այնպիսի ապառաժներից, որ շրջանգամ երկարում էր։ Միայն երեք ժամ տևող տաժանելի ճամփորդությունից հետո անցնելով Մնձուրի ջուրը, կարելի էր որոշել գյուղի վայրը, որը հաստատված էր երկու գագաթների ծոցում, վերը նշված գյուղից հյուսիս-արևմուտք։

Մեծկերտ գյուղից հյուսիս-արևելք, Մնձուրի ջրափնյա Ղարակետուկի բարձունքում կային հին բերդի ավերակներ, որը հավանաբար ժամանակին Մեծկերտի պաշտպանական ամրոցներից է եղել։

Բերդի արևմտյան կողմը, երկրորդ ձորակի և Մնձուրը ջրի միացման տեղում էին գտնվում Տիրամոր-խորան անունով հնակառույց եկեղեցու ավերակները, որոնք ծառայում էին որպես սրբա-

---

[1] Խոզաթից մինչև Ղրղրբիլիսե, Մեծկերտ և Բերի բնակավայրերում բազմաթիվ թթենիներ, նույնպես և զանազան պտղատու ծառեր շատ կային, բայց կրկնությունից խուսափելու համար ամեն դեպքում չեմ նշում։ Նույնը և ծխախոտի վերաբերյալ, որն այնքան էր ընդհանրացած, որ փեթակ չկին պահում, որովհետև ծխախոտի ծաղիկներից բաղված հյութը զառանամ էր, և այդ մեղրից ուտողի գլուխը պտույտ էր գալիս, խիստ հարբեցության նման, ավելի ևիշտ՝ հարբեցնող էր։

[2] Այս և սրան հետևող մի քանի գյուղեր, թեև պատկանում էին Մեծկերտի շրջանին, բայց վրիպել են ուշադրությունից, ուստի ներկայացվում են Զարսանչակի գյուղախմբում։ Թեև Զարսանչակն էլ ուներ համանուն (Թիրիմեկ) գյուղ, որը գտնվում էր Պալրշերի հյուսիսում, բայց կապ չուներ Խութաց-Ձորի ելքում, Ձորափնյա ժայռի ստորոտում ծվարած անմատչելի այս գյուղի հետ։

տեղի, ուր Աստվածածնա տոնի օրը ուխտի էին գնում։ Եկեղեցու փլատակներից մի քիչ հեռու գտնվում էր քոսի բժշկության սուրբ աղբյուրը։ Ուխտավորները՝ «տիրամոր խեղճերը» (քոսոտներ) լվացվում էին այդ սուրբ աղբյուրի ջրով լցված քարե ավազանում։ Լվացվելու արարողությունը կատարվում էր երեք անգամ և միշտ առավոտյան, արևածագի պահին։ Նույն ձևով բուժում էին նաև անասուններին։ Քոսաղբյուրի ջուրը ավազանից քսան քայլ հեռանալուց հետո անհետանում էր, որպիսի երևույթը վերագրում էին սրբի զորությանը։ Որոշ որսորդների պատմածների համաձայն, այս ջրով բուժվում էին նաև վիրավորված վայրի կենդանիները և գազանները, որոնք դիշերը գալիս էին և նույն ավազանում լվանում իրենց վերքերը։

Քոսաղբյուրից հարյուր քայլ հեռու գտնվում էր մի այլ աղբյուր, ջրառատ և զուլալ։ Սա կոչվում էր Ալեմ-ճեռահ (ամենաբուժիչ), որը բուժում էր աչքի ցավը։ Հիվանդն օրը երեք անգամ աչքերը լվանում էր այս սառնորակ աղբյուրի ջրով և նույնը կրկնում երեք օր, որից հետո աչքերի ցավն անցնում էր։ Անշուշտ, բուժվողը նախապես մատաղ էր մորթում աչաղբրի սրբին և իր հագուստից մի շերտ կապում մասուրի թփի ճյուղերին, որն այնքան ծանրաբեռնված էր գույնզգույն քուրջի կտորներով, որ կարծես քրջապատ խրտվիլակ լիներ։

Գյուղի դիրքը լեռնային էր, հողը բարեբեր, մշակում էին առավելապես ծխախոտ, մասամբ հացահատիկ։ Քրդերը հիմնականում զբաղվում էին խաշնարածությամբ, ունեին այծերի լավ ցեղ, որոնց կաթը յուղալի ու առատ էր, իսկ մաղը՝ շատ փափուկ։

Ուներ 36 տուն (288 հոգի) հայ, 10 տուն (50 հոգի) քուրդ բնակիչ։

348(72). Մաուո (Մաամո)։ Տեմենան (Տեր-Մանվելյան) աշիրեթի սահմանապահ այս գյուղը գտնվում էր Թիրիշմեկից հյուսիս-արևելք չորս ժամ հեռու, դեպի Խութաց-ձոր տանող անառիկ կիրճի ճանապարհին, որը դժվարանցանելի էր, տեղ-տեղ վտանգավոր նույնիսկ հետիոտնի համար։ Առանց ուղեկցորդի, մանավանդ, երբ արահեար հասնում էր Քյաֆիր-ղռան (անհավատ կոտորող) սարալանջի թեև կարճ, բայց անդնդախոր կիրճին, շարժվելն անիմաստ էր։

Գյուղի քուրդ բնակչությունը ապրում էր ցիրուցան, համախումբ թաղեր գոյություն չունեին, ամեն ընտանիք իր հողամասում, երբեմն առանձին, տեղ-տեղ երկու կամ երեք ընտանիքով, նայած վայրի հարմարությանը և վարելահողի չափին, բնակություն էին հաստատել ձորափերին։

Վարելահողը սակավ էր, մշակում էին ծխախոտ, առավելապես կլկիլ։

Ուներ 40 տուն (200 հոգի) բնակիչ։

349(73). Կյոկ-բեվե (Կապուտ-գեղ)։ Թիրիշմեկից արևելք երկուսուկես ժամ, Սամոյից արևմուտք մեկուկես ժամ հեռու էր գտնվում այս գյուղը, ուր կար ս. Կարապետ անունով եկեղեցի։ Ուներ 65 տուն (520 հոգի) հայ, 40 տուն (200 հոգի) քուրդ բնակիչ։

350(74). Մաստան։ Մամոյից արևելք մեկ ժամ, Մոխնտիից հոսող ջրի ձախ ափին էր գրանվում այս գյուղը։ Ուներ ս. Սարգիս անունով եկեղեցի, իսկ մոտակայքում գտնվում էին ս. Կիրակոս և ս. Հունդիդա եկեղեցիների ավերակները։ Ուներ 45 տուն (360 հոգի) հայ, 40 տուն (200 հոգի) քուրդ բնակիչ։

351(75). Մոխնտի (Մոգտուն)։ Դերսիմի ալևի քրդերի պաշտամունքի գլխավոր չորս օջախներից մեկը Պամասուրի օջախն էր, որը գտնվում էր այս գյուղում։

Հին Մոգտուն ավանի ավերակների զանազան մասերում կային ութ եկեղեցիների մնացորդներ, որոնք կոչվելիս են եղել ս. Արիստակես, ս. Վրթանես, ս. Գր. Լուսավորիչ, ս. Բարդուղիմեոս, ս. Հուսիկ, ս. Նիկողայոս, ս. Ներսես։ Բացի սրանցից, մոտակա ապառաժների ծոցավոր մի բարձունքում կային հին բերդի ավերակներ։

Վերաշինված Մոխնտիի քրիստոնյա բնակիչները հիմնել էին նոր եկեղեցի, ս. Մեսրոպ անունով, որի քահանան նոր եկեղեցու անունով կոչվելիս է եղել Մեսրոպ (Մաբսուպ), իսկ իր անդրանիկ զավակը՝ Պամասուր, որը հոր մահից հետո ժառանգաբար դարձել էր քահանա, իսկ հայերը քրդանալուց հետո հիմնել էին իրենց օջախը Պամասուր անունով և պահում էին ս. Մասրուպի (Մեսրոպ) եկեղեցին որպես ուխտատեղի։

Գյուղը տարածված էր ըստ սարերի տեղանքի հարմարության և բաղկանում էր զանազան մեծ ու փոքր մեզրեններից, շեներից և աղլներից, որոնց հավաքականությունը կոչվում էր Մոխնտի։ Բնակիչները քրդացած հայեր էին։

Գյուղը գտնվում էր Մաստանից հյուսիս-արևմուտք մեկուկես ժամ հեռու։ Ուներ 80 տուն (400 հոգի) քուրդ բնակիչ։

352(76). Պրլան։ Գտնվում էր Մաստանից արևելք մեկուկես ժամ հեռու։ Մոտակայքում կային

Երկու եկեղեցու փլատակներ։ Բնակիչները քրդեր էին՝ 25 տուն (125 հոգի)։

353(77). Ուրֆ։ Պրլանից հարավ-արևելք մեկ ժամ հեռու էր գտնվում այս գյուղը։ Ուներ ս. Մինաս անունով եկեղեցի։ Գյուղի ստորոտում, Պողբենի կոչված սարայանցին կային հին եկեղեցու ավերակներ։ Ուներ 25 տուն (200 հոգի) հայ, 15 տուն (75 հոգի) քուրդ բնակիչ։

354(78). Զորակ։ Ուրֆից հյուսիս մեկուկես ժամ հեռու էր գտնվում այս գյուղը։ Ուներ ս. Կարապետ անունով եկեղեցի, իսկ ձորափին ս. Աստվածածին եկեղեցու ավերակներն էին։ Ուշադրավ խաչքարեր ուներ կործանված ս. Վասվաս վանքը։ Լամբի և Զորակի միջև, հյուսիսային դագաթների բարձունքում կային խաչքարերով հարուստ մի այլ եկեղեցու ավերակներ, որի սրբատաշ բարերից մեկի արձանագրությունից պարզվում էր, որ եկեղեցին կոչվելիս է եղել ս. Նշան։

Ուներ 20 տուն (160 հոգի) հայ, 12 տուն (60 հոգի) քուրդ բնակիչ։

355(79). Դարմուդաղ (Դարմդաղ–Տամատաղ)։ Գտնվում էր Զորակից հյուսիս-արևելք երկու ժամ հեռու, Ղրղբլբիլիսեից հոսող ջրի աջ ափից բիլ գետի արիմտար։ Ուներ ս. Գևորգ անունով եկեղեցի, իսկ բարայրների ստորոտում կային հին ամրոցի և եկեղեցու ավերակներ։ Ուներ 32 տուն (256 հոգի) հայ, 10 տուն (50 հոգի) քուրդ բնակիչ։

356(80). Թիլ։ Ուր կար Մոդատուն, շրջակայքում անխուսափելի էր թիլը (հոդարլուր)։ Ուներ ս. Աստվածածին անունով եկեղեցի։ Գյուղը գտնվում էր Տամատաղից արևելք երկու ժամ հեռու, Ղրղբլբիլիսեի ջրի արևելյան ճյուղի այն մասում, ուր այն միանում էր Քղիից հոսող Բերիի ջրին։ Ուներ 20 տուն (160 հոգի) հայ, 8 տուն (40 հոգի) քուրդ բնակիչ։

357(81). Ճապաղ։ Գտնվում էր Զորակից հյուսիս մեկ ժամ, Տամատաղից հյուսիս-արևմուտք մեկուկես ժամ հեռու։ Բնակիչները քրդեր էին՝ 80 տուն (400 հոգի)։

358(82). Լամբի։ Նախկինում հայաշատ այս գյուղը 1914-ին գրեթե դատարկված էր։ Մոտակայքում կային ս. Թորոս վանքի ավերակները և Աստվածածին եկեղեցին։ Լամբը գտնվում էր Ճապաղից հյուսիս-արևմուտք մեկ ժամ հեռու։ Ուներ 20 տուն (160 հոգի) հայ, 8 տուն (40 հոգի) քուրդ բնակիչ։

359(83). Էսերիկ (Էսրիկ)։ Լամբից հյուսիս-արևելք, Ճապաղից հյուսիս մեկ ժամ հեռու էր գտնվում այս գյուղը, որի փոքրաթիվ հայ բնակչությունը հեռացել էր այդտեղից։ Ուներ 20 տուն (100 հոգի) քուրդ բնակիչ։

360(84). Հայվաբլի (Այվալի)։ Տամատաղից հյուսիս-արևելք մեկուկես ժամ հեռու, Ղրղբլբիլիսեի արևելքից հոսող ջրի աջ ափին էր գտնվում այս գյուղը։ Ուներ ս. Մինաս անունով եկեղեցի. 18 տուն (144 հոգի) հայ, 6 տուն (30 հոգի) քուրդ բնակիչ։

361(85). Պաղին։ Սարերի սրտին ծվարած, լեռնագագաթների արանքում կորած փոքրիկ այս գյուղի ամեն մի անկյունը պատմության մեծագիր մի էջ էր։ Շրջանը հարուստ էր պատմական բարձրարժեք հուշարձաններով։ Գյուղի հյուսիս-արևելյան բարձունքներում կային կործանված բերդի ավերակներ, աշտարակների հսկայական քարերի մնացորդներ և մանավանդ բևեռագիր արձանագրություններ։

Պաղինը գտնվում էր Էսերիկից հյուսիս-արևելք երկուսուկես ժամ հեռավորության վրա, Ղրղբլբիլիսեից հարավ։ Գյուղի գիրքը անմատչելի էր։ Ավանդաբար պատմվում էր, թե Կարմիր-բերդի և Պաղնաբերդի միջև գոյություն է ունեցել դեռևս։

Բնակիչները հայեր էին՝ 16 տուն (128 հոգի)։

362(86). Ղրղբլբուղ։ Խողնղեղից եկող համփան հնարավորություն չէր տալիս բարձրանալ ուղղակի հյուսիս, որովհետև գյուղի վերևի մասում կային ապառաժուտներ, որոնք կախ էին ընկած գյուղի վրա։ Բնակարանները խուկուլի (հոլիկ) նման էին, կիսագետնափոր, քարե պատերով, տանիքները՝ կամարաձև (վրանի նման), հողով ծածկած։

Գյուղն ընկած էր Մնձուրից հոսող ջրի ափին, բայց վարելահողն անբավարար էր։ Տեղացիները ոռոգում էին ջրատուրով (ջրի տուրք), որ ստանում էին մարդ և անասուն մի ափից մյուսը փոխադրելով։ Այս շրջանում ամենահստաբերը բնաիր ծխախոտի մշակությունն էր։ Ուներ 28 տուն (224 հոգի) հայ, 12 տուն (60 հոգի) քուրդ բնակիչ։

Գյուղի արևելյան կողմի հնադարյան արտաքնների ստորոտում կային քարաշեն եկեղեցու փլատակներ, որի կառույցը և ճարտարապետական ոճը համապատասխանում էր Բերդակի եկեղեցու կառույցին, իսկ խաչքարերի դեղակերտ փորագրությունները գրեթե համանման էին։

Արտաքնների փոքր անտառ սրբատեղի էր, իսկ ծառերը՝ անձեռնմխելի։ Արտաքնների միջից դուրս էր ժայթքում սառնորակ պաղ աղբյուր, որը կոչվում էր Լիսաղբյուր։

363(87). Տանապերան: Գտնվում էր Խութաց-ձորի կրճի ելքին շատ մոտիկ։ Ուներ 25 տուն (200 հոգի) հայ, 30 տուն (150 հոգի) քուրդ բնակիչ։ Գյուղը պատկանում էր Ալանաց (Ալանցիք) աշիրեթին, Մտրոյից հեռու էր երկու ժամի ճամփա։

Գյուղը լեռնային էր, ուներ բավականաչափ վարելահող, որը գտնվում էր Սելի գագաթներից մինչև Կապույտ քարերի ստորոտը ձգված լեռնահովտում։ Ժայռերի դույները տարբերվում էին իրարից։ Եթե կապույտ քարերը բաց լեղակի երանգ ունեին, ապա արևմտյան սարալանջը ծածկված էր կանաչ քարերով, իսկ հյուսիսայինը՝ գոց վարդագույն կամ կարմրին մոտեցող ատամնավոր հսկա ժայռերով։ Այդ ժայռերի գագաթները զուրկ էին անտառներից ու փայլփլում էին արևի ճառագայթների տակ։ Նայած դրանց ուղղությանը, գյուղը օրվա մեջ մի քանի անգամ գունափոխվում էր։

Ավանդությունը ասում էր, թե Անահիտի տաճարին նվիրված մատաղացու հորթերի գոմերը գտնվելիս են եղել ներկա գյուղի ստորոտում (այստեղից էլ գյուղի անունը՝ հորթերի մակաղատեղի), ծաղիկներով և կանաչներով ծածկված գեղատեսիլ արոտավայրում։ Այստեղ կային հին բնակարանների ավերակներ, որոնք ծածկված էին բարակիտուկներով և դարձել էին մի տեսակ անեծքի օջախ (նհանեթ-մամե)։ Գոմատեղերի արևելյան բարձունքին կային երկու եկեղեցու և կործանված ավանի ավերակներ (խարապա)։

Գյուղի վարելահողը գտնվում էր հին գյուղատեղի և գոմերի ուղղությամբ, իսկ ներկա գյուղը ընկած էր սարի կողերին։

Բնակչության գլխավոր պարտականությունն էր հսկել դեպի Խութաց-ձոր կատարվելիք ամեն մի շարժման և տեղյակ պահել աշիրեթին վերահաս վտանգի մասին։ Զբաղվում էին երկրագործությամբ, առավելապես անասնապահությամբ։ Գյուղի տների մեծամասնությունը կիսաքարափոր և գետնափոր էր, վերևի տան դուռը բացվում էր վարի տան տանիքի վրա։

364(88). Շորոան (Շոռոան): Մեծկերտի ագի հանքերի հարուստ պաշարները գտնվում էին գյուղից հյուսիս ընկած սարերում։ Հանքերը հնում օգտագործվելիս են եղել, բայց լեռնագագաթներից մեկի (Շոռգանի) տեղաշարժի հետևանքով խափանվել են։ Գյուղը գտնվում էր Տանապերանից հյուսիս մեկուկես ժամ հեռու, ուներ ս. Թադեոս անունով եկեղեցի, իսկ գյուղի արևմտյան կողմում կային երկու եկեղեցու փլատակներ, որոնցից մեկը, ըստ սրբատաշ քարերի արձանագրությունների մնացած պատառիկների, կոչվելիս է եղել ս. Փրկիչ։

Ուներ 30 տուն (240 հոգի) հայ, 15 տուն (75 հոգի) քուրդ բնակիչ։

365(89). Տիլան-Օղլու: Շորտանից արևմուտք, Մեծկերտի և Խոզնդեղի միջև, Բոլոմորիի ջրի աջ ափին, աչքաչափով հազիվ մեկ ժամ, իրականում երկուսուկես ժամ հեռավորության վրա էր գտնվում այս գյուղը։ Դիրքը լեռնային էր, ճանապարհը՝ վտանգավոր։ Ուներ 16 տուն (128 հոգի) հայ, 10 տուն (50 հոգի) քուրդ բնակիչ։

366(90). Լոշմար: Ընկած էր Կարմիր-վանքի և Քղիի սահմաններում, ջրի ձախ ափին, Թիլից հյուսիս երկու ժամ հեռավորության վրա։ Գյուղի ստորոտում, ձորափնյա բարձունքների զոգավորության մեջ թաքնված էին մի ամրոցի և երեք եկեղեցու փլատակներ, կային և տապանաքարեր, խաչքարեր։

Բնակիչները, որ քուրդ էին, 160 տուն (800 հոգի), չէին թաքցնում, որ իրենք նախկին հայեր են։

367(91). Քյուրեքեն: Էսերիկից հյուսիս-արևելք երկու ժամ հեռու, ջրի ձախ ափին, Պաղինից հյուսիս մեկ ժամ հեռու էր գտնվում այս գյուղը, որի արևելքում, դեպի Քղիի Եղրիվան գյուղը տանող արահետի հյուսիսային բարձրության սարալանջին կային ավերակներ, որոնց մեջ՝ նաև կործանված եկեղեցի։

Շրջակայքում կային քրդական մեգրեներ, որոնց բնակիչներին միացնում ենք այս գյուղի հետ։ Այսպիսով, գյուղն ուներ 20 տուն (160 հոգի) հայ, 35 տուն (175 հոգի) քուրդ բնակիչ։

368(92). Տինկ: Վերի-Թիլից հարավ-արևմուտք մեկուկես ժամ հեռու, Բերիի ջրի ձախ ափին, Քեշեճիից արևելք էր գտնվում այս գյուղը։ Դեպի արևելք՝ Զեմիոո գյուղը տանող ճամփի եզրային բարձունքների հյուսիս-արևելյան սարալանջին կային եկեղեցու ավերակներ։ Բնակիչները քրդեր էին՝ 30 տուն (150 հոգի)։

369(93). Զեմիոո: Բալուի երկրորդ լեռնագոտու և Բերիի ջրի միջև էր ընկած այս գյուղը, որը գտնվում էր Տինկից արևելք երկու ժամ հեռավորության վրա։ Բնակիչները քրդեր էին՝ 130 տուն (650 հոգի)։

376(94). Քեշեճի: Բերիի ջրի աջ ափին, Տամտաղից հարավ-արևմուտք, Տինկից արևելք մեկուկեսական ժամ հեռավորության վրա էր գտնվում այս գյուղը։ Բնակիչները հայտնի թաղիքագործներ էին՝ 80 տուն (400 հոգի) քուրդ։

371(95). Զայգում: Տինկից հարավ մեկ ժամ հեռու, Մրունից հյուսիս-արևելք մեկուկես ժամ

հեռու, ջրի ձախ ափին էր գտնվում այս գյուղը։ Բնակիչները քրդեր էին՝ 60 տուն (300 հոգի)։

372(96). Մուն։ Բալուի հյուսիսային լեռնագոտուց հոսող և Բերրի ջրին միացող գետի աջ ափին, Զայդոմից հարավ մեկուկես ժամ հեռավորության վրա էր գտնվում այս գյուղը։ Բնակիչները քրդեր էին՝ 35 տուն (175 հոգի)։

373(97). Տիլավի։ Մրունից արևմուտք երկու ժամ հեռավորության վրա էր գտնվում այս գյուղը, որը պատկանում էր Պուլիկան աշիրեթին։ Բնակիչները քրդեր էին՝ 75 տուն (375 հոգի)։

374(98). Հոսե (Հոշ)։ Արխաճ լեռան ստորոտում, Բերրի ջրի ձախ ափին, բարեբեր դաշտում էր հիմնված այս գյուղը, որի մասին ավանդաբար պատմում էին, թե Տիգրանակերտի հիմնադրման վայրը որոնելիս կանգ են առել այստեղ և ասել, թե բաղարի կառուցվելիք տեղը «հոս է», ուրիշները պնդել են, թե «հոս չէ»։ Այդ վեճից ծագում է առել գյուղի անունը։ Գյուղը գտնվում էր Բերրի արևելքում կես ժամից քիչ ավելի հեռավորության վրա։ Բնակիչները հայեր էին՝ 30 տուն (240 հոգի)։

375(99). Բաղնիք։ Հոսեից հյուսիս մեկ ժամ հեռու, Բերրից հյուսիս-արևելք մեկուկես ժամ հեռու, ջրի աջ ափին էր գտնվում այս գյուղը։ Ուներ ս. Մինաս անունով եկեղեցի։

Ավանդաբար պատմվում էր, թե գյուղի բնակիչների մի մասը նախկինում դաղթել և Եփրատի աջ ափին, Քեշիշ-Տաղիի ստորոտում, Բթաոիճի ս. Նիկողոս վանքի արևելքում հիմնել է նույնանուն նոր գյուղ, որի ավերակների միջից հոսող մեծ ջուրը ներկայումս էլ կոչվում է Բաղնիքի ջուր, որը բաղդրահամ է և ունի արաղ մարսեցնելու հատկություն։

Ուներ 20 տուն (160 հոգի) հայ, 10 տուն (50 հոգի) քուրդ բնակիչ։

376(100). Խուշին։ Բաղնիքից արևելք մեկ ժամ հեռու, Բերրի ջրի աջ ափին, Արիրուճ լեռնաստորոտում էր բնակած այս գյուղը։ Ուներ ս. Աստվածածին եկեղեցի, իսկ գյուղի արևելքում, Պալդայայից հոսող ջրի եզերքին էին գտնվում ս. Անանն եկեղեցու փլատակները։ Ուներ 25 տուն (200 հոգի) հայ, 8 տուն (40 հոգի) քուրդ բնակիչ։

377(101). Շենարմ։ Բալուի Դավթի միղրեի լեռնագոտու գեպի Բերի նայող սարալանջի ստորոտում, Դավթի Մեղրեից հյուսիս մեկուկես ժամ հեռավորության վրա էր գտնվում Զարսանջակի և Բալուի սահմանագծան այս գյուղը։ Գյուղի արևելքում, նույն լեռնագոտու ստորոտում կային տապանարարներ, ավելի վերը՝ եկեղեցու փլատակներ։ Բնակիչները քրդեր էին՝ 30 տուն (150 հոգի)։

378(102). Բերի։ Զարսանջակի վարչական կենտրոնն էր, վաճառաշատ գյուղաքաղաք՝ բնակած իր անուն կրող գրի աջ ափին։

Բերին ուներ երկու վարժարան. մեկը նախկինում Միացյալ ընկերության ծախսերով բացված վարժարանի շարունակությունն էր, մյուսը բողոքականների ժողովարան-վարժարանը, որն ուներ նաև ծաղկոց՝ փոքր երեխաների համար և ս. Աստվածածին եկեղեցի։

Նախքան Ղրզրլքիլիսեի Կարմիր-վանքի և Կարմիր-բերդի կործանումը, Բերին էլ ունեցել է Կարմիր-վանք, ս. Լույս վանք ու ս. Գևորգ եկեղեցի, որոնք նույնպես կործանվել են։

Բերիի բնակչության բացարձակ մեծամասնությունը հայեր էին, որոնք զբաղվում էին արհեստներով և առևտրով, մեծ ազդեցություն ունեին կառավարական շրջանակների վրա։ Մի մասն զբաղվում էր նաև երկրագործությամբ ու պտղամշակությամբ։ Կային պետական պաշտոնյաներ և մասավորական գործիչներ։

Բերիում ապրում էին 675 տուն (5400 հոգի) հայեր, 180 տուն (900 հոգի) քրդեր և թուրքեր։

379(103). Զերե։ Բերիից արևմուտք մեկուկես ժամ հեռավորության վրա, ջրի աջ ափին էր գտնվում այս գյուղը։ Ուներ 10 տուն (80 հոգի) հայ, 15 տուն (75 հոգի) քուրդ բնակիչ։

380(104). Պասուն։ Բերիից հյուսիս մեկ ժամ հեռավորության վրա էր գտնվում այս գյուղը, որն ուներ ս. Լուսավորիչ անունով եկեղեցի։

Գյուղի հյուսիսային բարձունքների ստորոտում կային հին եկեղեցու ավերակներ, որոնց սրբատաշ քարերի մեծ մասը թաղված էր խճաբարերի տակ։ Դրանցից քիչ վերև կային տապանաքարեր անընթեռնելի արձանագրություններով։

Բնակիչները հայեր էին՝ 32 տուն (256 հոգի)։

381(105). Դուսաոիճ։ Պասունից հյուսիս-արևմուտք երկու ժամ հեռավորության վրա էր գտնվում այս գյուղը, որտեղ կար ս. Գևորգ անունով եկեղեցի, իսկ շրջակայքում՝ դանդան անուններով սրբատեղիներ։ Ուներ 35 տուն (280 հոգի) հայ, 16 տուն (80 հոգի) քուրդ բնակիչ։

382(106). Թյուրիշմեկ։ Զշփոթել Մեծկերտի համանուն գյուղի հետ։ Սույն Թյուրիշմեկը գտնվում էր Պալրշերից հյուսիս մեկուկես ժամ հեռավորության վրա։ Գյուղի մոտ կար ավերակ եկեղեցի։ Ուներ 28 տուն (224 հոգի) հայ, 15 տուն (75 հոգի) քուրդ բնակիչ։

383(107). Աղնեբենդ: Բալուի և Զարսանջակի սահմանագլխին, Բալուից արևմուտք, Զարսանջակից հարավ, Արածանիի շրջադարձի հյուսիսային անկյունի աջ ափին էր գտնվում այս գյուղը: Բնակիչները քրդեր էին՝ 60 տուն (300 հոգի):

Բալուի լեռնագոտու դեպի Աղճեբենդ նայող սարալանջին կային երկու եկեղեցու և բերդի փլատակներ:

Ավանդաբար պատմում էին, թե այս գյուղի հայ բնակիչները աշիրեթական կռիվների հետևանքով գաղթել են Արածանիի աջ ափից և հաստատվել Եփրատի աջ ափին, հիմնելով համանուն գյուղ:

384(108). Մերխո: Զարսանջակի հյուսիսային մասի ամենաբարձրադիր կետում, լեռնագագաթներով շրջապատված սարալանջին էր թառել սահմանային ամենավերջին այս գյուղը: Գտնվում էր Խոզաթի սահմաններում, արևելքից հոսող ջրի աջ ափին, Թյուրիշմեկից արևմուտք մեկուկես ժամ հեռավորության վրա: Ուներ ավերակ եկեղեցի, 12 տուն (96 հոգի) հայ, 15 տուն (75 հոգի) քուրդ բնակիչ:

* * *

Այսպիսով, Զարսանջակի շրջանում կար 108 բնակավայր, որից 3-ը՝ հայաբնակ, 51-ը՝ քրդաբնակ, 52-ը՝ հայ ու քուրդ խառն: Այդ բնակավայրերում ապրում էր 7314 տուն (44397 հոգի) բնակիչ, որից հայ՝ 2609 տուն (20872 հոգի), քուրդ՝ 4705 տուն (23525 հոգի):

* * *

Վերջապես, ըստ բերված տվյալների, ստացվում է, որ Դերսիմի տեղագրված 384 բնակավայրից հայաբնակ էր 37-ը, քրդաբնակ՝ 210-ը, հայ ու քուրդ խառն՝ 137-ը: Այդ բնակավայրերում կար 44262 տուն (289468 հոգի) բնակիչ, որից հայ՝ 12273 տուն (110386 հոգի), քուրդ՝ 31989 տուն (179082 հոգի):